



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԼԵՎՈՆ ՇԱՀԻՆՅԱՆ

«ՈՒՐԱՐՏՈՒ»
ԱՐԵՎԱԴՎԱՆԸ

«ԼՈՒՅ» ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1994 թ.

ԳԼՈՒԽ Ա

ՆՈՐԻՑ ՌԱԴԱՐՏՈՒ—ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

«Գիտության խնդիրները պետք է լուծվեն գիտականորեն»: Այսպես է ավարտվում «Պատմա-բանասիրական հանդեսի» 1987 թ. առաջին համարում տպագրված «Ուրարտու—Հայաստան հարցի առթիվ» հոդվածը, որի հեղինակներն են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Բ. Ն. Առաքելյանը, Գ. Բ. Ջահուկյանը և Գ. Խ. Սարգսյանը:

Կարդում ես հեղինակների իրոք անառարկելի այդ պատվիրան-պահնջը, նորից ուշադրություն դարձնում հոդվածի շարադրանքին և ընկնում տարակուսանքի մեջ՝ ինչպես կարելի է խոսել գիտականության մասին և շարգել (տվյալ հոդվածում) գիտականության տարրական պահանջները, շհարգել, այսպես ասած, գիտականության այրն ու բենք:

Գաղտնիք չէ բոլորովին, ոչ էլ նորություն, որ գիտականության շափանիշը փաստերն են և ուրիշ ոչինչ: Փաստերից գուրս չի եղել և չի կարող լինել ոչ գիտություն, ոչ էլ գիտականություն:

Այս առումով հոդվածը ներկայանում է որպես փաստազուրկ խոռոչ օրինակ, շնայած վերաբերում է հայագիտության խիստ վիճակարուց հիմնախնդիրներից մեկին: Հեղինակներն իրենց տեսակետը հիմնազուրկ որևէ փաստ չեն նշել, նրանք բավարարվել են լոկ հիմնազուրկ հայտարարություններով, վիճարկվող դոգմաները ցուցադրելով, տեղ-տեղ էլ դրանց հակասությունները, հակապատմականությունը ընթերցողից թաքցնելով, իսկ ընդդիմախոս կարծիքները և փաստերը անտեսելով, աղճատելով ու նսեմացնելով: Հոդվածում գիտականության զօհարերումով ամեն ինչ արվել է, որ հիմնազուրկ դոգմաները մնան անառարկելի, իսկ փաստերով հաստատված նորությունները երեան պախառկելի, նույնիսկ՝ դատապարտելի:

Համոզվելու համար դիմենք հոդվածի շարադրանքին:

«...Վերջին տարիներս մեր նախրապետության բերեցրում, նանդամատչելի ամսագրերում երապարակվել են նոդվածներ և տեղի ունեցել երապարակային ելույթներ, որոնցում նոր փորձ է արվում պատմության կըերից բուրս նետելու ուժարտական պետությունը և ուժարտական մշա-

Շահինյան Լ. Փ.

«Ուրարտու» առեղջևածք:— Եր.: Լույս, 1994. — էջ:

Հենվելով պատմագիտության նվաճումների վրա, օգտագործելով բազմաթիվ ու բազմաթեսակ փաստեր ու փաստարկներ, հեղինակը գալիս է այն լուրջ և գիտականորեն հիմնավորված եղանակացության, որ «ուրարտուական» կոչված պետությունն իր բոլոր հատկանիշներով (մարդարանական, ժամանակագրական, լեզվական, մշակութային, անդադրական) գրաւ հայկական պետություն է: Ավելի միշտ՝ այն Վանի հայկական իշխանությունը կամ կուսակալությունն է, որը IX—VII դդ. (իր գոյության գրեթե ամբողջ ընթացքում) պայքար է մղել հայացաց պետության գերազանցության համար:

Աշխատանքը գրված է գիտական բարձր մակարդակով, կարդացվում է հետաքրքրությամբ:

Նախատեսվում է ինչպես մասնագետների, այնպես էլ լայն շրջանի բնիքերողների համար:

4306020600 (135)
Դ 1994
702 (01) 94

ISBN 5-545-01269-9

© Շահինյան Լ. Փ., 1994 թ.

Կույրը: Այդ հոդվածների և ելույթների հեղինակները Ուրարտական պետությունը համարում են պարզապես հայկական, ուրարտացիներին նոյնացնում հայերի, իսկ ուրարտական մշակույրը՝ հայկականի նետ, (ՏԵ՛Ս ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 25):

Ինչպես տեսնում ենք, այստեղ ամփոփված է տրամագծորեն իրարժակասող երկու միտք: Առաջինը, թե՝ «...փորձ է արվում պատմության էշերից դուրս ենետելու Ուրարտական պետությունը և ուրարտական մշակույրը», գիտակցաբար ասված բացահայտ անձշտություն է, նույնիսկ գիտական անբարեխղճություն, որի հերթումն է հենց նույն հատվածի երկրորդ միտքը, թե՝ «...Ուրարտական պետությունը համարում են հայկական, ուրարտացիներին նոյնացնում հայերի, իսկ ուրարտական մշակույրը՝ հայկականի նետ»: Եվ, իրոք, նույնացնողներ եղել են (ուրեմն՝ նոր երկույթ չէ), կան ու կլինեն (դա էլ փաստերի թելադրանքն է), իսկ «ուրարտական» կոչված պետությունը և մշակույթը պատմության էջերից «դուրս նետելու փորձ անողներ» չկան, չեն եղել և, համոզված ենք, չեն էլ լինելու:

Ուրեմն, ինչո՞ւ է խեղվում տվյալ իրողությունը, ինչո՞ւ՝ «նույնացնողները» նաև «դուրս նետողներ» են համարվում, կամ՝ ո՞րն է այդ անձշտության նպատակը:

Նպատակը, թեպես երկիմաստությամբ կաղապարված, մեկն է՝ ցուցադրել ընդդիմախոսների (իրենց ասելով՝ ոչ մասնագետների) զարմանալի «անտեղյակությունը», թե տեսե՞ք-տեսե՞ք, ուրարտագիտության 100-ամյա նվաճումներին «անտեղյակ» մարդիկ հեշտ ու համարձակ ուրարտական պետություն և ուրարտական մշակույթ են «դուրս նետում» պատմության էշերից: Ինչպիսի՞ հանդգնություն... Ասելն իսկ ավելորդ է, որ հոդվածագիրների կողմից սոսկ «նույնացման փորձի» նշումը կամ ցուցադրումը այնքան էլ «սարսափազդու», այնքան էլ «հայկագիտական» չէր երևալու և չէր թողնի ցանկալի տպավորություն, ուստի և դիմել են տվյալ նպատակային խեղաթյուրման:

Սակայն նպատակը՝ նպատակ. խիստ անարդար է ընդդիմախոսին մեղադրել չգործած «մեղքերի» համար: Այսպես որ, եթե դրվում է «ուրարտական» կոչված պետության և նրա մշակույթի էթնոպատկանելության վերանայման հարցը, բնավ էլ տվյալ պետության և մշակույթի «դուրս նետում» չի նշանակում, և պետք չէ շեղածը եղած ներկայացնել:

Այժմ ուշադրություն դարձնենք հոդվածի մյուս մտքերին, որոնք նույնպես անառարկելի հավակնություն ունեն:

Այսպես, հոդվածի երկրորդ և երրորդ պարբերություններում գրված է. Ուրարտու պետության և ուրարտական մշակույրի ու լեզվի՝ մի ամբողջ հայրութամայակի և հատկապես վերջին տասնամյակների ընթացքում սեպագրագետ-պատմաբանների, հնագիտների և լեզվաբանների:

Կողմից կատարված եռանդուն հետազոտությունները աներկրայի են դարձել այն փաստը, որ մ. թ. ա. IX—VII դդ. Հայկական լեռնաշխարհում ծաղկել է մի պետություն, որը հարեւան ասուրեստանցիները անվանել են Ուրարտու (նրա բնակիչներին էլ՝ ուրարտացիներ), որտեղից էլ փառության մեջ են մտել Ուրարտու, ուրարտացիներ, ուրարտական մշակույր, ուրարտերեն լեզու, ուրարտագիտություն տերմինները:

Տեղական, բայց ասսուրերեն լեզվով գրված, վավերագրերում Հայկական լեռնաշխարհի հարավային և կենտրոնական ընդարձակ տարածքը անվանվել է Խափրի, որ ասուրեստանցիների կողմից տրված (ինչի՞ն, — և. Շ.) մի այլ անվան կրկնություն է: Տեղական լեզվով արձանագրված վավերագրերում Երկիրն անվանվել է Բիայնիլի՝ հավանաբար Վանա լին արևելյան ավազանում բնակվող ցեղախմբի անվամբ: Վերսիշյալ հոդվածների և ելույթների հեղինակների համար բնորոշ է այս տերմինների բյուրմբոնումը և շփոթ մեկնաբանված»: Իսկ թե ո՞ւմ կողմից, ի՞նչն է «թյուրբոնված» և «շփոթ մեկնաբանված», կամ՝ իրենք ի՞նչ փաստեր ունեն: Ընդդիմ այդ «շփոթ մեկնաբանությունների» և «թյուրբոնված» համարձակմաքարտական պատճենը ոչինչ չի ասվում՝ բացառապես ոչինչ: Փաստորեն գիտակցաբար մոռացվում է գիտական այն տարրական և հանրահայտ ճշմարտությունը, որ սոսկ հայտարարությամբ տեսակետ ու կարծիք չի հերքվում կամ հաստատվում, որ ամենաթույլ փաստն իսկ գիտության համար շատ ավելին արժե, քան ցանկացած հայտարարություն: Ի դեպ, մեր համոզմաքարտական պատճենը չեին էլ կարող հիմնավորել իրենց տվյալ հայտարարությունը, ուստի և «մոռացել են» գիտականության պահանջը: Եվ ինչպես հիմնավորեին, երբ իրականում նման «թյուրբոնված» և «շփոթ մեկնաբանություն» չկա, երբ իրենք իսկ խոստովանում են, որ նույն պետությունը և երկիրը կոչվել է տարրեր անուններով, օտարի կողմից՝ Ուրաշտու-Ուրատերի-Ուրարտու, տեղաբանիկների կողմից՝ Թիայնիլի-Բիայնա, որը ուրարտագետ լեզվաբանների խիստ հիմնավոր կարծիքով հավասարազոր է Վան-Վանի անվանը, եվ մի՞թե հակագիտական ու անձիշտ կլիներ, եթե օտարահունչ «Ուրարտու» և համապատասխան տերմինների փոխարեն պատմագիտական գրականության մեջ գործածական դառնային տեղաբանիկների անվանումները, ճիշտ

այնպես, ինչպես հիմնադիր մասնագետներ Ք. Պատկանյանը և Մ. Վ. Նիկոլսկին նույն պետությունը կոչել են «Վանի թագավորություն»¹, ինչպես մերօրյա հմուտ ուրարտագետ Ն. Վ. Հարությունյանը կոչել է «Բիայնիլի»²: Գաղտնիք չէ նաև, որ առանձին ուրարտագետ լեզվաբաններ էլ Ուրարտու երկրանունը բխեցնում են Արարտու-Արարատ երկրանունից (մեր կարծիքով, տեղագրորեն և ժամանակագրորեն ճիշտ կլինի նկատի ունենալ Կաղմեա տուն կամ Կորդուք նահանգի Արարադ երկրանունը), ուստի և բնավ էլ հակագիտական չի լինի «Ուրարտու տերմինի փոխարեն գործածել նաև «Արարադ», «Արարադա երկիր», «Արարադա թագավորություն» և համապատասխան տերմինները, ինչպիսի փորձեր ևս եղել են և կան: Ի դեպ, մ. թ. ա. XIII—IX դարերի համար գործածել Արարադա երկիր անվանում, նկատի ունենալով միայն Կաղմեա տուն նահանգի Արարադը, ինչպես երևում է Սալմանասար Ա-ի արձանագրությունից³, իսկ մ. թ. ա. IX—VII դարերի համար՝ Բիայնիլի կամ Վանի թագավորություն, որն ավելի ընդգրկուն տարածք ունի: Նկատի ունենալ նաև, որ «Ուրարտու» և «Բիայնիլի» անունները երբեք և ոչ մի արձանագրությամբ համահայաստանյան ընդգրկում չեն ունեցել և, հետեւաբար, ճիշտ չի լինի դրանցից մեկի կամ մյուսի օգտագործումը ամրող Հայք-Հայաստանի համար: Այլ հարց է արդեն, որ Բիայնիլիի կամ Վանի տերերը (ըստ ասսուլների՝ ուրարտացի թագավորները) հավակնել են ամրող Հայք-Հայաստանը գրավելուն և շուրջ 100 տարի էլ (Մենուայից մինչև Ռուսական թագավորություններից, նրանք մեծամեծ ջանքերի ու տեսական մաքառումների գնով իրականացրել են իրենց գերիշխանական նկրտումները Հայկական լեռնաշխարհի մյուս երկրամասերի (հիմնականում Հայկական Փարից հյուսիս ընկած երկրամասերի (այդ թվում՝ առաջին հերթին, Ալրարտայան նահանգի, ըստ բիայնացիների՝ էթիուսի երկրի) և նրա համագործակցության երկրների ու բնակիչների նկատմամբ:

Այնպես որ, ինչ առումով էլ քննելու լինենք Ուրարտու անունը և դրանք պայմանագորված մյուս անվանումները, շնայած 100-ամյա գործածության, այժմ արդեն նախընտրելի չեն: Նախ այն պատճառով, որ պատմագիտության մեջ, իրրե կանոն, նախընտրելի են տեղաբնիկների անվանումները: Տվյալ դեպքում, ուրեմն, պետք է նախընտրելի համարել «Արարադա երկիր», «Բիայնիլի» կամ «Վանի թագավորություն» անվանումները: Երկրորդ, «Ուրարտու անվան և դրանով պայմանագոր-

¹ К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб., 1881. М. В. Никольский, Клинообразные надписи ванских царей, М., 1898.

² Н. В. Арутюнян, Биайнили, Ереван, 1970.

³Տե՛ս Հայ ժողովրդի պատմության թրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981 թ., էջ 14, Այսուհետև՝ ՀԺՊ թրեստոմատիա:

ված մյուս անվանումների գործածությունները երբեկ գիտականորեն չեն հիմնավորվել, օգտագործվել են սոսկ պայմանականորեն և այդպես էլ օգտագործվում են մինչև այժմ, Կարճ ասած, դրանց հետագա գործածությունը բնավ էլ գիտականության պահանջ չէ: Երբերդ, «Ուրարտու» երկրանվանը զուտ արհեստականորեն ներարկվում է նաև էթնոփաստ, որը և մեծագույն թյուրիմայության պատճառ է դարձել: Այն է՝ ենթագրվել է երբեկ գոյություն շունչցած «Ուրարտու» ցեղ կամ ժողովուրդ, որը շուրջ 100 տարի բազմաթիվ գիտականների կողմից փնտրվում փնտրվում է և չի գտնվում: Ասելն իսկ ավելորդ է, որ ընդունելի դարձած, բայց օտարահուն անվանումների փոխարինումը տեղական անվանումներով, ուսումնասիրողներին կիրկի հետագա փնտրութից, մեր համոզմամբ՝ անհեռանկար փնտրութից, կընդարձակի նրանց տեսադաշտը, կազմատի բացահայտ խարխափումներից և ավելորդ բանավեճերից: Այս իսկ առումով տերմինաբանության մասին հոդվածագիրների հայտարարությունը ոչ միայն գիտական չէ, այլև խոշրնդուում է գիտականությանը, ճշմարտությունը բացահայտելուն:

Այս դեռ բոլորը չեն: Վկայակոչված հատվածներում անհնար է տվադրություն շդարձնել երկու այլ անշշտությունների վրա: Առաջին, շարադրանքից այնպես է երեսմ, որ «Ուրարտու» կոչված պետությունը կամ երկիրը հենց սկզբից ավելի մեծ տարածք է ունեցել, քան նախրի երկիրը: Օրինակ, Ուրարտուի մասին գրված է. «Մ. թ. ա. IX—VII դր. Հայկական լեռնաշխարհում (ընդգծ. — է. Շ.) ծաղկել է մի պետություն, որը հարեւան ասուեստանցիներն անվանել են Ուրարտու...» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 25), իսկ նախրի մասին՝ հետեւյալը. «...Հայկական լեռնաշխարհի հարավային և կենտրոնական բնդարձակ տարածքը և անվանվել է նախրի» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 25, ընդգծ. — է. Շ.), ինչպես տեսնում ենք, Ուրարտուի համար նշված է ամրող Հայկական լեռնաշխարհը, առանց ժամանակի ու տարածքի սահմանափակման, իսկ նախրի համար՝ Հայկական լեռնաշխարհի մի մասը միայն՝ հարավային ու կենտրոնական տարածքը: Այսպիսի պատկերացումը կամ այսպիսի նշումները տրամադրութեն հակասում են փաստերին և ապակողմնորոշող են: Բանն այն է, որ հոդվածագիրների իսկ ակնարկած սասուրական արձանագրություններում նախրին հիշված է որպես Հայկական լեռնաշխարհի մի քանի տասնյակ երկրների հավաքական անուն՝ (մեր համոզմամբ՝ համահայաստանյան անուն), իսկ Ուրուատրի-Ուրարտուն՝ որպես նախրյան երկրներից մեկը միայն, Բնական է, որ մասը ամրողից մեծ չէր լինի և չպետք է սոսկ հայտարարություններով հակառակ տպագորություն ստեղծվի:

Բացի այս, ասսուրական նույն արձանագրություններում նախրի անունը «Երկիր» բառի հետ, որպես կանոն, գործածվում է հոգնակիակերտ՝

¹ ՀԺՊ թրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 16—24:

«Նաիրիի երկրներ» ձեռվ¹, իսկ Ուրարտուն՝ միշտ ու մշտապես եզակի առումով, որպես մեկ երկրի անվանում²: Այսուհանդերձ, սակավ դեպքերում, այն էլ մ.թ.ա. VIII դարի վերջերի ասսուրական արձանագրություններում, նկատի ունենք հատկապես Սարգոն Բ.-ի դեպի Ուրարտու կատարած արշավանքի արձանագրությունը, Ուրարտուն և Նաիրին հիշված են որպես առանձին-առանձին երկրներ, Նաիրին համարված է Ուրարտուին սահմանակից երկիր և թագավորություն³: Իսկ սա նշանակում է, որ Նաիրին որպես երկիր և որպես թագավորություն դեռևս գոյություն ունիր, այսինքն՝ Ուրարտուի հզորության ամբողջ ժամանակաշրջանում, գոյություն ուներ և անվանապես, և իրականում, թեպես արդեն փոքրացված տարածքով, որ Ուրարտու պետությունը երբեք չի ընդգրկել ամբողջ Նաիրին (թեպետ հավակնել է դրան) և երբեք չի փոխարինել «Նաիրի» անվանը: Նշանակում է նաև, որ «Ուրարտու» կոչված պետության տարածքը մ.թ.ա. VIII դարի վերջերին արդեն շատ ավելին էր, քան Նաիրիի տարածքը, քանի որ «Ուրարտուն» հիշված է որպես Հայկական լեռնաշխարհի ամենազորեղ և ընդարձակածավալ թագավորություն: Եվ, իրոք, «Ուրարտական» կոչված և ասսուրական այլ արձանագրություններից երեսում է, որ «Ուրարտու» կոչված երկիրը, որը տեղադրություն և անվանապես համապատասխանում է Հայ պատմիչների հիշած Կադմեա տուն Կամ Կորդուք նահանգի «Արարադա» երկրին, մ.թ.ա. XII դարի վերջերին առանձնացել է Նաիրիի մյուս երկրներից և աստիճանաբար ընդարձակել իր սահմանները Նաիրյան մյուս երկրների հաշվին: Այդ ընդարձակումը տեղի է ունեցել հատկապես մ.թ.ա. IX դարի կեսերից, այսինքն՝ այն պահից, երբ Արարադա երկրի տերերը կամ «ուրարտացիները» հիմնադրում են թագավորություն, որի կենտրոնը դարձավ Բիայնիլի երկիրը և ապա՝ մինչև VIII դարի վերջերը, իրենց գերիշխանությունը հաստատում Նաիրյան այլևայլ երկրների վրա: Այնպես որ Ուրարտուի ամբողջ պատմությունը մեծապես Նաիրյան մյուս երկրների վրա գերիշխանություն հաստատելու պատմություն է, և այս իրողությունը՝ Նաիրի-«Ուրարտու» տարածքային փախհարաբերության հարցը քննելիս, պետք է և խիստ կարևոր է նկատի ունենալ:

Մեր նպատակը չէ, իհարկե, նաև անհնար է, հանգամանորեն հիմնավորել և ցույց տալ Նաիրիի և «Ուրարտուի» սահմանները տարբեր ժամանակներում, ոչ էլ անդրադառնալ այդ առթիվ եղած զանազան տարակարծիքներին, սակայն ընդհանուր և ճիշտ պակերացման համար ան-

¹ ՀԺՊ բրեստումատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 16—24.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 24—33:

⁴ Ժամանակագրման հիմք է այն, որ Թիգլաթպալասար II-ը (մ.թ.ա. 1115—1077 թթ.) «Ուրարտու» չի հիշում իր գրաված Նաիրյան երկրների թվում (տե՛ս ՀԺՊ բրեստումատիա, հ. 1, էջ 16—20):

շափ կարևոր է մեծատաղանդ պատմաբան ն. Աղոնցի հետեւալ եզրակացությունը:

Նա գրում է. «Բիայնի-լին, անշուշտ, ցույց է տալիս երկրների այն ամբողջությունը, որից կազմված էր բուն Ուրարտուն: Բիայնիսի (Բիայի երկիր) հավանական է վանի շրջանի դիմաստիական անունն է Սարգություն 1-ից առաջ: Նույնի-լին ցույց է տալիս բուն Ուրարտուից գուրս դանչող երկրները, որոնք միացվել են Ուրարտուին կամ նրա հարկատուն են դարձել: Եթեու տերմինները միասին համապատասխանում են ասսուրական Նաիրիին, որը շատ լայն իմաստ ունիր և ընդգրկում էր ամբողջ Ուրարտուն և նույնիսկ որոշ ժամանակաշրջանում կիրառվում էր թոլոր լեռնային այն երկրների նկատմամբ, որոնք շրջապատում էին Ասորեստանը և բնակեցված էին ոչ-սեմական ցեղերով» (ընդգծ. լ. Շ.):¹

Ն. Աղոնցի այս եզրակացությունը հիմնավոր իրողություն է և պետք է ուղեցույց ժառայի Նաիրի-Ուրարտու տարածքային փոխհարաբերության հարցը քննելիս:

Քննարկվող հատվածներում մյուս անձտությունն այն է, որ Բիայնիի երկրանունը բխեցվում է նույնանուն ցեղից: Հեղինակները գրում են. «Տեղական լեզվով արձանագրված վավերագրերում երկիրն (Ուրարտուն, — լ. Շ.) անվանվել է Բիայնիլի՝ հավանաբար Վանա լինի արևելյան պավանում բնակվող ցեղախմբի անվամբ»: Այս հատվածից էլ ընդամենը մեկ պարբերություն հետո կարում ենք. «Ուրարտու պետության պատմությունն ընդգրկում է նախապես Վանա լինի ավազանում բնակվող բուն ուրարտական Բիայնիլի ցեղախմբի (ընդգծ.— լ. Շ.) հզորացման... փաստերը» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 25):

Այստեղ առկա է հայագիտության մեջ լայն տարածում գտած այն սխալը, երբ տեղանունից, առանց որևէ հիմնավորման, ոտնատակ տալով ամեն փաստ ու փաստարկ, ցեղանուն է ենթադրվում: Այսինքն՝ քմահանորեն ցեղ ու ժողովուրդ է հորինվում: Այս է պատճառը, որ Հայկական լեռնաշխարհը՝ սկսած մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջերից մինչև մ.թ.ա. առաջին հազարամյակի սկիզբը, ըստ համապատասխան ուսումնասիրությունների (բայց ոչ ըստ աղբյուրների), լեփ-լեցուն է ցեղերով ու ցեղամիություններով (մեր հաշվումներով՝ ավելի քան 200), հիմնականում, իհարկե, ոչ հայկական, հային ոչ-արյունակից: Մի խոսքով, ոչ գիտական և քմահան վերաբերմունքով ստեղծվել է իսկական «բարելունյան խառնաշփություն», որից գլուխ չի հանում և ոչ մի մասնագետ:

Ահա, այսպիսի բնորոշ օրինակներից մեկն էլ սոնկ ճեպագրությամբ «Բիայնիլի» ցեղախմբը հորինելն է (ի դեպ, նոր հորինվածք է), որպիսի ցեղախմբը չի վկայված աշխարհի և ոչ մի աղբյուրում, ոչ էլ

¹ Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 216—217:

«ուրարտական» կոչված շուրջ 500 արձանագրություններից որևէ մեկում՝ Ընդհակառակը, «Բիայնիլի» անվան գործածության բոլոր դեպքերում նրա վրա դրված է «երկիր» ցուց տվյալ գաղափարանշան, որը և անկասկած է դարձնում «Բիայնիլի»-ի երկրանուն լինելը։ Այլ կերպ ասած, սեպագրողները ամեն ինչ արել են, որ երկրանունը հանկարծ ցեղանուն շհասկացվի (ցեղանուններն էլ իրենց գաղափարանիշը ունեն), որ հետագա սերունդները տվյալ հարցում շշփոթվեն ու թյուրիմացությունների մեջ լրնկնեն։ Այո, իրենց արձանագրություններով այսպես են ցանկացել և այսպես են պատգամել Բիայնիլի երկրի սեպագրողները, և այս բանը հանրահայտ է, իսկ հոգվածագիրները (նաև ուրիշներ՝ ուրիշ դեպքերում), շրջանցելով փաստ ու պատգամ, շրջանցելով քարեղեն վավերագրերը, ցանկանում են հակառակը՝ որ երկրանունը ցեղանուն հասկացվի, կամ ցեղանվան իմաստ էլ ունենա, ի՞նարկե, ոչ առանց նպատակի...»

Վերջնական նպատակը, ի՞նարկե, այդ հորինվածքով ևս «Ուրարտուն» կամ «Բիայնիլին» ոչ-հայկական հոչակելն է, սակայն ցանկությունը՝ ցանկություն, նպատակը՝ նպատակ. փաստերի անտեսումը կամ շրջանցումը միթե գիտականություն է։

«Բիայնիլի» ցեղախմբի զգոյության ապացույց է նաև այն, որ Հայկական լեռաշխարհը, այդ թվում՝ և առաջին հերթին, Վանա լճի ավազանը, այսինքն՝ «Բիայնիլի» կոչված երկիրը, ինչպես ցուցյանք ենք տվյալները, որ այստեղ գործածված «անկում են ապրել» արտահայտությունը ունի «կործանվել են», «վերացել են» իմաստը։ Այսինքն՝ Ուրարտու պետության կործանման հետ միաժամանակ, այն էլ՝ միաժամանակ, կործանվել, վերացել են նաև «շատ քաղաքներ ու բերդեր», այն էլ՝ «որա (Ուրարտուի) օրոք առաջացած»։

Է լուծվեն գիտականորեն։ Այո, գիտականորեն, և ոչ դոգմաներ ցուցադրելով ու հայտարարություններով։

Այս դեռ բոլորը չեն։ Թնարկվող հոգվածում կան նաև այլ հայտարարություններ, անձշտություններ, առարկելիներ։

Օրինակ, գրված է. «Ուրարտու պետության հետ միաժամանակ անկում են ապրել նաև երա օրոք առաջացած շատ բաղաբեներ ու բերդեր, երա սեպազիր դպրություններ և ուրարտական մշակույթի որոշ իրողություններ, բայց շատ բան էլ դարձել է հայ ժողովրդի մշակույթի բաղկացուցիչ մասը» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 25—26)։

Այստեղ առարկելին մեր կողմից ընդդեմած միտքն է՝ «Ուրարտու պետության հետ միաժամանակ անկում են ապրել նաև երա օրոք առաջացած շատ բաղաբեներ ու բերդեր»։

Հնարավոր բանավեճից խուսափելու, ավելի ճիշտ, երկրորդական բանավեճից ազատվելու և առավել որոշակի դարձնելու նպատակով ասենք, որ այստեղ գործածված «անկում են ապրել» արտահայտությունը ունի «կործանվել են», «վերացել են» իմաստը։ Այսինքն՝ Ուրարտու պետության կործանման հետ միաժամանակ, այն էլ՝ միաժամանակ, կործանվել, վերացել են նաև «շատ քաղաքներ ու բերդեր», այն էլ՝ «որա (Ուրարտուի) օրոք առաջացած»։

Թե ովքե՞ր են կործանել այդ «շատ քաղաքներն ու բերդերը», պարզ է, ըստ հոգվածագիրների՝ հայերը, իսկ թե ո՞րն է «շատ» բառը գործածելու հիմքը, որով կերևար շարադրանքի գիտականություննը տվյալ հարցում, դժվար է ասել, քանի որ հեղինակները զլացել են և ոչ մեկը անունով չեն նշել։ Մինչդեռ պետք էր, որ այդ «շատ»-երը անուն առ անուն նշվեին (մեզ էլ հայտնի են չկործանվածները և նույնիսկ նման կործանում չի երևում)։ Ընդհակառակը, ըստ հնագիտական պեղումների, ըստ սեպազիր արձանագրությունների, ըստ պատմագրական-ազգագրական տեղեկությունների և ըստ ուրարտագիտական ուսումնասիրությունների երեսում է, որ շատ քաղաքներ ու բերդեր (նաև «Ուրարտու»-ի ժամանակ առաջացած) շարունակել են իրենց հետագա գոյությունը, այսպես ասած, հայկական ժամանակաշրջնում, եղել են հայոց քաղաքներ, բերդեր ու բնակվայրեր, իսկ ամենանշանավորները պահպանել են նույնիսկ իրենց երեսմին մայրաքաղաքի և սրբավայրի դերը։

Թե ինչպես է հիմնավորվում և ի՞նչ է նշանակում այս իրողությունը, առավել հանգամանորեն կներկայացնենք քիչ հետո, իսկ այստեղ սոսկ նշենք, որ հարգարժան ակադեմիկոսները ճիշտ չեն մատուցում փաստը։ Ավելի ճիշտ, մատուցում են այնպես, որ հայերը հանդիսան «ոչ արյունակից», անողոք նվազող-կործանողների դերում, որպեսզի հայր անջրապետվի «ոչ հայ» ուրարտացուց։ Ինչ խոսք, նպատակ է, բայց ոչ հիմնավոր, և դրանով իսկ՝ ոչ գիտական։

Ճիշտ այդպիսի նպատակ է հետապնդում նաև հետևյալ հատվածը։

¹ Լ. Շահինյան, Գիրքը դարերի խորքից, Երևան, 1984։

«Ուրարտուն ունեցել է իր նյութական մշակույթը, — գրում են նրանք, — որը հնագետները որոշակիորեն տարբերում են հայկական մշակույթից (ընդգծ. — Լ. Շ.) մասնավորապես իր ճարտարապետությունը՝ քաղաքների, բերդերի, տաճարների ուրույն նկարագիրը, խեցեգործության, փայտամշակման իր ձևերը, կերպարվեստի իր օճը և այլն, որոնք ունեցել են հնագետական գործությունները, բայց որոնք գժվար է շփոթել մեկ ուրիշ մշակույթի հետո» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 26):

Կարդում ես այս հերթական հայտարարությունը և նորից ու նորից ընկնում մտարումների մեջ: Ինչպես կարելի է այդքան ազատ ու անկաշկանգ լինել լուրջ հարցի նկատմամբ: Ինչպես կարելի է այդքան ապակեգմնարոշել ընթերցողին՝ իր սեփական պատմության հարցերում սկզբ սպիտակ ներկայացնել, աղավաղել գիտությանների (պատմագիտության, հնագիտության, լեզվաբանության) 100-ամյա նվաճումները (տվյալ հարցում), մանավաճք՝ առանյակ ու տասնյակ ականավոր գիտնականների ջանքերով ձեռք բերված ամենավերջին նվաճումները, և այդ ամենք՝ գիտականության անունից, և այդ ամենը՝ հանուն: Արարտացիների ուղևորության անողությունը առաջ լինելու ձախողակ ու ձախողվող տեսության: Մի՞թե հոգվածագիրները, իրաց, համոզված են, որ մյուս մահկանացուները, մասնավերպես՝ իրենց ասած «ոչ մասնագետները» հենց այնպես, կամ էլ՝ «կեղծ հայրենասիրության գիրքերից» անտեղյակ-անտեղյակ գրում ու խօսում են, որ հազար շեն հոգվածագիրների ու նրանց գործընկերների ռասավաժային և շահնասանելի» գիտելիքներին:

Արդ, ցուց տալու համար, թե ինչն ինչոց է, հեռաւն շփնանք, շմբանենք փաստերի ու կարծիքների ծովածավալ հարձանուար, այլ դիմենք հենց իրենց՝ հոգվածագիրներին, սրանք նույն հնագիտության հիման վրա, նույն հարցի մասին մեկ այս են ասում, մեկ էլ՝ բոլորսվին հակառակը: Եղ ամենազարմանալին, ոչ թե տարրեր գրվածքներում, այլ հենց այստեղ՝ քննարկվող հոգվածում, իրար անմիջապես հաշորգոռ պարբերություններում, երբ մեկի վերջակետը մյուսի սկիզբն է, ու շեն զգում իրենց մտքերի հակասությունը:

Վերհիշենք, օրինակ, որ քիչ առաջ քննարկված հատվածի վերջին միտքը հեակյալն էր. «...Նաև բան էլ (ուրարտական մշակույթից, — Լ. Շ.) դարձել է նայ ժողովրդի մշակույթի բաղկացուցիչ մասը» (ընդգծ. — Լ. Շ.): Ասենք նաև, որ այս միաժամ արտահայակած է նաև (թեպետ առարեր ձևերով) հոգվածագիրների առրիեր տարիների, առարիեր գրքածքներում և իր հերթին բազմից հիմնավորված է հնագիտություն և միայն հնագիտություն:

Արդ, մի նոր հաջոյ է առաջանաւմ՝ եթե «ուրարտական» մշակույթից առատ բան էլ դարձել է հայկական մշակույթի բաղկացուցիչ մասը, ասինքն՝ եթե հայկականը շատ բանավ կամ բաղկացուցիչ մասով արդեն պարզապես անվանափոխված «ուրարտականն» էր (ուրիշ կերպ

որակել անհնար է), էլ ինչպես կարող էին «ուրարտական» և հայկական նյութական մշակույթներն ընդհանրապես տարրեր լինել, կամ էլ՝ «որոշակիորնն տարրերվելու իրարից»:

Սակայն դուրս գանք այս հակառակության շրջանակներից և դիմենք նանաշված հնագետ-ուրարտագետ Գ. Տիրացյանի ուսումնասիրություններին, մասնավորապես՝ նրա «Հայերի ու հների վրապապական նախնիները և Ուրարտու-Հայաստան պրոբլեմը» հոդվածին (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 195—207), որը նաև մեզ հետաքրքրող հարցում ուրարտագիտության ամենավերջին նվաճումների ամփոփումն է: Այս հոգվածում նա գրում է. «Ուրարտական և հին հայկական հուշարձանների եռանդուն պեղումները այժմ թույլ են տալիս առաջ քաշել նաև նյութական մշակույթի և հարակից երկույթների հաջորդակցության հարցը: Այն դարձել է հասուկ ուսումնասիրում առարկա, որտեղ բազմարիվ բնագավառների օրինակով (բազմաշաշինություն, նարարագավառարթյուն, զինարարական տեխնիկա, խեցեգործություն, մետաղագործություն, բաղման ձեեր և այլն) հնարավոր է բացահայտել ուրարտական ներդրումը հին հայկական մշակույթի ձևավորման գործում: Այս տվյալների լույսի տակ կարելի է խոսել ոչ թե ուրարտական մշակույթի ազգացության մասին հին հայկականի վրա, այլ հայկական մշակույթի մեջ ուրարտական մշակութային երևույթների օրգանացիա ձևվելու մասին» (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 203, ընդգծ. — Լ. Շ.):

Բերենք նաև մեկ այլ հատված: «Հայկական թագավորության և ապա սատրապության պայմաններում ուրարտացիների գոյության և նրանց գերի մասին անուղղակիորեն կարող են վկայել հնատիտական նյութերը: Ուրարտական և հայկական ժամանակաշրջանների մետաղագործության որոշ նյութերի և խեցեգործության մեջ երեմն նկատվող ապշեցուցիչ նմանությունը նեարաւոր է բացահայտել նաև այն հանգումանեավ, որ ուրարտական մետաղագործական և խեցեգործական արհեստանոցները շեն գաղտահերել իրենց գործունեաւորյունը նայկական ժամանակաշրջանում, գոնե սկզբում, և որ այդ արհեստանոցներում աշխատաղ վարպետները էրճիկատես օւրարտացիներ էին, որոնք շարունակում էին արտադրել նույն մետաղագործական ու խեցեգործական տեսականին՝ հարմարեցնելով այն նոր ժամանակների պահանջներին» (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 201, ընդգծ. — Լ. Շ.):

Իր ավելի զաղ գրած «Ուրարտու և Հայաստան» հոգվածում (ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 43—68), ուր հենց «նյութական մշակույթի ժառանգության» հարցն է գրված, գոհունակությամբ նշելով «ուրարտական» և զաղ հայկական հուշարձանների անդումների հաջող բնթացքն ու ժամանակը՝ մեղանում, Արևմտյան Հայաստանում և Հայաստանի իրանին ենթակա տարածքում, Գ. Տիրացյանը գրում է. «Այդ ընդհանուր առաջնորդացիքի պայմաններում կուտակվող նոր նյութերը էլ ավելի նպաստա-

վոր պայմաններ ստեղծեցին ընդլայնելու ուրարտու-հայկական մշակութային առնգությունների շրջանակները, Այսօր կարելի է արդեն խոսն ոչ թե մի, այլ մի ժամբ քնազավանների մասին, ուրաեղ մշակութային հաջողակցությունը հասաւագաւում է ամենայն օրոշակիությամբ:

Խոսքը միայն հյուրական մշակույթի պատճան նյուղերի մասին չէ, ինչպիսիք են խեցեգործաւրյաւնն ու մետաղագործուրյունը, այլ հասարակության կյանքը բնութագրող այնպիսի ուշագրավ ու էական երեսությունների մասին, ինչպես քաղաքաշինությունը, նարաւագետուրյունը, քաղման ձեւերը և այլն» (ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 43, ընդգծ. — Լ. Շ.):

Կամ՝ «Աւարտա-հայկական մշակութային տոնչարյունների ծավալը, երանց բազմաբնույթ էլուրյունը, ոչ թե սոսկ ազդեցությունների արտահայտություն է, այլ տնհամեմտառ պիտի կարելոր, ծանրակիփա մի երեսույթի արգասիք: Վերևում հիշատակված ուրարտա-հայկական զուգագիպությունները հասկած չեն թողնում, որ խոսքը մշակութային երեվույրների յուրացման ու երանց օրգանավես միաձուլման մասին է» (ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 57, ընդգծ. — Լ. Շ.):

Կամ՝ «Վաղ հայկական գիտարվեստական մետաղագործության ակնհայտ ազգակցություններ աւրարտականի ներ թույլ է ավել հանգելու այն հետեւթյանը, որ վաղ հայկական ժամանակաշրջանում շարունակվել է ուրարտական մետաղագործական մի շարք արհեստանոցների գործունեությունը» (ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 58):

Դ. Տիրացյանի այս ընդհանուրացաւմները, որոնք «ուրարտական» և վաղ հայկական հուշարձանների վերջին 20-ամյա պեղումներով հայտնաբերված նյութերի ու դրանցով կատարված մասնագիտական հանգամանալի ուսումնաբրությունների արդյանք են, ցույց են տալիս, որ «Ուրարտու»— հայկական մշակութային էական տարրերությունների մասին խոսելն իսկ այսօր ավելորդ է, նույնիսկ՝ շիմացություն: Այս հարցում կարեորն ու ընդգծելին հատկապես այն է, որ «Ուրարտու»— հայկական մշակութային նմանություններն են առավել բնորոշը և ընդգրկում են ոչ մեկ, այլ հասարակական կյանքը պայմանավորող մի քանի բնագավառներ՝ նարաւագետուրյուն (որում՝ քաղաքաշինություն, պալատական, տաճարային, ուղմական և բնակարանային ճարտարապետություն), շինարարական տեխնիկա, քարագործության արհեստ և արվեստ, ինցենյուրություն (իր տարրեր տեսակներով ու ենթատեսակներով), մետաղագործություն (մասնավորապես՝ գեղարվեստական մետաղագործություն, գինագործություն, մետաղյա կամ կարարասի, աշխատանքային գործիքներ), տարազ, քաղման ձեւեր և այլն: Այսինքն՝ համարյա նույն բնագավառները և էլ ավելին, որոնցում տարբերություն են նշել հարգարժան ակադեմիկոսները:

Ի դեպ, նմանությունները հիշյալ բնագավառներում այնպիսի ծավալ ու բնույթ ունեն, որ դրանք, ինչպես իրավացիորեն նկատել է

Գ. Տիրացյանը, սոսկ ազդեցությամբ բացատրել անհնար է: Ինչպես տեսանք, դրա փոխարեն օգտագործվում են «մշակութային օրգանական ձևովում», «օրգանական միանություն», «ազգեցացիշ հմտանություն», «մշակութային հաջորդակցություն», «եյուրական մշակույթի ժառանգորդություն» և նման բնորոշումներ, որոնք այլ բան չեն, քան «մշակութային նույնություն» ասելը: Նկատենք նաև, որ այդ բնորոշումների հեղինակ Գ. Տիրացյանը եւ ուրարտացիների «ող հայ» լինելու համար մասնակի գործընթացը է, որով իսկ առաջել է ընգագում փաստերի հանգեց նրա գիտական բարեխպատճեւունը:

Ահա, այս պարագաներում գրել, թե հետագետները ուրարտական մշակույթը ուղարկերեն ապրերում են հայկականից, առնվազն տարօրինակ է և զարմանալի: Ավելի ճիշտ, ինքնախարեւություն է, համապատասխան փաստերի, ուսումնասիրությունների և կարծիքների արհամարհում, վերջին հաշվով՝ նորից գիտականության դեմ մեղանշում, իբ երփներանդ ոչ գիտական դրսւորումներով:

Մեր հաջորդ առարկությունը վերաբերում է Արմանի երկրանգան առվիվ տրված բացատրությանը: Թնարկվող հոդվածում գրված է: «Գալով մ. թ. ա. Յ-րդ հազարամյակի սեպագիր արձանագրություններում նիշտակված Արմանի տեսնով երկրին, որը վերօնիշյալ ելույթներում անընդհատ հոլովկում է, ապա երա տեղագրությունը դեռև չի պարզվել, հայտնի չէ, թե որտեղ է այն գտնվել, ուստի և այս տեղանկան ձեական նմանությունը հայերի անվանումներից մեկից՝ Արմեն-ին, ունետէ եղակացության ելակետ հանդիսանալ չի կարող» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 27):

Այսպիսով, ստացվում է, որ Արմանի երկրանունը հիշատակված է միայն մ. թ. ա. երրորդ հազարամյակի արձանագրություններում, այն էլ՝ հոդվածագիրների կողմից չի տարբերակված, թե քանիսում և որոնցում, այսինքն՝ չեն տարբերակված երկրորդական թվացող այնպիսի մանրամասներ, որոնք ավյալ հարցի համար անշափ կարենոր են: Ավելին, իսպառ մոռացվել է, որ Արմանի երկիրը և արմանին, ավելի ճիշտ, Արմանի երկիրը (Արամա երկիրը) և արամանիք (Արամանեանք) տարբեր գրաձերով ու արտասանաձերով կամ տարբեր նրբերանգներով (օրինակ, «արմիցի»՝ ըստ էրլայի աքքաղերեն արձանագրությունների, Արմե, Աւրմե՝ ըստ «ուրարտականի», Արիմե, Աւրումե, նաև Թիլգ-արիմու՝ ըստ ասսուրականի, Թեգ-Արամա կամ Թոգ-Արամա՝ ըստ հեթիթականի, արիմ-արիմոյի՝ ըստ «հիլիականի» և այլն), հիշտակված են մ. թ. ա. XXIII կամ XXI դարից մինչև մ. թ. ա. VI դարը, որոնք բոլորն էլ Հայկական լեռնաշխարհն ու նրա բնակիչներին նկատի ունեն կամ, զգուշաբար ասած, Հայկական լեռնաշխարհից դուրս չեն:

Այս իրողությունը, իհարկե, կարելի է մեկ անգամ ևս փաստարկել ու հիմնավորել ըստ վերը նշած աղբյուրների և ըստ մասնագիտա-

կան խորազնին ուսումնասիրությունների, սակայն շծավալվենք, դրանք հանրահայտ են, նույնիսկ՝ դասագրքային գիտելիքներ¹: Եվ ենք Արմանի (=Արամանի) երկրի մասին մի քանի տասնյակ վկայություններից ընդամենը մեկ կամ երկու նշում տեղագրորեն գեռես վիճելի են (նկատի են առնված, թերևս, Սարգոն Ա աքքաղացու և Նարամին Ա-ի տեղեկությունները), գեռես չի նշանակում, թե Արմանի երկրը Հայաստանի հետ չի առնչվում, կամ՝ նրա տեղագրումը ընդհանրապես «գեռես չի պարզվել»: Առավելապես չի նշանակում, որ Արմանի—Արմեն (Արմենիա) նմանությունը «ձևական է», որ այդ նմանությունը «որևէ եզրակացության ելակետ հանդիսանալ չի կարող», որ, այսպես ասած, «ոչ մասնագետները» իգուր են այն «հողովում»: Այդպես ասել և մանավանդ, այդպես պնդել նշանակում է համահարթել, արհեստականորեն արժեքագրել և ի չփ դարձնել Արմանի=Արամանի երկրի մասին բոլոր տեղեկությունները կամ դատապարտել «չեզոքության», ինչպես նաև տասնյակ ու տասնյակ հմուտ մասնագետների, այսպես ասած, «ոչ ցանկալի» կարծիքները, այդ ամենը թաղել մեկ դագաղում և նորից ապակողմորոշել ընթերցողին, փակել հետագա համապատասխան հետազոտությունների ճանապարհը: Բայց՝ հանուն ինչի՞..., մի՞թե անհրաժեշտ են փաստերի այդքան զոհողություններ, կամ՝ ո՞րն է նման վարվելակերպի գիտականությունը:

Այժմ՝ մեկ այլ «անմեղ» թվացող առարկելիքի մասին:

Հոդվածագիրները քանից սփորձում են ապավինել փաստերի պակասին կամ «սղությանը»: Դրանով կամենում են ինչ-որ շափով «մեղմացնել»—«կոծկել» իրենց որդեգրած դոգմայի ներքին և արտաքին հակասությունները, իսկ մյուս կողմից էլ, «զգաստացնող» դաս տալ «ոչ մասնագետա-ներին»:

Օրինակ, գրում են. «Զի կարելի ժխտել, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ Ուրարտուի և ուրարտացիների խաղացած գերի հարցը, հիրավի, գիտության մեջ գեռես բավարար լուծում չի ստացել՝ փաստերի սղորդյան պատճառով» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 26, ընդդ.— Լ. Շ.):

Կամ՝ «Ուրվագծված պատմական պրոցեսների մեջ (նկատի ունեն, իհարկե, իրենց «ուրվագծումները», — Լ. Շ.), անշուշտ, դեռևս առեղծվածային և շպարզանված հարցեր կան, որոնք հետազայում կապարաբնեն նորանոր փաստերի և հետազոտությաների միջոցով: Սակայն վերոհիշյալ հոդվածների և ելույթների հեղինակները շկամենալով «կաշ-կանդել» իրենց «եզրակացությունները» փաստերի և տրամարանության անհրաժեշտությամբ, առանց երկար խորհելու և պատշաճ գիտելիքների,

¹Տե՛ս Հ. Ժամկոշյան, Հայ ժողովրդի պատմություն (Աւսումնական ձեռնարկ), պրակ 1, Երևան, 1981, էջ 115—123:

մեկը մյուսից ետեսից համարձակորեն «լուծում» են այդ հարցերը կեղծ հայրենասիրության դիրքերից և ոչ հազվադեպ արժանանում փաստերին անիրազեկ մարդկանց դրվատանքին» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 27, ընդդ.— Լ. Շ.):

Այս հատվածները զարմացնում են խարկանք ստեղծելու իրենց թարուցյալ միտումով՝ ինչպես կարելի է այդքան համառորեն խեղաշթյուրել ակնառու իրողությունը, բազմաթիվ փաստերի նայել ու չնկատել շատը սուլ համարել և միաժամանակ վարկաբեկել այլոց կարծիքը, մոլեգնաբար դասեր տալ բոլոր նրանց, ովքեր «հանդգնում են» նկատել իրենց «չնկատածը»: Եվ իրոք, եթե մի պահ մոռանանք համապատասխան փաստերի առաջությունը և այն, թե դրանցով ինչպիսի կնճուտ հարցեր կարելի է հիմնովին լուսաբանել (այդ ամենին կանդրադառնանք հաջորդ շարադրանքում), գոնե ամենահիմնական՝ հայ-ուրարտացի էթնոնույնության հարցում փաստերը ոչ միայն «սուղ» չեն, այլև սպասվածից շատ ավելին են, պարզապես նկատել է պետք: Այնպես որ, տրվայլ հարցում և եղած փաստերի առկայությամբ համբերելու կամ «նորանոր» փաստերին սպասելու քարոզն է խիստ քննադատելի, մոլորեցնող և ոչ գիտական:

Մեր մյուս առարկությունները վերաբերում են հետեւյալին: Անդրադառնալով հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքի մասին նոր տեսությանը, ըստ որի Հայկական լեռնաշխարհը համարված է նախահայրենիքի կորիզն ու միջուկը, հոդվածի հեղինակները գրում են. «Իհարկե, նոր տեսակետն ունի մի շարք հետաքրքրական և կարենոր կողմեր հատկապես նաև հայոց լեզվի և հայ ժողովրդի ծագման առումով (չի ասվում, որ հեղաշրջող է,— Լ. Շ.), ուստի մեր հասարակայնության հետաքրքրությունը նրա նկատմամբ միանգամայն հասկանալի է: Սակայն այն դեռևս մեռում է հնարավոր վարկած, որը առայժմ մեծ ժանակությամբ հակառակորդներ ունի և տակալին չի ենթակալի» (²) համաշխարհային լեզվաբանական ոլորտներում: Մեզանում այժմ դրան առանց վերապահության արձագանքել են, որպես կանոն, մասնագիտական անհրաժեշտ պատրաստությունից զորկ կեղինակներ, որոնց մոտեցման մեջ պարզորդ նկատվում են զիտության նետ շառնշվող շահագրգություններ» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 28, ընդդ.— Լ. Շ.):

Այս ամբողջ հատվածը, այսպես ասած, գիտական իրաղությունը անհիմն կերպով նսեմացնելու ցայտուն օրինակ է: Այնպիսի օրինակ, եթե ուսումնասիրողը, չկարողանալով գիտականորեն հաղթահարել իր համար «անցանկալին», դիմում է ոչ գիտական միջոցների, սույն պահին՝ լոկ մտքախաղերով խեղաշթյուրելու դատապարտելի միջոցին: Ի հաստատում մեր այս մտքի, նշենք հետեւյալը: 1. Երկու ստվարածավալ հատորներում բազմաթիվ փաստերի խորագնին և հմտագույն վերլուծու-

² «Ուրարտուա առեղծվածը»

թյուններով հիմնավորված տեսությանը¹ (կարելի է ասել՝ սխրանքը) սուսկ «վարկած» է համարվում: 2. Խոսվում է «մեծ քանակությամբ հակառակորդների» մասին, երբ իրականում այդպիսիք հատուկենա են, այն էլ՝ հակադրվելու անհաջող փորձով: Նկատի ունենք ի. Մ. Դյակոնովի փորձը²: 3. «Համաշխարհային լեզվաբանական ոլորտներում շատերը նորագույն այդ տեսության կողմն են, նույնիսկ՝ նորանոր հիմնավորումներ են բերում ի նպաստ դրա, իսկ հեղինակները սպասում են «ցանկալի» քննության: 4. Նորագույն տեսությունը հնդեվրոպական բոյոր ժողովորդների և, մասնավորապես, հայ ժողովորդի լեզվի ու ծագումնաբանության խճճագած ու խճողված հարցերում հեղաշրջող նշանակություն ունի, իսկ հեղինակները ընտրել են նվազագույն երանգը՝ «...ունի մի շարք Առաջինական և կարևոր կողմեր...»: 5. Այս ամենից զատ, մոռանում են ասել-խոստովանել ամենակարերը, որ նորագույն տեսությունը հնդեվրոպական ժողովորդների նախահայրենիքի մասին անհամեմատ փաստարկված և հիմնավոր է, քան նախորդ տեսությունները, քան նաև, այսպես կոչված, եվրոպակենտրոն տեսությունը: 6. Գեն խոստովանել նաև, որ օրեօր ավելանում է նորագույն տեսության համոզված համախոհների քանակը, իսկ եվրոպակենտրոն տեսությանը՝ նվազում և այս:

Այս ամենը մոռանալ, կամ էլ հնարամտորեն հեռու պահել ընթերցողից, միաժամանակ անողոքաբար պախարակել ընդդիմախոսներին, մեղմ ասած, անհարիր է գիտականության ամենատարրական պահանջներին:

Մի հանգամանք ևս:

Քննարկվող Հոդվածում կարծիք է Հայտնվում, «...որ ուրարտացիներն իրենց ստեղծած պետության մեջ երեք մեծամասնություն չեն կազմել, և Հայկական լեռնաշխարհում նրանց շուրջ երկուառկես հարյուրամյակ տեսած տիրապետությունը չի հանգեցրել ուրարտական ժողովրդի կազմավորմանը: Ուրարտուն եղել է տարրեր էթնիկական տարրերի՝ ցեղերի ու ցեղախմբերի... ուզմաքաղաքական միավորում, որի մեջ իշխող բիայնական տարրը փոքրամասնություն է կազմել: Մնացած էթնիկական տարրերի թվում են եղել, բացի խուռական, խեթալուվական և այլ ցեղերից, նաև մեծ թվով հայալեզու ցեղեր (զգուշանում են ասել՝ հայեր») (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 26—27, ընդդ. — Լ. Շ.):

Բացի այս, առանձնացվում-նշվում են նաև «հայալեզու ցեղերի բնակավայրերը (տարածքները) Հայկական լեռնաշխարհում» մ. թ. ա. երկ-

րորդ հազարամյակի երկրորդ կեսին և մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբներին: Դրանք են, ըստ Հոդվածագիրների: «...Եռուսիս-արևմուտքը (Հայասա), հարավ-արևմուտքը (Արմե, Ուրմե), և մասմբ արևմուտքը՝ Եփրատի ոլորանը (Մուշքեր)» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 27):

Մի կողմ թողած (առայժմ), որ խուռական և խեթա-լուվիական ցեղերն ու ցեղամիությունները, նաև՝ ուրիշներ (³), երբեք Հայկական լեռնաշխարհի բնակիչներ չեն եղել, ավելի ճիշտ, երբեք չեն պայմանավորել այդ լեռնաշխարհի էթնոպատկանելությունը, ինչպես Հայերը (պարզապես՝ փաստեր չկան, անճիշտ պատկերացում է) և սոսկ առողջել են Հայերին ու Հայաստանին, որ մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից, ըստ եղած փաստերի համատեղ քննության, Հայկական լեռնաշխարհին անհարիր է բազմացեղայնությունը, նույնիսկ՝ երկու հավասարազոր ցեղամիությունների կամ երկու ժողովորդների համատեղ գոյությունը¹, որ մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջերից արդեն կազմավորված հայ ժողովորդն է Հայկական ամրող լեռնաշխարհի բնակիչը (Մեծ ու Փոքր Հայքերը միասին վերցրած)², այսինքն՝ հոդվածագիրները ժամանակագրություն և տեղագրություն շատ ու շատ են «սահմանափակում» հայ ժողովորդին, այն էլ՝ «Հայալեզու (³) ցեղեր» համարելով, մի կողմ քրողած, որ հոդվածագիրների նշած հայաբնակ վայրերն իսկ ըստ այլ գիտնականների խուռիաբնակ և ուրարտաբնակ են համարվում³. Մի կողմ քրողած, որ մուշքերի «հայալեզու» ցեղ լինելը պացացված համարել չեն կարելի և, ահա, այսքան կարենոր (անշափ կարենոր) բաներ մի կողմ թողած, որոնք արագագրությամբ ի մի են հավաքվել՝ ընդամենը մեկ փոքրիկ պարբերության մեջ, և մատուցվում են իրեն վերջնական ճշմարտություններ, ուղագրություն դարձնենք միայն մի հարցի վրա:

Ինչպես տեսանք, վկայակոչված հատվածում ասված է (ի դեպ, առաջին անգամ և խիստ վճռորոշ), որ Հայկական լեռնաշխարհում «ուրարտական» ժամանակից էլ առաջ, հետևաբար՝ «ուրարտական» ժամանակաշրջանում ևս, եղել են «մեծ թվով հայալեզու ցեղեր», իսկ ուրարտացիները կամ բիայնացիները «իրենց ստեղծած պետության մեջ (հետևաբար դրանից առաջ էլ— լ. Շ.) երեք մեծամասնություն չեն կազմել և ժողովորդ չեն դարձել: Ասվածը, իհարկե, կես ճշմարտություն է, միաժամանակ՝ գիտական շատ կարենոր նորություն և խոստովանություն իրենց կողմից, սակայն դրանով (թեկուզ կես ճշմարտությամբ) նրանք հակադրվում են և իրենց համախոհների մինչև

¹ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропеицы, т. I, II. Тбилиси, 1984.

² И. М. Дьяконов, О прародине иссителей индоевропейских диалектов («Вестник древней истории», 1982, № 3, с. 3—30, № 4, с. 11—25).

³ Տիւ և լ. Շահինյան, Գիրքը դարերի խորքից:

² Նույն տեղում:

И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 16—18, Հայ ժողովորդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱԱ հրատ.), հ. 1, Երևան, 1971, էջ 146—148:

Գ Հ Ո Ւ Խ Բ

ԽՈՒՐՈՒ—«ՌԻՎԱՐՏ» ԷԹՆՈԼՈՒՅՑՆԱՅՄԱՆ ՍԽԱԼԱԿԱԾԱՌՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՌԻՎԱՐՏՍԴԻՏԱԿԱՆ ԱՅԼ ՀՐՄԱՆԱՀԱՐՑԵՐ

Այժմ ուշադրություն հրավիրենք ուրարտագիտության մի քանի հիմնարցերի վրա, առանց որոնց հանգամանակի քննության հնարքոր չէ հստակ և ամբողջական կատկերացում ունենալ, այսպես կոչված, «ուրարտների» համահայաստանարնակ լինելու, նրանց էթնիկական պատկանելության, հայ—«ուրարտ» կապերի կամ նմանությունների և այլ հիմնախնդիրների մասին։ Հիմնախնդիրներ, որոնք դնալով ոչ միայն չեն հստականում և հավանական դառնում, այլ՝ հեռանալով իրենց արմատներից, ավելի խճճված, անհավանական, նույնիսկ հակապատմական տեսք են ստանում՝ սպառնալով խեղուկ խավարում պահել՝ թաքցել, թաղել, այսպես կոչված, նախաւրարտական ժամանակաշրջանի Հայաստանին վերաբերող խիստ ակնբախ փաստերն ու տեղեկությունները։ Ուրարտագիտական աշխատություններից այն տպագորությունն է ստացվում, որ երբեմն ասված այս կամ այն անհիմն կամ բավարար շափով չհիմնավորված միտքը, կարծիքը, ենթագրությունը հանիրավի շատ ավելին է երկում, քան տասնյակ ու տասնյակ հակառակն ապացուցող փաստեր։ Նման պարագաներում օրինական հարց է առաջանում՝ զիտության համար կարեղը փաստե՞րն են, թե փաստագորկ, սակայն դոգմա դարձած հայտարարությունները։ Ահա, այսպիսի մի քանի դոգմաների մասին է մեր խոսքը, որոնց կոչեցինք ուրարտագիտության հիմնախնդիրներ, որոնք և կախարդական գավազանի դեր են կատարում առանձին ուսումնասիրողների ձեռքին՝ դրանց վրա են պատված շատ ուրիշ նույնքան անհիմն ենթահարցեր, կարծիքներ, ենթագրություններ ու տեսակետներ։ Ավելին, դրանց հիման վրա է նաև, որ փորձեր են արվում լուցնելու հակառակն ապացուցող գիտնականներին։

Այսպես, ուրարտագիտության մերօյա հիմնախնդիրներից մեկը դեռևս բավարար շափով չհիմնավորված խուրիի—«ուրարտ» նույնացումն է, որով արհեստականորեն խուրիները դառնում են հայաստանաբնակ։

Հ. թ. ա. Յ-րդ հազարամյակից սկսած, իսկ Ուրարտու երկրանվանը՝ նաև այս նույնացումով, տրվում է էթնիկական իմաստ։ Ի հաստատումն այսպիսի ընկալման, կամ կարծիքի, բերենք «Պատմա-բանասիրական հանդեսում» զետեղված հոդվածներից մեկի առաջին միտքը։ «Վերջին ժամանակներում,— գրում է հոդվածի հեղինակ Գ. Տիրացյանը, — նոր թափով արտահայտված կամկածներից անկախ (կամենում է ասել կամկածներին կարևորություն մի տվեք, — և. Շ.) կարելի է ապացուցված համարել, որ Հայկական լեռնաշխարհը վաղուց բնակեցնող խուրի-ուրարտացիները հայերի նախնիներն են և կազմել են հայ ժողովրդի հիմքը» (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 195)։

Ինչպես տեսնում ենք, այնքան վճռաբեկ է ասված, որ թվում է գործունենք շատ հիմնավոր և անառարկելի ճշմարտության հետ։ Իրականում, սակայն, այդպես չէ։ Խուրիի—«ուրարտ» կապը սոսկ լեզվական, այն է՝ բռնաձիգ նմանեցումների ծնունդ է և դրանով իսկ ազատ երեակայության ու միտումի արգասիք։

Առանարակ, հնագույն ժողովուրդների էթնիկական պատկանելությունը կամ ազգակցական-արյունակցական կապը որոշելիս անհրաժեշտ են հետևյալ նվազագույն պայմանները, Առաջին, մարդարանական նմանություն։ Երկրորդ, տարածքային նույնություն (իհարկե, որոշակի ժամանակի համար), Երրորդ, մշակութային նմանություն։ Չորրորդ, լեզվական նմանություն կամ ընդհանրություններ։ Այնպես որ՝ մի քանի պատահական բառանմանություններով, մանավանդ՝ նմանաձև անուններով, կամ բերականական այս ու այն ձևի դեռևս վիճելի «ընդհանրությամբ» ժողովուրդներին ազգակից դարձնել հնարավոր չէ։

Ահա, վերոհիշյալ առաջին երեք պայմաններով, որոնք շատ ավելի կարենոր են և նույնացման համար առավել անառարկելի հիմք, քան կարենոր են և ապագական համար առավել անառարկելի հիմք, քան կարենոր են և ապացուցված և չի ապացուցվում խուրիի—վերջինը (լեզվականը), չի ապացուցվում խուրիի—«ուրարտ» ազգակցական կապը։ Ընդհակառակը, ապացուցվում է, այն է՝ ոչ քիչ փաստերով, որ նրանք այդպիսի կապ չեն ունեցել։

Այսպես, 1. Դեռևս ո՛չ մի ուսումնասիրող և ո՛չ մի փաստով ցույց չի տվել խուրիների և, այսպես կոչված, «ուրարտների», ավելի ճիշտ՝ չի տվել խուրիների և, այսպես կոչված, «ուրարտների», ավելի ճիշտ՝ ուրարտուի բնակիչների մարդարանական կապը, կամ նույնությունը։ Ուրարտուի բնակիչների մարդարանական կապը, կամ նույնությունը։ Ուրարտուի բնակիչների մարդարանական կապը, կամ նույնությունը։ Դարձնելով շուրջ այս հարցում, պարզած է դեր ու տասնյակ հայտնի շէ առ պես, խուրիների մարդարանական տիպը զիտությանը հայտնի չէ առ պես, խուրիների մարդարանական որևէ նմուշ, որևէ նշույլ չի հայտնաբերված։ Ուրեմն, խուրիի—«ուրարտ» ազգակցական «նույնությունը» հաստատող առաջին հիմքն ու պայմանը շուրջ զիտությունը։

2. Խուրիների և Ուրարտու երկրի բնակիչների միջև չի եղել, չկաց և ցույց չի տրված նաև տարածքային նույնություն։ Այսինքն, որ նրանք և ցույց չի տրված նաև տարածքային նույնություն։ Այսինքն, ինչ-որ ժամանակ համատեղ կամ կողք-կողքի ապրած լինեն միենույն հնչությունում ժամանակական լեռնաշխարհում, չնայած տարածքում, կամ տվյալ դեպքում՝ Հայկական լեռնաշխարհում, չնայած

այդ առթիվ եղած ոչ քիչ թյուր կարծիքներին: Օրինակ, խուբրի—«ուրարտ» նույնացնող հիմնական տեսաբան ի. Դյակոնովը «Пре́дыстория армянского народа» (Ереван, 1968) գրքում խիստ երկրայրեն՝ «Հնարավոր է» (էջ 16), «Հավանական է» (էջ 17) բառերի օգտագործմամբ ենթադրում է, որ խուրրիները բնակվել են Եփրատի և Առաքի վերին հոսանքների շրջաններում, Սասոն լեռներում, Կենարիսիսի կամ Բուտան գետի հովտում, Խաբուր գետի (Արեւլյան Տիգրիսի) վերին հոսանքներում, Ուրմիա լճի արևմտյան և Հարավ-արևմտյան շրջաններում (էջ 16—17): Այսինքն, եթե ըստ գավառների ու նահանգների ասենք, բնակվել են Հայաստանի Բարձր Հայք, Աղձնիք, Կորդուք, Պարսկահայք, մասմբ նաև Տուրուբերան և Վասպուրական նահանգներում: Ի դեպ, Դյակոնովը այսպես է ենթադրել, իբր, մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբներին վերաբերող տվյալներով (թեպետ ոչ մի տվյալ չի նշում), իսկ դրանից վաղ ժամանակների համար (մ. թ. ա. 3—2-րդ հազարամյակների) ստիպում է մտածել (դարձյալ փաստ շրեթենվ), որ խուրրիները առավել զանգվածային, առավել ծավալուն տարածում են ունեցել Հայկական լեռնաշխարհում):

Եվ, ահա, ի. Դյակոնովի այսքան երկրայական և այսքան չհիմնավորված ենթադրությունները լոկ կրկնվելով «անառարկելի» խոսքի արձեք են ստանում և ներկայացվում են հետեւյալ շարադրանքով. «Խուրրիական տարրը,— գրում է Գ. Տիգրացյանը,— վկայված է (՝—լ. Շ.) Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասերում (որտեղ նա համագոյակցում էր Հնդկապատճի Հայ-արմենների հետ), Վանա լճից Հարավ, Արեւլյան Տիգրիսի հովտում..., Ուրմիա լճի շրջապատում և հյուսիսում Դիառիքի երկրում, ապագա Տայքում (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 194):

Մի կողմ թողած նրերանգային տարբերությունները, որոնք դարձյալ ոչնչով չեն հիմնավորված, վերը նշված երկրամասերը, ինչպես տեսայլ կերպ և ազելի վճռական ասված, որ իբր, այսպես «վկայված է»: Սակայն ինչպես հավատալ և հանուն ինչի՞ հավատալ, երբ այդպես ոչ մի տեղ չի վկայված և ինչո՞ւ, չմորանալով փաստերի մեջ, այդքան թեթեածնուն տպագորություն ստեղծել: Բացի այս, կրկնությունները չեն, որ պետք է պատմական ճշմարտություններ բացահայտեն, այլ՝ փաստերը և դրանց համակողմանի ու հանգամանալի քննությունը: Իսկ փաստերի թելադրանքն ու պահանջն այն է, որ խուրրիները ոչ մի դարում Հայկական լեռնաշխարհի և ոչ մի մասում տեսական և հաստատուն բնակություն չեն ունեցել, սոսկ առնչվել են Հայաստանի հարավային նահանգների՝ Աղձնիքի, Կորդուքի հետ, այն էլ իրենց հզորության՝ Խուրրի-Միտանի կոված պետության ժամանակաշրջանում (մ. թ. ա. XV—XIII դարեր): Այսինքն, Հայաստանի հետ առնչվել են, այն էլ հիշյալ դարերում միայն, ոչ թե էթնոտարածքային, այլ վարչատարածքային հարա-

բերություններով: Մրանք է ականորեն տարբեր բաներ են և պետք է, և պարտավոր ենք զանազանել իրարից:

Այսք նաև, որ խուրրիներին հայաստանարնակ դարձնող ի. Դյակոնովը վկայակոված ենթադրությունից ընդամենը 17 տող առաջ, ինքն իրեն հակասելով, խուստովանել է փաստերով հաստատվող կես ճշմարտությունը: Օրինակ, նա գրում է. «Անհամեմատ դժվար է որոշել խուրրիների բնակության հյուսիսային և արևելյան սահմանները: Եղած գրավոր աղբյուրները բավական չեն լուսաբանելու համար մ. թ. ա. II հազարամյակի Հայկական Տավրոսից հյուսիսի ընկած (վայրերի) էթնիկական պատկերը (էջ 15):

Այստեղ շասված կես ճշմարտությունն այն է, որ գիտությանը այժմ հայտնի գրավոր աղբյուրներով և այլ տվյալներով պարզից էլ պարզ է Հայկական Տավրոսից հյուսիսի ընկած վայրերի էթնիկական պատկերը մ. թ. ա. 3—2-րդ հազարամյակներում, եթե, իհարկե, բոլոր փաստերը համատեղ ուսումնասիրպես: Կարծ ասած, աղբյուրներն ու փաստերը մեղք շունեն, որ չեն նկատվում: Այսինքն՝ չի նկատվում այն, որ մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսերից Հայկական լեռնաշխարհի մի քանի նահանգներում ստիպում էր արդեն բնակվում է հայ անոնք ունեցող էթնոսը՝ Կորդուքում, վանա լճի շրջակայքում, Տարոն-Տուրուբերանում, Արարատյան դաշտում, Շիրակում, Սևանա լճի ավազանում, Սյունիքում, իսկ 2-րդ հազարամյակի սկզբներից նույն հայ ժողովուրդն զբաղեցնում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը՝ Մեծ ու Փոքր Հայքերը միասին վեցրած:

Դալով խուրրիներին՝ թե դժվար է որոշել նրանց բնակությունը Հայկական Տավրոսից հյուսիսի և արևելք ընկած երկրամասերում (սա է ասված կես ճշմարտությունը), այնժամ հարց է առաջանում՝ խուրրիներին ինչ՝ պես համարել Բարձր Հայքի, Տայքի, Վանա լճի շրջակայքի, Կորդուքի, Արևելյան Տիգրիսի վերնագավառների, Ուրմիա լճի շրջակայքի բնակչությունը, Ուրմիա լճի շրջակայքի արևելք, Ահա թե ինչու մեկ այլ առիթով ասել ենք, որ խուրրիներին հայաստանարնակ դարձնելը թողնում է բռնի ցեղատեղափոխության տպագորություն: Գիտությանը հայտնի բոլոր արձանագրություններով, նույնիսկ Ուրքեց քաղաքի ամենահին արձանագրությամբ (մ. թ. ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կես) նրանք հիշված են Հյուսիսի Միջագետքում, ավելի ուշ նաև Ասորիքում: Մրանք են փաստերով հաստատվող նրանց բնակվայրերը:

Այսպես որ խուրրի—«ուրարտ», այսպես կոչված, ազգակցական վապի երկրորդ կարևոր հիմքը ևս՝ տարածքային նույնությունը, ապացուցված չէ և, մեր կարծիքով, չի կարող ապացուցվել:

3. Ապացուցված չէ նաև խուրրի—«ուրարտ» մշակությաին նույնությունը: Դարձյալ այն պատճառով, որ խուրրիների մշակությաին արժեքներից չնման բեկորներ են հայտնի, իսկ եղածն էլ եղբեր շունի Ուրար-

տուի բնակիչների (մեր կարծիքով՝ Կորդուքի կամ Քարդու Արարադ երկրի հայ բնակիչների) մշակույթի հետ: Նման չեն ո՛չ մետաղագործությամբ, ո՛չ խեցեգործությամբ, ո՛չ շինարարական արվեստով և ո՛չ էլ այլ բնագավառներով: Ուրեմն, խորրի—«ուրարտ» «ազգակցական կապի» երրորդ կարևոր հիմքը ևս չկա, բացակայում է:

4. Ազգակցական կապը հաստատող մյուս հիմքը կամ պայմանը, ինչպես նշվեց, լեզվական նմանությունը կամ ընդհանրություններն են: Սակայն լեզվական այն ընդհանրությունները, որոնք բերված են ուսումնասիրողների կողմից, և քանակով, և էությամբ բավարար ապացուցներ չեն խորրի—«ուրարտ» ազգակցական կապի համար, Դրանք բառի կամ անունների պատահական (մեծ մասամբ շինծու, բռնաձիկ) նմանություններ են, կամ էլ բացատրվում են փոխազեցություններով: Իսկ որ խորրիները շփման և փոխազեցությունների կետեր ունեցել են Հայկական լեռնաշխարհի, այդ թվում նաև Կորդուքի, այլ անունով՝ Քարդու Արարադի կամ Ուրարտուի բնակիչների հետ, բավականաշափ հայտնի է և ապացուցելու հարկ չկա: Ավելին, Միտանի կողված պետության ժամանակաշրջանում (մ.թ.ա. XV—XIII դարեր) խորրիները նույնիսկ իշխել են Հայկական լեռնաշխարհի հարավային գավառների վրա՝ Աղձնիքում, Կորդուքում և այս ժամանակից էլ կարող էին լինել նրանց լեզվական փոխազեցությունները: Փոխազեցությունները մերժելի չեն (ի գեպ, ոչ միայն խորրիներնի և «ուրարտերենի», այլև խորրիներնի և հայերենի միջև), մերժելին և շապացուցվածը խորրի—«ուրարտ» լեզուների ազգակցական կապն է: Ահա թե ինչ է գրում այս առթիվ ականավոր լեզվաբան, լեզուների պատմության քաջագիտակ Գ. Զահուկյանը, ռներկայումս,— գրում է նա,— մի շարք գիտնականների շանքերով (Յ. Ֆրիդրիխի, Ֆ. Բորբի, Ա. Գյուտցեի, Գ. Ղափանցյանի, Գ. Մելիքիշվիլու, ի. Դյակոնովի և ուրիշների) հաստատված է (Համարվում, — Լ. Շ.) խորրիտական և ուրարտական լեզուների ազգակցությունը: Այդ լեզվաբնականիքը անվանում են խորրիտ-ուրարտական կամ «ալարոդյան»: Ի. Մ. Դյակոնովի կողմից փորձ է արվել գրելու այդ ընտանիքի համեմատական քերականությունը, և նույնիսկ վերականգնելու խորրի-ուրարտական նախալեզվի սկզբնական տեսքը: Սակայն, ցավոք, (նրա) մի շարք դատողություններ խոսում են այդ փորձի վաղաժամության մասին: Նաև եղրակացություններ հենվում են սոսկ եղակի օրինակների վրա, մեծ տարբերություններ կան այդ լեզուների հնչյունաբանական կառուցվածքում, չեն սահմանագատված փոխառությունները բուն բառապաշարից, բացատրվող (համեմատվող) բառերի ընդհանուր մասը չի ներշնչաւ (չի համոզում, — Լ. Շ.), չկա համապատասխանություն բարեկանությամբ (ընդգծ. — Լ. Շ., տե՛ս «Եզանություններ... 1967, էջ 13):

Հստ ամենայնի ճշմարիտ է հարգարժան լազվաբանը: Եվ, իրոք,

ավելի քան 50-ամյա խիստ զանազիր պրատումներից ու համեմատություններից հետո այդքան ենթադրական է խորրի—«ուրարտ», այսպես ասած, «լեզվական կապը», որը բնավ էլ արյունակից կամ ազգակից լեզվաբնտանիքի արտահայտություն չէ, և հույս շունենանք, թե ապագան այդքան անհաջտելի տարրերություններին լուծում կտա, կամ կհաշտեցնի դրանք:

Համոզված ենք այս բանում ոչ միայն այն պատճառով, որ ականավոր շատ լեզվաբնների ավելի քան 50-ամյա զանազիր պրատումները հիմնավոր ու համոզիլ արդյունքի շեն հասցրել, ոչ էլ այն պատճառով, որ բազում փաստեր տարրեր ուղիներով հաստատում են Հայք-Հայաստանի միայն հայաբնակ լինելը նաև հիշյալ դարերում, այլև այն պատճառով, որ «ուրարտ» անունով ծողովուրդ և, հետևաբար, «ուրարտերեն» կոչված լեզու գոյություն չի ունեցել:

Այսպիսով, 1) Խորրի—«ուրարտ» ազգակցական կապի ոչ մի հիմք չկա: Այս առթիվ ապահած մտքերը լոկ փաստազուրկ հայտարարություններ են: Ինչպես, օրինակ, ի. Դյակոնովի ենթադրությունը, թե «խորրիները և ուրարտները նախապես եղել են մեկ էթնոս» (էջ 17), կամ՝ ըստ Գ. Տիրացյանի՝ «(Հայկական) լեռնաշխարհի զգալի տարածությունները բնակեցված էին իրար ազգակից խորրի-ուրարտական ցեղերով» (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 195), կամ էլ՝ նմանաբնույթ անհիմն պնդում-հայտարարություններ:

2. Պետք է սղել «խորրի և ուրարտ» անունների միջև դրված գծիկը, որը զանազան թյուրիմացությունների տեղիք է տվել: Նախ, ինչպես ասվեց, այդ գծիկ-հավասարումով է, որ խորրիները դառնում են հայաստանաբնակ, իսկ «ուրարտը» ստանում է էթնիկական իմաստ, Շատ կարեղոր է նաև, որ գծիկը սղելով խորրիները պետք է դուրս տարվեն Հայկական լեռնաշխարհից (բոլոր տեղերից) և այն հատկացվի իր հնագույն ու բնիկ տեղերին՝ Հայք-հայերին, որոնց այդ երկրի բնակիչ լինելը հաստատում են գրավոր և այլ բնույթի տասնյակ աղբյուրներ, արդեն անհերքելի դարձած փաստեր ու տեղեկություններ: Ինչպես ասում են, անաշառ լինել և այդ ամենը տեսնել է պետք: Վերջապես, այդ գծիկը սղել է պետք, փաստերով հաստատվող և ճշգրիտ պատմությունը իմանալու համար, վերջին հաշվով հայովորդի ծագումնաբանությունը և հարակից այլ հարցեր ճիշտ ընկալելու համար: Ահա, թե ինչ ավերակող գեր է ստացել այդ անհիմն գծիկ-հավասարումը:

Ուրարտագիտության մյուս, պատմությունը ոչ պակաս ավերակող հիմնախնդիրներից մեկն էլ Ուրարտու անվանը սիսալմամբ համահայտանյան և ապա էթնիկական իմաստ տալն է:

Թանը այն է, որ Ուրարտու անունը տարրեր ձևերով՝ Ուրաշտու, Ուրուատրի, Ուրատրի, Ուրարտու հիշվում է միմիայն ասսուլաբաբելական մ.թ.ա. XIII—VIII դարերի արձանագրություններում: Գիտության

մեջ ընդունված մյուս ձևերը, օրինակ՝ Ուրարտու—Արարատ (էրիրաթ) կամ Այրարատ, Ուրարտու-ալարոդ և այլն սոսկ ենթաղրություն-կոա. հումներ են, քանի որ վերջինները տարածքային առումով չեն համապատասխանում ասսուրաբելական արձանագրությունների հիշած Ուրաշտու-Ուրարտու երկրին:

Այս արձանագրությունների մանրակրկիտ ուսումնասիրություններից պարզվում է, որ Ուրարտու երկրը եղել է Նախրիի, այսինքն՝ Հայք-Հայաստանի ծայրամասային երկրամասերից մեկը (իր վարշառաղաքական վիճակով մերթ Հայք-Նախրիի կազմում, մերթ Ասորեստանին ենթակա ու հարկատու, մերթ էլ անկախ ու առանձին) և գտնվել է Արևելյան Տիգրիսի միջին ու վերին հոսանքների շրջանում, հիմնականում համապատասխանելով Մեծ Հայքի Կորդուք-Կադմեա տուն նահանգին, ավելի վաղ անվանումով՝ Արարադա երկրին կամ Քարդա Արարադին, ավելի ուշ՝ Խորի-դադի Կոշված լեռան շրջակայքին։ Այսպիսով, Ուրարտու երկրը և՛ անվանապես, և՛ տարածքով, ըստ ասսուրական արձանագրությունների, Արարադա երկրին է՝ Քարդու Արարադը, այսինքն՝ Կադմեա տուն-Կորդուքը, ինչպես ընդունում են նաև այլ ուսումնասիրողներ, նույնիսկ ուրարտապաշտպաններից ոմանք, Ուրեմն, ըստ ասսուրական արձանագրությունների, ոչ մի հիմք չկա Ուրարտու անունը տարածել ամբողջ Հայք-Հայաստանի, կամ նրա մեծագույն մասի, կամ էլ Արարատյան դաշտի ու Այրարատյան նահանգի վրա, ինչպես վարդում են։ Պետք է իրերը հստակ զանազանել և կոչել իրենց իսկական անուններով։

Ոչ մի հիմք չկա նաև տարածքային առումով նույնացնելու նախրի և Ուրարտու երկրանունները կամ երկրները, կամ էլ հեշտ ու հանդիսագրել նախրի—Ուրարտու Ընդգծենք նորից, որ Արարադա երկիր—Ուրարտուն Հայք-Նախրիի մի երկրամասն է միայն, ըստ աղբյուրների համատեղ քննության՝ Կադմեա տուն—Կորդուքը, և անվանական, խարուսիկ նմանությունից զատ, երբեք էլ Հայք-Նախրիի մյուս երկրամասը չէ, Արարատյան դաշտը կամ Այրարատյան նահանգը չէ։ Այլ հարցեր են արդեն, որ Հայք-Հայաստանը երայական աղբյուրներով կոչվել է Արարատի երկիր, Արարատյան թագավորություն՝ Արարատ լեռան ու դաշտի նմանով (նախապես, ըստ հայերենի՝ Այրարայարտ), կամ էլ՝ ուրարտական կոշված պետությունը, ավելի ճիշտ, Բիայնայի կամ Վանի թագավորությունը կարողացել է ինչ-որ ժամանակ (մ.թ.ա. VIII դ.) համառ պայքարով վերամիավորել ու տիրել համարյա ամբողջ Հայք-Հայաստանին։ Մի խոսքով, հիմք ու իրավունք չկա Ուրարտու անունը գործածել Հայք-Նախրիի փոխարեն, կամ էլ մ.թ.ա. VIII դարի համահայաստանյան պետությունը կոչել ուրարտական, գոնե, անհամեմատ հիշտ կլինի ասել Բիայնայի կամ Վանի թագավորություն, ինչպես իրավացիորեն վարփում են առանձին ուրարտակետներ՝ մ.թ. Պիոտրովսկին, ն. Հարությունյանը և ուրիշներ։ Այսպիսով, առարկելին ոչ թե տվյալ

դարաշրջանի տվյալ պետության գոյությունն է Հայաստանում (համահայաստանյան, թե կիսահայաստանյան, միևնույնն է), այլ այդ պետությունը «Ուրարտու» կամ «ուրարտական» կոչելը։ Սրանք ևս կարենոր ու տարբեր բաներ են և պետք է զանազանի՝ իստուդույնս հետևելով փաստերին։ Մենք գեռես կտեսնենք (նաև, և առաջին հերթին հենց ուրարտական կոչված արձանագրություններով), որ Բիայնայի կամ Վանի տիրակալները (մեր համոզումով հայ իշխողներ) բռնակալական և համապայքար են մղել ամբողջ Հայք-Հայաստանին տիրելու համար, այսինքն բռնակալական պայքար են մղել Հայք-Հայաստանի հնամենի կենտրոնական և օրինական տերերի դեմ, որոնց նստավայրը Սրմավիրն էր՝ Արարատյան դաշտում, նույնիսկ հաղթել և շուրջ 100 տարի տիրել ամբողջ Հայք-Հայաստանին, սակայն, ի վերջո, պարտություն են կրել և նորից իշխանությունը «զիջել» օրինական, ժառանգական տերերին, կամ օրինական դինաստիային։ Սա իրողություն և գաղտնիք է, որը չի երևացել առաջոր և բացահայտվում է փաստերի համատեղ ու համակողմանի քննությամբ։

Այժմ՝ «Ուրարտու» անվան էթնիկական բնույթի մասին։

Նախապես ասենք, որ «Ուրարտու» անվանը երբեք և ոչ մի արձանագրության մեջ չի տրված էթնիկական իմաստ։ Օրինակ, Սալմանասար Գ-ը (859—825 թթ.) Ուրարտուի տիրակալին հիշում է «Արամու ուրարտյա» ձևով, որ նշանակում է՝ «ուրարտացի Արամու», այսինքն՝ «Ուրարտու երկրի (տիրակալ) Արամու»։ Կամ՝ Սարգոն Բ-ը (721—705 թթ.) նշում է «Ուրսա ուրարտյա», դարձյալ նշանակում է «ուրարտացի Ուրսա-Ռուսա», այսինքն՝ «Ուրարտու երկրի (տիրակալ) Ուրսա-Ռուսա»։ Ավելին, միշտ և ամենուր «Ուրարտու անվան վրա դրված է «երկիր» ցուց տվող նշան (դետերմինատիվ) և, կարծես թե արձանագրող վարպետները կամեցել են ասել՝ ՀՀփոթեք, «Ուրարտու» կոչվածը երկրի անուն է և ոչ ցեղամիության կամ ժողովրդի անվանում։ Այս նշումը հանրահայտ իրողություն ու փաստ է, հայտնի նաև ուրարտապաշտպաններին։

Այսուհետք, շրջանցելով արձանագրողների այս նշում-պատվիրանը, «Ուրարտու» երկրանվանը համառորեն ներարկվում է էթնիկական իմաստ, որ, իբր, գոյություն է ունեցել այդ անունով ցեղ կամ ժողովրդ։ Իրականում «ուրարտ», «ուրարտներ» ցեղ կամ ժողովրդ գոյություն չի ունեցել ո՛չ Հայք-Հայաստանում, ո՛չ Հայք-Հայաստանից դուրս, ո՛չ էլ այդ մասին որևէ տեղեկություն կա։

Մի հանգամանք ևս, Ուրարտուն ոչ հայկական համարող առանձին գիտնականներ (Դ. Սարգսյան և ուրիշներ), նկատի ունենալով այս հանրահայտ իրողությունը և դրա հարուցած անհաղթելի դժվարությունը, այժմ էլ ապավինում են «բիա» անվանը, դրան տալիս են էթնոիդաստ, ելենելով այն բանից, որ Ուրարտուի թագավորներն իրենց կոչել են Բիայ-

նայի տերեր, պետության կենտրոնական տարածքը՝ Բիայնա, բնակիչներն՝ բիայնացիներ, և այլն: Սակայն, այդպես մտածելիս, նրանք չեն ուզում տեսնել, որ դրանով «բիա» անունով ցեղ կամ ժողովուրդ չի ստեղծվում, քանզի այս անունով ևս ցեղ կամ ժողովուրդ չի հշված ո՛չ ուրարտական կոչված շուրջ 500 արձանագրություններից որևէ մեկում, ո՛չ էլ որևէ այլ աղբյուրում, որ այս դեպքում ևս աշխարհագրական անոնք առանց հիմնավորման վեր է ածվում էթնոպանվան, այսինքն՝ ընդունվում է ցանկալին փաստականի փոխարեն: Իսկ երբ ընդունում ենք Բիայնա անվան համապատասխան ստուգաբանությունը՝ Վիայնա-Վիանի-Վանի, այսինքն՝ Վանի գավառ, Վանի տերեր, վանեցիներ, կարծում ենք, առավել ցցուն է երեսում տվյալ անվան աշխարհագրական իմաստը, որից էթնոփաստ կորպելն ավելի և ավելի է դառնում մերկապարանոց ցանկություն:

Այս էլ բոլորը չեն: Ուրարտուին կամ Բիայնային ող հայկական բովանդակություն կամ ող հայկական էթնոշապիկ հագցնելուն մեծապես նպաստել է, այսպես կոչված, «ուրարտերեն լեզուն», այսինքն՝ Հայաստանում հայտնաբերված և «ուրարտական» կոչված սեպագիր արձանագրությունների լեզուն, որը հայ-«ուրարտ» էթնոկապը: Կամ ազգակցությունը խզող ամենահիմնական փաստարկն է: Ավելի ճիշտ, այսօրվա դրությամբ անառարկելի համարված չմիակ փաստարկը: Այս հարցին կանդրագառնանք հայ-«ուրարտ» էթնոնույնության հարցերը քննարկելիս:

Վերջապես, հարկ է նկատի ունենալ, որ վերջիշշալ հիմնահարցերի կամ հորինվածքների ձևավորմանը և դոգմա դառնալուն մեծապես նպաստել, հիմք ու հենարան է ծառայել հայերի ժագման մասին, այսպես կոչված, միգրացիոն կամ գաղթի տեսությունը: Ինչպես հայտնի է, ըստ այդ տեսության, հայերի հնդեվրոպացի նախնի համարված արմենները Հայաստանում հաստատված են համարվում ընդամենը մ.թ.ա. VII դարի վերջերից, որ մինչ այդ, իբր, ու մի հայ Հայաստանում բնակություն չի ունեցել: Հայտնի է միաժամանակ, որ այս տեսության հիմքը հնդեվրոպացի կոչված ժողովուրդների, այդ թվում նաև հայերի, նախահայրենիքի մասին եվրոպակենտրոն տեսությունն էր, Մի խոսքով, բացատրվում էր այնպես, որ հայերի կազմավորումը գլխավորող ցեղի՝ արմենների մուտքը Հայաստան և «Ուրարտու» ող հայկական հորջորջված պետության կործանումը զուգադիպում էին, նույնիսկ եկվոր արմեններն էլ համարվում էին այդ պետության կործանողները (տե՛ս Հ. Մանանդյան, Թնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 7—45):

Այս տեսությունը իր հիմնադրումից շատ շանցած վերանայվեց, սակայն վերանայվեց ող թի էությամբ, այսինքն՝ գաղթի տեսությունն ընդհանրապես, այլ՝ ժամանակագրութեն: Աքքաղական, ասսուրական,

«ուրարտական» կոչված արձանագրությունների ող սակավ տեղեկությունները Արմանի (=Արամանի), Արմե—Ուրմե, Արիմե—Ուրումե երկրի մասին, իսկ հեթիթական արձանագրություններին՝ Հայասայի մասին ուսումնասիրողներին բերեցին համոզման, որ հայերի նախնիներ հանդիսացող արմեններն ու հայասները (մեր կարծիքով՝ հայերը, քանզի Հայասա-ն ցեղանուն չէ) Հայաստանում ապրել են դեռևս մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջերից և երկրորդի սկզբներից: Ժամանակագրական այս ճշգրտումը, իհարկե, մեծ առաջընթաց էր, սակայն ամրող ճշմարտությունը չէր: Ամբողջ ճշմարտությունը չէր, քանզի շարունակում էր իշխել գաղթի տեսությունը, իսկ հայերի նախնիներին էլ Հայաստանում հատկացվում էին խիստ անծուկ տարածքներ (արմեններին՝ Աղձնիք նահանգի արևմտյան շրջանները կամ Արմե-Շուապրիա կոչվածը, հայասացիներին՝ Բարձրագույն համարվում էր Հայերի հաղեվրոպական ընտանիքին պատկանելը, (ավելի քան 150 տարի այս բանն ապացուցվում է), ուղեմն նրանք (հայերը) համարվելու են տեղաբնակ, այսինքն՝ հայաստանաբնակ, որ հնդեվրոպական մյուս ժողովուրդները աստիճանաբար հեռացել են (վերջին հեռացողները, ըստ նոր տեսության, համարվում են հույները՝ մ.թ.ա. երրորդ հազարամյակի երկրորդ կեսին), նախահայրենիքը թողնելով հայերին կամ հայերի նախնիներին (Թորգոմյաններին և Ասքանազյաններին): Նշանակում է նաև, որ հայերը կամ նրանց նախնիները այդ ժամանակից սկսած (ամենաուշը մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջերից) ունեցել են համահայաստանյան տարածում, այսինքն՝ Մեծ ու Փոքր Հայքերը միասին վերցրած: Կարծում ենք, որ լեզվաբանական նոր տեսությունը այլ եղանակացության բերել չի կարող:

Այսպիսով, այս առումով ևս «Ուրարտու» «ող հայկական»-ությանը հիմք չի մնում ո՛չ ժամանակագրութեն, ո՛չ տեղագրութեն, ո՛չ այլ կերպ:

Գ Լ Ո Ւ Խ Կ

«ՈՒՐԱՐՏՈՒԽ-Ն ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

Ուրարտագիտության մյուս հիմնախնդիրը՝ ելակետային դեր ունեցող, որով պայմանավորված է այդ ամբողջ գիտության սխալն ու ճշշտը, որից ելնում և որին հանգում են (ինչ գնով էլ լինի) ուրարտագիտական բոլոր ուսումնասիրությունները, այսպես կոչված, ուրարտական պետության «ոչ հայկական» լինելու, կամ ուրարտական կոչված պետությունը հայկական շհամարելու խստ հակապատմական և պակողմնորոշող վարկածն է:

Դրում և ընդգծում ենք «հակապատմական» բառը ոչ առանց պատճառների, կամ առանց հիմքերի: Բանն այն է, որ այդ վարկածի առկայության պայմաններում, ինչպես ցույց է տալիս ուրարտագիտության համակողմանի և ուշադիր քննությունը, տասնյակ ու տասնյակ հակառակն ապացուցող ստույգ փաստեր անտեսվում են, տասնյակ ու տասնյակ պատճական իրողություններ էլ, որոնց անտեսվումը անհնար է (շատ են ակնբախ և անմերժելի), արհեստականորեն (հիմնազուրկ ենթադրություններով) այլափոխվում, զիսիվար են շրջպում, կամ էլ անհանապես շափ աղավաղվում են: Եվ եթե սրանից 100 կամ 50 տարի, նույնիսկ 10—20 տարի առաջ հնարավոր է եղել մտածել ու գրել այդ եղանակներով, այժմ արդեն, գիտությունների զարգացման մեր օրերում և բազում փաստերի առկայությամբ, ոչ միայն անհնար է (պարզապես՝ գիտական չէ) այդպես վարկելը, այլև՝ մտածելը:

Մեր այս մտքերը հիմնավորելու համար դիմենք փաստերին: Ի դեպ, նկատի ունենալով փաստերի առատությունը և տեղի սղությունը, դրանք կնշվեն ու կբննվեն ոչ թե առանձին-առանձին, այլ ըստ խմբերի:

Առաջին խումբ՝ մտածենագրական և սեպագրական փաստեր:

Մեր գրքույկում (Գիրքը դարերի խորդից, Երևան, 1984) քննվել են այս կարգի տեղեկությունները, ապացուցվել դրանց ստույգ լինելը և ըստ այդմ ցույց տրվել, որ Հայկական լեռնաշխարհը (Մեծ ու Փոքր Հայքերը միասին վերցրած և հարակից տարածքներ) մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջերից բնակեցված է եղել հայ անունը կրող ժողո-

վրդով, որին (երկիրը և ժողովրդին) ասսուրները, ապա նաև Արևելքի այլ ժողովուրդներ համահայաստանյան պետության հիմնադիր Արամի անունով կոչել են Արմենի-Արամանիւ իսկ սմանը էլ՝ Թիգ-Արամա, Թիգ-Արամու ձևերով: Ի դեպ, խեթերը կամ հեթիթները միայն, օգտագործելով հայերի ինքնանունը, նրանց բնակության ամբողջ երկիրը (Մեծ ու Փոքր Հայքերը) կոչել են Հայաստա(=Հայք-Հայաստան), իսկ մի մասնիկը միայն՝ Մալաթիա քաղաքը իր շրջակայթով և դրանից արեմուտք ընկած տարածքը (գուցե և Կապաղովկիայի որոշ մասեր) անվանել Թիգ-Արամու, կամ՝ Թիգ-Արամու:

Պատմական այս իրողությունները (այսինքն՝ մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջերից հայերի համահայաստանարնակ լինելը և այլն) անկախ Մովսես Խորենացուց ավելի կամ պակաս չափավոր հաստատում են Անանուն հայ պատմմիշը (Սեբեսի «Պատմությանը» կից), «Թարթիս ցխովրեան», Թովմա Արծրունին և ուրիշներ:

Այսպիսով, մատենագրական տեղեկություններից բխող եզրակացությունն այն է (եթե, իհարկե, չեն անտեսվում դրանք), որ, այսպես կոչված ուրարտական «ոչ հայկական» պետությունից մոտավորապես 1400 տարի առաջ հայ անունը կրող ժողովուրդը ունեցել է համահայաստանյան տարածում ու բնակություն, որ այդ ժողովուրդը համահայաստանյան իր բնակությամբ շարունակել է հետագա գոյությունը՝ թե՛ մինչև ուրարտական կոչված պետության հիմնադրումը (մինչև մ.թ.ա. 860 թ.), թե՛ նրա անկումից հետո (մ.թ.ա. VI դարի սկզբից): Քննուապ մինչև երիտթուրքերի կազմակերպած Մեծ եղեռնը: Մի խոսքով, «ուրարտական» պետության պատմությունը (ճիշտն ու սխալը թողած) գանում է հայ ժողովրդի բազմադարյան պատմության մի կարճատե (260 տարի) և միջանկյալ ժամանակահատվածը միայն, ուստի և, ըստ մատենագրական տեղեկությունների, ոչ հայկական լինել չէր կարող:

Մատենագրական առումով նորից նշենք շատ ուշագրավ մի փաստ եւ: Աշխարհի և ոչ մի պատմիչ՝ ո՛չ հայ, և ո՛չ էլ օտար, «ուրարտա ժողովուրդ երբեմէ չի հիշատակել, համապարփակ լուսություն է: Մտածելն իսկ, որ եղել է այդպիսին և անհետք, անհաւ անհետացել է պատմագրությունից, հենց պատմականության թելադրանքով դժվար է պատկերացնել, մասնավանդ որ «ուրարտական» պետության պատմությունը այնքան էլ վաղ անցյալում չի եղել, և առկա էր գրավոր խսութը:

Հայ և օտար պատմիչները Հայաստանի տարածքում մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջերից սկսած հայերից զատ ուրիշ որևէ ոչ հայկական ցեղ կամ ժողովուրդ չեն հիշատակում, եթե, իհարկե, նկատի շունենանք, որ պատմագիտության մեջ հայկական առանձին, զուտ մասնակիացնող տեղանուններ թյուրիմացարար և հախուռն կերպով ընկալվում են որպես ցեղերի կամ ժողովուրդների անվանումներ:

Օրինակ, կարդուխներ ցեղ կամ ժողովուրդ, փոխարեն հասկանալու

Կորդուքի կամ կազմեա տան հայեր, ալարդներ՝ փոխարեն Այրարատի հայեր, փասյաններ՝ փոխարեն թասենի հայեր, սայսպեսներ՝ կամ նեղապետներ՝ փոխարեն Սպերի հայեր, տաղիսներ՝ փոխարեն Տայքի հայեր և այլն և այլն: Ինչ խռով, հնարավոր է, որ հայկական տեղանուններից շատերը, մասնավորապես՝ գավառանունները (իհարկե, ոչ բոլորը) ժամանակամասին ցեղանուններից, սակայն խոսքն այն ժամանակն է, որ ըստ պատմագրական տվյալների, մ.թ.ա. երրորդ հազարամյակի երկրորդ կեսի ընթացքում դրանք բոլորն տրդեն հայացել են, կոչվել են հայ և կազմավորել հայ ժողովուրդը; Ինչ ու ընդհանրական ինքնանունով՝ հայք-հայք-հայեր, իսկ երկիրը՝ Հայք-Հայք-Հայաստան Այնպես որ, ըստ պատմագրական տեղեկությունների (եթե դրանք համատեղ են քննարկվում), մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջերից Հայք-Հայաստանում ոչ հայկական ցեղերի կամ ժողովրդի գոյությունը, որը էթնիկական գույն ու բնույթ տար երկրին, մեկոնդմիշտ բացառվում է:

Լատ սեպագիր արձանագրությունների և այլ կարգի գրավոր աղբյուրների:

Վերը նշված մեր գրքույկում բերվել ու քննվել են նաև հայ անվան գործածության վաղագույն փաստեր աքքաղական, ասսուրաբարելական և խեթական արձանադրություններում և օտարաբան այլ ազբյուրներում: Օրինակ, ազգությամբ հայ դեսպաննի հիշատակումը էրևայում (Հալեպից 70 կմ հարավ) հայտնաբերված աքքաղերեն արձանադրության մեջ, որը վերաբերում է մ.թ.ա. երրորդ հազարամյակի երկրորդ կեսին: 2) «Հայի որդու» կամ՝ «Հայքի բնակչի» հիշատակումը կապադովկիայում հայտնաբերված ասսուրերեն արձանագրության մեջ, որը թվագրվում է մ.թ.ա. երրորդ-երկրորդ հազարամյակների սահմանագծով: 3) «Հայա» (=Հայք) անվան գործածությունը կարեմիշտում հայտնաբերված հիերոգլիֆ լուկիերեն արձանագրության մեջ՝ թվագրվում է մ.թ.ա. առաջին հազարամյակի առաջին գարերում (ՊԲՀ, 1983, թիվ 4, էջ 30—33): 4) Հայ անվան հաճախակի գործածությունը մ.թ.ա. 1410—1260 թթ. խեթական թագավորների արձանագրություններում՝ «Հայասա» երկրանվան մեջ:

Այս ամենից զատ, «խալկե» (=հայքյան, Հայքին հատուկ) զարդարանդակը (ժամանակի հավերժության նշան) հին հոնիական ճարտարապետության մեջ՝ թերևս մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջերից գործածված: Պղնձի և բրոնզի հին հունական «խալկոս» անվանումը (=հայկական կամ Հայքյան մետաղ), ինչպես նաև նույն մետաղի «այսա», «հայոս» անվանումները հնդեվրոպական ուրիշ ժողովուրդների կողմից՝ հնդիկների, իրանցիների, գերմանացիների, թերևս մ.թ.ա. երրորդ հազարամյակի երկրորդ կեսից: Արծաթի «հառք-հարք» անվա-

նումը արևելակովկասյան ցեղերի կողմից, որը անկասկած կապ ունի Հայք-Հայաստանի հետ:

Քիչ շեն նաև արմեններ, Արմենիա անվան հնագույն և ձիշտ գործածության ձեերը: Օրինակ, դարձյալ էրլայի արձանագրության մեջ Հայքի լիազորը և նրա գործակիցները կոչված են Արմիցի, այսինքն՝ Արամի երկրացի: Այստեղ ուշագրավն այն է, ինչպես ձիշտ նկատել է Վ. Իվանովը, որ Հայքի լիազորն ու նրա գործակիցները Արամի երկրացիններ են, այսինքն՝ էթնիկապես նույնն են, ինչպես Մովսես Խորենացու մոտ է: Կամ՝ ասսուրական թագավոր Սարգոն Ա-ի արձանագրության մեջ (մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկիզբ) Հայք-Հայաստանը կամ նրա մի մասը կոչվում է Արամանի (=Արամի երկիր): Կամ՝ Հոմերոսի «Ելիականում»՝ Տրոյայի գրավման ժամանակ հիշված են արիմներ՝ արիմոյիշարամոյի, այսինքն՝ Արամի երկրացիններ, կամ Արամի մարդիկ: Կամ Դարեհ Ա-ի Բիհիսթունի արձանագրության պարսկերեն տարրերակում Հայք-Հայաստանը կոչված է Արմինիա, այսինքն՝ Արամանիա—Արամի երկիր և այլն:

Ասելն իսկ ավելորդ է, որ արձանագրությունների այս տվյալները տեղով ու ժամանակով լրացնում ու հաստատում են պատմիչների, մասնավորապես՝ Մովսես Խորենացու, համապատասխան տեղեկությունները և դրանով իսկ հայ անունը կրող ժողովրդի հայաստանաբնակ լինելը սկսած մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսերից և հետագա բոլոր գարերում՝ թե՛ ուրարտական կոչված պետությունից առաջ, թե՛ դրանից հետո: Այսինքն՝ ուրարտական «ոչ հայկական» կոչված պետությանը գարձալ տեղ չի մնում Հայք-Հայաստանում: Ուրարտուի ոչ հայկական վարկածը նորից դառնում է հակապատմական և փաստերին հակասող:

Երկորդ խումբ՝ մարդաբանական տվյալներ:

Հայաստանի բնիկները, նշանավոր մարդաբանների հետազոտությունների համաձայն (Մելքոն, Վիլամ, Գիլարդ, Գյոցե, Ֆոն Հուշան, Խրիստիան, Կոնտնո, Ա. Ճաղարյան և ուրիշներ), սկսած մ.թ.ա. երրորդ հազարամյակից ունեցել են մարդաբանական միևնույն տիպը, այսպես կոչված՝ արմենոիդ (հայկական), ինչպիսին եղել է Հայքի մարդաբանական տիպը հետագա բոլոր գարաշրջաններում՝ ընդուած մինչև այսօր: Իսկ սա նշանակում է, որ արմենների կոչված մարդաբանական տիպի ֆիզիկական ձևավորման գործում վճռական ու սրոշիչ գերը պատկանել է մեկ ցեղի, կամ արյունակից ցեղերից կազմված մեկ ցեղամիության: Այլ կերպ ասած, մեկ ցեղ կամ ցեղամիություն է, որ իր պատկերին համապատասխան հետնորդներ է ունեցել, այսպես համասեռությունը այդքան ակնբախ ու նկատելի շեր լինի, այն էլ այդքան տեսական ժամանակաշրջանների համար:

Այս իրողությունը, իհարկե, չի բացառում ոչ արյունակից ցեղերի մասնակցությունը արմենների տիպի գոյացման և համահայաստանյան

դառնալու ընթացքին, սակայն ենթադրվում է, որ ոչ արյունակից ցեղերը մասնակցությունն իրենց սակավաթվության պատճառով (ուրիշ պատճառ չկա, քանակն է բնորոշում մարդաբանական տիպը) եղել է այնքան աննշան, որ չի խախտել տվյալ տիպը պայմանավորող ցեղի համասեռությունը, ավելի ճիշտ, արտաքին նկարագիրը:

Այսպիսով, անկախ այն բանի, թե ինչ անուն է ունեցել արմենոփ տիպը պայմանավորող ցեղը կամ ցեղամիությունը, ըստ մարդաբանական հետազոտությունների անկասկած է դառնում, որ Հայկական լեռնալիստում սկսած մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից ոչ արյունակից երկցեղություն գոյություն չունի (նկատի շունենք անցողիկ ու պատահական դեպքերը, ինչպիսիք եղել են, կան ու կլինեն): Հակառակը մտածել, կնշանակի դեմ զնալ մարդաբանական տվյալներին, մանավանդ որ, ըստ այդ տվյալների, արմենոփ տիպը պակելի քան 1000 տարի՝ սկսած մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից մինչև մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսերը, գրեթե անխառն ու համասեռ է եղել:

Իսկ այն հարցին, թե ի՞նչ անուն է ունեցել արմենոփ տիպի արտաքին նկարագիրը պայմանավորող գլխավոր ցեղը, եղած փաստերի առկայությամբ արդեն դժվարություն չի հարուցում:

Մեր համոզումով գլխավոր այդ ցեղը ընդհանրական անունվ կոլվել է ճայիք (ինչպես ցուց ենք տվել, իրաք, Հայկ նահապետի անունից), իսկ մասնակիացնող անունը ճայ և ոչ, ասենք, խաւրի, փոյուգ, կամ գոյության շռնեցած ռուրարտա, օքիառ և այլն:

Իրեն ապացուց նկատի սևնենք նաև Զենչըրիի պեղումներից հայտնաբերված խեթական կամ հեթիթական քանդակները: Այստեղ Հայաստան երկրի մարդիկ իրենց արտաքինով շեն տարրերվում Հայաստանի մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերի և հետագայի մարդկանցից նույն արմենոփներն են, ըստ մարդաբանական ուսումնասիրությունների: Եզ քանի որ խեթերը այդ տիպի մարդկանց սկսած մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսերից ճայ են անվանել, քանի որ նրանց երկիրը կոչել են Հայ-աստ («Հայերի երկիր-Հայք-Հայաստան»), ուրեմն նրանց այսինքն՝ Հայաստի մարդկանց նախնիները են այդ տիպի տարածման հենց սկզբներից կրել են նույն՝ ճայ անունը:

Մյուս ապացուցը պատմիչների տեղեկություններն են (Անանունի, Մավսես Խորենացու, «Քարթլիս ցիսովերայի» հեղինակի, Թովման Արծրունու և ուրիշների), որոնք ճայ անունը ծագած են համարում Հայկի անունից՝ և այդ անունը կրող ցեղի տարածումը սկսում մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից:

Ապացուց են նաև ճայ անվան գործածության վաղագույն փաստերը, այսինքն՝ ճայ անունը կրող ցեղի գոյության հաստատումը Հայաստանում (մ. թ. ա. երրորդ հազարամյակի երկրորդ կեսից մինչև մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբները) արքադական, ասսուրական, լուսիական արձանագրություններում, ինչպես նաև խալկե, խալկոս, այսու հայոս անվանումները:

Վերջապես, խիստ պարտավորեցնող և անուրանալի ապացուց է նաև այն, որ ճայ անունը արմենոփ տիպի մարդկանց հետագա ժամանակների ինքնանունն է եղել և մնում է այդպիսին մինչև օրս: Սա էլ այն պատճառով է պարտավորեցնող, որ ցեղերի ու ժողովուրդների ինքնանունները, համեմատած օտարների կողմից նրանց տրված անվանումներին, խիստ հարատևող են, համարյա անփոփոխ, քանի դեռ չի ձուլվել, կամ չի անհետացել տվյալ ցեղը կամ ժողովուրդը:

Այս պարագաներում կարևոր ենք համարում նշել նաև, որ ռուրարտականը ոչ հայկական հորջորջված տիպը ևս, թեպետ սակավ փաստերի ուսումնասիրությամբ¹, արմենոփ է, այսինքն՝ ուրարտական կոչված պետության բնակիչները ևս մարդաբանորեն հայեր են, ունեն հայկական տիպ, այս բառի ամենաուղղակի նշանակությամբ: Օրինակ, Սալմանասար Գ-ի (մ. թ. ա. 859—825 թթ.) Թալավաթյան կոչված դռներին քանդակված ուրարտական էթնիկական տիպը արմենոփ տիպ է, կամ ականավոր գանգարան Ա. Ճաղարյանի վերականգնումներով ուրարտացի ողջայք կոչվածները մարդաբանորեն չեն տարրերվում հայերից և այն: Ի դեպք, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում իր մի գեկուցման ժամանակ պրոֆ. Ա. Ճաղարյանին հարց տրվեց՝ մարդաբանորեն տարրերություն կա՝ Հայաստանի մ. թ. ա. 3—2-րդ հազարամյակների մարդկանց, Ուրարտուի բնակիչների և հայերի միջև: Պատասխանը եղավ՝ ոչ մի տարրերություն: Երկրորդ հարցը՝ իսկ ինչո՞ւ եց առանձնացնում և օգտագործում նախաուրարտացի, ուրարտ, հայ անվանումները: Պատասխան՝ որովհետև այդպես է ընդունված:

Այո, այդպես է ընդունված, սակայն խոսքն էլ այդ մասին է, որ այդ ընդունվածը ճիշտ չէ, որ մարդաբանորեն ևս ուրարտացիները հայեր են, ավելի ճիշտ, Արարադա երկրի կամ հետագա Կաղմեա տան-Կորդուքի հայերը, որ ռուրարտական կոչված պետությունը ոչ հայկական չէ: Չմոռանանք, որ մարդաբանությունը ամենահուսալի և հաստատում միջոցն է (լեզվական, մշակութային, նույնիսկ գրավոր տեղեկությունների համեմատությամբ) այս կամ այն երկրի էթնոպատկանելությունը որոշելիս:

Արդ, այսքան և այսպիսի փաստերի առկայությամբ, մասնավորա-

¹ Հայկ անունից Հայկ=Հայք=հայ անունների առաջացման լեզվական ապացուցներից մեկն էլ նորերեն մեր կողմից նկատված «հայկական» բառն է:

պես, մարդաբանության տվյալների անհերքերի առկայությամբ, պնդելու ու ուրարտու պետության բնակիչները հայեր չեն եղել, որ «ուրարտացան էթնիկական տիպն է նախորդը արմենոփնիկների», այսինքն՝ ասելու գիտի, որ արմենոնիդը հենց ուրարտական էթնիկական, ոչ հայկական տիպն է, որ «հայերն իրենց մարդաբանական հիմնական հատկանիշները ժառանգել են ուրարտացիներից», նույնիսկ խուրրիներից, ինչպես կարծում էր Հնագիտ Գ. Տիրացյանը, (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 204) ոչ միայն զարմանալով այլև արտառոց է: Այդպես մտածել, նշանակում է դեռ նետել վերը նշված բոլոր փաստերը, և էլի փաստերը, որ նշվելու են, նշանակում է իրականը զոհել անհիմն երեսակայականին, նշանակում է՝ ժամանակի գործոնը հաշվի շառներով, հետևանքը հիմք դարձնել, նշանակում է ուրարտական ոչ հայկական պետությունը «կործանած» և անմիջապես համահայաստանյան բնակություն ստացած հայերին հատկացնել շատ շնչին քանակ, զրկել սեփական դեմքից ու դիմագծերից և այլ զարմանալիքներ:

Սակայն առայժմ թողնենք, թե էլ ինչ է նշանակում նման պատկերացումը և անցնենք հայ—«ուրարտացի» նույնությունը հաստատող մյուս փաստախմբերին ու փաստերին:

Երբորդ խումբ՝ նեագիտական տվյալներ կամ նյութական մշակութիւնություններ:

Հայաստանի հնագիտությամբ զբաղվող բոլոր ուսումնասիրողների խիստ հիմնավոր կարծիքով մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից մշակութիւն մի շարք բնագավառներում (բնակելի տների կառուցման, զինագործության, հատկապես նետ-աղեղի պատրաստման, աշխատանքային գործիքների՝ հատկապես երկանիվ սայլերի և կոթառավոր կացինների պատրաստման, տոմարագիտության, զարդարանդակի, զրանցքաշինության, մասնավորապես՝ խեցեգործության և մետաղամշակության մեջ) Հայկական լեռնաշխարհի բնիկներն ունեցել են ակնհայտ սմանություններ, որոնք զարգացման տարբեր մակարդակներով և, ամենակարենորը, միշտ էլ համահայաստանյան բնույթով հարատել են հետագա դարերում, նաև այն դարերում, երբ Հայաստանի բնիկները անկամածելիորեն հայ են կռվել. Մշակութիւն այդ բնագավառների համահայաստանյան բնույթն ու նույնականությունը ևս, ինչպես մարդաբանության տվյալները, ապացույց են, որ դրանց ստեղծողն ու կրողը մեկ ժողովուրդ է եղել, և ոչ, ասենք, ոչ արյունակից ցեղեր կամ ժողովուրդներ: Մի խոսքով, հնագիտությունը ևս բացառում է ոչ արյունակից երկցեղությունը, կամ ոչ արյունակից երկու ժողովուրդների գոյությունը Հայաստանում՝ դարձյալ մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից կամ վերջերից սկսած:

Ուրարտական կոչված ժամանակի (մ. թ. ա. IX—VII դդ.) մշակութիւն հիշալ բնագավառները ևս այդ ընդհանրություններից դուրս չեն, 38

ավելի ճիշտ, դրանց բաղկացուցիչ մասն են: Ավելին, ինչպես նկատել է նաև Գ. Տիրացյանը, երբեմն (առայժմ՝ երբեմն) ապշեցուցիչ նմանություններ են նկատվում հայկական և ուրարտական կոչված մշակությունների առանձին բնագավառներում՝ մետաղագործության որոշ ճյուղերի և խեցեգործության մեջ (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 201): Սա, իհարկե, ճիշտ է և անառարկելի. նույնը կարելի է ասել նաև այլ բնագավառների մասին, սակայն նույնքան էլ անճիշտ է և առարկելի, եթե այդ «ապշեցուցիչ» նմանությունները բացատրվում են ազդեցություն հայերի վրա: Ահա, թե ինչ է գրել այս առթիվ հնագիտը. «Ուրարտական և հայկական ժամանակաշրջանների մետաղագործության որոշ ճյուղերի և խեցեգործության մեջ երբեմն նկատվող ապշեցուցիչն մարարավոր է բացատրել նաև այն հանգամանքով, որ ուրարտական մետաղագործական և խեցեգործական արհեստանոցները չեն դադարեցրել իրենց գործունեությունը հայկական ժամանակաշրջանում, գոնե սկզբում, և որ այդ արհեստանոցներում աշխատող վարպետները էին հայկապես ուրարտացիներ էին...» (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 201):

Այս շարադրանքը ուրարտացիների ոչ հայ լինելու սխալի վրա է կառուցված: Իրականում այդպիսի, այն էլ՝ ապշեցուցիչ ազդեցություններ չեն լինում, կամ էլ շատ է կամակածելի: Եվ, իրոք, ըստ այդմ, «նվաճող» հայերը, կարծեք թե, ոչ մետաղամշակություն են իմացել, ոչ էլ խեցեգործություն, քանզի այդ բաները սովորել են էթնիկապես ուրարտացի վարպետներից: Եվ ինչու միայն դրանք: Էթնիկապես «ոչ հայ» ուրարտացիներից սովորել են նաև բնակելի տներ կառուցելը, զինագործություն, տոմարագիտություն, զրանցքաշինություն և, առհասարակ, այն ամենը, ինչ կնմանվի «ուրարտականի» հետ, այսպես է երեսում ուրարտագիտների բացատրություններից: Մտացվում է այնպես, որ «ուրարտական ոչ հայկական» և համահայաստանյան ընդարձակ պետությունը համարյա կայծակի արագությամբ նվաճող, նույն արագությամբ էլ ուրարտացի ոչ հայերին ծովող հայերը ոչինչ զգիտեին, ոչինչ չունեին, նույնիսկ զենքերը ու կենցաղային առարկաներ չունեին և ունեցան միայն ուրարտացի ոչ հայերի միջոցով: Ամենազարմանալին, որ սեփական դեմք էլ չեն ունեցել, քանի որ «իրենց մարդաբանական հիմնական հատկանիշները ժառանգել են ուրարտացիներից և խորրիներից»:

Իրոք, շատ է զարմանալի և շատ երկակայական, նույնիսկ հեքիաթների ուրոտին շարմարվող: Եվ այս ամենի պատճառը մեկն է՝ ուրարտացի կոչվածների ոչ հայ լինելու վարկածը: Ինչպես տեսանք, և ինչպես ու ինչ ձեռվ էլ քննելու լինենք, այդ վարկածը իրեն չի արդարացնում, ընդհակառակը՝ դեմ է փաստերի հախուսուն ընթացքին:

Այդ վարկածի պատճառով է նաև, որ պատմագիտության մեջ այլ

անհավանականություններ են թույլ տրվում, ժառենապրական և արձանագրական առանձին տեղեկություններ կամայական բացատրություններ են ստանում, կամ իմաստափոխվում, աղավաղվում են, իսկ առանձին հարցեր էլ, որոնք տվյալ վարկածի առկայությամբ բացատրության խիստ կարիք ունեն, անտեսվում են շեն բացատրվում:

Արդ, համոզվելու համար նորից դիմենք փաստերին:

1. Ըստ հայ մատենագրության և, մասնավորապես, ըստ Սովուն Խորենացու, հայոց թագավորությունը, որը կոչվում է Հայկազունիների թագավորություն, հիմնադրվել է մ.թ.ա. 8-րդ դարի երկրորդ կեսին (Թովմա Արծունին և Սամուել Անեցին ավելի վաղ են դնում), ասուրական թագավոր Սարդանապալոսի գահազրկումից անմիջապես հետո, մարերի կամ մեղացիների առաջնորդ, ասուրական թագավորությունը նվաճող Վարբակսի աջակցությամբ: Հայոց այս թագավորության հմանադիրը եղել է Պարուցը՝ Սկայարդու որդին, Հայկի գարմերից (38 կամ 39-րդը Հայկից): Այս թագավորությունը հենց սկզբից աւնեցիլ է համարական ընդգրկում՝ Արմավիր մայրաքաղաքով (Արմավիրը մայրաքաղաք է համարված մ.թ.ա. երրորդ հազարամյակի մոտ 24-րդ դարից) և հարատևել է մինչև Աքեմենյան թագավորության կործանումը՝ մինչև մ.թ.ա. 331 թ. Գավամելայի ճակատամարտը: Հայոց այս թագավորության ժառանգական թագավորներ են նաև Երվանդ Սակավակյացը (8-րդը Պարուցը) և իր որդի Տիգրանը՝ հոր անունով Երվանդան կոչված (9-րդը Պարուցը):

Մինչև մեր դարի 60-ական թվականները այս տեղեկությունները անձիշտ են համարվել և շեն ընդունվել Ուրարտուի «ուշ հայկականության» և հայերի՝ Հայաստանում «ուշ լինելու տեսաթյունների պատճառվածք»: Վիճակը փոքր-ինչ փոխվեց դրանից հետո՝ վերջին տասնամյակներում: Փաստերի ճնշման տակ (Ասարհադանի թօղած արձանագրության, այսպես կոչված՝ բարելոնական ժամանակագրության, Աստվածաշնչի տեղեկության և այլնի) ընդունվում է Պարուցի պատմականությունը և նրա կողմից հայոց հնագույն թագավորության հիմնադրումը:

Պատմական գործիչ և հայոց թագավորներ են համարվում նաև Երվանդ Սակավակյացն ու նրա որդի Տիգրան Երվանդյանը: Այսուհետեւ, վերոհիշյալ տեղեկությունները բոլորովին անհիմն ենթադրություններով այնպես են իմաստափոխվում ժամանակագրորեն, տեղագրորեն, քաղաքական վիճակի նշումներով, նույնիսկ՝ հիշյալ թագավորների ծագումն ու ժառանգական կապը, որ, կարծեք թե մի նոր պատմություն է հորինվում հակառակ եղածին:

Օրինակ, հակառակ եղածին ենթադրվում է, որ Պարուցը թագավորությունը հիմնադրել է Նինվեի կործանման պահին (մ.թ.ա. 612 թ.)՝ մարերի առաջնորդ Կիխսարի աջակցությամբ, այսինքն՝ փոխվում են ժամանակակիցներն ու ժամանակը, կամ՝ համահայաստանյան թագա-

վորության փախարեն Պարուցին հատկացվում է միայն Արմե-Շուպրիա կոչվոծ երկիրը, այսինքն Աղձնիք նահանգի ինչ-որ մասեր: Կամ՝ Պարուցը մի ճանաշվաւմ գինաստիայի հիմնադրի, այլ՝ առանձին թագավոր, որի փաքրիկ թագավորությունը, իրեն, կարծատե կյանք է ունենում և մ.թ.ա. VI դարի սկզբներին (585-ից ոչ շատ): Իրը միավորվում է, (նվաճվում) Երվանդ Սակավակյացի հիմնադրամ հայկական մեկ ուրիշ թագավորության հետ, այսինքն՝ արհեստականորեն կտրվում է Պարուցի և Երվանդ Սակավակյացի ազգակցական-ժառանգական կապը նաև, և ժամանակի հեռավորությունը համահարթելով (8 սերունդ հեռու են իրարից) դառնում են հակառակորդներ: Նույնիսկ կասկածելի է համարվում Պարուցի ազգային պատկանելությունը՝ Հայկի զարմ և հայ լինելը, փոխարենը առաջ է մզգում (եթե շատենք ընդունվում է) սկյութական ժագումը: Ստացվում է, որ սկյութը հայի համար թագավորություն էր հիմնադրում, կամ էլ նրա թագավորության բնակիչները (գոնե, մի մասը) սկյութներ էին:

Էլ ի՞նչ մնաց, կամ էլ ի՞նչն է ընդունվում աղբյուրներից, գուցե, տարակուսանքով հարցնի ընթերցողը:

Ըստ էության՝ ոչինչ լմնաց, բացի գիտական համարված շինժու պատմությունից, և այս ամենը, այս անհիմն բացատրությունները, կուպիտ ռվիրահատումները» արգասիք են միենույն պատճառի՝ ուրարտացիների հայ Ալինելու վարկածին: Փաստորեն ամեն ինչ արվում է, նույնիսկ փաստերն են կոպտորեն խեղաթյուրվում, միայն թե այդ վարկածը շտուժի, ահա, նաև սրանում է այդ վարկածի հակապատմականությունը: Եվ այն բանի մեջ, որ բոլոր փաստերը, ինչպես ցուց տրվեց, դրա դեմ են: Սակայն շշտապենք:

Զնայած թափած զանքերին, վերոհիշյալ վիրահատումները ևս պատմականության որևէ երանգ չեն տալիս քննարկվող վարկածին՝ առարկելին շարունակում է մնալ առարկելի:

Այսպես, ընդունված է, որ մ.թ.ա. VI դարի սկզբներին՝ 590 կամ 585-ին, հայկական ցեղերը կործանել են ուրարտական համահայաստանյան պետությունը և հիմնադրել իրենց՝ դարձյալ համահայաստանյան թագավորությունը: Ալրյուրներից էլ երեսում է (Թսենոֆոնի, Մովսես Խորենացու, Թովմա Արծունու և այլոց տեղեկություններով), որ հայկական թագավորությունը մ.թ.ա. VI դարի առաջին կեսին արդեն՝ Աթրահակի ժամանակ (585—553 թթ.) ունեցել է բարգավաճ տնտեսություն և ուղղմական բավականացած հզոր վարչություն և հակառակ եղածին:

Օրինակ, հակառակ եղածին ենթադրվում է, որ Պարուցը թագավորությունը հիմնադրել է Նինվեի կործանման պահին (մ.թ.ա. 612 թ.)՝ մարերի առաջնորդ Կիխսարի աջակցությամբ, այսինքն՝ փոխվում են ժամանակակիցներն ու ժամանակը, կամ՝ համահայաստանյան թագա-

կում է՝ հայերը ուրարտացիների համեմատությամբ շատ փոքրաքանակ են եղել. Այլ կերպ մտածել անհնար է, ինչպես նշվեց, ախպը փոխանցվում է քանակով:

Եվ, այսպես, կանգնում ենք հերթական հակասությունների և հակապատմականության թնդուի առաջ: Նախ՝ ի՞նչ հրաշքով, նույնիսկ մտադին անծանոթ, սակավաթիվ հայերը, կործանեցին ուրարտական ու հայկական պետությունը և արագործն տեր դարձան նրանց ամբողջ երկրին, ովքե՞ր էին նրանց ներքին հենարանները, կամ ի՞նչ գենքերով և ո՞ւմ զենքերով (քանի որ մետաղամշակությանը մինչ այդ ծանոթ չէին), նրանք հաղթեցին ուրարտացիներին, կամ այդքան սակավաթիվ, որ անմիջապես կորցրին իրենց մարդարանական տիպը, ինչպե՞ս ձուկեցին ուրարտացիներին, կամ՝ ի՞նչ ձուկելու մասին կարող է խոսք լինել, եթե իրենք են ժառանգել ուրարտացիների մարդարանական հիմնական հատկանիշները, ուրեմն, իրենք են ձուկվել և այլն: Իսկ եթե մտածենք մյուս տարրերակով, թե մ. թ. ա. VII դարի վերջերին և VI-ի սկզբներին հայերն էին արդեն Հայաստանում մեծաքանակ (այլապես մտածողները թիւ չեն), ուրեմն՝ ուրարտացի «ոչ հայերը» պետք է ժառանգեին նրանց տիպը, այսինքն՝ պետք է հայանացին: Եվ քանի որ հետագա, անկասկածելի հայերին է բնորոշ արմենոիդ տիպը (առաջին հերթին հայերին), և քանի որ Հայաստանի բնիկները մ. թ. ա. երրորդ հազարամյակից սկսած արմենոիդ են, կնշանակի հայերը սրանցից են ժառանգել իրենց մարդարանական տիպը, կնշանակի սրանց արյունակից հետնորդներն են, վերջապես, կնշանակի, որ Հայաստանի արմենոիդները միշտ ու մշտապես հայեր են: Ի դեպ, այստեղ այնքան էլ կարևոր չէ, թե երբվանցից են արմենոիդները հայ կոչվել, ինչպես տեսանք, այդ հարցը լուծվում է այլ փաստերով:

Հարունակենք, եվ քանի որ արմենոիդ տիպը մ. թ. ա. երրորդ հազարամյակից սկսած Հայաստանում (Մեծ ու Փոքր Հայքերը միասին վերցրած) միշտ ու մշտապես ընդհանրական տարածում է ունեցել (այնքան ընդհանրական, որ բացառում է նույնիսկ ոչ արյունակից երկու ժողովրդի գոյությունը), իսկ ուրարտական պետությունն էլ Հայաստանից դուրս չէ, կնշանակի ուրարտացիները ևս արմենոիդներ էին (նշվեց, որ այս իրողությունը հաստատվում է նաև այլ փաստերով), կնշանակի ուրարտացի-ուրարտ կոչվածները ևս հայեր էին:

Ահա այսպիսին են մարդարանության օրինաշափությունները, նրանձեռած և հարակից փաստերի տրամարանությունը, սրանցից խուսափել հնարավոր չէ, իսկ շատուափելու դեպքում ի շիք է դառնում ուրարտացիների ոչ հայ լինելու վարկածը:

¹ Արմենոիդների գոյությունը այլ աելերում բացատրելի է բուն կենտրոնի՝ Հայաստանի բնիկների զանազան ազդեցություններով:

Հայկական գոտածուներ, փաստեր մշակույթի այլ բնագավառների բնանրության կամ նույնության մասին:

Մինչև վերջերս այն թյուր պատկերացումն էր իշխում, թե հայկական և «ուրարտական» մշակույթներն էականորեն տարբերվում են իրարից, այսինքն՝ փաստարկ էր ընդգեմ նրանց էթնոնույնության, որպիսի պատկերացման կրողներ, ցավոք, դեռևս կան: Սակայն այժմ, հակառակ հին պատկերացման, հանգիտական նոր նյութերը, և մանավանդ, դրանց հանգամանալի համեմատությունները ցույց են տալիս, որ «ուրարտական» և հայկական մշակույթները ամենատարրեր բնագավառներով խիստ էական նմանություններ ունեն, կարելի է ասել՝ նույնանում են:

Արդ, առարկայական համեմատություններով ընթերցողին շծանրաբեռնելու, միաժամանակ ձշմարիտ պատկերացում տալու համար, կարելի ուր ենք համարում նորից դիմել հնագետ-ուրարտագետ Գ. Տիրացյանի ուսումնասիրություններին, մասնավորապես՝ «Հայերի ոչ հնդեվրոպական նախնիները և Ուրարտու-Հայաստան պրոբլեմը» հոդվածին (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 195—207): Այս հոդվածում, ինչպես տեսանք, նագրում է՝ «Ուրարտական և հին հայկական հուշարձանների եռանդուն պերսիսերը այժմ թույլ են տալիս առաջ քաշել նաև նյութական մշակույթի և հարակից երևույթների հաջորդակցության հարցը: Այն դարձել է հատուկ ուսումնասիրման առարկա, որտեղ բազմաթիվ բնագավառների օրինակով (քաղաքաշինություն, ճարտարապետություն, շինարարական տեխնիկա, խեցեգործություն, մետաղագործություն, թաղման ձևեր և այլն) հնարավոր է բացահայտել ուրարտական ներդրումը: Հին հայկական մշակույթի ձևավորման գործում: Այս տվյալների լույսի տակ կարելի է խսնել ոչ թե ուրարտական մշակույթի ազդեցության մասին հին հայկականի վրա, այլ հայկական մշակույթի մեջ ուրարտական մշակութային երեւույթների օրգանացիան ձևվելու մասին» (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 203, ընդգծ.— և. Շ.):

Բերենք նաև մեկ այլ հատված. «Հայկական թագավարության և ապա սատրապության պայմաններում ուրարտացիների գոյության և նրանց դերի մասին անուղղակիորեն կարող են վկայել հնագիտական նյութերը: Ուրարտական և հայկական ժամանակաշրջանների մետաղագործության որոշ նյութերի և խեցեգործության մեջ երեւմն նկատվող ապշեցուցիչ նմանությունը հնարավոր է բացատրել նաև այն հանգումանքով, որ ուրարտական մետաղագործական և խեցեգործական արհեստանոցները չեն դադարեցրել իրենց գործունեությունը հայկական ժամանակաշրջանում, գոնես սկզբում, և որ այդ արհեստանոցներում աշխատող վարպետները էթնիկապես ուրարտացիներ էին, որոնք շարունակում էին արտադրել նույն մետաղագործական տեսա-

կանին՝ հարմարեցնելով այն նոր ժամանակների պահանջներին» (ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 201, ընդգծ.— Լ. Շ.):

Իր ավելի վաղ գրած «Ուրարտու և Հայաստան» հռդվածում (ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 43—60),ուր հենց այլութական մշակույթի ժառանգորդության հարցն է դրված, Գ. Տիրացյանը գրում է. «Այդ ընդհանուր առաջընթացի պայմաններում կատակվող նոր նյութերը էլ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծեցին ընդլայնելու Ուրարտու-Հայկական մշակութային առնչությունների շրջանակները։ Այսօր կարելի է արդեն խոսել ոչ քե մի, այլ մի ժամեր բնագավառների մասին, որտեղ մշակութային հաջորդակցությունը հաստատվում է ամենայն որոշակիությամբ։

Խոսքը միայն նյութական մշակույթի այնպիսի դասական նյութերի մասին չէ, ինչպիսիք են խեցեգործությունն ու մետաղագործությունը, այլ հասարակության կյանքը բնութագրող այնպիսի ուշագրավ ու էական երեսությունների մասին, ինչպես հաղաքաշինությունը, հարտարապետությունը, քաղման ձեերը և այլն» (ՊԲՀ, 1978 թիվ 1, էջ 43, ընդգծ.— Լ. Շ.):

Կամ՝ «Ուրարտու-հայկական մշակութային առնշարժությունների ծավալը, նրանց բազմաբնույթ էությունը, ոչ քե սոսկ ազդեցությունների արտահայտություն է, այլ անհամեմատ ավելի կարևոր, ժանրակշիռ մի երեսութիւ արգասիք։ Վերևում հիշատակված ուրարտա-հայկական զարդիպատճենները կասկած չեն բռնաւմ, որ խոսքը մշակութային երեսությունների յուրացման ու նրանց օրգանապես միաձուլման մասին է» (ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 57, ընդգծ.— Լ. Շ.):

Կամ՝ «Վաղ հայկական գեղարվեստական մետաղագործության ակնհայտ ազգակցությունը ուրարտականի նետ թույլ է տպել հանգելու այն հետևողական, որ վաղ հայկական ժամանակաշրջանում շարունակվել է ուրարտական մետաղագործական մի շարք արհեստանոցների գործունեությունը» (ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 58, ընդգծ.— Լ. Շ.):

Գ. Տիրացյանի այս ընդհանրացումները, որոնք «ուրարտական» և վաղ հայկական հուշարձանների վերջին 20-ամյա պեղութերով հայտնաբերված նյութերի ու դրանցով կատարված մասնագիտական հանգամանալի ուսումնասիրությունների արդյունք են, ցույց են տալիս, որ «Ուրարտու»—հայկական մշակութային էական տարրերությունների մասին խոսելն իսկ այսօր ավելորդ է։ Նույնիսկ՝ անտեղյակություն է։ Ընդհակառակը, տվյալ հարցում բնորոշն ու ակնրախը անառարկելի գարձած նմանություննություններն են, որոնք ըդգրկում են ոչ թե մեկ կամ երկու, այլ հասարակական կյանքը պայմանավորող մի շարք բնագավառներ՝ հարտարապետություն (որում՝ քաղաքաշինություն, պալատական, տաճարային, ոպամական և բնակարանային լքուցումներ), շինարարական տեխնիկա, հարագործության արենեստ և արվեստ, խեցեգործություն (իր ենթատեսակներով ու տարատեսակներով), մետա-

գագործություն (մասնավորապես՝ գեղարվեստական մետաղագործություն, գինագործություն, մետաղյա կահկարասի, աշխատանքային գործիքներ), տարագ, քաղման ձեեր և այլն, և այլն։

Ի դեպ, նմանությունները հիշյալ բնագավառներում այնպիսի զանգվածային ծավալ ու բնույթ ունեն, որ նույնիսկ «Ուրարտու»-ի հայկականության համար մաքառող Գ. Տիրացյանը չի կարողացել դրանք բացատրել ազդեցությամբ՝ «ուրարտականի» ազդեցություն հայկականի վրա, այլ դրա փոխարեն օգտագործել է «մշակութային օրգանական ձուլում», «օրգանական միաձուլում», «ապշեցուցիչ նմանություն», «մշակութային հաջորդակցություն», «նյութական մշակույթի ժառանգություն» և նման բնարոշումներ, որոնք այլ բան չեն, քան «մշակութային նույնություն» կամ «մշակութային էթնոնուլունություն» ասելը, այսինքն՝ նորից այն իրողության հաստատումը, որ մշակութային ընդհանրությամբ և ժառանգործությամբ և ժառանգործությամբ և ուրարտացիները կամ բիայնացիները նույն հայերն են։

Իսկ թե ինչու Գ. Տիրացյանը, հակադրվելով իր իսկ բերած փաստերին կամ հնագիտության վերջին նվաճումներին, խիստ անհավանական վարկած է առաջ քաշել, այսպես ասած, ուրարտական ոչ հայկական արհեստանոցներում մշակութազուրկ հայերի մտանագիտացման վարկածը, անբացատրելի չէ։ Պարզապես պատմաբան Գ. Տիրացյանը՝ կազմանդված Ուրարտուի ոչ հայկականության տեսությամբ, մաքառում է փաստերը բարեխղճորեն ներկայացնող հնագետ Գ. Տիրացյանը կեմ։ Այլ կերպ ասած, փաստերը զոհաբերում է դոգմային, Ուրիշ գաղտնիք չկա։

Չ որ բայց խումը՝ «Ուրարտական»-հայկական բնակավայրերի նույնությունը և հարատեսությունը հաստատող փաստեր։

Ինչպես տեսանք, դեռևս, ցավոք, կրողներ կան, ի դեպ՝ շատ ականվոր գիտնականներ (Բ. Առաքելյան Գ. Զահուկյան Գ. Մարգարյան), բոլորովին անհիմն և դրանով իսկ անճիշտ այն պատկերացման, որ, իրը, «Ուրարտու պետության նետ միաժամանակ անկում են ապրել նաև նրա օրով առաջացած զատ հաղաքներ ու բերդեր...» (ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 25—26, ընդգծ.— Լ. Շ.):

Ասում ենք՝ «ցավոք», «իբրա», «բոլորովին անհիմն», որովհետև մինչև օրս ոչ մի ուրարտագետ (նաև ոչ ուրարտագետ) ցույց չի տվել «ուրարտական» թեկուզ մեկ քաղաք կամ բերդ, որ «անկում ապրած ուրարտական» հետ լինի» կամ, ավելի ճիշտ՝ կործանված, «Ուրարտու պետության հետ միաժամանակ», այսինքն՝ մ. թ. ա. 590 կամ 585 թ., և համոզված ենք ցույց տալ չեին էլ կարող, քանզի նման «անկում» կամ «կործանում տեսուց տալ չեին էլ կարող, քանզի նման «անկում» կամ «կործանում տեսուց տալ չեին էլ կարող, առանցքային դեր ունեցող հարց է, և դի չի ունեցել։ Սա շատ կարևոր, առանցքային դեր ունեցող հարց է, և դի չի ունեցել։ Սա շատ կարևոր, առանցքային դեր ունեցող հարց է, և դի չի ունեցել։ Այսպիսի անհիմն հայտարարությամբ ապակողմնորոշել ընթերցողին։

Նայտ կարենոր է նաև հակառակ իրողությունը, որը և արժանի է ամենալուրջ ուշադրության:

Ինչպես ասվեց, բայց հնագիտական պեղումների, բայց ռեկավագիր արձանագրությունների, բայց պատմագրական-ազգագրական տեղեկությունների, և բայց ուրարտագիտական ուսումնասիրությունների երեսում է, որ Հայաստանի շատ քաղաքներ, բերդեր և այլ բնակավայրեր (նաև «Ուրարտուի» ժամանակ առաջացած) շարունակել են իրենց հետագա գոյությունը, այսպես ասած, հայկական ժամանակաշրջանում, եղել են հայոց քաղաքներ, բերդեր ու բնակավայրեր, իսկ ամենանշանակորները պահպանել են նույնիսկ իրենց երբեմնի մայրաքաղաքի և սրբավայրի դերը:

Արդ, որպեսզի մեր ասածն էլ հայտարարություն շդառնա, բերենք դրանցից առավել ծանոթ և առավել անկասկածելի կամ քիչ կասկածելի բնակավայրերը: Այդպիսիք են, օրինակ, Արմավիր—Արգիշտիխինիի-Արմավիրը, Տուշպա-Վանը, Էրեբունի-Երևանը, Դիառնիանի-Դառնին, Արգաշկու, կամ Արծաշկու-Արճեշը կամ էլ՝ Արծեն, Անաշե-Ալաշկերտը կամ էլ՝ Վաղարշապատը (*), Ալիշտու-Պորտակ-Լճաշենը, Արքանիա-Աբարնեն (Արմ. Տիգրիսի ակունքամերձ շղանում), Ամեղու-Ամիդը, Ախուրիանի-Ախուրյանը, Արգանիա-Խարզանը (Վանա լճի հրվ. արևմտ. ուղղությամբ), Ամուշա-Մուցքը (Ծղուկում), Անդիաբե-Անտերը (Բագրեանդում), Անիաշտանիա-Անստանը (Բոգունիք գավառում), Արանառ-Արանան (Փոքր Հայքում), Ալուղիրի կամ Ալուղիրե-Ալուղիր (բերդը՝ Պատնոցի մոտ), Արացու-Արծափ բերդը, Գառլախե-Գաւրէք (ամրոցը՝ Եփրատի ծախ ափին), Դարանի-Ելար-Ալովյանը, Զուան-Զեվինը, Իրդուա-Արիտը (Ծղուկ գավառում), Խուզանա-Խոզանը (բերդ՝ Արածանիի Մուղուր վտակի ափին), Կուսիա-Բաղեշը, Կուսիունի-Մենուախինիի-Ցոլակերտը, Կուտմար-կամ Կուդմար-Քզիմար (բերդը), Կուտումե-Կոտմ կամ Կուտում (ամրոց քաղաքը), Մատարա-Մատրան (Տիգրիսի վերին հոսանքում), Մարկասուա-Մարաշը, Մելիտեա-Մելիտու-Միլիդիա-Միլիդե-Մալիդիա-Մալաթիան, Մուշունի-Մուշը, Մուսասիր-Մուղթեսիրը, Նազարիա-Նազարին (Արածանիք ակունքների մոտ), Նիիրիա կամ Նիիիրիա-Տիգրանակերտը կամ Նիրկերտը, Նիրդուն-Միրդոնը (Բաթմանա ջուր վտակի գետաբերանից ոչ հեռու), Պիտուրա կամ Բիտուրա, կամ Պիտարա-Բիտարը (Տիգրիսի Բոհան, վտակի, աջ ափին), Պումու կամ Պումե-Ֆումը (Մասունում), Թուսախինիլի-Վանի հյուսիս-արևելյան թաղամասը, Մասու-Մասունը (բնակավայր), Մարգառի-Մարգերարը (Տիգրիսի ծախ ափին), Սուգունիա-Սուլիանը կամ Սագանը կամ Սոլանը, Տումեհշի-Տոմիսան կամ Թմնիքը (Ծոփքում), Ուտուխա-Ուխտա (ավանը՝ Օլիթից հյուսիս-արևմուտք) և այլն:

Ի դեպ, այս անունները, դրանց տեղագրումները և հետագա բնակավայրերի հետ նույնացումները բերված են ըստ ուրարտագիտական

և սումանասիրությունների; մասնավորապես՝ ըստ հմեւա ուրարտագետն վ. Վ. Հարությունյանի «Տոպոնիմիկա Սրարտ» աշխատավիյան, որը «ուրարտական» կոչված տեղանունների հանրագումարն է, ուրարտագիտության այդ բնագավառի վերջին խոսքը (Երևան, 1985): Այսինքն, մենք չենք այդ նույնացումների հեղինակը, որ առարկվենք ոչ մասնագետ» հորջորջումով, այլ, պարզապես, հենվում ենք ուրարտագիտության ամենավերջին նվաճումների վրա և ցանկանում ապացուցել, որ տվյալ հարցում ևս առանձին պատմաբաններ շեն հարգանք փաստերը, կամ էլ՝ հնամաշ մոլորության մեջ են:

Հեռուն շնորհը: Բերված ցուցակից երեսում է, որ ռուրարտականն կոչված ավելի քան 40 քաղաք, գյուղ ու բերդ շարունակել են իրենց հետագա գոյությունը, այսինքն՝ չեն կործանվել «Ուրարտու» պետության հետ միաժամանակ: Նույնքան քաղաք, գյուղ ու բերդ՝ էլ կարելի էր ավելացնել ցուցակին, սակայն շծանրաբեռնելու նպատակով ազելորդ համարեցինք: Քիչ չեն նաև այնպիսիք, որոնց տեղագրում նույնացումը դեռևս անհնար է և չի բացառվում, որ դրանցից էլ հարատեղողներ եղել են: Եվ, ահա, մի կողմում այս ակնբախ իրողությունն է, իսկ մյուս կողմում՝ հակառակն ապացուցող ոչ մի փաստ, այսինքն՝ մ. թ. ա. Ե-րդ դարի առաջին երկու տասնամյակներում չի նշված, չի ապացուցված, չի երևում «ուրարտական» որևէ բնակավայրի կործանում:

Արդ, անտեսել այս ամենը և անկաշկանդ գրել, թե՝ «Ուրարտու» պետության հետ միաժամանակ անկում են ապրել նաև երա օրով առաջացած շաղաքներ ու բերդեր...», որ կնշանակի՝ «Ուրարտու» պետության կործանման հետ միաժամանակ հայերը ջոկովկել ե կործանել են հենց երանց կառացած շատ քաղաքներ ու բերդեր, հավասարազոր է փաստերը խեղաթյուրելուն, շեղածը եղած ներկայացնելուն:

Այս խեղաթյուրումը կամ հնամաշ պատկերացման վերաբարձումը, մեր կարծիքով, նպատակային է և ոչ շիմացություն: Պարզապես խիստ անհրաժեշտ է եղել, որ ուրարտացիների «ոչ հայ լինելը» հնարավորին շափ հիմնավոր երևա, և քանզի դրա համար հիմքեր շկան, ուստիև փաստերի խեղաթյուրումը ընտրելի է համարվել: Տվյալ դեպքում հայերը հանդիս են բերված անողոք ավերակող-կործանողների դերում, որպեսզի դրանով ևս անջրպետվեն «ոչ հայ ուրարտացիներից»: Ինչ խոսք, նպատակ է, բայց ինչու ոչ գիտական եղանակով; մասնավանդ՝ ինքնասպանության գնով: Մասնավանդ որ փաստերը հակառակն են ցույց տալիս: Այսինքն այն, որ բնակավայրերի զանգվածային հարատեղումը նաև «հետուրարտական» ժամանակաշրջանում այլ բան չէ, քան հայերի և ուրարտացիների կամ բիայնացիների էթնոնույնության ապացուց:

Հինգերության գայ-ռուրարտ» էթնոնույնության ապացուց են նաև (մեր կարծիքով՝ անառարկելի) վերջին տասնամյակում Հայաստանի նակարագրերը վայրերում հայտնաբերված դամբարանային երկշերտ թաղում-

ները, ինչպիսիք են, որինակ, Հնաշենում (Հնագետ Վ. Ավետյան), Վահանավանքում (Կապանի ջրան, Հնագետներ Գր. Գրիգորյան, Վ. Ավետյան), Կամոյի և Մարտունու ջրաններում (Հնագետ Ա. Փիլիպոսյան) և այլուր:

Այսպիսի դամբարանները, իհարկե, սակազաթիվ են, չույս էլ չկա, որ շատ հիմնաբերվեն, սակայն գրանով իսկ խիստ ուշագրավ են և կարենք:

Հստ Հնագետների տարրերակման, այդ դամբարանների ստորին շերտում ուրարտական ժամանակի կամ «Ուրարտ» կոչվածների թաղումներն են, իսկ վերին շերտում՝ Հետուրարտական կամ Հայկական ժամանակի և Հայերի թաղումներ՝ ստորին շերտից 50—100 տարի անց կատարված։ Այսպիսի տարրերակումը կամ շերտագրումը, մեզ թվում է, հակապատմական և հերքում է այդ իսկ դամբարանների գոյությամբ թանն այն է, որ Հազարամյակներով հարատեղ թազման սովորություներին հակառակ, ինչպիսին մեզ է հասել նույնիսկ քրիստոնեության ընդունելուց հետո էլ, հայ ննջեցյալին չէին թաղի ոչ հայի դամբարանում կամ ոչ հայի դիակի վրա, այն էլ ոչ թե պատահականորեն, այլ իմանալով ստորին թաղման մասին։ Այո, իմանալով, քանզի տվյալ դամբարաններում ստորին և վերին թաղումները իրարից բաժանված են ընդամենը 30—50 ամ հողի բարակ շերտով, այսինքն պատահականի մասին խոսք լինել չի կարող։

Ուրեմն, դատելով այս իրողությունից, «Ուրարտ» կոչվածն ու հայը նույն ժողովրդին, ավելին, նույն տոհմին են պատկանում, որ զոտ արհեստականորեն նրանց իրարից բաժանելը բոլորովի էլ գիտական չէ։

Այլ հանգամանքներ են: Տվյալ դամբարաններում թազմաները և ստորին, և վերին շերտում մարդարանական նույն տիպին են պատկանում, այսպես ասած արմենոփի են (=հայատիպ), նույնն են նաև թաղման ձևերը, իսկ տարրերությունները ինչ-որ չափով դրսենորվում են նրանց հետ թազմած նյութական արժեքներում (ավելի կամ պակաս և այլն) որը, կարծում ենք, նույնացնող վերոհիշյալ պարագաներում տարրերակման լուրջ հիմք ծառայել չի կարող։

Վեցերորդ, տեղագրորեն ևս «Ուրարտու» կոչված երկիրը կամ պետությունը երբեք դուրս չի եղել Հայքից կամ Հայաստանից: Ավելին, իր հզորության ժամանակահատվածում (786—714 թթ.) նրա տարածքը համարյա նույնանում է Մեծ Հայքի տարածքին: Այս իրողությունը, կարծում ենք, հանրահայտ է, նորից ապացուցելու կարիք չկացվում։

Ժամանակագրական առումով «Ուրարտու» կամ Բիալյան, կամ Վահանի թագավորությունը (860—595 թթ. մ. թ. ա.) Հայոց պատմության մի կարճատև (շուրջ 265 տարի) և միջանկյալ ժամանակահատվածն է միայն: Ինչպես նշվեց նախորդ շարադրանքում և ինչպես ցույց է տրվել

այլ տարրերով (ան «Գեղցզ զարերի խօրժեց», «Արամ-Արամի նույնացման հարցի զուրցը—«Մանկազարծ ու մոռպիքը, 1930, թիվ 11, 1931, թիվ 5), «Ուրարտու» կոմ «Բիալյա» կոչված ուշ հայկական պետությունը, որն ավելի կամ պակաս հզորությամբ հարատեսվ է մինչև «Ուրարտու» (ապացույց են նաև ինքնական և տուսվական արձանագրությունները Հայաստանակիրի երկրների ժամանակ), ոպա զոյսւթյուն ունի «Ուրարտու»-ի ժամանակ, երբ նույնիսկ զեր է ածզել թագավորության (մ. թ. ա. VIII դիերիբին), ոպա՝ հետագարաւական շրջանում, որը թեպետ կիսատպատ արքեն բարերախտարար ընդունելի է համարվում: Այնպես որ արտարին կամ ներցին որեւէ աղբյուրով ժողովրդակախության որեւէ երկույթը լին կատավաւ Հայաստանում՝ «Ուրարտու»-ից շատ ու շատ դարեր առաջ երկիր բնիկները հայեր են, «Ուրարտու»-ի ժամանակ են, «Ուրարտու»-ից անմիջապես հետո են, հետագա գարերում են: Ահա սա է փաստերով հաստատված պատմական իրողությունը, երբ ձերքազատվում ենք շինծու կանխագրույթներից: Սա է նաև պատճառը, որ «Ուրարտու» դիտվելու է որպես Հայոց պատմության միջանկյալ ժամանակաշրջան, որպես Վանի հայկական իշխանություն կամ թագավարություն, որը ձրգուել է Հայոց գերազանցության և ինչ-որ ժամանակ ենաւ հաջողվել է: Այս մասին դեռ կիսումի:

Հակառակ գեղքում երե, փաստերին դեմ գնալով, համառորեն «Ուրարտու» դիտենք ոչ հայկական, պատմագիտության շատ անլուծելի հակառաւթյուններ եղել են, կան ու կմնան (լավագույն զեպքում զարմանալի երանքներ ստացած) և երբեք չեն նպաստի ճշմարտությունների բացահայտմանը։

Յոթերորդ, հայ-«Ուրարտ» էթնոնույնության ապացույց են նաև փաստերը, ըստ որոնց Հայք-Հայաստանը VII դարի սկզբներից սկսած, այսինքն՝ «Ուրարտական» կոչվածի կործանումից շուրջ 100 տարի առաջ և անմիջապես հետո հայկական հզոր պետություն և թագավորություն է համարվել: Նկատի ունենալով միաժամանակ, որ այս փաստերը քաջահայտ են, այժմ բավարարվենք սոսկ նշումներով։

1. Աստվածաշնչի «Թագաւորաց շորրորդ գրքում» (գլ. ԺԹ, գլ. 36—37): զրված է. «Եւ Ասորեստանի Սենեթերին թագաւորը շուեց գնաց դարձեալ, ու նստեց նինուէ: Եւ երբոր նա երկրպագում էր իր աստուծուն՝ Նեսրափի տանը, նորա որդիքը Ադրամելէ եւ Սարասար նորան սրով սպանեցին եւ իրանք փախան Արարատի երկիրը. եւ նորա որդի Ասորդանը թագաւոր եղաւ նորա տեղ» (ընդգծ.— Լ. Շ.):

Հստ Աստվածաշնչի, Սենեթերիմը սպանվել է Հուդայի Եղեկիա թագավորի 15-րդ տարում (տե՛ս Թագ. Դ, գլ. ԺԹ, Հմմտ. գլ. Ի): և քան-

գի, ըստ պատմագիտության, Եզեկիան թագավորել է մ. թ. ա. 715—687 թթ. (տե՛ս Ենքերման, Խռո. ճրեւ. միրա, Մ., 1975, օ. 192), ուրեմն՝ Սենեքերիմի սպանությունը մ. թ. ա. 701 թ.: Սակայն նույն գրքում (ԽԴՄ, ստր. 188) և ընդհանրապես (տե՛ս նաև ՀԺՊ, ՀՀ ԳԱԱ Հրատ., էջ 426) Սենեքերիմի մահը ընդունված է մ. թ. ա. 681-ին, որով և 20-ամյա հակասություն:

Այս հակասությունն, իհարկե, անկարևոր չէ, սակայն սույն պահին վճռորոշ գեր չունի կատարված իրաղության համար, ուստիև առաջնորդ վենք առավել ընդունվածով՝ 681-ով և անցնենք մյուս փաստերին:

2. Այդ առթիվ հետեւյալն է գրում Մովսես Խորենացին. «Եւ ի մոռացումն եկն արդեօք յաղագս Սենեքերիմայ. քանզի ութսուն, աւելի կամ պակաս ամօք յառաջ քան զբագաւորութիւնն նարուգողոնոսորայ էր Սենեքերիմս կացեալ արքայ. Ասորեստանի, որ զերուսաղէմ պաշարեաց առ Եզեկիայի Հրէից առաջնորդաւ. զոր սպանեալ որդոց նորա Աղրամելեքայ և Սահասարայ՝ եկին փախստական առ մեզ»:

Յորոց զմինն յարեւմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այս ինքն է զՍահասարան. և ի սմանէ աճումն և բազմասերութիւն լեալ լցին կՍիմն ասացեալ լեառն: Իսկ պերճքն և զիմաւորքն ինոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զրդեշնութիւն կողմանցն արժանաւորեցան առնով, իսկ Արդամոզանն յարեւլից հարաւոյ նորին կողմանն բնակեալ. ի սմանէ ասէ պատմագիրն (Մար. Աբասը, — և. Շ.) լինել զԱրծրունիս և զԳնունիս: Արդ՝ յիշելոյն մեր զՍենեքերիմ այս էր պատճառն» (Ա, գլ. հԿ),

Այս տեղեկությունների առթիվ անհրաժեշտ է տալ երեք բացատրություն:

Նախ այն, որ Խորենացին ճիշտ գիտի Սենեքերիմի թագավորության ժամանակը և այն նշել է զարմանալիք ընդհանրացմամբ՝ «Նարուգողոնոսորի թագավորությունից ութսուն, ավելի կամ պակաս, պարի առաջ: Եվ, իրոք, Սենեքերիմի սպանությունից մինչև նարուգողոնոսորի թագավորելը, այն է՝ մ. թ. ա. 605 թ. (ԽԴՄ, օ. 185) 76 տարի է (681—605), այսինքն՝ պակաս է 80-ից, իսկ թագավորության սկզբից՝ 99 տարի է (704—605), այսինքն՝ պակելի է 80-ից: Ի դեպ, նարուգողոնոսորին այստեղ հիշելը շատ կարևոր է, քանզի նրա թագավորության ժամանակը (605—562 թթ.), թե՛ այժմ, թե՛ անցյալում առավել հաստատում է:

Մյուս բացատրությունը հետեւյալն է, Խորենացին, ինչպես տեսնում ենք, Ասորվածաշնչի համեմատությամբ տվյալ դեպքում հավելյալ և կարենոր տեղեկություններ է ավանդել՝ «ասէ պատմագիրն» հղումով: Իսկ սա նշանակում է, որ տվյալ դեպքում Խորենացու արժանահավատությունը պայմանավորված չէ միայն Ասորվածաշնչով, ոչ էլ նույնիսկ Ասորվածաշնչով:

Վերջապես, դիացակոշված հատվածից այնպես է երեսում, որ հայրապան եղբայրները Հայաստան են փախել Պարուցի հոր՝ Սկայորդու ժամանակ, որը և հակասում է նախորդ երկու զլուխների (Ա, գլ. հԱ, հԲ) շարադրանիթին: Բանն այն է, որ ըստ նախորդ զլուխների, Հայաստանը Պարուցի հոր՝ Սկայորդու ժամանակ ևս Ասորեստանին ենթակա պետություն էր, ուստիև չէր կարող քաղաքական ապաստան տալ, այն էլ թագավորասպան և հայրասպան եղբայրներին: Այս իսկ հիման վրա ենթադրում ենք, որ Խորենացու՝ քննարկվող հատվածում Սկայորդի անունից առաջ եղել է Պարուցը անունը, այսպես՝ «...Պարուցը Սկայորդին մեր քաջ նախնին...», մնացածը, ինչպես կա բնագրում: Այսպիսով, արքայասպան եղբայրների Հայաստան փախչելը, բայց Խորենացու, ոչ թե Սկայորդու ժամանակ, այլ սրա որդի Պարուցի, այն էլ Պարուցի թագավորը հոչակվելուց և Հայաստանի լիակատար անկախացումից հետո միայն: Սա ժամանակագրորեն շատ կարենոր է և պետք է նկատի ունենալ:

3. Սենեքերիմի սպանությունը իր որդիների ձեռքով և սրանց փախուստը Հայաստան («Աղրամելէք և Սահասար գան մտանեն ի լեառն Սիմ...») արտացոլված է նաև Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» գրքում (դպր. Ա, գլ. Ա), ինչպես նաև «Սասնա ծոեր» հայկական ծողովրդական դյուցազնավեպում (Ճյուղ Ա՝ «Սահասար և Բաղրասար»):

Այսուհետեւ, այս բոլոր տեղեկությունները մինչև վերջերս (մինչև մեր դարի 60-ական թվականները) համարվում էին Ասորվածաշնչի պարզ արձագանքներ և մերժելի: Իսկ երբ հայտնի դարձան նույն դեպքի մասին պատմող աստորական երկու արձանագարություններ; մերժելին դարձավ և ճշմարիտ, և ընդունելի:

Օրինակ, «Բարեկոնյան ժամանակագրության» մեջ մ. թ. ա. 681 թ. Ասորեստանում կատարված այս իրադարձության առթիվ կարդում ենք հետեւյալը: «Տերեւտ ամսի (այսինքն՝ մ. թ. ա. 681 թ. նոյեմբերի-դեկտեմբերին) 20-րդ օրը Սինախերիբին՝ Ասորեստանի թագավորին, խոռվության ժամանակ սպանեց նրա որդին» (տե՛ս ՀԺՊ, ՀՀ ԳԱԱ Հրատ., հ. 1, էջ 426); Եվ քանզի այս իսկ իրադարձության առթիվ հիշված է Արմենուպրին երկիրը, նշանակում է սպանողները փախել են այստեղ՝ Արմենուպրիա երկիրը, նշանակում է սպանողները փախել են այստեղ՝ Արմենուպրիա:

Նույն իրադարձությունը նշված է նաև Սենեքերիմի կրտսեր որդու և հաջորդի՝ Ասորհադունի արձանագրություններում: Այնտեղ ասված է, որ նրա հայրասպան եղբայրները «լսելով իր արշավի մոտենալու մասին, թողեցին իրենց հավաքած զորքերը և փախան հայտնի չեն, թե ուր նույն տեղում»:

Ենելով այս ամենից, ուսումնասիրողները ի դեմս Աղրամելեքի տեսնում են Արադ-Նինիլին կամ Արադ-Նիլլիլին՝ Սենեքերիմի որդինե-

ըից մեկին, իսկ ի գեմս Շարեցերի (*Սարասարի*) ենթագրվում է զորապետ Նաբուշարուսուրը: Գտնում են միաժամանակ, որ «Բարեկլոնյան ժամանակագրության» մեջ հիշված Արմե-Շուպրիան նեղ առումով համապատասխանում է Սասուն լեռնային գավառի տարածքին, լայն առումով՝ Աղձնիք նահանգին (ՀԺՊ, ՀՀ ԳԱԱ, Հրատ., հ. 1, էջ 426—427): Ավելացնենք նաև, որ ըստ Թ. Արծրունու, Սանասարն ու Ազգամելքը փախել են Սիմ լեռ, այսինքն՝ Տավրոս, իրենց զորագնդով, որն առավել հավանական է, քան Ասարհադդոնի ասածը, թե թողեցին իրենց հավաքած զորքերը և փախան:

Այսպիսով, մ. թ. ա. 681 թ. Ասորեստանի Սինախերիք կամ Սենեքերիմ թագավորի սպանությունը իր որդիների ձեռովով, հայրասպան որդիների՝ Սանասարի և Աղդամելքը փախուստը դեպի Հայաստան, առավել որոշակի՝ դեպի Սասուն, և նախապես նրանց հաստատվելը այս տարածքում, ինչպես տեսանք, որնէ կասկած չի հարուցում: Կարծում ենք, կասկած չի հարուցելու և այն, որ այդ ժամանակ (Հետեւարար, գտնե, դրանից 20—30 տարի առաջ էլ) Հայաստանում եղել է այնպիսի մի պետություն, որը կարողացել է հակադրվել իր հզորությունը դեռ չկորցրած Ասորեստանին, կարողացել է պետականորեն ապաստան տալ Ասորեստանից փախած արքայասպան եղբայրներին և նրանց զորական ներին, այսինքն՝ պետական հանցագործներին:

Արդ, հարց է առաջ գալիս՝ այդ ի՞նչ պետություն էր, որ ուզմականապես չի ակնածել Ասորեստանից, որ, ընդհակառակը, մեծապես հոգացել են փախստականների ապագայի համար, նույնիսկ արժանացրել ազնվականական դիրքի ու պաշտոնի:

Կարող է կարծիք լինել, թե դա ուրարտական պետությունն էր, սակայն, կանխելով ասենք, որ այդպիսի կարծիքը դատապարտված է մերժման, թանն այն է, որ Ռուսա Բ-ի թագավորության համարյա ամբողջ ժամանակաշրջանում (մ. թ. ա. 685—645 թթ.) և նրա հաջորդների ժամանակ Ուրարտուն բարիդրացիական հարաբերություններ է ունեցել Ասորեստանի հետ: Ավելին, ոչ միայն բարիդրացիական, այլև դաշնակցային փոխօգնության և աջակցության փոխհարաբերություններ Ասարհադդոնի (մ. թ. ա. 680—669 թթ.) և Ռուսա Բ-ի միջև: Էլ ավելին, ինչպես ցույց է տրված պատմագիտության մեջ, բարեկամության շափերն այնտեղ են հասել, որ Ասարհադդոնը բարեխզճորեն որոնել, հայտնաբերել և Ռուսային է վերադրձրել Շուպրիայում ապաստանած ուրարտացի փախստականներին (տե՛ս ՀԺՊ, ՀՀ ԳԱԱ Հրատ., հ. 1, էջ 334):

Ի դեպ, առավել հիմնավոր լինելու համար, դիմենք հենց իրեն՝ Ասարհադդոնին: Աշուր աստծուն ուղղված ուղերձում, որը բովանդակում է մ. թ. ա. 673 թ. Շուպրիա կատարած իր արշավանքի նկարագրությունը, նա պատմում է հետեւյալը. «Փախստականներին, որոնք բողել են իրենց տերերին և փախել Շուպրիա, ես կտրեցի (...) նրանց

գրկեցի քթից, աշքից և ականջից, (որպեսզի ոչ ոք) շփախչի ուրիշ երկիր, նրանց վրա սահմանեցի պատիժ (...): Վերադարձի նրանց յաւրաքանչյուրին իր երկիրը և իրենց տերերին, (նրանց տերերը լսեցին) և ուրախացան, ցնծացին, օրհնեցին իմ վեհապաննությունը: (Ինչ վերաբերում է փախստական) Շուարտերին, որոնք փախել են Շուարտություն Թ. Սայր Սուպրիայի թագավորին, — և. Շ.) նրանց մասին, բայց նա չէր ունեցրել երա հրամանին, չէր համաձայնել երանց հանձնել հանդրգնաբար գրել էր երան, պատասխանել ատելուրյամբ: (Դրանից հետո) ես հույս դնելով Աշուրի՝ իմ տիրոջ վրա, նվաճեցի Շուարտիան և նրա մարդկանց մատնեցի գերության, քանի որ այն բանի համար, որպեսզի երդումները պահպանվեն, ինձ ճշմարտություն և արդարացիություն են պարզել մեր աստվածները: Այդ մարդկանց մասին ես հարցը եմ, հարցաքննել և հավաստիացել, ուրարտացի ոչ մի փախցաքննել, հետաքննել և հավաստիացել, վերադրձրել և լիստականի ես չեմ պահել, ոչ մեկին ես չեմ թաքցրել, վերադրձրել եմ իմ երկիրը (ՀԺՊ, ՀՀ ԳԱԱ Հրատ., հ. 1, էջ 428—429, ընդգծ. — և. Շ.):

Արդ, այս փաստերի առկայությամբ, կարծում ենք, մեկընդմիջտ բացառվում է Ուրարտու կոչված պետության հանգրվան լինելը տվյալ ժամանակ Ասորեստանից փախածների, մասնավորապես՝ արքայասպան եղրայրների համար: Այդ նույն փաստերով բացառվում է նաև «Աստվածաշնչում» հիշվող «Արարատի երկիրը» Ուրարտուի հետ նույնացնելը, ինչպես նշված է «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա»-ում (հ. 1, Երևան, 1981, էջ 116, ծան. 5), քանզի տվյալ ժամանակաշրջանի համար այդպիսի նույնացումը հակասում է փաստերին և հակապատմական է: Ընդհակառակը, արդեն մեզ ծանոթ փաստերի համատեղ քննությունից երևում է, որ Հայաստանում Ուրարտուին զուգահեռ ապարագաշահական մեկ այլ թագավորություն ունի հայկական մեկ այլ թագավորություն, որն առավել հզոր է, քան «ուրարտական» կոչվածը, քան այդ թագավորության դեմ ուղղված Ուրարտու-Ասորեստան ուագմական դաշինքը:

Պատմագիտության մեջ արքայասպան եղբայրների փախստավայր է համարվում Արմե-Շուպրիան, որպես հայկական ցեղամիության երկիր, ինչպիսի կարծիքը հիմնավոր է և կասկած չի հարուցում: Սակայն նույնքան էլ հիմնավորիկ է և առարկելի, երբ այդ Արմե-Շուպրիա կոչվածը դիտվում է ոչ որպես որևէ պետության կամ թագավորության երկամաս, այլ որպես առանձին փոքրիկ պետություն կամ ոչ պետություն, կամ էլ ցեղամիության անձուկ տարածք և հակագրվում Ուրարտու-Ասորեստան դաշինքին (ՀԺՊ, ՀՀ ԳԱԱ Հրատ., հ. 1, էջ 426—430):

Արմե-Շուպրիայի համար այս խիստ ծանր վիճակը փաստերի միակողմանի և մակերեսային քննության արդյունք է, իսկ իրողությունը՝ հետեւյալը.

1. Ինչպես տեսանք, պատմական ստույգ իրողություն է, որ մ.թ.ա. 681-ին Ասորեստանի արքայասպան և Հայրայսպան Եղրայրները ոչ միայն փախել ու ապաստան են գտել Արմեն երկրում, այլև ջերմ ու տեսական հոգատարության են արժանացել, նախարարական տօնմերի հիմնադիրներ դարձել (*Սանասարյանների*, Արծրունիների, Գնունիների), բարձր դիրք ու պաշտոններ ունեցել: Արմեն-Շուպրիա երկրի այսքան համարձակ, նույնիսկ խիզախության հասնող այս գործելակերպը, մանավանդ ընդունել: Ուրարտու-Ասորեստան ուղամական դաշինքի, համարյա անկասկած է դարձնում նրա թիկունքում կամ նրան հռվանավոր առավել հզրություն, քան հիշյալ դաշինքը, որը ցավոք պատմագիտության մեջ լի նկատվում:

2. Ասարհադդոնը, ինչպես տեսանք, իր արձանագրությամբ ասում է, որ «Հայրասպան եղրայրները լսելով իր արշավանքի մասին, բողեցին իրենց հավաքած զորքերը և փախան հայտնի չեն, թե ուր»:

Ասարհադդոնի այս հաղորդումը՝ «փախան հայտնի չեն, թե ուր», բացահայտ անձշտություն է, պարզապես թաքցրել է իրողությունը: Նա չէր կարող շիմանալ, թե ուր փախան իր հայրասպան եղրայրները, մանավանդ, որ նույն ժամանակ գրված «Բաբելոնյան ժամանակագրությամբ» հայտնի էր նրանց փախստավայրը: դա Արմեն-Շուպրիա երկրն է:

Այսպիսով, հարց է առաջանում՝ ինչո՞ւ է թաքցվել ճշմարտությունը: Ասարհադդոնը, մեր կարծիքով, փախստավայրը չի նշել, քանզի զորու չի եղել տվյալ պահին արշավելու ընդգեմ Արմեն-Շուպրիաի, պարզապես վախեցել է ձախողումից: Խսկ այսպես՝ անորոշության տարբերակով; ժամանակակիցների և սերունդների առջև պատճառաբանվում էր իր «հարկադրյալ» անգործությունը:

3. Այսուհեռձ, ինչպես տեսանք, դեպքից 8 տարի հետո (մ.թ.ա. 673 թ.) Ասարհադդոնը պատժի արշավանք կազմակերպել է՝ դեպի Շուպրիա, չնայած նորից բավարարվել է կես ճշմարտություններ հաղորդելով: Օրինակ, չի հաղորդում իր արշավանքի բուն նպատակը: Այսպես է ստացվում, որ Ասորեստանի թագավորը հատուկ արշավանք է կազմակերպել դեպի Շուպրիա, ուրարտացի փախստականներին իրենց տիրոջը՝ Ռիւսա թ-ին վերադառնելու համար: Այսինքն զուտ դաշնակցային պարտականություն է կատարել, այն էլ առանց դաշնակցի օգնության: Իրոք, շատ է անհավանական: Հավանականը, կարծում ենք, այն է, որ այդ արշավանքի բուն նպատակը եղել է Հայրասպան եղբայրներին բռնելն ու պատժելը, եվ քանզի Ասարհադդոնը այժմ էլ բռնպատակի մասին ոշինչ չի ավանդել, նշանակում է Շուպրիայում նա անհաջողություններ է ունեցել, չնայած իր այդ արշավանքը արդարացնելու համար երկար-բարակ խոսել է մանր-մունը, ճիշտ կամ անձիշտ «հաջողությունների» մասին: Նշանակում է նաև, որ նա Շուպրիան չ-

գրավել, ինչպես ոմանք հնթաղրում են (ՀԺՊ, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 1, էջ 429), նշանակում է նաև, որ Արմեն-Շուպրիան իր թիկունքում, իրոք, զոր Հովանավոր է ունեցել:

4. Մովսես Խորենացու համապատասխան տեղեկություններից էլ երևում է, որ այդ Հովանավորը լինելու էր Հայկական կենտրոնական պետությունը (բուն անունով՝ Հայկազյան կամ Այրարատյան, Արարատյան՝ Արմավիր՝ Կենտրոնով), որը Սկայորդու որդի Պարուցի ժամանակ (մ.թ.ա. մոտ 725—674 թ.թ.) Մարաց առաջնորդ Վարրակեսի դաշնակցությամբ (Վարրակեսի և ոչ՝ Կիաքսարի) ձերբազավում է Ասորեստանի գերիշխանությունից, դառնում անկախ թագավորություն և ձեռնամուխ լինում Հայոց միասնական պետության վերականգնման գործին (Ա, գլ. ԽԱ-ԽԴ):

Մւր կարծիքով, ահա այս թագավորությունն է, որը շատ հուսալի պապատան է դարձել Ասորեստանի արքայանապան և հայրասպան եղրայրներին, այսինքն՝ պետական հանցագործներին ու նրանց թիկնազորի համար: Ասարհադդոնի ասածը՝ թե «Թողեցին իրենց զորքը և փախան», դարձյալ հավատալի չեն, ինչո՞ւ թեկուզ իրենց հավատարիմներին շտանին: Այս թագավորությունն է, որից ակնածելով ակնածելու և զգուշանալով զգուշացել է Ասարհադդոնը և, պարզվում է, իզուր չի եղել այդ զգուշացորությունը: Այս թագավորությունն է, որի գեմ ուղամական դաշնք են կնքել ոչ վաղ անցյալի անհաշտ ախոյանները՝ Ասորեստանը և «Ուրարտու» կոչված հայկական մասնատված պետությունը, շնայած գա էլ չի նպաստել նրանց նկրառումներին: Վերջապես, այս թագավորությունն է, որ Արարատա երկիր կամ Արարատա թագավորություն անունով հիշված է Աստվածաշնչի թագավորաց շորրոդ գրքում և ծրեմիայի մարգարեռության մեջ, իսկ Արմեն-Շուպրիա կոչվածը սասկ այդ թագավորության հարավային՝ Ասորեստանին սահմանամերձ երկրամասն է եղել:

Այս տեսանկյունով առանձնակի ուշագրաւթյան են արժանի ուրարտացի փախստականների մասին Ասարհադդոնի պատմածը, և պատմակիտության մեջ զուտ արհեստականորեն դրանց դասակարգային բեկությունը:

Օրինակ, խիստ մեծամտական է երևում Ասարհադդոնի այն հայտարարությունը, որ, իբր, ուրարտացի բալոր փախստականներին նա հայտնաբերել, այն էլ դրանց մասին հանգամանողեն հարցնելուց, հարցադրություննելուց, հետաքրքրվելուց, հավաստիանալուց հետո, և վերադրձել է իրենց երկիրը՝ «Ուրարտու», կամ իրենց տիրոջը՝ Արարտուի թագավոր Ուրարտին: Արդ, եթե Շուպրիայում Ասարհադդոնը այդքան հնարավորություն և հաջողություններ ունեցել, ինչո՞ւ շգտավ և վերահնարավորություն է հայրապետություններ ուներ, ինչո՞ւ շգտավ և վերահնարավ իր հայրասպան եղրայրներին, իր գահի հավակնորդներին, դարձրեց իր հայրասպան եղրայրներին:

1 Զշփել Արարադա երկիր=Ուրարտու անվան հետ:

մանագանդ, որ հենց այսուհետ՝ Արմե-Շուպրիայում էին նրանց պատանեկ, մանագանգ, որ հանցագործ գեղջից ընդունենց 8 տարի էր անցել և իր այս պատճիշ արշավանքն էլ, կառածելիք չէ, հենց նրանց գունելու համար էր ձեռնարկված։ Այնպիս որ, Ասորեստանի համար երկրորդական գեղջիր նկարագրելով, Ասարհագունը քաղաքին է իր պարտությունը՝ ոչ Արմե-Շուպրիա է նվաճել, ինչպես կարծում են (ՀԺՊ, ՀՀԱԱ հրատ., հ. 1, էջ 429), ոչ էլ այդքան փախստականներ է վերադրել «Ուրարտու»։

Այժմ՝ «Ուրարտական» փախստականների գառակարգային պատկանելության մասին։

Հստ պատմագիտության, դրանք ոչ այնքան քազաքական փախստականներ են, որքան Ուրարտուի ստրուկներ և շահագործվող այլ զանգվածներ, որոնք ապաստան էին գունում տոհմային գեմակրատիայով ապրող բարձրադիր Արմե-Շուպրիայում (ՀԺՊ, ՀՀԱԱ հրատ., հ. 1, էջ 426, 428), այսինքն՝ դասակարգային բնույթ ունեին։

Այսպիսի պատմերացումը ոչ միայն հիմնազուրկ է (պարզապես գոեհիկ սոցիոլոգիզմի հետևանք), այլև տրամադրութեան հակասում է փաստերին։ Ասարհադոնի արդեն մեզ ծանոթ արձանագրությունը, որը միակ աղբյուրն է այդ հարցում, ոչինչ չի ասում փախստականների դասակարգային բնույթի մասին, որով և թույլ է տալիս պնդելու դրանց քաղաքական էությունը։ Բացի այս, զուգահեռ փաստերը ևս կարեոր են։ Օրինակ, ինչպես տեսանք, Արմե-Շուպրիան բոլորովին էլ տոհմային գեմակրատիայով ապրող երկիր չէ, որ, ասենք, շահագործվողների հենարան դառնար, Կամ՝ գժվար է հավատալ որ երկու՝ երրեմնի թշնամի պետություններ, ամեն մի թշնամություն մոռացած, զորք ու զորաբանակ առած սոսկ շահագործվողներ կամ ստրուկներ էին «որսում»։ Կամ Արմե-Շուպրիայի թագավորը, կամ առաջնորդը, սոսկ ուրիշի ստուրկներին հովանավորելով, վտանգում էր իրեն ու իր երկիրը, այն էլ՝ օրինական պահանջանարկությունը «հանդգնարար» գրելով ու «ատելությամբ» պատասխանելով և այն, և այն։ Այնպես որ լուրջ հիմքեր կան մտածելու քաղաքական փախստականների մասին, տվյալ դեպքում «Ուրարտուի» թագավորի գործելակերպից դժգոհողների, հիմնականում վերնախավի ներկայացնեցին ըմբուտություն և փախուստ դեպի Արմե-Շուպրիա, ավելի ճիշտ, դեպի հայկական առավել հզոր կենտրոնական թագավորություն։ Կարծ ասած, «Ուրարտու» կամ «Բիայնա» կոչված հայկական պետության գործելակերպից դժգոհ ավագանին (շատերը, թե քերը՝ միենույն է) կողմնորոշվել է հօգուտ հայկական կենտրոնական թագավորության, այսինքն՝ հօգուտ Պարույրի, հանուն միասնական պետության վերականգնման։

Այս է, մեր կարծիքով, պատմական բուն իրողությունը, որը զա-

նազան պատճառներով, ցավով, չի երեացել և բազում թյուրիմացությունների աեղջիք է ավել։ Այս իրողությունը գեռ ապացուցվելու է։

Չի երեացել և այն, որ մ. թ. ա. VIII դարի վերջերից Հայաստանում զուգահեռ գոյություն ունեն «Արարագ» (=«Ուրարտու») և «Արարատ» (=«Այրարատյան») երկու հայկական հակադիր թագավորություններ, ինչպիսի նմանությունը ևս (զուտ պատահական նմանություն) ոչ քիչ թյուրիմացություններ է ծնել և խանգարել բուն իրողության բացահայտմանը։

Այսպիսի դրանցից մեկը (ըստ մեր շարադրանքի՝ առաջինը) հետագա կաղմեա տուն կամ Կորդուք նահանգի Արարադա երկիր գավառանունից (շատմերական հնագույն էպոսում՝ Արատտա), որից և Ուրարտու անվանաձեռ, իսկ մյուսը՝ Արա Գեղեցիկի անունով (կառավարել է մ. թ. ա. մոտ 1978—1968 թթ.), նախ՝ Այր-Արայ-արտ, Դաշտն Արայի կամ Արայի դաշտ, ապա՝ Այրարատ-Արարտ։ Մեկը (վերջինը՝ ըստ մեր շարադրանքի) որպես համահայաստանյան և համահայկական կենտրոնական պետության, ապա թագավորության ընդհանրական անուն, իսկ նեղ առավելով՝ համանուն դաշտի և լեռան անուն (Մասիս, նաև՝ Արարատ), մյուսը՝ համահայաստանյան և համահայկական պետության հարավային ծայրագավառի և լեռնագագաթի անուն (այժմ՝ Զուրիդի գաղ), մ. թ. ա. IX դարի վերջերից առավել ընդարձակ տարածքների կամ կենտրոնականից առանձնացած հայկական իշխանապետության անվանումը՝ Վանա լճի ավագան, կաղմեա տուն, Մոկք նահանգների ընդգրկումով (տեղական անունով՝ Բիայնա), իսկ մ. թ. ա. VIII դարում ավելի ընդգրկուն, բայց երբեք նույն ընդգրկումով, ինչպես կենտրոնական պետության Արարատա երկիր, Այրարատյան թագավորություն անվանումը։

Այսպիսով, փաստերը թելադրում են ոչ թե նույնացնել Արարադ (=Ուրարտ-Ուրարտու) և Արարատ (=Արարատա երկիր-Այրարատյան թագավորություն) պատահականորեն նմանահանձն անվանումները, գրանով իսկ խճճվել ու խճաղվել, այլ՝ հստակ տարբերակել ժամանակագրութեան տեղագրությունները։ Ահա այս տեսանկյունից գիմենք Աստվածաշնչի մյուս տեղեկություններին։

Երեմիայի մարգարեռության մեջ (գլ. ԾԱ), ի նախապատրաստաւմն թարելունի կործանման, կոշված են հետևյալ ուժերը։ «Դրօշակ բարձրացրէք երկրի մէջ, փող հնչեցրէք ազգերի մէջ, նորա դեմ պատրաստեցէք ազգերին, հրաւիրեցէք նորա դէմ Արարատի, Մինսիի եւ Ասքանասի թագաւորութիւնները, նորա վերայ զօրավարներ նշանակեցէք, ձիեր վեր հանեցէք մազուտ մարախների շափ, նորա դէմ պատրաստեցէք Մարաց թագավորներին, նորա կուսակալներին եւ նորա բոլոր նախարարներին եւ նորա տէրութեան բոլոր երկիրը»։

Այս մարգարեղությունը թվագրվում է մ. թ. ա. 594—592 թվականւներով։ Այսինքն մ. թ. ա. VI դարի հետոց սկզբին արդեն գոյություն ունի հայկական կամ Արարատա թագավորություն, որը շատ հուսալի և առաջնակարգ ուժ է համարվել ընդդեմ հզոր Բարելոնի, ունեցել է թավականաշախ դիրք ու ճանալում ժամանակի աշխարհում։ Իսկ սա նշանակում է, որ ըստ Երեմիայի ևս այդ թագավորությունը գոյություն ուներ ավելի վաղ ժամանակից, ինչպես նկատել է Մովսես Խորենացին, ինչպես երևում է «Բարելոնյան ժամանակագրության» և Աստրադդոնի տեղեկություններից։

Հայաստանի և Հայոց պետության բարգավաճ վիճակի մասին Աստվածաշնչի մյուս տեղեկությունները վկայված են Եղեկիելի մարգարեղության մեջ։

Իր մարգարեղության հԶ—հԷ գլուխներում, գուշակելով Տյուրոս քաղաքի մոտալուս կործանումը, վերհիշելով նաև նրա առևտրական կապերն ու բարգավաճումը, նա գրում է. «Թորգոմայի տունից ձիեր եւ ձիավորներ եւ ջորիներ էին բերում քեզ մոտ իրեւ առուտուրի ապրանք» (գլ. հԷ, 14):

Մեկ այլ անգամ, կանխատեսելով Գոգ Երկրի կործանումը և կործանողներին, նորից է հիշում Թորգոմա տունը որպես հսրայելի դաշնակից։ «Պարսիկները, Եթովպացիները եւ Փուղացիք նսրանց հետ (իրայելի հետ— կ. Շ.), ամենքն էլ ասպարակիր եւ սաղաւարտաւոր, Գոմերը եւ նորա բոլոր գոնդերը, Թորգոմայի տունը՝ հիւմիսի ծայրերից եւ նորա բոլոր գնդերը. շատ ժողովուրդներ քեզ հետ» (գլ. ԱԲ, 5—6):

Եղեկիելի մարգարեղության այս հատվածները ևս վերաբերում են մ. թ. ա. VI դարի սկզբներին, մասնավորապես Երկրորդը, որը հիշատակված է մ. թ. ա. 593 թվականով։

Այստեղ ուշագրավը հատկապես Հայք-Հայաստանին տրված Թորգոմա տուն անվանումն է, որը ծագում է Հայկ Նահապետի հայք Թորգոմի անունից։ Թորգոմը, ըստ Աստվածաշնչի տեղեկությունների, նոյնապետի Հարեթ որդու սերնդից է, ավելի ճշգրիտ, Հարեթի ծոռք (Հարեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ, տես Ծննդոց, գլ. Ժ, 2—3, Առաջին Մեծացորդաց, գլ. Ա, 5—6): Ահա այս հիման վրա էլ հայ և օտար միջնադարյան պատմիչներն ու մատենագիրները հայերին սերված են համարում Թորգոմի տոհմից։ Դրանով իսկ նրանք հաճախ Հայք-Հայաստանը անվանում են նաև «Տունն Թորգոմայ», ինչպես սույն հատվածներում, իսկ հայերին՝ «Որդիք կամ Ազգն Թորգոմայ», «Թորգոմածին», «Թորգոմեանք»։ Եվ քանզի Հայք անունը ըստ հայ պատմագրության, ծագում է Հայկ Նահապետի անունից, իսկ Հայկը Թորգոմ նահապետի որդին էր, նշանակում է Թորգոմայ Տուն անունը նախորդել է Հայք անվանը, այսինքն՝ մոտ մ. թ. ա. երրորդ հազարամյակի առաջին կեսի վերջերին, գուցե մ. թ. ա. XXVI դարից։ նշանակում է նաև, որ հին հրեա-

ները այդ ժամանակից են ծանոթ «Թորգոմայ տուն» անվանը¹ և, ավելի ուշ առաջացած «Արարատա Երկիր»։ «Արարատայան թագավորություն» անուններին զուգահեռ, իրենց բանալոր ու գրավոր խոսքում գործածել են Հայք անվան փոխարեն մինչև Եղեկիել մարդարեի ժամանակը և հետո։ Նշանակում է միաժամանակ, որ հրեական ավանդությունը և «Թորգոմայ տունը», այսինքն՝ Հայք (=հայերը) հնուց ի վեր իրենց Երկրի բնիկներն էին, երկիր, որը, ըստ նրանց, տարածվում էր Գամերքից կամ Կապատովկիայից ինպի հյուսիսի, ինչպիսի տեղ ու դիրք ունեցել է և ունի Հայք-Հայաստանը (այլ անուններով՝ նաև Արմանի-Սրամանին, Արմենիան, Նախին, Սոմինեթիան), աշխարհի հին ու նոր բոլոր աղբյուրների համապատասխան տեղեկություններով։ Այս, նույն տեղում ու դիրքը, նույն հայապատկանությունը՝ աշխարհի բազում աղբյուրներով վկայված, սակայն զարմանայիրեն դեռևս չնկատված, կամ վիճելի դարձած, խճճված ու խճողված։ Այս, այդ է երեսում նաև Աստվածաշնչից, որը նշված աղբյուրներից մեկն է միայն, իսկ մեկ այլ պետքուն կամ ծողավարդ Հայաստանում՝ մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից, այդ թվում նաև ոչ հայկական «Ուրարտու», քրքրէ թեկուզ աշխարհի բոլոր աղբյուրները, չկա ու չի եւելում։ Սա էլ շատ աղաղակող իրողություն է, որը, կարծում ենք, պետք է նկատի ունենան «Ուրարտու»-ի ոչ հայկականության համար մաքառդ մեր բծախնդիր գիտնականները։

Այժմ դիմենք մ. թ. ա. VI դարի Հայաստանին, Հայոց թագավորությանը և հայ ժողովրդին վերաբերող տեղեկություններին, որոնք նույնպես քննարկվող հիմնածորցի համար խիստ պարտավորեցնող են։


Նախ նշենք, այսպես կոչված, «Բարելոնյան աշխարհացույցը»։ Ինչպես նշանակվում է ընագրից և երեսում վերծանված տարբերակից, «Բարելոնյան աշխարհացույցը» ամփոփում է ընդամենը 8 անուն, ծիս 6-ը երկրանուններ են, իսկ երկուսը՝ «Լիկներ» և «Թաղաթ» նշում-արից։

¹ Մերժելի է ընդհանրական դարձած այն կարծիքը, որով «Թորգոմայ տուն»-ը նույնացված է ինքանական արձանագրությաններից հայտնի «Թիլ-Գարիմմուս» կամ «Թիլգ-Արամմուս» երկրի հետ և ասսուլարաբելական աղբյուրների «Թիլ-Գարիմմուս» կամ «Թիլգ-Արամմուս» երեսունությամբ (տես ՀՖ Քրեստ, էջ 117)։ Մերժելի է, քանզի տեսչների սոսկ թվացյալ նմանությամբ (ինչպես այդ էլ չկա) անտեսվել են էտկան տարբերություններ, և մասը փոխարինել է ամրողին։ ա) ինչպես տեսանք, «Թորգոմայ տուն» անվանումը ծագում է Թորգոմ նահապետի անունից՝ սկսած մ. թ. ա. XXVI դարից, իսկ մյուս ձեերում պոկա է Արամ անունը (մեր կարծիքով, Հայոց Արամ նահապետ, կառավարած մոտ մ. թ. ա. 2036—1978 թվ.)։ բ) «Թորգոմայ տուն»-ը Հայք-Հայաստանին տրված լինդհանական անուն է, իսկ մյուսները, ինչպես ճշտ նկատվել է, հետագա նրկորդ Հայքի տարածքում։ Այսինքն՝ ամբողջ Հայաստանի մասնիկը միայն։

Թե պատմագրական ինչ արժեք ունի այս տարբերակումը, կարծում ենք, բացարձության կարիք չկա։



Արեւնան աշխարհացոյցը (մ.թ.ա. 5-րդ դար)



1. Բարեկած
2. Աստեղ
3. Արմէիս
4. Հարրան
5. Առաքառական
6. Թազաբ
7. Բիբլակիս
8. Դերի

թագավորությունը կործանվել, անհնտացել էր պատմության բեմից:


Դ) Զեր լինի նաև Բարելոնի նշումը, քանզի մ.թ.ա. 540-ականից Բարելոնի թագավորությունը և կործանված էր, իսկ Բարելոնիան հպատակ էր նույն Արեմենյաններին (Կյուրոս Մեծին):

Ենելով, ահա, այս իրողությաններից, կարծում ենք, որ «Բարելոնյան աշխարհացույցը» ստեղծվել է մ.թ.ա. VII դարից ոչ ուշ (ավելի վաղը ենթադրելի է), երբ գեռ կանգուն ու հզոր էին Ասորեստանի ու Բարելոնի թագավորությունները, իսկ Սարաց և Պարսից պետություններն այնքան էլ հզոր ու հիշարժան չէին կամ էլ դեռևս թագավորություններ չէին: Այսպես որ, Հայաստանի հիշատակումը «Բարելոնյան աշխարհացույցում», այս էլ առաջնակարգ՝ Բարելոնից կամ Բարելոնիայից հետո երկրորդ երկիրը, կամենանք, թե չկամենանք, նշանակում է Հայոց պատկառելի պետության, ապա թագավորության և հնամենիություն, և հզորություն, և ճանաշում, և հեղինակություն և այլն, իսկ ուրարտական «ոչ հայկականի» բացահայտ զգություն: Այս, կամենանք, թե՛ու, նորից նույն արդյունքն է, նույն եզրակացությունը:

Մյուս շատ ուշագրավ փաստը ընձեռել է մ.թ.ա. VI դարի հույն աշխարհագիր Հեկատեոս Սիլեթացին՝ մ.թ.ա. 517 թ. կազմած իր քարտեզով:

Հնագույն այս քարտեզը թեև կազմված է մ.թ.ա. 517-ին, սակայն ակնրախ երեսում է, որ պատկերում է նույն դարի առաջին կեսի քաղաքական վիճակը՝ Աշխարհի ամենահայտնի երկրների ու թագավորությունների ընդգրկումով: Խնչպես տեսնում ենք, ասիական երկրներից ու թագավորություններից նշված են LYDIA, որին արեւելքից անմիջապես սահմանակից՝ ARMENIA, որից էլ արեւելք, բավականալավ միշանկյալ տարածքներ հետո՝ INDIA: Ի գեղ, միշանկյալ այդ տարածքներում պետք է լինեին Սարաստանը և Պարսկաստանը, ուկային չեն նշված: ARMENIA-ից անմիջապես հարագ երկու գետերով ցույց է տրված Միջագետք, այսուղ էլ չեն նշված Ասորեստանը և Բարելոնիան, իսկ Հայրավ-արեմենաթօնը էլ՝ Միջերկրականի տիրին նշված է SYRIA-ն, որից էլ հարագ՝ ARABIA-ն:

Այստեղից հետեւմ է, որ, ըստ հեղինակի, Լյուդիայի խիստ համբավագոր թագավորությունը գեւելու կործանված չէ (կործանվեց մ.թ.ա. 546-ին), Արեմենյան աշխարհակալ թագավորությունը դեռևս չեն հիմնադրված (հիմնագրվել է մ.թ.ա. 555, 553 կամ 550-ին), ասսուրական թագավորությունը արդեն գոյություն չունի (մ.թ.ա. 609-ից), Սարաց և Բարելոնի թագավորություններն էլ, երկի, հիշարժան չեն համարվել: Այսպիսով, Հեկատեոսի քարտեզը ժամանակագրորեն ընդգրկում է մ.թ.ա. 609—546 թթ., երբ Հայաստանում, ըստ Սովուս Խորենացու, հորից որդի ժառանգելով թագավորել են Հայկակ Բ (մ.թ.ա.



Հեկատես Միլիոնաց բարտեզը (մ.թ.ա. 6-րդ դ.)

մոտ 600—570, Նաբուգոդոնոսորի ժամանակակից և դաշնակից), Երվանդ Սակավակյաց (մ.թ.ա. մոտ 570—560 թթ., Ամերահակի ժամանակից), Տիգրան Ա Մեծ (մ.թ.ա. մոտ 560—530 թթ., Կյուրոս Մեծի ժամանակակից և դաշնակից):

Ավելացնենք նաև, որ Հեկատեսի քարտեզում նշված են Եվրոպայի և Աֆրիկայի կամ Լիբիայի երեքական երկրներ ու Թագավորություններ: Այն է՝ Թրակիա, Իտալիա, Խոպանիա և Կարթագեն, Եգիպտոս, Եթովպիա:

Ահա ամբողջ ընտրանքը այն ժամանակի աշխարհի բազում երկրներից ու թագավորություններից, կարելի է ասել, խստագույն ընտրանք է՝ ընդամենը 11 երկիր ու թագավորություն: որից 5-ը ասիական, այդ թվում՝ Հայաստանը:

Ըստրանքի այսպիսի խստագույն պայմաններում, երբ չեն հիշված անգամ Ասորեստանի թագավորությունը կործանած Կիթաքարի, ապա և Ամերահակի Մարաստանը, կամ անեծքի արժանացած Նաբուգոդոնոսորի Բաբելոնը, երբ նույնիսկ չի հիշված Հռոմաստանը և այլք, ավելի է կարևորում Հայաստանի հիշատակումը, նրա դերն ու նշանակությունը մ.թ.ա. VI դարի քաղաքական կյանքում:

Կարևորվում է հատկապես այն բանով, որ ինչպես նշված մյուս երկրները, այնպես էլ Հայաստանը պետեղված են աշխարհագրական

հստակ և ճշգրիտ տեղագրումներով, իրենց սահմաններով ու տարածքներով: Այնպես որ, Հեկատեսոս Միլիոնացին այս հարցում ցուցաբերել է հմուտ մասնագետի խորագիտություն, կասկածանքի հիմքեր չի տալիս: Ի դեպ, մեր կարծիքով, այս քարտեզն է նշված Հերոդոտի «Պատմության» Վ գրում և ըստ այս քարտեզի է ներկայացված Առաջավոր Ասիայի լըն-վարչական վիճակը (Հերոդոտ, գիրք 5, § 49):

Իսկ թե ինչպես է տեղագրված Հայաստանը և ինչ սահմաններում, դիմենք քարտեզին:

Ինչպես տեսնում ենք, ըստ քարտեզի, Հայաստանը տարածվել է երեք ծովերի միջև՝ Սև, Միջերկրական, Կասպից: Արևմուտքում տվյալ ժամանակ Հայաստանը սահմանակից է եղել Լյուսիայի թագավորությունը: Դատելով քարտեզագրումից, մասնավորապես «ARMENIA» անվան առաջին՝ Ա տափի տեղագրումից, սահմանը միշկ անցել է Փոքր Ասիա թերակղզու արևելյան կեսի մեջտեղով՝ Սև ծովից—Միջերկրական ծով զծով, այսինքն՝ թերակղզու արևելյան քառորդ տարածքը՝ Հայաստանին: Տեղագրորեն առած, արևմուտքից պետք է Հայաստանի մէջ ներւուել նաղատիքը (այլ կերպ՝ Խալդայների երկիրը), Փոքր Հայքը, Կապաղովկիան և Կիլիկիան (վերջինը ամբողջությամբ կամ մեծ մասով):

Արևելքում Հայաստանի սահմանները հասել են Կասպից ծովին և Ուրմիա լճին, թեպետ վերջինը նշված չէ: Այսպիսով, այս ուղղությամբ Մարաստանը ենթադրվում է սահմանակից երկիր:

Հարավում Հայաստանին սահմանակից են Միջագետքն ու Ասորիքը:

Հյուսիսում Հայաստանին սահմանակից երկիր կամ որևէ սահման չի նշված, ուստիև, ըստ այլ աղբյուրների, Կուր գետը կարելի է համարել սահման:

Այսպիսով, ամենանվազ ընկալումներով իսկ, ըստ Հեկատեսոս Միլիոնացու քարտեզի, Հայաստանը մ.թ.ա. VI դարի առաջին կեսին մեկ միասնական երկիր է, կամ՝ մեկ միասնական թագավորություն, ընդգրկել է Մեծու. Փոքր Հայքերը ամբողջությամբ (ընդգծում ենք ամբողջությամբ բառը), հավելյալ նաև Կապաղովկիան և Կիլիկիան: Այսինքն՝ բավականաշատ ընդարձակածավալ մի էթնոտարածք և վարչատարածք, որի նմանը զանազան անհիմն պատճառներով, մասնավորապես՝ Ուրարտուի «ոչ հայկականության» տեսությամբ չի գիտակցվում արդի պատմագիտության մեջ: Ավելի քան չի գիտակցվելու այդ ընդարձակածավալ Հայաստանը «ոչ հայկական» կոչված Ուրարտուի կործանումից ավելի վաղ, ինչպիսի հիմքեր քարտեզը ևս տալիս է: Մի խոսքով, փաստն ու տեսությունը նորից հակասում են իրար և նորից ու նորից պետք է ասել ու պնդել, որ փաստին տրվի նախապատվությունը:

Հայաստանի մ.թ.ա. VI դարի առաջին կեսի մասին անշափ ուշագրական գրավ են Քսենոֆոնի «Կյուրոպեկիա»-ի տեղեկությունները: Եվ քանի

ար դրանք ցրված են աշխատաւթյան ամբողջ շարադրանքում, մասնակիցներին՝ առաջին երեք գրքերում, ուստի նպաստակահարժարք է ներփակացնել խմբերով և ընդգներացված:

ա) Համապատասխան տեղեկաւթյուններից հետևում է, որ հայեր այդ ժամանակ ունեին ժառանգական, համահայկական և համահայուտանյան միասնական թագավորություն։ Թազմից հիշված են Հայոց թագաժառանգ, ապա և թագավոր Տիգրանը, նրա թագավոր հայրը՝ «Հայոց թագավոր» անվանումով, և թագավոր պապը։ Ի գեղ, վերջինը հիշված է մեկ անգամ, երբ հայոց թագավորը՝ Տիգրանի հայրը, թագավորական գանձերի քանակը (տե՛ս գիրք 2, գլ. 4, գիրք 3, գլ. 1—2)։ Կարեւոր ենք համարունարից նշել, որ այս ժամանակ, ըստ ետքենացու, Հայաստանում հորից որդի ժառանգելով թագավորել են Հայկակ թ, ապա՝ Երվանդ Սակալայց, ապա՝ Տիգրան Ա Մեծ։

բ) Ըստ Քսենոֆոնի, Կյուրոսը Հայոց թագավորից պահանջում է ուղեկիցներ և միջնորդներ, որպեսզի իր զեսպանին ուղեկցեն հնդկաց թագավորի մոտ և միջնորդնեն, որ վերջինս «մեծաքանակ» դրամ տրամադրի իր առաջիկա ուղամական ծախսերի համար։ Ի գեղ, Կյուրոսը մասմարյա չի կասկածում, որ հայերի միջնորդությամբ այդ առաքելությունը անպայման կհաջողվի (տե՛ս գիրք 3, գլ. 3, § 28—30)։

Քսենոֆոնի շատ ուշագրավ և նորից շնկատված կամ հազվադեպ նկատված այս տեղեկաւթյունը կարեւոր է տարբեր առումներով։ Նախ՝ որպես Հայ-Հնդկական հնամենի և բարիդրացիական փախհարարերությունները հաստատող փաստ, Երկրորդ, Հայերի հանդեպ հետիկ թագավորի կամ, ավելի ճիշտ, թագավորների վստահության ապացուց, որն անկամած ուներ իր նախապատմությունը և բարի ավանդները։ Վերջապես, այդքան վստահելի լինելու համար հայերը զազուց պետք է ապրած լինեին իրենց հայրենիքում՝ Հայաստանում և ունենային տնտեսական պատկառելի հնարավորությունն Ալլապես, կարծում ենք, որ Կյուրոսը նրանց բնավ էլ միջնորդ չէր գարձնի, այն էլ՝ միջպետական միջնորդ և մեծաշափ գումարի համար։

Ավելորդ է ասել, որ այս փաստը ևս, թեպետ անսուզակի, խարխլում է Ուրարտուի ուշ Հայկականաւթյան տեսությունը, քանզի Կյուրոսի այս միջոցառումը ենթադրվում է մ. թ. ա. 560—555 թթ. միջոցին նախքան Աքեմենյան թագավորության հիմնադրումը։ Այսինքն՝ Հայոց թագավորությունը, եթե ընդունենք ուշ Հայկական Ուրարտուից հետո (մ. թ. ա. 590 կամ 585-ից), ինչպես ընդունված է, չէր հասցնի այդքան հանալված ու վստահելի լինել։

գ) Քսենոֆոնի մի շարք տեղեկություններից երկում է, որ Հայաստանը մ. թ. ա. VI դարի առաջին կեսին տնտեսապես խիստ բարգավաճ, պատկառելի գանձերի և այլ հարստությունների տեր թագավորու-

թյուն է եղել։ Այսպիսի տեղեկությունները շատ-շատ են, սակայն վերը նշվածին ավելացնենք էլի մի քանիսը։

Միայն թագավորական գանձարանը ունեցել է 3000 տաղանդ (լ. Մանանդյանի հաշվումներով՝ 12 միլիոն ոսկի ոռորլի, Քննակ. տեսություն..., հ. Ա, էջ 38—39), այն էլ Հայոց թագավորի հարկադիր խոսովանությամբ, այն էլ բարգավաճ երկրին հատուկ ամենամյա ավելացման հեռանկարով (գիրք 3, գլ. 1, § 33—38)։ Ավելացնենք նաև տեղական իշխանավորների, մեծատռհմիկների գանձատները, ժողովրդական հարստությունները, ինչպիսի ակնարկներ ունի Քսենոֆոնը (գիրք 3, գլ. 1, § 4, 25—36, գլ. 3, § 2—5 և այլ տեղեր)։

Հայաստանի տնտեսության բարգավաճ վիճակի և հարստությունների ապացուց են նաև զորքին և նրա սպառազինությանը վերաբերող տեղեկությունները։ Ըստ այդմ, Հայոց թագավորն ունեցել է 48 000-ոց մշտական զորքարանակ, որից 8000-ը հեծելազոր, այն էլ դարձյալ Հայոց թագավորի հարկադրյալ խոստովանությամբ (գիրք 3, գլ. 1, § 33)։ Զորքարանակն ունեցել է ժամանակներին համեմատ բարձրակարգ, նույնիսկ շթեղաշուք սպառազինություն, հուժկու մարտունակություն և ապահովվածություն։ Փաստորեն այդ բանակն է եղել Կյուրոս Մեծ-Տիգրան Մեծ ուղամական դաշինքի կորիզն ու ամենահուսալի հենարանը, նրանց նախնական հաջողությունների, անգամ Աքեմենյան հարստության հիմնադրման կրողը։ Ասենք նաև, որ մարաց թագավորը, ըստ Քսենոֆոնի, ակնածել է «ապստամբ» հայերից և չի հանդինել բացահայտ պատերազմ սկսել նրանց դեմ (գիրք 2, գլ. 4, § 12—32, գիրք 3, գլ. 1, § 42—43, գլ. 2, § 2—3, գլ. 3, § 1—7, գիրք 4, գլ. 2, § 9—29, 43—44 գիրք 5, գլ. 1, § 24—28, գլ. 3, § 34—59, գիրք 6, գլ. 1, § 21—22, գլ. 2, § 1—38, գլ. 4, § 1—2 և այլ տեղեր)։

Այսու այսպիսին են մ. թ. ա. VI դարի առաջին կեսի Հայաստանի մասին Քսենոֆոնի տեղեկությունները, որոնք էլությամբ չեն տարբերվում Հայ պատմիչների (Մովսես Խորենացու, Թովմա Արծորունու) տեղեկություններից, մասնավորապես տնտեսական բարգավաճ կյանքի և ապամական հզորության հարցերում։ Օրինակ, Քսենոֆոնի բազմիցս հիշած Կյուրոս Մեծի դաշնակից Հայոց թագաժառանգ, ապա և թագավոր Տիգրանի մասին Մովսես Խորենացին գրում է. «Բայց անց թագավոր Տիգրանի մասին մասին մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ։ Որ և Կիւրոսի աշակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և Ցոյնսն ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուածեալ հնագանդէր, և զահմանս մերոյ բնակութեան ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան (նկատի ունի Արամ նահապետի ժամանակը՝ մ. թ. ա. մոտ 2036—

1978 թթ.— լ. Շ.), և ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և զկնեացս ըղձալի ինքն և ժամանակ իւր:

Զի ո՞ոք ի ճշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կայցէ, սորա յիշատակօքն ոչ զուարձասցի, և յորդորեացի այսպիսի այր լինել: Արանց կացեալ զլուխ և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, և զընդ լծով կացեալս՝ լծադիրս և հարկապահանջ կացոյց բազմաց. մրեւս ոսկոյ և արծարոյ և բարանց պատուականաց և զգեստոոց և պէս պէս զունից և անկուածոց՝ արանց միանգամայն և կանանց՝ հասարակաց բազմացոյց. որովք տգեղագոյնք իբրև զգեղաւորս երևէին սփանչելիք, և զեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիցազնացեալք: Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտարքն ի սուսեր և ի տէք նիզակի վառեալք, մերկէն վահանօօ և զգեստուն երկարեօֆ պարածածեալք: Ուոց մի վայր հասելոց բաւական էր տեսիլ միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուոց փայլմունք և շողինք՝ զրշեամիսն արտահալածել: Խաղաղութեան և շինութեան բերող, իւղալ մեղու զամենայն հասակ պարաւեալ» (Ա, գլ. Ի՞ն, ընդգծ.— լ. Շ.):

Մովսես Խորենացու այս և հարակից այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են մ. թ. ա. VI դարի առաջին կեսի Հայաստանին կամ, այլ կերպ ասած, Տիգրան Ա Մեծին կամ Տիգրան Հայկազնին, վերջին շուրջ 100 տարում անտեսվել են ընդհանուրապես, կամ էլ, լավագույն դեպքում, համարվել են վիպական ծագումի, ժամանակափոխվել շուրջ 500 տարով և բոլորովին անհիմն կերպով բերվել վերագրվել են Տիգրան Բ Մեծին (ըստ պատմագիտ. 95—56 թթ., ըստ Խորենացու՝ 94 (74—41 թթ.): Իրականում, սակայն, պարզից էլ պարզ երկում է (միայն թե չծովանանք համեմատել), որ բոլոր հիմնական հարցերում Քանոնդոնն ու Խորենացին համահունչ են (այն է՝ մ. թ. ա. VI դարի առաջին կեսին արդեն հայերի ժառանգական թագավորություն՝ արմատներն ավելի հինք գնացող, Հայոց այդ թագավորության տնտեսական և ռազմական պատկառելի հզորություն, Կյուրոս Մեծ—Տիգրան Մեծ բարեկամական դաշինք և այլն), որ, հետեւաբար, ոչ միայն գիտական չէ, այլև անրդար և անճիշտ է Խորենացու տվյալ տեղեկությունների (նաև Թովմա Արծրունու, նաև այլոց) անտեսումն ու ժամանակափոխում-աղավաղումը: Եվ քանզի տվյալ անտեսումների և արհեստական (զուտ արհեստական) ժամանակափոխումների պատճառները երկուսն են, կամ եղել են երկուսը (հայերի գաղթի արդեն մերժված և Ուրարտուի «ոչ հայկականության» նույնքան մերժելի տեսությունները), կարծում ենք, որ արդեն սթափիվելու, փաստերը հարգելու ժամանակն է, անկախ այն բանի, թե ինչպես և ի վնաս ո՞ւմ կկործանվեն անհիմն տեսությունները: Այս, պետք է հարգվեն փաստերը, հարգվեն խստագույնս և քննադատաբար, պատմագիտությունը մեկ այլ շափանիշ շունի:

Մ. թ. ա. VI դարի Հայաստանին վերաբերող անշափ կարևոր տեղեկություններ է ընձեռում նաև Դարեհ Ա-ի թողած թիհսիթունի (ըստ այլոց՝ թեհսիթուն, թեհսիթուն, թիսիթուն, թիստուն, թագիստուն և այլն) հանրահայտ արձանագրությունը, Այս սեպագիր է, գրված է երեք լեզուներով՝ հին պարսկերեն, էլամերեն, բարելերեն (աքբաղերեն), երկի մ. թ. ա. 520 թվականին, քանզի նկարագրված դեպքերը տեղի են ունեցել մ. թ. ա. 522—520 թթ.:

Այստեղ Դարեհ Ա-ը հայտնում է, որ իր թագավորության հենց առաջին տարում ապստամբել և իրենց անկախ են հայտարարել Աքեմենյաններին նախկինում հպատակ կամ կախյալ 23 երկրներ, այդ թվում նաև Հայաստանը: Ի դեպ, արձանագրության տարալեզու տարրերակներում Հայաստանը կոչված է երեք տարբեր անուններով, այն է՝ պարսկերեն տարրերակում՝ Արմինա (նոր և ճշգրտված ընթերցմամբ՝ Արմենիա-Արամանիա), էլամերենում՝ Հարմինյա, բարելականում՝ Արաշտու-Արարտու:

Դարեհ Ա-ը հայտնում է նաև, որ պատիլ արշավանքներ է ձեռնարկել դեպի ապստամբ երկրներ, նաև դեպի Արմնիա (Հայաստան), իսկ թե ինչպիսիք են դրանք, դիմենք արձանագրության համապատասխան հատվածներին: Բերվում են Կ. Բասմաջյանի հայերեն թարգմանությամբ, Հ. Մանանդյանի բնագրամիջ հնումներով և ամենուր «Արմինա» անունը՝ «Արմնիա» (=Արամանիա) ճիշտ ընթերցումով¹:

«Դարեհ թագավորն ասում է. — Արդ, Արմնիա (=Արամանիա) ուղարկեցի մի հայի (արմնիա-արմնիացի)² Դադարշիշ անունով իմ ծառային, և այսպիս պատվիրեցի. — «Գնա և նվաճիր այդ ապստամբ զորքը, որ ինձ չի հպատակվում»: Դադարշիշը գնաց Արմնիան նվաճելու երբ նա հասավ Արմնիա, ապստամբները ելան Դադարշիշի դեմ նրան ճակատամարտ տալու համար, Դադարշիշը ճակատամարտն ընդունեց: Արմնիայի մեջ Զուզա (Zuzza) անունով մի ավան կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահրումազդն (Արամազդն) ինձ օգնեց: Շնորհիվ Ահրումազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից: Թուրագահարա ամսի 8-ն էր (ըստ Յուստիի՝ 19 ապրիլի 521 թ., ըստ Քյոնիգի՝ 21 մայիսի 521 թ.), երբ ճակատամարտը տեղի ունեցավ»:

[Ման.— Այս ճակատամարտում հայերի «շատ» կորուստները շեն նշված]:

«Դարեհ թագավորն ասում է. — Ապստամբները երկրորդ անգամ հավաքեցին իրենց ուժեղը և նորից ելան Դադարշիշի դեմ պատերազմի: Արմնիայի մեջ Տիգրան անունով մի բերդ կա. ճակատամարտը տեղի

¹Տե՛ս Կ. Բասմաջյան, Դարեհի արշավանքն ի Հայս («Բանասեր», հ. Ա., Պարիս, 1899, էջ 6—45), հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Ա., Երևան, 1944, էջ 48—53, Հայ ժողովրդի պատմության բրստումատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 153—156:

ունեցավ այնտեղ: Ահրումազդն ինձ օգնեց, Շնորհիվ Ահրումազդի իմ բանակը թշնամու բանակը հալածեց: Թուրավահարա ամսի 18-ն էր (ըստ Յուստիի՝ 29 ապրիլի 521 թ., ըստ Քյոնիգի՝ 31 մայիսի 521 թ.), երբ ճակատամարտը տեղի ունեցավ»:

[Սան.— Բարեկոնական բնագրում նշված են հայերի կորուստները «Թշնամին 546 սպանված թղղեց պատերազմի դաշտում և Դադարշիլլ 520 հոգի գերի վերցրեց»:]

«Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբներն երրորդ անգամ հավաքվեցին և ելան Դադարշիլլ գեմ պատերազմի: Արմնիայի մեջ Ռմայամա (ըստ Յուստիի՝ Սիցամա, ըստ Քյոնիգի՝ Հոյավա) անունով մի բերդ կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահրումազդն ինձ օգնեց: Շնորհիվ Ահրումազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից: Թայգրաշի ամսի 9-ն էր (ըստ Յուստիի՝ 20 մայիսի 521 թ., ըստ Քյոնիգի՝ 21 հունիսի 521 թ.), երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Դադարշիլլ, հնազանդվելով իմ հրամանին՝ մնաց Արմնիայում, մինչդեռ ես իմ նիզակը ուղղում էի գեպի Մեդիա»:

[Սան.— այժմ ևս հայերի «շատ» կորուստները չեն նշված]:

«Դարեհ թագավորն ասում է.— Այնուհետև Արմնիա ուղարկեցին վահումիսա անունով մի պարսիկի՝ իմ ծառային, և այսպես պատվիրեցի՝ «Դնա, նվաճիր այդ ապստամբ զորքը, որ ինձ չի հնազանդվում»: Վահումիսան (ըստ Քյոնիգի՝ Womisa) գնաց Արմնիան նվաճելու: Ապրատամբները հավաքվեցին և ելան Վահումիսայի գեմ պատերազմի: Ասորեստանի մեջ Խզալա (ըստ Յուստիի՝ Izzila, ըստ Քյոնիգի՝ Izala) անունով մի երկիր կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահրումազդն ինձ օգնեց: Շնորհիվ Ահրումազդի իմ բանակը շատ մարդ սպանեց ապստամբների բանակից: Անամակա ամսի 15-ն էր (ըստ Յուստիի՝ 18 հունվարի 520 թ., ըստ Քյոնիգի՝ 31 դեկտեմբերի 522 թ.), երբ ճակատամարտը տեղի ունեցավ»:

[Սան.— Բարեկոնական բնագրում նշված է հայերի կորուստը՝ 2024 սպանված:]

«Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երկրորդ անգամ հավաքվեցին և ելան Վահումիսայի գեմ պատերազմի: Արմնիայի մեջ Առուտիյարա (ըստ Յուստիի՝ Autiyata, ըստ Քյոնիգի՝ Otiara) անունով մի գավառ կա: Ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: (Կորճայի Այրտրուանք գավառը, — Լ. Շ.): Ահրումազդն ինձ օգնեց: Շնորհիվ Ահրումազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամի բանակից: Թուրավահարա ամսի վերջն էր (ըստ Յուստիի՝ 1 հունիսի 520 թ., ըստ Քյոնիգի՝ 12 հունիսի 521 թ.), երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Վահումիսան, հնազանդվելով իմ հրամանին, մնաց Արմնիայում, մինչդեռ ես իմ նիզակը ուղղում էի գեպի Մեդիա»:

[Սան.— Բարեկոնական բնագրում նորից նշված է հայերի կորուս-

տը՝ «Նրանցից սպանված էին 2045 մարդ և գերի էին վերցված 2559 հոգի»:]

Ահա սրանք են Հայաստանի գեմ Դարեհ Ա-ի ձեռնարկած արշավանքները, սակայն նախքան դրանց մեկնաբանությունը, քննարկվող հարցի համար կարենոր ենք համարում բերել նաև (նույն՝ Բիհրիսթոնի արձանագրությունից) Բարեկոնում իրեն թագավոր հոշակած Արախս հային վերաբերող տեղեկությունները:

«Դարեհ թագավորն ասում է.— Իմ Պարսկաստան ու Մեդիա գտնված ժամանակ բարեկոնացիները երկրորդ անգամ ապստամբեցին իմ գեմ, Ապստամբեց Արախս անունով մի մարդ՝ հայ (ընագրում՝ «արմեն»), Հալդիտայի որդին (երկի Հայկի որդին— Հայկազն կամ Հայկի զարմից): Բարեկոնահայի մեջ Դուբալա անունով մի երկիր կա. այնտեղ ապստամբեց: Այսպես խոսեց նա և ստեց. «Ես Նաբուրուղորոսսորն եմ, Նաբուհի որդին»: Բարեկոնացիները ապստամբեցին իմ գեմ և բռնեցին այս Արախսի կողմը, որը Բարեկոնը գրավեց և ղարձավ Բարեկոնի թագավոր»:

«Դարեհ թագավորն ասում է.— Ուստի Բարեկոն ուղարկեցի մի բանակ, որի հրամանատար կարգեցի Վինդաֆրա անունով մի մեղացու՝ իմ ծառային: Այսպես պատվիրեցի նրան. «Դնա Բարեկոն և կոտորիր այն ապստամբ բանակը, որ ինձ չի ճանաշում»: Վինդաֆրան գնաց զորքաբանակի հետ Բարեկոնիա: Ահրումազդն ինձ օգնեց: Շնորհիվ Ահրումազդի Վինդաֆրան նվաճեց բարեկոնացիներին և (նրանց) գերի վերցրեց»:

«Մարկազանա ամսի 22-րդ օրն էր (ըստ Քյոնիգի՝ 2 նոյեմբերի 521 թ.), երբ այս Արախսն, որ ասել էր՝ «Ես Նաբուրուղորոսսորն եմ», ձերբակալվեց իր դավակիցների հետ միասին, նրանք ինձ մոտ բերվեցին: Այնուհետև ես այսպես վճռեցի՝ Արախսն և գլխավոր իր գործակիցները պետք է Բարեկոնի մեջ ցից հանվեն: Ահա այսպես մեռան»:

Վկայակոչելով բազմիցս բերված ու բացատրված այս տեղեկությունները, մասնավորապես Դարեհ Ա-ի ձեռնարկած հայաստանյան արշավանքների «Նկարագիրը», մեր նպատակն է տեսանելի դարձնել պատմական առանձին իրողություններ, որոնք չեն երևացել նախորդ ուսումնասիրություններում, կամ էլ՝ երևացել են պակասավոր և մշուշապատ: Պատճառը նորից մ. թ. ա. VI դարի և նախորդ ժամանակների Հայաստանի մասին աղոտ պատկերացումներն են, որոնք դրսեռվել են արդի հայ պատմագիտության մեջ:

1. Զի երևացել կամ չի ընդգծվել այն, որ մ. թ. ա. 522—520 թթ., այսինքն՝ Դարեհ Ա-ի թագավորության առաջին երեք տարիներին ամբողջ Առաջավոր Ասիան և հարակից երկրներ բռնված են եղել ազատագրական պայքարով՝ Դարեհ Ա-ի բռնակալության կամ նվաճողական քաղաքականության դեմ: Իր իսկ՝ Դարեհ Ա-ի ասելով. «Արանք են այն

երկրները, որ իմ հպատակը եղան և Ահրումազգի շնորհիվ ես նրանց թագավորն եմ՝ Փարս, Խուզիան (=Էլամ), Բարելոն, Ասորեստան, Արաբիա, Մուսրա (=Եգիպտոս)..., Սպարդա (=Լիդիա), Իռնիա, Մեծիա, Արմենիա (=Արամանիա—Հայաստան), Կապադովկիա, Պարթևստան, Զրանկա (=Դրանգիանա), Հարուիվա (=Արիեա), Խորեզմ, Բակտրիա, Սողդ, Գանդհարա, Սագաստան (=Սկյութիա), Սատափուշ (=Փենջար), Արախոզիա (Հարվաթ), Մակա՝ բոլորը միասին 23 երկիր»:

Այս, բոլոր այս երկրները, այդ թվում և Հայաստանը, Դարեքը նվաճել կամ հնագանելի է ընդամենը 2—3 տարում միմիայն իր աշխարհակործան արշավանքներով ու պատերազմներով՝ դաժանությաններով ավերով ու ավարով։ Այլ կերպ ասած, մոլեզնել է համատարած աղետների 2—3-ամյա մի ժամանակաշրջան, երբ ամբողջ Առաջավոր Ասիան և Հարակից երկրներ ցավ ու ահցից գալարվել են պատերազմաք ընթացող դարեհյան անողոք պատերազմների սարսափներում, ինչը և, ինչպես կտեսնենք, իր պատկերավոր արտացոլումն է գտել հայ բանհյուսության մեջ։

2. Զի երեացել և չի տարբերակվել նաև այն, որ Դարեհի՝ դեպի Հայաստան ձեռնարկած հինգ արշավանքները, ըստ արձանագրության ժամանակագրական նշումների, ընթացել են 3 ժամանակափուլերով, թեպետ բոլորն էլ կատարվել են ընդամենը մեկ տարի մոտ երկու ամսում։

Առաջին փուլը ընդգրկում է մեկ ամիս՝ մ.թ. ապրիլի 19-ից մինչև նույն թվի մայիսի 20-ը՝ ըստ Ֆ. Յուստիի, կամ նույն թվի մայիսի 21-ից մինչև հունիսի 21-ը՝ ըստ Վ. Քյոնիգի։ Դարեհի ասելով այս մեկ ամսում, իբր, տեղի է ունեցել դեպի Հայաստան ձեռնարկված երեք արշավանք, երեք ճակատամարտ, սակայն իրականում կարող էր լինել մեկ արշավանք, երեք ճակատամարտերով, քանզի ընդամենը 10—20-օրյա պարբերաշրջանով Պարսկաստանից Հայաստան արշավանք ձեռնարկելը անհնար էր։ Դարեհը, պարզապես, սոսկ տպավորության համար, նույն արշավանքի երեք ճակատամարտերը նաև արշավանք է ներկայացրել։

Առաջին ճակատամարտը, ինչպես տեսանք, տեղի է ունեցել մ.թ. ապրիլի 19-ին կամ մայիսի 21-ին Հայաստանի Զուզա ավանի մոտ, երկրորդը՝ նույն թվի ապրիլի 29-ին կամ մայիսի 31-ին, դարձյալ Հայաստանի Տիգրա կոչված բերդի մոտ, երրորդը՝ նույն թվի մայիսի 20-ին կամ հունիսի 21-ին, նորից Հայաստանի Ումբամա կամ Հույզավաբերդի մոտ։ Պատմագիտության մեջ, հետևելով Ֆ. Յուստիի տեղագրումներին, այս բնակավայրերը ենթադրվում են պատմական Հայաստանի Կորճայք և Աղձնիք նահանգներում, այսինքն՝ Ասորեստանին հյուսիս սահմանամերձ տարածքներում։ Օրինակ, Հ. Մաննդյանը բավարը հիմնավորված և վերջնական շհամարելով Ֆ. Յուստիի տեղագրումները,

միաժամանակ ավելացնում է. «Ինձ թվում է, որ միանգամայն անվիճելի կարելի է ընդունել, որ Զուզա, Տիգրա, Ումբամա, Իզալա և Առափիյարա աշխարհագրական տեղերը և երկրները գտնվել են Հին Ասորեստանի հյուսիսակողմում՝ Պատմական Հայաստանի Աղձնիքում ու Կորճայքում և կամ նրանց հարեւն շրջաններում...» (Քննակ. տեսութ., հ. Ա, էջ 52—53)։

Այսպիսով, անվիճելի է դառնում նաև այն, որ դարեհյան արշավանքների առաջին փուլում կամ առաջին արշավանքում Հայոց զորքը հակառակորդին դիմագրավել է Հարավային՝ Ասորեստանին սահմանակից շրջաններում, հավանաբար Ասորեստանից Հայաստան մտնող զըլիավոր ճանապարհի մերձակայքում, ամեն կերպ արգելակելով թշնամու (նվաճողի) շարժը երկրի խորքեր։ Այնպես որ, Հայոց զորքը հզոր հակառակորդի դեմ նախապես մղել է սահմանային պաշտպանական նարտեր, և առաջին փուլի արագորեն իրար հաջորդած, մասնավանդ՝ տեղագրորեն իրարից ոչ այնքան հեռու երեք ճակատամարտերն էլ հենց դրա ապացույցն են։

Այս, ընդամենը մեկ ամսում երեք խոշոր ճակատամարտ (նախ Զուզա, ապա՝ 10 օր անց Տիգրա, սրանից էլ 20 օր անց Ումբամա կամ Հույզավա) բավականաշափ խոսուն փաստ են տվյալ անզիջում ուազմական գործողությունների և լարվածության։ Բավարար հիմքեր կան մտածելու, որ հակառակորդ կողմերը ուժերի գերլարումով և ըստամենայնի նախապատրաստվել են կանխատեսվող պատերազմին, մասնավորապես Պարսկաստանը (Դարեհ Ա-ն) և էլի մասնավորապես՝ առաջին ընդհարմանը կամ ճակատամարտին։

Հայաստանը նվաճելու մարմազով տարված Դարեհ Ա-ը չէր կարող շմանալ, որ հանդգնում է լիակատար անկախություն ունեցող երկրի ու թագավորության դեմ։ Անկախություն, որը ձեռք էր բերված Մարաստանի դեմ մղված համառ ու հերոսական պայքարով, Տիգրան Մեծ-Կյուրս Մեծ բարեկամական հզոր դաշինքով և արդեն ավելի քան 30 տարի հարատեսում էր (մոտ 555—522 թթ.)։ Չէր կարող շիմանալ, որ գործ ունի մեծագանձ, «բազմաբիւրավոր» և մարտունակ բանակների տեր, տնտեսական ու ուազմական մեծ հնարավորություններ ունեցող երկրի հետ և, բնական է, ըստ այդմ էլ պետք է նախապատրաստվեր։ Նույնքան էլ բնական է և անվիճելի, որ Հայաստանը ևս ըստ պատշաճի պետք է ահարկու հակառակորդի դեմ նախապատրաստ լիներ, մասնավանդ մղելու էր պաշտպանական մարտեր։

Եվ, ահա, առաջին (թերևս ամենաանզիջում) ընդհարումը տվյալ պատերազմում՝ Զուզայի ճակատամարտը, որը անկասկած ավարտվել է պարսից զորքերի պարտությամբ։ Ասում ենք՝ պարտությամբ, քանզի լի հետեւ Հայաստանի նվաճում, ինչի համար նրանք արշավել էին, չի երեսում նրանց զորաշարժը Հայաստանի խորքերը։ Ընդհակառակը, առա-

շին անհաջողությանը հետևում են նոր անհաջողություններ՝ ընդամենը 10 օր հետո, Տիգրայի ճակատամարտում, իսկ սրանից էլ ընդամենը 20 օր հետո Ուհյամայի կամ Հույավայի ճակատամարտում, և ապա պարսից մնացյալ զորքերի վտարումը Հայաստանից դեպի Ասորեստանի սահմանամերձ տարածքները, գուցեկ՝ իզալայի շրջանը, Ուրեմն անհավանական չէ նաև, որ հայկական ուժերը հետապնդել են նրանց և հսկողության տակ պահել տվյալ շրջանում, ուր ամիսներ անց տեղի է ունեցել չորրորդ ճակատամարտը՝ ըստ Ֆ. Յուստիի: Նկատենք նաև, որ հայերի հաղթանակը հիշյալ երեք ճակատամարտերում, այսինքն՝ դարեցյան արշավանքների առաջին փուլում, ընդունված է պատմագիտության մեջ և բավարար հիմքեր կան չկասկածելու, անկախ Դարեհի ինքնամեծար հայտարարություններից (Հ. Մանանդյան, Քննակ. տեսութ..., հ. Ա., էջ 51):

Դարեհյան արշավանքների առաջին փուլին հաջորդել է ութամսյամի ժամանակաշրջան, երբ անկասկած ուղղմական նոր նախապատրաստություններ են ձեռնարկվել Հայաստան արշավելու համար: Անգամ ինչ-ինչ պատճառներով փոխվել է զորահրամանատարը: Նախկին երեք ճակատամարտերի հրամանատար հայազգի Դարեհը շրջապատճեն, այժմ արդեն՝ արշավանքների երկրորդ փուլում, Դարեհը հրամանատարությունը հանձնել է պարսիկ Վահումիսային: Վերջինս 520 թ. հունվարի 18-ին Ասորեստանի իզալա վայրում հայերի դեմ տալիս է իր առաջին ճակատամարտը՝ ըստ Ֆ. Յուստիի, որը հերթականությամբ չորրորդ ճակատամարտն է՝ ըստ արձանագրության: Եթե հավատանք Դարեհին, այստեղ ևս պարտություն են կրել հայերը՝ տալով 2024 սպանված Սակայն նորից հավատալ հնարավոր չէ, քանզի այդ ճակատամարտը դեռևս դարեհյան հայաստանանված արշավանքների ավարտը չէ, այլ պարզապես, երկրորդ փուլի ավարտը, որ պարսից զորքը դրանից հետո նույնիսկ Հայաստան չի մտնում, կարծում ենք՝ դեռևս մտնել չի կարողանում, Հայաստանը նորից մնում է աննվաճ: Այսպիսով, հավատալին այն է, որ իզալայի ճակատամարտում ևս հայերն են հաղթել և ձախողել Հայաստանը նվաճելու այդ փորձը ևս: Այսուհետեւ, թերևս ուղղմական նկատառումներով, հայկական ուժերը թողել են իզալան և նորից ամրացել Հայաստանի սահմանային շրջաններում:

Իզալայի ճակատամարտից հետո ավելի քան շորս ու կես ամիս Դարեհը նախապատրաստվում է նոր արշավանքի, թերևս ի մի բերելով պարսից բոլոր գինական ուժերը, մանավանդ, որ շատ երկրներ արդեն հպատակվել էին, չի բացառվում նաև հպատակների ուժերը, և նույն՝ Վահումիսայի հրամանատարությամբ ուղարկում է Հայաստան: Վերջին և վճռական ճակատամարտը (հաջորդաբար՝ 5-րդ) տեղի է ունենում 520 թ. հունիսի 1-ին՝ ըստ Ֆ. Յուստիի, Հայաստանի Առուտիյարագավառում (Սանտալճյանի տեղագրմամբ՝ Այտվանք գավառը Կորճայք

շահանգում) և իրոք ավարտվում է հայոց զորքի պարտությամբ: Ասում ենք՝ իրոք, քանի որ դա դարեհյան հայաստանանված արշավանքների վերջին ճակատամարտն է և դրանից հետո, ըստ այլ պատմիչների (Հերոդոտ, Քսենոֆոն, Արրիանոս, Ռուփոս, Խորենացի), Հայաստանը համարվում է Աքեմենյաններին ենթակա երկիր (ոչ հպատակ): զորատու և հարկատու պարտականություններով:

Այսպիսով, ըստ Բիհիսթունի արձանագրության, Հայաստանը երեխում է որպես բազմաքանակ (ըստ Խորենացու՝ բազմաթիւրավոր), խիստ մարտունակ զորաբանակներ ունեցող, դրանով իսկ բարգավաճ տնտեսության և ուղղմական հնարավորությունների տեր, միասնական մի երկիր (ըստ այլոց, ինչպես տեսանք՝ թաղավորություն), որից ակնածելով-ակնածել է ժամանակի հզորագույն Աքեմենյան թագավորությունը, որի բանակների դեմ քանից ծնկի է իշել հենց նույն՝ Աքեմենյան ուղղմական հզորությունը: Եվ իզուր չէ, որ Դարեհ Ա-ը համառ հետևողականությամբ հիմնական ուշադրությունը բեկուել է Հայաստանը նվաճելով վրա, չկամենալով զուգահեռ թույլ տալ երկրորդ հզոր թագավորության անկախ գոյությունը: Այս բանին, գուցե, առիթ հանդիսանար Բաբելոնի հաղթական ապատամբությունը Արախա հայի գլխավորությամբ, վերջինիս հաջողություններն ու թագավոր հոչակվելը Բաբելոնում (թեպետ կարճատեն՝ շուրջ 2 տարի), որին հավանաբար նպաստել է նաև Հայաստանը:

Ինչեւ, առիթը սա էր, թե ուրիշը՝ էռթյունը շատ էլ չի փոխվում: Հայաստանը իր տարրեր բնագավառներով՝ տարածքային, տնտեսական, ուղղմական, էթնոնուցյության և այլն, մ.թ.ա. VI դարի 30-ականին ավելի կամ պակաս շափով նույնական է նախորդ ժամանակների նետ՝ սկսած մ.թ.ա. VII դարի սկզբներից, ինչպես արդին ծանոթ մյուս օտար աղբյուրներով: Ավելին, կարծեք հատուկ կանխատեսումով նրանք լրացնում են միմյանց, հիմնավորելով ու լուսավորելով Հայոց պատմության շուրջ 200 տարին, բնավ հակասելով (էական հարցերում) հայկական աղբյուրներին: Եվ ամենուր, ինչպես տեսանք, հիշատակվողը հայն է ու Հայաստանը, թեպետ Արարատա երկիր, Արարատա թագավորություն, Թորգոմա տուն, Արմանիա, Արմենիա և այլ անուններով, իսկ Արարտու «ոչ հայկական» երկիր ու պետության մասին բացառապես ոչ մի խոսք:

Այս առումով դարձյալ բավականաշափ պարտավորեցնող է Բիհիսթունի արձանագրությունը, որ հին պարսկական բնագրի «Արմնիա» (=Արամանիա-Հայք-Հայաստան) անվան փոխարեն բարելական բնագրում գործածված է «Ուրաշտու» անունը: Պարզ ի պարզ ասված է, որ բարելացիները ինչ-որ ժամանակ, նաև տվյալ ժամանակ, Հայաստանը կամ Արամանիան կամ Արմենիան կոչել են Ուրաշտու (=Ուրարտու), դրանում որևէ էթնոիմաստ շտեսնելով: Եվ հարյուրապատիկ ճշմարիտ

են բոլոր նրանք, որոնք բազում այլ փաստերի թելադրանքով հենց այդպիս էլ հասկանում են: Էթովիմաստով հասկանալը նշանակում է բոլոր ու բոլոր համապատասխան փաստերի անտեսում, որը, կարծում ենք, ոչ գիտական և գաֆան քայլ է փաստերի հանդեպ:

Նշենք մի հանգամանք ևս, որը, մեր կարծիքով, սերտորեն կապված է Դարեհ Ա-ի Հայաստան ձեռնարկած արշավանքների, պարսկահայկական պատերազմների ու ճակատամարտերի և, ընդհանրապես, Առաջավոր Ասիայի պատերազմների սարսափներով ու ցավերով առևցուն, խիստ լարված ու խառնաշփոթ իրավիճակի հետ:

Բանն այն է, որ այս իրավիճակը բավարար շափով արձագանքված է հայ պատմագրության ու բանահյուսության մեջ, սակայն նորից տեսադաշտի փակվածության պատճառով առ այսօր չի նկատվել: Նկատի ունենք Մովսես Խորենցու «Հայոց պատմության» նույն ժամանակին վերաբերող տեղեկությունները:

Նախ՝ ժամանակի և գործիչների մասին:

Ըստ Խորենացու, պարսից թագավոր Կյուրոս Մեծը և Հայոց Տիգրան Ա Մեծը կամ Տիգրան Հայկազնը ժամանակիցներ և դաշնակիցներ են (Ա, գլ. ԻՇ-ԻԶ, ԱԱ): Այսպես է նաև ըստ Քսենոֆոնի «Կյուրոպակիայի» (գիրք 3, գլ. 1—3, գիրք 4, գլ. 2, գիրք 5, գլ. 1, 3, գիրք 6, գլ. 1—4, գիրք 8, գլ. 3—4 և այլ տեղեր): Նույն պատմիչների նշված՝ նույն տեղեկությունների համադրումից էլ երեսում է, մասնավորապես ըստ «Կյուրոպակիայի» (գիրք 8, գլ. 6—8), որ Կյուրոս Մեծը փոքր-ինչ ուշ է մահացել (թերևս 1—2 տարի), քան Տիգրան Հայկազնը: Եվ քանի որ Կյուրոս Մեծի մահը, ըստ պատմագիտության, ենթադրվում է մ.թ.ա. 530 կամ 529 թ. (տե՛ս Թ. Բիկերման, Հրոնոլոգիա դревнего мира, М. 1975, էջ 193, ՀՃՊ, գ. 1, էջ 444), Տիգրան Հայկազնի մահը կարելի է դնել 531-ին, նկատի ունենալով, որ, ըստ Քսենոֆոնի, նա իր զորաբանակով մասնակից է եղել մ.թ.ա. 539 թ. Կյուրոսի ձեռնարկած բարերույնան արշավանքին և Բաբելոնի գրավմանը («Կիրոպեдия», քհ. VIII, բ. 4, IV):

Տիգրան Ա Մեծին կամ Տիգրան Հայկազնին, ըստ Խորենացու, հաշորել է նրա կրտսեր որդի Վահագնը, ուրեմն՝ մ.թ.ա. 531 կամ 530-ից, իսկ Կյուրոս Մեծին, ըստ հունահյուսեական պատմիչների, ըստ Հրեից աղբյուրների և ըստ պատմագիտության, իր որդի Կամբիսը՝ թագավորած 530 կամ 529—522 թթ., ապա սրա մահից հետո շուրջ կես տարի գահակալական կոփվներ, ապա Դարեհը՝ Վշտասափի որդին, թագավորած 522—486 թթ.: Այսպիսով, Դարեհ Ա-ի ձեռնարկած հայաստանյան արշավանքների և հայ-պարսկական պատերազմների ժամանակ Հայոց թագավորը Վահագն է եղել և խիստ հավանական է, որ հիշյալ պատերազմներում նա լիներ Հայոց զորքերի գլխավոր գորահրամանատարը:

Իսկ թե ինչո՞ւ Դարեհը չի հիշել Հայոց որևէ զորահրամանատարի, հասկանալի է չի կամեցել հավերժացնել իր ախոյանին:

Ավարտելով ասելիթը Տիգրան Հայկազնի մասին, Խորենացին ավելացնում է. «Սորա որդի Բաբ, Տիգրան, Վահագն...», ապա բերում Վահագնին նվիրված հանրահայտ երգը և ապա շարունակում. «Զայս երգելով ոմանց փանդուամբ, լուաք մերովք իսկ ականջօք: Յետ որոյ և բնդ վիշապաց ասէին յերգին կոռուել նմա և յաղթել, և կարի իմն նմանագոյնս գշերակեայ նահատակութիւնսն նմա երգէին: Այլ ասեն զսա և աստուածացեալ. և անդրի ի Վրաց աշխարհին զսորա շափ հասակին կանգնեալ՝ պատուէին զո՞հիւք» (Ա, գլ. ԱԱ):

Ահա այս է ամբողջը, ըստ Խորենացու, Տիգրան Հայկազնի որդու և հաջորդի, Հայոց թագավոր Վահագնի մասին: Դրանք, ինչ խոսք, շատ հետաքրքիր, սակայն նույնքան էլ մշուշապատ և անհասկանալի տեղեկություններ են: Եվ, իրոք, ի՞նչ հասկանալ՝ «Կովել է վիշապների գեմ և հաղթել», կամ՝ «Հերակելսի նման քաջագործություններ է կատարել», կամ՝ ի՞նչո՞ւ էին Վրաց աշխարհում աստվածացրել, արձան կանգնեցրել և պաշտում:

Այս հարցերին իհարկե, պատասխանելու փորձեր եղել են, նաև Վահագնին նվիրված երգն է տարատեսակ թացատրվել՝ «Վահագնի ծընունդը» անհիմն վերնագրումով, սակայն դրանք բոլորն էլ ելնում են տիեզերածնական-առասպելաբանական պատկերացումներից և, մեր կարծիքով, հեռու են համոզելուց: Հեռու են թեկուղ այն պատճառով, որ Խորենացին պատմական, իրական գործի մասին է խոսել ու գրել, ուստիև պետք է ենել պատմականությունից՝ առաջին հերթին հենց Վահագնին նվիրված երգը թացատրելիս:

Դաղտնիք չէ, որ այդ երգը սոսկ «երկունք» բառի հպանցիկ տպավորության տակ դիտվել ու դիտվում է որպես Վահագն աստծու ծնունդը պատկերող ժողովրդական ստեղծագործություն: Իրականում, սակայն, երբ նկատի ենք ունենում Հայոց թագավոր պատմական Վահագնին ու նրա ժամանակը, այսինքն՝ հավատում ենք Խորենացուն, երբ դրանք դիտում ենք Բիհիսթունի արձանագրության լույսի ներքո, այսինքն՝ պատկերացնում ենք Արեելքի շուրջ երեքամյա պատերազմներով լեցուն, խառնաշփոթ իրավիճակը՝ մահերով, ցավերով ու սարսափներով հագեցած, երբ այդ պատերազմների ու ցավերի հորձանուտում տեսնում ենք իր անկախության համար մաքառող հերոսական ու հաղթական Հայաստանը՝ Վահագնի գլխավորությամբ (ժամանակագրորեն այդպիս է) և այն, և այն, պարզ է դառնում, որ տվյալ երգում որևէ ծնունդ չի պատկերված՝ ո՛չ աստծու, ո՛չ մարդու, այլ՝ ժամանակի խիստ պատկերազոր և խտացված արտացոլումն է, կարելի է ասել Բիհիսթունի արձանագրության բանաստեղծական տարրերակը: Համոզվելու համար նորից ուշադրություն գարձնենք երգի բովանդակությանը:


Մեր կարծիքով, Վահագնին նվիրված երդում պատմականը ներկայացված է բանաստեղծական հինգ պատկերներով:

Պատկեր առաջին— «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր և ծովն ծիրանի»: Այստեղ գեղարվեստական մեծագույն վարպետությամբ և անթերի ներկայացված է Արևելքի խիստ ցավատանջ իրավիճակը՝ երկունքի ցավերին համահավասար վիճակ և ավելին, ինչպես երեաց Բի. Հիսթունի արձանագրությունից: Եվ, իրոք, դարեհյան երեքամյա աշխարհակործան արշավանքների, պատերազմների ու ճակատամարտերի, ցավերի ու սարսափների մեկ այլ կատարյալ պատկեր կամ համապատասխանություն, այն էլ՝ ընդամենը մի քանի բառով, որոնք բառախաղ են հիշեցնում, դժվար է երեակայել: Ի դեպ, նման ծանր, աղետալի վիճակներում նմանատիպ համեմատություն-պատկերներ հատուկ են նաև ուշ դարերին, և ոչ միայն Հայերին: Օրինակ, ասվում է՝ «Երկինք, գետին մթնեց» և այլն:

Պատկեր երկրորդ— «Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ», Այսինքն՝ համատարած այդ աղետի ծովում երկունքի ցավերով էր բռնված նաև Հայաստանը՝ կարմրիկ եղեգնիկը, ճիշտ այնպես, ինչպիսի դիրքերում ու վիճակում էր այն Դարեհի ձեռնարկած պարբերական, թվում է վերջ շունեցող, արշավանքների ու ճակատամարտերի պայմաններում: Էլ չենք ասում, որ Դարեհը, ըստ արձանագրության, մյուս բոլոր երկրների համեմատությամբ, Հայաստանում է ավելի շատ ուազմական գործողություններ ծավալել, Հայաստանի նվաճման համար առավել հետեւղական և անզիջում ճիգ ու ջանքեր թափել:

Պատկեր երրորդ— «Ծնդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր»: Զարմանալի խոսուն և կենդանի պատկեր է: Հայ ժողովուրդը օրհասական այդ պահին, իր անկախությունը պաշտպանելու համար ատելությամբ և ցասումով ծառս է լինում թշնամու դեմ՝ հոփ ու բոց թափելով նրա վրա: Ապացուց են թեկուզ թշնամու դեմ տված հինգ խոշոր և հերոսական ճակատամարտերը, որից շորսը անկասկած հաղթական: Արդ, թե ինչպիսի խտացած ատելությամբ ու ցասումով, ինչպիսի բացազնական հերոսությամբ և ինքնամոռաց պայքարով հայ զորականները կարող էին ահարկու, համարյա անպարտելի հակառակորդից հաղթանակներ կորզել, սոսկ մնում է երեակայել:

Պատկեր չորրորդ— «Եւ ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ»: Այսինքն՝ հայ ժողովորդին պատած վրեժով ու ցասումով լեցուն մարտի է նետվում խարտյաշ պատանին, այսինքն՝ Հայոց անկախության համար մղվող պայքարի քաջ զորահրամանատարը՝ ժամանակի Հայոց թագավոր Վահագնը, որի իրավունքն էր և պարտականությունը՝ Հայրենիքի օրհասական պահին իր զորագնդերը գրոհի տանել: Էլ ո՞վ, եթե ոչ վա-



Վահագնի դիմապատկերը

Հագնը, որը, թեպետ պատանի, արդեն հայտնի էր քաջագործություններով:

Պատկեր հինգերորդ— «Նա հուր հէր ունէր, բոց ունէր մօրու, և աշկունքն էին արեգակունք»: Այստեղ արդեն Վահագնի արտաքինի նկարագիրն է, որը հաստատվում է ոչ թե արձանագրությամբ (արձանագրությունը նման նկարագիր ունենալ չէր կարող), այլ կոմագենի նեմրով լեռան արձանախմբից հայտնի Վահագնի դիմաքանդակով (տե՛ս նկարը):

Ինչպես տեսնում ենք, զարմանալի նմանություն կա դիմաքանդակի և երգի նկարագրի միջև, թեպետ «հուր հէրը» չի երևում: Մորուքը, իրոք, բոցեղեն լեզվակների է նման, աշքերը՝ արեգակնամման և, թվում է, լույս են ճառագում: Ըստ այդմ էլ մտածելի է, որ երգի ստեղծողն ու դիմաքանդակողը քաջածանոթ են պատմական, իրական, տեսանելի Վահագնին և ոչ աստծոն: Այլ հարց է արդեն, որ Վահագնը իր քաջագործությունների համար աստվածացվել է:

Թացի այս, Վահագնի պատմականությամբ բացատրելի են դառնում նրան վերաբերվող մյուս տեղեկությունները, որոնք նույնպես բերված են ըստ ավանդագրույցի: Այսինքն՝ պատմական հիմքեր ունեն:

Օրինակ, «կովել է վիշապների դեմ և հաղթել», Այստեղ «վիշապներ» ասվածը փոխաբերական իմաստ ունի և նշանակում է «մարեր», «մարաց ուժեր»: Գաղտնիք չէ, որ հայ մատենագրության և բանահյուսության մեջ Մարաց թագավորներն ու մարական ցեղերն ընդհանրապես կոչվել են «վիշապազոնք»՝ վիշապների սերունդ: Հեռուն զննալու համար նորից դիմենք Խորենացուն: Խոսելով Մարաց Աժդահակ թագավորի Անոյշ տիկնոց, նրանց ուստրերի ու դուստրերի և մարական այլ գերիների Հայաստանում բնակեցնելու մասին (թվով ավելի քան 10.000), նա ավելացնում է. «Յայտնէն զայս ճշմարտապէս և թուելեացն երգե, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն զինմէտ զաւառին Գողթան. յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդոց նորա, յիշելավ այլարանաբար և զգարմիցն Աժդահակայ, վիշապազունս զնոսսա կոշելով. զի Աժդահակդ՝ ի մեր լեզուս է վիշապ: Այլ և ճաշ ասեն գործեալ Արդաւանայ ի պատիւ Արտաշիսի, և խարդավանակ լիալ նմին ի տանարին վիշապաց» (Ա, գլ. ԱԱ, ընդգծ.— Լ. Շ.), Գաղտնիք չէ նաև, որ Աքեմենյանների բանակում զգալի տոկոս են կազմել մարական ուժերը: Կյուրոս Մեծի թագավորության նախաշեմին, ըստ Քսենոֆոնի, դրանց թիվը 70.000 էր՝ 10.000 հեծելազոր, 60.000 հետեւակ (Կյուրոպեդիա, 2, գլ. 1, § 6), այն էլ՝ ավելանալու միտումով: Նույն քանակը և ավելին ենթադրելի է նաև Դարեհ Ա-ի թագավորության սկզբներին: Ուստիւ անհավանական չէ, նաև՝ ուազմավարական նպատակահարմարության առումով, որ Դարեհի կազմակերպած հայաստանյան արշավանքների հիմնական ուժերը և, հետևաբար, պարտություն կրողները մարերն են եղել, այսինքն՝ հայերի ավանդական պատկերացմամբ, վիշապազունները:

Կամ վիշապները: Այս է պատմառը նաև, որ Վահագնը կոչվել է «Վիշապաքղ», այնպես որ, մեր կարծիքով, ուրիշ պատմառ չկա, և զուտ երվակայական են դառնում առասպելաբանական բացատրությունները, կասեինք՝ խճճանքները:

Այժմ վերադառնանք մյուս տեղեկությանը՝ Վահագնը Հերակլեսին համանման քաջագործություններ է կատարել, Պատկերավոր խոսքի համար շատ սովորական համեմատություն է: Դարեհ Ա-ի աշխարհակործան զորաբանակների դեմ հայ ժողովրդի հերոսական և հաղթանակներով հարուստ գոտեմարտն, անկասկած, ունեցել է և սիրանքներ, և՛ քաջագրություններ, որոնց կազմակերպողը, կրողը, ինչու չէ, նաև կատարողը Վահագն է եղել: Եվ եթե դրանք համեմատվել են Հերակլեսի սիրանքների հետ, ուրեմն իրական հիմքեր են ունեցել:

Երրորդ տեղեկությունը՝ Վրաց Աշխարհում Վահագնին աստվածացրել, մարդահասակ արձան են կանգնեցրել և պաշտել են: Հարց է առաջնում՝ ինչո՞ւ, ի՞նչ կապ ուներ Վրաց Աշխարհի հետ:

Հարցի պատմասխանը նորից հնարավոր է ըստ Խորենացու և նորից պատմական հիմքեր ունի: Խոսելով Վահագնի հոր՝ Տիգրան Ա Մեծի կամ Տիգրան Հայկազնի և Մարաց Աժդահակ թագավորի միջև մղվող պատերազմի մասին, Խորենացին գրում է. «Եւ ժողովէ արթայն Հայոց (Տիգրան Հայկազնը— Լ. Շ.) ի սահմանացն Կապադովկացւոց, և որշափ ընտիրը Վրաց և Աղուանից, և զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքոնց: Եվ խաղայ ամենայն զորութեամբ իւրով զկողմամբք Մեդացւոց» (Ա, գլ. թի):

Ինչպես տեսնում ենք, Տիգրան Հայկազնի ժամանակ եղել է հայկաց ուազմական-բարեկամական դաշինք, որը հարատեւել ու պահպանվել է նաև նրա որդու՝ Վահագնի օրոք: Ասում ենք՝ պահպանվել է, նկատի ունենալով հենց այս՝ Վահագնին Վրաստանում աստվածացնելու փաստը, ապա այն, որ այդ դաշինքը խաթարվելու պատմական պատճառներ շեն երեսում և, վերջապես, որ խաթարման մասին փաստ չկա: Այսպիսով, համոզված կարելի է պնդել, որ Վրաց զինական ուժերը ևս մասնակցել են Դարեհ Ա-ի դեմ հայ ժողովրդի անկախության համար մղվող հերոսական պայքարին, ականատեսն են հինգ ճակատամարտերում ծավալվող բազում սիրանքների, այդ թվում նաև Վահագնի՝ գուցեկ գերմարդկային քաջագործությունների, որի համար էլ հների արդարամտությամբ նրան աստվածացրել ու պաշտել են: Աստվածացրել և պաշտել են ճիշտ այնպես, ինչպես իրենք իսկ՝ հայերն են վարվել իրենց քաջագործ թագավորի հանդեպ՝ համարելով քաջության, ուժի, հերոսության, ուազմի աստվածած:

Վահագնի մասին մի ավանդագրույց ևս, որի պատմականությունը, թեպետ աղոտաբար, դարձյալ երեսում է Բիհիսթունի արձանագրությամբ: Զրույցի հնագույն մի պատումի համաձայն, որը ավանդվել է

լոնիայի միջև առեւրական փոխարաբերությունների հանրահայտ նկարագրությունն է:

Հստ այդ նկարագրության, հատուկ կառուցված կաշեպատ լատանավերով (ամենամեծերը՝ 800 տաղանդ բեռնատարողությամբ (Հայաստանից արտահանել են մեծաքանակ գինի (երեսի գինիների տարրեր ունել են նաև լաստանավերի կմախքը, կարասները (ենթադրվում է), անգամ՝ ծղոտը, բացի կաշուց, որն իրենց հետ տարած գրաստներին բարձած, ցամաքային ճանապարհով վերադարձել են Հայաստան (գիրք 1, § 194): Սա, իհարկե, չի նշանակում, որ լաստանավերով ուրիշ բեռներ կամ մթերքներ չեն տեղափոխել, կամ էլ՝ թարելոնից ոչինչ չեն բերել: Իհարկե՝ ուշ Այլ պարզապես նշանակում է, որ Հերոդոտը այդ նկարագրությամբ մեկ անգամ ևս հաստատում է Հայաստանի տնտեսության այդ բնագավառների՝ խաղաղոգործության և գինեգործության խիստ զարգացած վիճակը և առեւրական սերտ կապերը արտաքին աշխարհի հետ: Հերոդոտի մեկ այլ տեղեկությամբ էլ Հայաստանը համարվում է անասուններով հարուստ երկիր (գիրք 5, § 49):

Հայաստանի տարածքի և սահմանների մասին Հերոդոտի տեղեկությունները հետևյալն են:

1. «Մեղական և լյուդիական թագավորությունների միջև սահմանը Հալիս գետն էր, որը հոսում է Հայկական լեռներից Կիլիկիայի միջով...» (գիրք 1, § 72):

2. «Քաղաքը (թարելոնը, — լ. Շ.) բաժանված է երկու մասի, քանզի նրա միջով հոսում է գետ, որի անունն է ծփրատ: Այն սկիզբ է առնում Հայաստանից, մեծ է, խորը և արագահոս և թափվում է Կարմիր ծովը (նկատի ունի Պարսից ծոցը)» (գիրք 1, § 180):

3. «Հայաստանում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուղենիներ, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կաշվե ծածկով...» (գիրք 1, § 194),

4. Գիրք 3, § 93՝ 13-րդ սատրապությունը, բերված է:

5. Գիրք 3, § 94՝ 18-րդ սատրապությունը, բերված է:

6. «Պարսիկները ապրում են Ասիայում, ընդհուպ մինչև Հարավային ծովը, որը կոչվում է Կարմիր, նրանցից վերև դեպի Հյուսիս բնակվում են մեղացիները, մեղացիներից վերև՝ սասպեյրները (նաև՝ սասպիրներ, — լ. Շ.), սասպեյրներից վերև՝ կոլիսերը, տարածվելով մինչև Հյուսիսային ծովը (նկատի ունի Սև ծովը, — լ. Շ.), որտեղ թափվում է Փասիս գետը: Ահա այս շորս ազգերն են բնակվում մեկ ծովից մյուսն ընկած տարածքում» (գիրք 4, § 37):

7. «Պարսիկներից, մեղացիներից, սասպեյրներից և կոլիսերից վերև, դեպի արևելք, գտնվում է Կարմիր ծովը (=Պարսից ծոց, — լ. Շ.), Դեպի Հյուսիս՝ Կասպից ծովը և Արաքս գետը, որը հոսում է դեպի արևելք

(նկատի ունի Երասմիը, — լ. Շ.): Ասիան բնակեցված է մինչև Հնդկաստան, որից այն կողմ, դեպի արևելք, արդեն անապատ է և ոչ ոք չի կարող ասել, թե այն ինչպիսին է» (գիրք 4, § 40):

8. «Այստեղ հոնիացիների հարևաններն են լյուդիացիները, որոնց երկիրը բարեերը է և խիստ արծաթաշատ... Լյուդիացիներից հետո դեպի արևելք... բնակվում են փոյուգները, որոնք ինձ հայտնի բոլոր մարդկանցից առավել հարուստ են իրենց հոտերով և բարեերը հողերով: Նրանց հաջորդում են կապադովկիացիները, որոնց մենք անվանում ենք սլուրիացիներ: Սրանց սահմանակից են կիլիկիացիները, որոնք տարածվում են մինչև այն ծովը, որտեղ գտնվում է Կիպրոս կղզին: Սրանք արքային տալիս են տարեկան հինգ հարյուր տաղանդ հարկ: Այստեղ կիլիկիացիներին հաջորդում են հայերը, որոնք նույնպես առատ հոտեր ունեն: Հայերից հետո... բնակվում են մատիենները: Հաջորդը... Կիսասիա երկիրն է, որտեղ Քուսապես գետի վրա գտնվում է ահա Սուսա (քաղաքը), որտեղ ապրում է մեծ արքան և որտեղ գտնվում են նրա գանձերը» (գիրք 5, § 49):

Սան.— Այս երկրների տեղագրումը և հաջորդականությունը կատարված է ըստ քարտեզի, որը, մեր կարծիքով, Հեկատեոս Միլեթացու քարտեզն է:

9. «Կիլիկիայի և Հայաստանի սահմանն է նավարկելի գետը՝ Եփրատ անունով: Հայաստանում կար տասնհինգ կայան՝ իշեանատներով և ամրություններով, հիսուննվեց և կես փարսախ տարածության վրա: Այս Հայաստանից ճանապարհը տանում է դեպի Մատիեննե, որտեղ կաերեսունշորս կայան, հարյուր երեսունվեց փարսախի վրա: Այդ երկրի միջով հոսում են շորս նավարկելի գետեր: Առաջին գետը Տիգրիսն է, ապա երկրորդ և երրորդը՝ միենալու անունով Զաք (Յաբատ): Սակայն որանք տարրեր գետեր են և սկիզբ են առնում ոչ նույն վայրերից: Հիշյալ գետերից առաջինը հոսում է Հայաստանից, իսկ երկրորդը՝ Մատիեննեից, Զորրող գետը կոչվում է Գինդ՝ (ըստ Ս. Կրկյաշարյանի՝ Գյունդս):» (գիրք 5, § 52):

Հերոդոտի այս տեղեկությունների հիման վրա Հ. Մանադյանը եզրակացրել է. «Այս վկայություններից առաջինը (մեր համակարգումով ևս՝ առաջինը, — լ. Շ.), որի մեջ մատնանշված է, որ Հալիս գետը հոսում է Արմենների լեռից՝ վերաբերում է Փոքր Հայքին: Իսկ երրորդ և չորրորդ վկայությունները (մեր համակարգումով՝ 8-րդ և 9-րդ) պարզ շրջադարձ կատարվում են Արմենիայի սահմանները, որը գտնվում էր Եփրատի արևոտում:

Հերոդոտի մոտ հին Կապադովկիայի արևելյան մասը, այսինքն՝

¹ Համ Գ. Ա. Ստրատանովսկու, Գինդը ալժմյան Դիալան է, (Տիգրիսի վտակներից մեկը):

Սելիտենեի (այժմյան Մալաթիայի) շրջանը՝ համարվում է Կիլիկիայի մաս։ Սրա ու հարավ-արևմտյան Արմենիայի միջև իրրե սահման ցույց է տրված Եփրատ գետը։ Այս գետի մոտից, ինչպես երևում է շրբող վկայությունից (մեր համարակարգումով՝ իններորդ), 56½ փարսակ (մոտ 300—350 կմ) տարածության վրա Արմենիայի միջով անցել է Սարդեսից Շոշ գնացող Պարսից «Արքայական» կոչվող մեծ ճանապարհը, որի ուղղությունը պետք է ենթադրել այժմյան Մալաթիայից Խարբերդի դաշտի միջով դեպի Տիգրիս գետն (նկատի ունի Արևմտյան Տիգրիսը)՝ Ամիդ-Դիարբեքիրի մոտ, և այստեղից դեպի այժմյան Ջեզիրե, որը գտնվել է, հավանորեն, մատիենների երկրում (Քննական տեսություն..., Հ. Ա., էջ 57—58):

Մեծանուն պատմաբանի այս եզրակացությունները, մասնավորապես՝ Հայաստանի հարավային սահմանի և տարածքների հստակ նշումները ըստ Հերոդոտի, հիմնավոր են և բնդունելի, սակայն, կարծում ենք, որ դեռևս առանձին լրացումների, բացատրությունների կարիք զգացվում է՝ ուրդյալ առաջին հերթից ըստ Հերոդոտի։

1. Հերոդոտի տեղեկություններից երևում է, որ Արմենիա (Հայաստան) ասելով, նա հիմնականում նկատի է ունեցել Մեծ Հայքը կամ, ինչպես հետագայում՝ Արշակունիների ժամանակ կոչում էին՝ Բուն Հայաստանը։ Ընդամենը մեկ անգամ Հերոդոտի խոսքը վերաբերում է Փոքր Հայքին, այսինքն՝ Եփրատից արևմուտք ընկած Հայաստանին, երբ ասում է՝ Հայիս գետը սկիզբ է առնում Արմենիայի լեռից (տե՛ս տեղեկ. 1):

2. Հստ Հերոդոտի երևում է նաև, և բավականաշափ հստակ, որ Հայաստանի հարավային սահմանը ձգվել է Մելիտենե կամ Մալաթիա քաղաքի մոտից՝ Մեծ Հայքի հարավ-արևմտյան սահմանակետը, և հասել մինչև Մեղիս կամ Մարաստան, մեկ այլ տեղեկությամբ՝ մինչև Մատիեն երկիրը, այսինքն՝ մինչև Ուրմիա լիճը՝ Հայաստանի հարավ-արևելքում։ Այսպիսով, ըստ Հերոդոտի ևս, Հայաստանը հարավից ներ է առել Մեծ Հայքի Սոփք, Աղձնիք, Կադմեա տուն կամ Կորդուք սահմանային սահմանիները, ի հաստատումն այս բանի, Հերոդոտի մոտ կան նաև այլ վկայություններ։ Այն, որ «Արքայական» պողոտայի ավելի քան 56 փարսախը՝ շուրջ 350 կմ, անցել է Հայաստանի վրայով, փաստորեն Սոփքի տարածքով, որ Տիգրիս գետը (Արևմտյան Տիգրիս) սկսվում և հոսում է Հայաստանից, փաստորեն Սոփքի և Աղձնիքի տարածքներով, որ Արևելյան Տիգրիսը և Տիգրիսի Մեծ Զար վտակը հոսում են Հայաստանից, փաստորեն Վասպորականի, Սոփքի և Կորդուքի տարածքներով, որ վերջապես, Հայաստանը գտնվում էր Ասորեստանից վերև, այսինքն՝ դեպի Հյուսիսի հայությունը։

3. Հստ Հերոդոտի, հստակ է նաև Հայաստանի արևմտյան սահմանը, այն Եփրատ գետն է։ Ի դեպի, միջին հոսանքում Եփրատը սահ-

մանագետ է նշված Հայաստանի և Կիլիկիայի միջև (թե ինչո՞ւ Կիլիկիայի, Հ. Մանանդյանը բացատրել է), իսկ վերին հոսանքում՝ Հայաստանի (—Մեծ Հայքի) և Փոքր Հայքի միջև։ Սա էլ այն պատճառով, որ Եփրատը, ըստ Հերոդոտի, սկիզբ է առնում Հայաստանից (տե՛ս տեղեկ. 2), փաստորեն՝ Բարձր Հայք նահանգի տարածքից, իսկ Հալիսն էլ Փոքր Հայքի տարածքից սկիզբ առնող գետ է։

Այսպիսով, Հերոդոտի տեղագրած Հայաստանի արևմտյան, հարավարևմտյան, հարավային և հարավ-արևելյան սահմանները ճիշտ նույնն են, ինչպիսիք Մեծ Հայքի համապատասխան սահմանները, Ուրեմն, ըստ Հերոդոտի, Հայաբնակ և Հայաստան պետք է համարվեն սահմանային և այլ տարածքներ ևս։ Նկատի ունենք Վասպորական սահմանգի ամբողջ հարավային մասը, Մոկաց աշխարհը և Բարձր Հայք նահանգը, քանի որ սրանք Արևելյան Տիգրիս և Արևմտյան Եփրատ գետերի ակունքատարածքներն են։ Այսպես որ Հիշյալ գետերը կան, ակունքները խափանված չեն, բարեբախտաբար հոսում են իրենց բնական հուներով և անկասկած են դարձնում տվյալ իրողությունը։

Այսուհանդերձ, պետք է խոստովանել, որ Հերոդոտի այլ տեղեկություններով այդպես չեն երևում (տե՛ս տեղեկ. 4, 5, 6, 7), ինչը և, առանձին դիտարկելու դեպքում, թյուրիմացությունների տեղիք է տալիս, իսկ Հայաստանն էլ դիտվում է գեռես (Հերոդոտի ժամանակ) ոչ Հայաբնակ տարածք, բացի, իհարկե, հարավային երեք նահանգներից (տե՛ս Քննական տեսություն, Հ. Ա., էջ 53, 56)։ Ավելին, Հերոդոտի՝ մերկողմից արդեն բերված երկու տեղեկություններ (տե՛ս 6, 7), ուր տեղագրված են Պարսից ծոցից— Սև ծով տարածքի ծողովորդները (ըստ Հերոդոտի՝ արևելքում նախ պարսիկները, ապա՝ սրանցից վերև և յյուսին՝ մեղացիները, սրանցից վերև՝ սասպեցները, սրանցից էլ վերև, մինչև Սև ծով՝ Կոլխիսը, տպավորություն են թողնում, հակասելով նույն հեղինակի մյուս նշումներին, որ Հայաստանը ընդհանրապես հայաբնակ էլ չէ, որ Հայաստան կամ Արմենիա չկա։

Այս հակասությունը, իհարկե, լուծված է համարվել, այսպես ասած, «վերին» և «ներքին» կամ՝ «հյուսինային» և «հարավային» Հայաստանների մասին ենթադրությամբ, որ, իբր, գեռես հայաբնակ չէր և, հետեւ բար, Հայաստան չէր «վերինը» կամ «հյուսիսայինը» (տե՛ս Քենական տեսություն, Հ. Ա., էջ 44, 53, 56) և այլն, սակայն կարծում ենք, որ այսպիսի պատկերացումը ճիշտ չէ, քանզի չի լուծում թվացյալ հակայսապիսի պատկերացումը ճիշտ չէ, քանզի չի լուծում թվացյալ հարցում է մնալ հակասական։

Փոքրձն համոզվել:

1. Վերհիշենք նախ 13-րդ սատրապությունը, որը, ըստ Հերոդոտի, կազմված էր «Պակտուիկեից», արմեններից և նրանց հարևաններից

մինչև Եվքսինյան ծովը»: Այստեղ շատ կարեոր է «Պակտյուիկե» երկրի տեղագրումը: Ի դեպ, երկրի, և ոչ ցեղի կամ ժողովրդի,

ինչպես նշվեց, Հ. Կիպերտը այն տեղագրում է Վանա լճից հարավ, որը աշխարհագրորեն ինչանակի հետազա Հայաստանի Մոլք, գուցեն Կորդուք նահանգները, իսկ Ս. Երեմյանը նույնացնում է Կորդուքի հետ: Մեր կարծիքով պետք է ընդունելի համարել թե՛ մեկ, թե՛ մյուս տեղագրումը, քանի որ առավել հիմնավոր և համոզիշ տեղագրում դժվար է ըստ Հերոդոտի ևս, Հայաստանից հոսող գետեր են համարվում (իրոք սկիզբ են առնում և հոսում Մոկքի և Վասպուրականի տարածքներից Կորդուքի վրայով), նշանակում է Հերոդոտի նշան Պակտյուիկե երկիրը ևս Հայաստան է: Իսկ թե ինչու Հայաստանի այդ մասը «Պակտյուիկե» անունով առանձնացված է «արմեններից», կփորձենք պատասխանել Հերոդոտի մյուս նշումները քննարկելուց հետո:

«Արմենների» բնակության տարածքը տվյալ տեղեկության շրջանակներում որոշելու անհնար է: Հ. Մանանդյանը Հերոդոտի մյուս՝ արդեն մեզ ծանոթ տեղեկությունների համադրմամբ ենթադրել է Ծոփքը, մասամբ էլ Կորդուքը կամ Կորճայքը, որը պետք է համարել ընդունելի, սակայն որպես կես ճշմարտություն: Այսինքն՝ ընդունել որպես տվյալ նահանգների հայեր (արմեններ) և ոչ՝ հայեր ընդհանրապես: Ընդհանրապես հասկանալու համար, եթե նույնիսկ բացառենք մյուս բոլոր ներքին ու արտաքին աղբյուրները, ինքը՝ Հերոդոտն իսկ դժվարություններ է հարուցում: Դրանցից մեկը «Պակտյուիկե»-ի օրինակն էր և էլի կտեսնենք:

«...եվ նրանց հարեաններից մինչև Եվքսինյան ծով», Այստեղ թեպետ «հարեանները» անհայտ են, սակայն ակնբախ է մի կարեռ հանգամանք՝ «հարեաններին» պետք է փնտրել Եփրատից արևելք, այսինքն՝ Մեծ Հայքում, Մոփք և Աղձնիք նահանգներից դեպի Հյուսիս, մինչև Սև ծով: Սա էլ այն պատճառով, որ հարավի «հարեանները»՝ Բաբելոնիան, Ասորեստանը, գուցեն Հյուսիսային Միջագետքը, ըստ Հերոդոտի, 9-րդ սատրապությունն էին (գիրք 3, § 92), իսկ Եփրատից արևմուտք բնակվող «հարեանները» այլ սատրապությունների մեջ էին, մասնավորապես նկատի ունենք Կիլիկիացիներին, որոնք 4-րդ սատրապությունն էին (գիրք 3, § 90): Ուրեմն՝ «հարեաններ» ասելով մնում է նկատի ունենալ Տուրուբերան կամ Տարոն և Բարձր Հայք նահանգի բնակիչներին: Ի դեպ, առանց Բարձր Հայքի «հարեանները» Սև ծովին մերձենալ չէին կարող:

Տուրուբերան կամ Տարոն նահանգի հայաբնակ լինելը, ըստ Հերոդոտի, դժվար է պնդել (ի հաստատումն բազում այլ աղբյուրներ կան), սակայն համոզված կարելի է ասել, որ Բարձր Հայքը ևս, ըստ Հերոդոտի, Հայաստան էր: Հիմք է հանդիսանում դարձյալ այն փաստը, որ Եփրատը, ըստ Հերոդոտի, սկիզբ է առնում և հոսում է Հայաստանից:

իրականում՝ Բարձր Հայքից, և հոսում է մինչև այսօր: Բարձր Հայքի հայտնակ լինելուն հիմք են նաև Հայաստան երկրի մասին խեթական կամ հիթթական թագավորների արձանագրությունները, Հայոց հնագույն հեթանոսական սրբավայրները և այլ փաստեր, սակայն առաջմ թողնենք և վերհիշենք 18-րդ սատրապությունը:

2. Հստ Հերոդոտի, 18-րդը կազմում էին մատիենները, սասպեյրները և ալարողները: Հիմք ունենալով պատմագիտության համապատասխան տեղագրումները, փոքր-ինչ խախտենք Հերոդոտի նշումների հաջորդականությունը և թվարկենք այսպես՝ մատիենները, ալարողները և սասպեյրները, կամ՝ սասպեյրները, ալարողները և մատիենները՝ սկսելով խոսքը սասպեյրներից:

Հստ պատմագիտական ընդունված կարծիքի, սասպեյրների հայրենիքը Բարձր Հայք նահանգի Սպեր գավառն է, նույնիսկ ենթադրվում է, որ, իբր, Սասպեյր անոնից է առաջացել Սպեր գավառանունը (տե՛ս ՀՃՊ, ԳԱԱ հրատ., հ. 1, էջ 452): Սպեր գավառը գտնվել է Մեծ Հայքի հյուսիս-արևելմտյան անկյունում, այստեղից է սկիզբ առել ծորոխ (Փաստը իր բոլոր վերնավտակներով, ինչպես նաև Եփրատի վտակներից մեկը՝ Բոնակապան լեռան հարավային ստորոտից): Սպեր գավառը, իրոք, հյուսիսից սահմանակից է եղել Կոլխերի երկրին, ինչպես սասպեյրները՝ ըստ Հերոդոտի: Այսպիսով, Սպեր գավառի և սասպեյրների երկրի նույնացումը կասկած չի հարուցում, հենց իր՝ Հերոդոտի տեղերկրի կողմանը համեմատությամբ: Եվ քանի որ Եփրատի վտակներից մեկն էլ սկիզբ է առնում Սպեր գավառից, նշանակում է սասպեյրների երկիրը ևս Հայաստան էր, որ «սասպեյրներ» ասածը (ըստ Քսենոֆոնի՝ հետպերիներ, «Անաբասիս», (գիրք 7, § 25) նշանակում է սպերցիներ, Սպերի բնակիչներ, Սպերի հայեր, և ոչ՝ «սասպեյր» կոչված ոչ հայկական ցեղ կամ ժողովուրդ, որ «սասպեյր» կամ «հետպերիտ» անվանումներն են առաջացել «Սպեր» անունից և, սույն պահին կարենութիւնը, որ 18-րդ սատրապության երկրներից մեկը ևս, ըստ Հերոդոտի, հայաբնակ ու Հայաստանի առաջարկանություններից մեջ էր: Զմոռանանք նաև, որ ըստ պատմագիտության, Բարձր Հայքի ամբողջ տարածքը, այդ թվում նաև Սպեր գավառը, Հայաստանի, այսինքն՝ Հայք-Հայաստանի երկրամաս է համարվում (տե՛ս ՀՃՊ, ԳԱԱ հրատ., հ. 1, էջ 192—193):

Մի հանգամանք ևս, որ ի հայտ է գալիս Հերոդոտի տվյալ տեղեկություններով: Քիչ առաջ ցույց տրվեց, որ Բարձր Հայք նահանգը մտել է 13-րդ սատրապության կազմում, իսկ այժմ էլ այն, որ նույն նահանգի Սպեր գավառը (փաստորեն նահանգի հյուսիսային ծայրագավառը) 18-րդի մեջ էր: Արդյոք հակասություն չէ:

Մեր կարծիքով՝ ոչ: Ընդհակառակը, ըստ այդմ մտածելի է, որ 13-րդ և 18-րդ սատրապությունների սահմանը արևմուտքում եղել է ծորոխ և Եփրատ գետերի ջրաբաժանը՝ վերևում գիշված Բոնակապան լեռնա-

շղթայով, որը նաև Սպեսը բաժանում էր թարձր Հայքի հարավային գավառներից: Այսպիսով հարավոր է դառնում նշված սատրապությունների սահմանագիծը տանել դեպի արևելք, սակայն մյուս տեղագրումներից հետո:

Այժմ անդրադառնութ «ալարոդ» կոչվածներին:

Կարեր ենք համարում նախապես նշել և ընդգծել, որ «ալարոդներ» անվանումը առաջին անգամ, ընդամենքը երկու անգամ (երկրորդ անգամը՝ որ նրանք և սասպեցիները զինված էին կողիների և ման) հիշատակել է միմիայն Հերոդոտը: Ի դեպ, եթե սասպեցիների և մատիենների մասին Հերոդոտը ինչ-որ տեղագրական նշումներ կատարել է, ապա ալարոդների մասին այդպիսիք էլ չկան, ոչ էլ, իհարկե, նրանց էթնոպատկանելության մասին:

Այսուհեն դեռ, ենելով մյուս երկուսի տեղագրումներից (սասպեցիների և մատիենների), ինչպես նաև «ալարոդ»— «արարատ» անունների նմանակությունից, ենթադրվել է նաև ալարոդների բնակության տարածքը: Օրինակ, ըստ կարծիքներից մեկի և ընդունվածի: «Ալարոդները... հիմնականում բնակվում էին Արարատյան դաշտավայրում, ինչպես նաև Վանա լճի և Արաքս գետի միջև ընկած տարածքում» (տե՛ս ՀԺՊ, ԳԱԱ, Հրատ., հ. 1, էջ 452), իսկ ըստ մյուսի: «Ալարոդները ապրում էին այժմյան Վանա, Ուրմիա և Սևանա լճերի միջև ընկած եռանկյունու տարածքում» (տե՛ս Գերոդոտ. Իշտորիա, Լ., 1972, ս. 517, դրամ. 65):

Թե իրենց մանրամասներով որքանով են ճշգրիտ այս կարծիքները, սույն պահին էական չէ, այլ այն, որ երկու դեպքում էլ ալարոդների բնակության երկիր է համարված Արարատյան դաշտը կամ, ավելի քննդրուն, Այրարատյան նահանգը: Այսպիսով, «ալարոդներ» ասվածը կնշանակի «արարատցիներ», «Արարատի բնակիչներ»:

«Ալարոդների» էթնոծագման մասին ընդհանրական է դարձել այն թյուր կարծիքը, որ նրանք, իբր, «ուրարտացիների (հասկանալ՝ ուրարտների) մնացորդներն են Հայկական լեռնաշխարհում» (ՀԺՊ, ԳԱԱ Հրատ., հ. 1, էջ, 452): Այս կարծիքի հիմքում սոսկ Արարատ—Ուրարտ (Ուրարտու) նույնությունն է, որը բնավ էլ էթնոիմաստ չունի, մանավանդ, որ դրված է ուրարտացիների ոչ Հայ լինելու ոչնչով չհիմնավորված վարկածը: Այսպես որ՝ Ալարոդ=Արարատ=Ուրարտու նույնացումներով (սրանց վիճելի չեն) Հերոդոտին ներքաշել բանավեճի՝ բոլորովին էլ չի արդարացվում:

Կարծում ենք, առավել հիմնավորն ու հավանականն այն է, որ «ալարոդներ»— «արարատցիներ» ասելով պետք է հասկանալ Արարատի հայեր, այսինքն՝ Արարատյան դաշտի կամ Այրարատյան նահանգի հայեր: Այսպես մտածելուն հիմք են հետեւյալ փաստերը:

Հայ պատմագրուները, մասնավորապես Մովսես Խորենացին, Արա-

բատյան դաշտը հայաբնակ ու Հայաստան են համարել, նաև՝ Հայոց հնագույն պետության կորիզ-կենտրոն, դեռևս մ. թ. ա. XXV դարի վերջերից՝ սկսած Հայկի որդի Արամանյակից, որպես պետության վարչապահական, ուազմական, կրոնական առաջնակարգ երկրամաս:

Արամանյակի անունով է կոչվել Արագած լեռը, Արագածոտն գավառը, նրա որդու՝ Արամայիսի անունով՝ Արմավիրը, Արամայիսի որդու՝ Ամասիայի անունով՝ Մասիս լեռը (հետո նաև Արարատ կոչված), իսկ թոռան՝ Երաստի անունով՝ Երասիս (Արաքս) գետը: Ի դեպ, հայկական Արաքս գետը, ինչպես տեսանք, մեկ անգամ հիշել է նաև Հերոդոտը և, ի տարբերություն Արաքս—Ամու դարյա գետի, որը արևելքից հոսում է արևմուտք—Հյուսիս, համարել է դեպի արևելք հոսող գետ՝ Պարսից ծոցից Հյուսիսի ընկած տարածքում, ինչպես Կասպից ծովը: Ամասիայի որդիներ Փառոխի և Ցոլակի անուններով՝ Փառախոտ և Ցոլակերտ բնակավայրերը՝ Մասիս լեռան արևելյան կողմերում, իսկ Գեղամա որդու անունով՝ Գեղամա լեռները, բում, իսկ Գեղամ որդու անունով՝ Գեղամա ծովակը, Գեղամա լեռները, «Գեղամի» կոչված ամրոցը (հետո՝ Գառնի), Գեղամի ծռո Արա Գեղեցիկ անունով՝ Այրարատ նահանգը (Այր-Արայ-Արտ նախաձեկից), Արակի անունով՝ Այրարատ նահանգ (Այր-Արայ-Արտ նախաձեկից), Արակի անունով՝ Գաղտնի լեզվով՝ Արան) և այլն, և այլն (Խորենացի, Ա, զլ. ԺԲ):

Մեր այս նշումները գուցե նորից հետևանք առաջ բերեն ոմանց մոտ, սակայն կարենոր համարեցինք, ցուց տալու համար, որ Արարատյան դաշտի և Այրարատյան նահանգի հայաբնակ լինելը ոչ թե ինչ-որ փաստահական փաստով է ապացուցվում, այլ փաստերի մի ամբողջ համակարգով, որոնց անտեսումն իսկ այսօր տարօրինակ է: Հայկական պղբյուրներն, իհարկե, միակը չեն:

Արարատյան դաշտի և Այրարատյան նահանգի հայաբնակ լինելու ապացուց են նաև Հեթիթական արձանագրությունների տեղեկությունները Հայասա-Ազգի երկրի մասին: Վերջին տարիներին բավականաշատ հիմնավորվել է, որ Ազգին Հայասա երկրի (ըստ մեզ՝ նաև պետության) կարևոր երկրամասերից է և տեղագրորեն նույնացվում է Արարատյան դաշտի ու Այրարատյան նահանգի հետ: Իսկ սա նշանակում է, որ թըվալ դաշտն ու նահանգը ես հայաբնակ են, քանզի Հայասան, Հայերի երկիր, Հայք, Հայաստան է նշանակում: Ավելացնենք նաև, որ Արարատյան դաշտի հետ է նույնացվում «ուրարտական» արձանագրություններից հայտնի Ազա երկիրը՝ որպես էթիունիի կարևորագույն երկրամաս (տե՛ս Հ. Վ. Արյուհյան, Տոպոնիմիկա Սարդ, Երևան, 1985, ս. 13—14): Այսպիսով, տեղագրորեն, խաղացած գերով, էթնիկապես (այս, նաև էթնիկապես) անկանակածելի նույնություն կա Դաշտն Արայի, Ազգի երկիր, Ազա երկիր անվանումների միջև: Մեր կարծիքով, չի բացառվում նաև նրանց զուտ անվանական նույնությունը, սակայն՝ ոչ միայն լեզվական առումով (տե՛ս Հերոդոտ, Պատմություն, Ս. Կրկիշարյանի վական առումով) (տե՛ս Հերոդոտ, Պատմություն, Ս. Կրկիշարյանի վական առումով)

թարգմանությամբ, էջ 575—576՝ գ. Սարգսյանի «Մեկնաբանությունը»), այլև՝ իմաստային, խաղացած դերով: Գաղտնիք չէ, որ Արարատյան դաշտը Հայոց թագավորական ոստանն էր՝ դարձյալ սկսած Արամանյակից, այսինքն՝ թագավոր-ազների բնակավայր, և հենց «ազն» բառն էլ կարծում ենք, պետք է փնտրել «Ազի», «Ազա» անուններում:

Արարատյան դաշտի, Այրարատյան նահանգի հայաբնակ լինելու ապացուց են նաև մեր բերած ու քննած արտաքին աղբյուրների տեղեկությունները՝ Արարատյան Հայոց թագավորության, Արարատի երկրի մասին, որոնց կրկին ցուցադրումը ավելորդ ենք համարում:

Վերջապես, շատ կարեոր է նշել պատմագիտական մի նորույթ և Սրանից 8 տարի առաջ (1986-ին), բոլորովին այլ փաստերով, ալարոդների մասին նույնանման եզրակացությունների է հանգել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանը՝ Հերոդոտի «Պատմության» հայերեն թարգմանությանը կից իր «Մեկնաբանության» մեջ: Բիհիսթունի արձանագրությամբ և Քսենոֆոնի «Անաբասիս» աշխատության համապատասխան տեղեկություններով նա եզրակացրել է հետևյալը: 1. Ալարոդները պեր են սասպեցրների և մատիենների արանքում՝ կանա լճից արևելք և Արաքսի հովտում: Այստեղ առարկելին միայն՝ «Կանա լճից արևելք» տեղագրումն է: 2. Անդրադառնալով ալարոդների էթնոպատկանելությանը, գրում է. «Հերոդոտի այս հատվածում հիշատակված ալարոդների տակ միանշանակ կերպով պետք է հասկանալ հայերին և վերը մեջ բերված հատվածը (5, 94՝ 5-ր վրիպակ է, պետք է՝ Յ. — Լ. Շ.)» հասկանալ այսպես. «Մատիենների, սասպեցրների և արմենների վրա սահմանված էր 200 տաղանդ հարկ: Սա տասնութերորդ շրջանն է»: Կամ՝ «Քսենոֆոնի հաղորդած փաստերն ամրապնդում են Հերոդոտի հիշատակած ալարոդներին հայերով փոխարինելու անխուսափելիությունը, այսինքն, որոշակիորեն ուղղում կամ լրացնում են պատմահոր՝ 18 սատրապության մասին հաղորդման տվյալներից մեկը»:

(Հեղինակի փաստարկում— հիմնավորումները շկրնելու համար, խնդրվում է նայել նրա շարադրանքը՝ Հերոդոտ, Պատմություն, Ս. Կըրկաշարյանի թարգմանությամբ, Երևան, 1986, էջ 573—578):

Այնպես որ, եթե Հերոդոտը ինչ-որ պատճառներով հնար չի տվել որոշելու «ալարոդների»-«արարատցիների» էթնոծագումը, չի նշանակում, թե այդպիսիք չկան, մանավանդ՝ չի նշանակում գնալ անորոշությունների, վիճելիների հորձանութը, անտեսելով գիտությունների ընձեռած շատ ու շատ փաստեր:

Անդրադառնախ «մատիեններ»-ին:

Վկայակոչելով Հերոդոտի՝ 18-րդ սատրապության մասին տեղեկությունը, Հ. Մանաղյանը գրում է. «Այս վկայությունն իրավամբ մի պարզ ապացուց է համարվում, որ պատմական Հայաստանի հյուսիսային շրջանները՝ Սպերը, Այրարատը և Ատրպատականը Վ դարում մեր 90

թվականությունից առաջ գտնվել են Արմենիայի սահմաններից դուրս և համարվել են առանձին սատրապություն» (Քննական տեսություն..., հ. Ա, էջ 57):

Մեկ այլ կարծիք. «Մատիենները բնակվում էին 18-րդ սատրապության հարավային մասում: Հերոդոտի և Ստրաբոնի տվյալներից երևում է, որ Ուրմիա լճի շրջանում տարածվում է Մատիեններկիրը, որը համապատասխանում էր նախկին Մանային» (ՀԺՊ, ԳԱԱ հրատ., հ. 1, 1971, էջ 452):

Մեկ ուրիշը. «Матиены жили между Ванским озером и верховьями р. Тигра, близ теперешней Ирано-турецкой границы» (Геродот, История, Л., 1972, с. 517, примеч. 65):

Եվս մեկը. «Մատիենները բնակվել են Մեծ Զավի վերին հոսանքում, վանա և Ուրմիա լճերի միջև: Մատիեննեն նույնացվում է ուրարտական Մանա երկրի հետ, որի կենտրոնը եղել է Մուսամիրը» (տե՛ս Հերոդոտ, «Պատմություն», Ս. Կրկյաշարյանի թարգմանությամբ, 1989, էջ 594, ժան. 50):

Այս տեղագրումներում, իհարկե, առարկելիներ կան (օրինակ, Մատիեննեի նույնացումը Ատրպատականին, կամ՝ Մանա երկրին, կամ էլ անորոշաբար վետեղումը «Ուրմիա լճի շրջանում» և այն, սակայն, ըստ Հերոդոտի, անկասկածելին այն է, որ Տիգրիսներից մեկը (նկատի է առնըված Մեծ Զավը կամ Մեծ Զավը) հոսել է Մատիեններկիրից, այսինքն՝ Մատիեննեն տարածվել է Մեծ Զավի վերին հոսանքների շրջաններում՝ Ուրմիա լճի արևմտյան ափերից մինչև Խոշար գետի և Արևելյան Տիգրիսի ակունքամերձ տարածքները: Մատիեններկիրի մեկ ուրիշ հիմնավոր տեղագրում, մեր Կարթիքով, դժվար է գտնել:

Իսկ ովքե՞ր են մատիենները:

Պատմագիտության մեջ, այսպես ասած, հերոդոտյան մատիենների էթնոպատկանելության հարցը զեռևս հանգամանորեն չի քննարկված, չի լուծված: Պատճառը ոչ միայն Հերոդոտի լուսպիւնն է այդ մասին, այլև այն, որ նրա վկայած մատիեններին չի կարելի աշխարհագրական միևնույն վայրի բնակիչներ համարել, մեկ ընդհանուր տուփի մեջ իրցեկել: Ընդհակառակը, պարզվում է, որ Հերոդոտի համապատասխան տեղեկություններում մատիեններին, ըստ նրա իսկ տեղագրման, պետք է բաժանել երեք խմբերի և անվանակոչել ըստ այդմ: Նպատակահարմար է բաժանումը կատարել ըստ այն գետերի, որոնց հովիտներում, ըստ Հերոդոտի, ապրել են մատիենները: Ի դեպ, անվանումները Հերոդոտինը չեն, պայմանական են, առաջին անգամ կատարվում են մեր կողմից:

1. Հայիս գետի կամ Փոքր Ասիայի մատիենները, ըստ Հերոդոտի, բնակվել են Հալիսի միջին հոսանքում՝ աշափնյա տարածքներում, իսկ ձախում նրանց գիմաց՝ փոյուգիացիները (տե՛ս գիրք 1, § 72, գիրք 7, § 72):

2. Տիգրիս գետի (նկատի է առնված Մեծ Զաբը) կամ Հայաստանի մատիեններ, ըստ Հերոդոտի, բնակվել են Զաք գետի ակունքի տարածքում և վերին հոսանքների շրջանում, Ուրմիա և Վանա լճերի Հիջե, մոտավորապես հետագա Պարսկահայքի տարածքում և Վասպորականի արևելյան շրջաններում: Հարավ-արևելքում սահմանակից են մյուս մտիեններին, իսկ Հարավ-արևմուտքում՝ արմեններին (գիրք 3, § 94, գիրք 5, § 52):

3. Գինդ գետի (այժմ Դիալա) կամ Մեղիայի (=Մարաստան) մատիենները, ըստ Հերոդոտի, բնակվել են այդ գետի ամբողջ հոսանքի շրջաններում, նաև երեսում է հարակից տարածքներում՝ արևելքում, հյուսում (գիրք 1, § 189, 202, գիրք 5, § 49):

Այսպիսով, մատիենների մասին Հերոդոտն ունի ընդամենը 7 տեղեկություն, որից 2-ը վերաբերում են, այսպես ասած, Հալիսի կամ Փոքր Ասիայի մատիեններին, 2-ը՝ Տիգրիսի կամ Հայաստանի մատիեններին, 3-ը՝ Գինդ գետի կամ Մեղիայի մատիեններին:

Այս բաժանումով, ահա, պարզ երեսում է, որ երկրորդ և երրորդ խմբի, կամ Զաք (Տիգրիս) գետի և Գինդ գետի մատիենները անմիջական սահմանակիցներ են, սահմանը նրանց միջև, Հավանաբար, Հայաստանի հարավ-արևելյան անկյունում եղել է Զաքասպ կոչված լեռ՝ Ուրմիա լճի հարավ-արևմտյան անկյան դիմաց, իսկ արևելքում՝ Ուրմիա լիճը ամբողջությամբ, որից արևելք՝ Մեղիայի մատիենները, իսկ արևմուտքում՝ Հայաստանի: Այսինքն՝ այն սահմանները տվյալ ուղղություններով, որ վկայում են հայ պատմիչները, մասնավորապես՝ Մովսես Խորենացին, նկատի ունենալով մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջեր՝ Արամ Նահապետի ժամանակ (Ա, գլ. ԺԴ), ինչպիսիք վկայում են նաև արտաքին ուրիշ պատմիչներ, ինչպիսիք են եղել, փաստորեն, պատմական Հայաստանի և Մեղիայի (=Մարաստանի) սահմանները հետագա շատ դարերում: Այլ կերպ ասած, դրանք հնագույն, ավանդական և հաստատուն սահմաններ են եղել: Հենց այս մշտատև սահմանակցությունը և, մանավանդ, մատիենների այդ երկու խմբերին շտարբերակելն է պատճառը, մեր կարծիքով, որ Հերոդոտի տվյալ տեղեկությունները առ այսօր ճիշտ չեն ընկալվել և զանազան անորոշությունների տեղիք են տվել, այդ թվում նաև Հայաստանի կամ Հայաստանյան մատիենների էթնոպատկանելության և անվան հարցերում:

Մեր կարծիքով, «մատիեն» անունը առաջացել է «Մեղիա» (=Մարաստան) անվան «մեղ» արմատից՝ Մեղիա-Մաղիա-Մատիա-Մատիեն անցումով: Լեզվական հավանականությունից զատ, ապացույց է նաև, որ հունաբումեական ոլորտի աղբյուրները, իհարկե, նաև Հերոդոտը, Մեղիա, մեղացիներ անվանումներին զուգահեռ օգտագործել են Մատիեններ, մատիեններ անվանումները՝ նկատի ունենալով հենց Մեղիա երկրը և մեղացիներին: Այս իսկ առումով մտածելի է, որ Հայաստանի

յատիենները ևս թե անվանումով և թե էթնոպատկանելությամբ, նույնում են Մեղիայի մատիենների հետ, այսինքն՝ ժագումով մեղացիներ կամ, ըստ Հայկականի՝ մարեր են: Ուրեմն՝ Հայաստանի Մատիեններ կարելի է դիտել որպես մարա-Հայկական խառը բնակչությամբ զբաղեցված երկիր: Հայկականն էլ այն պատճառով, որ ըստ հայ պատմիչների, մասնավորապես՝ ըստ Մովսես Խորենացու, տվյալ տարածքը շատ ավելի վաղուց Հայաստանի երկրամաս է, այդպիսին էլ եղել ու ճանաչվել է նաև հետեւրողության դարերում, բարեբախտաբար՝ մինչև այսօր:

Օրինակ, նախահերոդուտյանին վերաբերող փաստ է Խորենացու նկարգրությունը Արամ Նահապետի (Կառավարած՝ մոտ 2036—1978 թթ.) և նրա արևելյան արշավանքի մասին: «Սա (Արամը),— գրում է նա, — այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր (Մար Աբասը, — լ. Շ.), լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զահմանս հայրենեացն և հարազատից արեան նորա տիրել արանց օտարաց:

Այս Արամ, — շարունակում է Խորենացին, — սակաւուր ամօք յառաջ բան զտիրելն նինոսի Ասորեստանեայց և նինուէի, նեղեալ յազգացն որ շարջ զիւրաւ՝ ժողովէ զբաղմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնատրաց, և որք ի տէգ նիզակի կամակարողը, նորատիք և հարուստք յոյժ և յազողաձեռնութիւն իսկ, և երեսաւորք ի սիրտ և պատրաստութիւն պատերազմի, իբր թէ բիւրս հինգ (50.000— լ. Շ.): Պատահէ մեղացոյն երիտասարդաց, որոց առաջնորդէր նիւրալ ոմն ասացեալ Մադէս, այր հպարտ և պատերազմասէր, որպէս ցուցանէ նոյն ինքն պատմագիրն, յիգես սահմանացն Հայոց: Որոց միանգամ հուշանաբար հինիի սմբականի արարեալ Հայոց՝ ծառայեցոյց ամս երկու: Որում յանկարծօրէն ի վերայ հասեալ Արամ յառաջ քան զծագել արնական՝ սատակեաց զբաղմութիւն ամբոխիցն, և զնոյն ինքն զնիւմարն զկոշեցեալն Մադէս ձերակալ արարեալ ածէ յԱրմաիր... և զաշխարհն նորա մինչև ի լեռն անանեալ Զարասապ՝ ի ծառայութեան հարկի կալաւ...» (Ա, գլ. ԺԴ, ընդգծ. — լ. Շ.):

Ինչպես տեսնում ենք, Խորենացու այս հատվածը՝ շուրջ 100 տարի անտեսված ու արհամարված, կարծեք թե, հենց Հերոդոտի հիշատակած Հայաստանի մատիեններին բացահայտելու համար է գրված: Նույնն է աշխարհագրական ուղղությունը և տարածքը (Հայաստանի հարավ-արևելքը՝ մինչև Զարասապ լեռ), նույնն են հարեան, իսկ, տվյալ պահին, Հակառակորդ կողմերը (Հայեր և մեղացիներ), նույն տարածքը համարված է թե Հայերի («զսահմանս հայրենեաց և հարազատից», թե մեղած է թե Հայերի («զսահմանս հայրենաց և զաշխարհ»), թե մեղած է թե Հայերի («զսահմանս հայրենի բնակավայր») («և զաշխարհն նորա մինչև ի լեռն անուացիների բնակավայր»), մատիեններ անվանումները՝ նկատի ունենալով հենց Մեղիա երկրը և մեղացիներին: Այս իսկ առումով մտածելի է, որ Հայաստանի

Այսպիսով, բավարար հիմքեր կան պնդելու, որ Հերոդոտի վկայած

13-րդ և 18-րդ սատրապությունները ոչ միայն պատմական Հայաստանից գործություններում հայաբնակ են ու հայկական են և ընդգրկում են Մեծ Հայքի համարյա ամբողջ տարածքը: Ըստ Հերոդոտի, բավականաշափ հստակ երևում են նաև հիշյալ սատրապությունների բաժանման սահմանները, Ըստ այդմ, արևմուտքից-արևելք դրանք անցնում են Բոնակապան լեռների հարավային ստորոտով, ապա՝ ուղղղ գծով դեպի արևելք— Հայկական Պար լեռնաշղթայի հարավով՝ մինչև Մասիսներ, ապա՝ դեպի հարավ, հետագա Վասպուրականի կամ Կոտուր-Զագրոշյան լեռների ջրաբաժանով (այս հատվածում մոտավորապես այժմյան թուրք-իրանական սահմանագծով), ապա՝ մեծ Զաքի միջին հոսանքից դեպի արևելք՝ մինչև Զարասպ լեռ, այսինքն՝ մինչև Ռումիա լճի հարավ-արևմտյան անկյունը: Այսպիսով, Մեծ Հայքը, ըստ Հերոդոտի, բաժանված է եղել ոչ թե Արևմտյանի և Արևելյանի, այլ՝ Հարավայինի (13-րդը) և Հյուսիսայինի (18-րդը), եթե վերջինում նկատի չունենանք Ուրմիա լճի արևմտյան ափամերձ ոչ ընդարձակ տարածքներ՝ մինչև Մասիս կամ մինչև Արաքսի հովիտ, ուր փաստորեն Հայաստանի մատիեններն են՝ հայ-մարական խառը բնակչությունը:

Ի դեպի, Հայաստանի «մատիենների» բնակությունը մինչև Արաքսի հովիտ ենթադրելիս, նկատի ունենք երկու փաստ: Մեկը այն, որ ըստ Խորենացու Հայոց Տիգրան Ա թագավորը ավելի քան 10.000 մեղացիների մոտ մ.թ.ա. 553-ին բերել բնակեցրել է Մասիսներին մերձ, Արաքսի հովտում («...յարելլյայ ուսոյ մեծի լերին մինչև ի սահմանս Գողթան»), այսինքն՝ բուն Մարաստանին սահմանակից հայկական տարածքներում (Ա, գլ. է.), իսկ մյուսը՝ Հերոդոտի արդեն մեզ ժանոթ երկու տեղեկություններն են Պարսից ծովից մինչև Սև ծով բնակվող ժողովուրդների մասին, ուր նշված են պարսիկներ, ապա դրանցից վերև, դեպի Հյուսիս՝ մեղացիները, ապա սրանցից վերև՝ սասպելյանները, ապա սրանցից էլ վերև՝ Կոլիսերը (տես 6, 7): Ուրեմն՝ հենց այն բանը, որ Հերոդոտը իր իսկ հիշած «ալարողներին» էլ է մոռացել, կնշանակի վերջիններիս տարածքների արևելյան մասը, այսինքն՝ Մասիսներից արևելք՝ Արաքսի հովիտը («մինչև ի սահմանս Գողթան») համարել է մատիեննական կամ մեղական, իսկ արևմտյանը՝ սասպելյանը՝ բնակավայր:

Մի կարևոր հանգամանք ես: Մեծ Հայքի հերոդոտյան տվյալ բաժանումը պետք է զիտել որպես հարկային քաղաքականության արտահայտություն (ի՞արքե՛ հեռավոր նպատակներով) և ոչ՝ վարչա-քաղաքան բաժանում, կամ՝ Հայոց թագավորության անկում, կամ՝ Արեմենյաններին հպատակություն, ինչպես ընդունված է: Հերոդոտը, պարզապես, այդպիսի հիմքեր շի տալիս, իսկ հետեւ հերոդոտյան պատմիչներն է՝ Քսենոֆոն («Անարասիս»), Արրիանոս, Կուրտիսոս Ռուփոս, Մովսես Խորենացի, Թովմա Արծրունի և ուրիշներ իրենց համապատասխան տեղեկություններով (ուղղակի կամ անուղղակի) շարունակում են խոսել:

Հայոց ամբողջ թագավորության, նրա ներքին լիակատար անկախության և համաման իրողությունների մասին՝ մինչև Աքեմենյան թագավորության կործանումը: Այնպես որ, Հերոդոտի «լոռությունը» այս հարցերում ևս ճիշտ չի հասկացվել:

Մեկ ուրիշ հարց է: թե Հայաստանում հաստատված երկու սատրապություններն էլ, ըստ Հերոդոտի, հայաբնակ են, ինչո՞ւ նույն հեղինակը 13-րդ սատրապության կազմում հատուկ նշել է նաև «արմեններին» և, կարծեք թե, դրանով տարբերակել մյուսներից:

Այս, խիստ օրինական հարց է, որին, բարեխախտաբար, «ալարողների» առիթով՝ իր վերը նշած «Մեկնաբանության» մեջ, փորձել է պատասխանել ակաղեմիկոս Գ. Սարգսյանը: Ըստ նրա՝ «ինդրի լուծման բանալին... թաքնված է Հերոդոտի աղբյուրների տարաբնույթ նկարագրի մեջ» (տե՛ս Հերոդոտ, Պատմություն, Ս. Կրկշաշարյանի թարգմ., էլ 574): Ի բացատրություն և ի հաստատումն այս բանի, Գ. Սարգսյանը դիմել է Բիհիսթունի արձանագրության արամեերեն պատառիկ-տարբերակին՝ հայտնաբերված Եղիպտոսի Ելեփանտինե քաղաքում, և ցույց տվել, որ արձանագրության պարսկերեն տարբերակի «Արմենայի» փոխարեն արամեերեն տարբերակում գրված է՝ ՇՇ, որը կարելի է կարդալ Արարատ, Ուրարտու, Արարոտ և այլն: «Ահա, — շարունակում է Գ. Սարգսյանը, — նման մի արամեերեն բնագրից արված հունարեն թարգմանության մեջ ՇՇ-ը տվել է հունական «ալարող»... ձեզ, որը բազմաթիվ լեզուներում տարածված առաջին Շ-ի հետադարձ տարնմանեցման արդյունք է, Այս ձևն էլ, բնականաբար, որդեգրել է Հերոդոտը:»

Այսպիսով, — դարձյալ շարունակում է Գ. Սարգսյանը, — պատմագրը, ունենալով Հայաստանի արևմտյան մասի վերաբերյալ (ըստ մեզ՝ հարավային, — Լ. Շ.) քիչ թե շատ մանրամասն տեղեկություններ, տացված իր հարցուփորձից, պարսիկների և հուների պատմածներից, լոգորափոսների գրառումներից, ի վիճակի է եղել ներկայացնել նրա սահմանները, ժողովրդի ժագումը (՝, — Լ. Շ.), զբաղմունքները և այլն: Արևելյան (ըստ մեզ՝ Հյուսիսային, — Լ. Շ.) մասի վերաբերյալ այդ աղբյուրները լուել են (ինչո՞ւ և ինչի՞ց գիտեք, — Լ. Շ.), և Հերոդոտը նույնիսկ շի իմացել, թե Հայաստանը (Արմենիան) տարածվում է նաև այդ հողերում (՝, — Լ. Շ.): Դրանց մասին նա տեղեկացել է միայն (՝, — Լ. Շ.) պարսկական պաշտոնական վավերագրերից, այն էլ՝ արամեերենից արված հունարեն թարգմանություններից, որտեղ Հայաստանը (Արմենիան) հնացած ձեռվել է Ուրարտու (ոչ, պարսկական տարբերակում հենց Արմնիա է, — Լ. Շ.): Այնպես է պատահել, որ նա Արևելյան Հայաստանը (Հյուսիսային, — Լ. Շ.) բնակեցրել է ալարողներով (ուրարտացիներով), մինչդեռ այնտեղ հայերն են ապրել, ինչպես այն բխում է Բեհիսթունյան արձանագրության մեջ այդ տարածքը Արմենա անվանելու փաստից (ուրեմն՝ Հերոդոտը Արմենա կհասկանար, կամ էլ դրա

Համարժեք բրեհից՝ Արարատ, և ոչ անպայման Ուրարտու, — լ. Շ.): Ուրարտացիներն այդ ժամանակ այլևս գոյություն չունեին (ունեին, — լ. Շ.), նրանք հայացել էին (միշտ էլ հայ էին, — լ. Շ.)» (տե՛ս նոյն տեղում, էջ 574—578):

Միշամտելով հարդարժան ակաղեմիկոսի գրածին, մեր նպատակն էր հնթաց տեսանելի դարձնել նրա շարադրանքի առարկելիներն ու հակասությունները, հորդաբուխ երեակայությունն ու ժլատ փաստարկումները և այն, որ առաջաղրված հարցի բացատրությունը մի անհաջող փորձ է միայն՝ անհաջող և անհամոզիլ, քանզի «հիմքերն» են խախուս և անհամոզիլ: Օրինակ, «ալարողներ» ասելով նախապես ուրարտացի ոչ հայեր հասկանալ, նոր ապա՝ հայեր, երբ առաջին հերթին «Արարատ»-ն է երեսում և Ուրարտու կոչվածն էլ Արարատի արտասանաձեն է. կամ՝ Հերոդոտին բռնադատել, որ անպայման, ինչ էլ լինի-վլինի, ուրարտացիներին հիշատակող դառնա, ապա վեճ բացել, թե նրա ժամանակ արդեն հայեր էին, որ ալարողներ-ուրարտացիներն արդեն ձուլվել էին հայերին, երբ «խեղճ» Հերոդոտն ինքը ոչ «Ուրարտու» անուն է լսել և ոչ հիշել. կամ՝ Հերոդոտին վերագրել Հյուսիսային Հայաստանը (ըստ Գ. Սարգսյանի՝ Արեւելյան) վատ իմացողի կամ շիմացողի դեր և գոկել լոգոգրափոսներից և այլ աղբյուրներից իրազեկվելու հնարավորությունից և այլն, և այլն, մեղմ ասած, տարօրինակ են (դիտականի առումով), զուտ անկաշկանդ երեակայության արդյունք:

Այսուհանդերձ, սույն պահին էականը վիճելիները չեն, այլ այն, որ Գ. Սարգսյանը առաջին անգամ, թեկուզ միայն «ալարողների» առումով, նկատել է Հերոդոտի հակասությունը (որ նա հայերի մի մասին հայեր է անվանել (արմեններ), մեկ ուրիշ մասի՝ (ալարողներ) և բացատրելու փորձ է կատարել: Այս, այդ նկատելն ու բացատրելու փորձն է գնահատելին, որպես պատմագիտական շատ կարեռ նորույթ, որպես փաստի արձանագրում:

Մեր կարծիքով, հերոդոտյան տվյալ «հակասության» բանալին, այն էլ ոչ միայն «ալարողներ»-ի, այլև, ինչպես տեսանք, «Պակտյոփկե»-ի, արմենների «հարեաններ»-ի, «սասպեյրներ»-ի «մատիեններ»-ի առումներով, պետք է փնտրել ոչ թե «Հերոդոտի աղբյուրների տարբնույթ նկարագրի մեջ», այլ՝ Արմենիա— արմեններ անունների նախնական դորժածության աշխարհագրական ոլորտում:

Դաղտնիք չէ, որ Արմենիա-արմեններ անվանումները օտարների կողմից Հայաստանին և հայերին տրված անուններ են, թե ինչպես և Ե՞րբ են առաջացել դրանք, անդրադարձել ենք մեկ այլ առիթով (տե՛ս «Դիրքը դարերի խորֆից», Երևան, 1984), իսկ այժմ ուշադրություն հրավիրենք հետևյալին՝ Հայաստանի ո՞ր երկրամասի հայերն են առաջին անգամ այդպես կոչվել և ո՞ւմ կողմից:

Այս հարցերի պատասխանները, բարեբախտաբար, դժվարություն

ին հարուցում, եթե, իհարկե, չեն անտեսվում փաստերը, մասնավորապես՝ Մովսես Խորենացու համապատասխան հաղորդումները, և ձերբագտվում ենք զանազան անհիմն խճանք-«բացատրություններից»:

Խորենացու տեղեկություններից երեսում է, որ առաջին անգամ Արմենիա-արմեններ էին կոչվելու (նախապես՝ Արամանի (Հայքի)՝ Հայաստանի) հարավային, մասամբ էլ հարավ-արևելյան ու հարավ-արևմտյան կողմերի հայերն ու նրանց երկրամասերը, ապա նոր՝ դարերի ընթացքում աստիճանաբար դրանք ընդհանրական էին դառնալու միջնաշխարհի և մնացած բոլոր հայերի համար: Այլ կերպ ասած, առաջին հերթին այդպես էին կոչվելու հետագա Ծոփք, Աղձնիք, Կաղմեա Տուն (Կորդուք) նահանգներն ու նրանց հայ բնակիչները, որոնք անմիջական ահմանակցությամբ և Արամ նահապետի հաղթական արշավանքներով երելի դարձան արտաքին աշխարհին՝ մարերին, ասսուրներին և Փոքր Ասիայի բնակիչներին (տե՛ս Խորենացի, Ա, գլ. ԺԲ—ԺԴ): Նախապես կոչվելով՝ Արամանի=Արմանի (ասսուրական անվանաձևը), Թեգ-Արամա կամ Թոգ-Արամա (փոքրասիական), նաև Արիմոյի (հին հունական), այսինքն՝ Արամի մարդիկ, Արամի մարդկանց երկիր, կամ՝ Արամի ցեղ, տուն-տեղ, բնակավայր, որն էլ հետո՝ Արմնիա գրածեի սիալ ընկարումով դարձել է Արմենիա-արմեններ (ուշ հունական ձեւ, երեկի մ. թ. ա. VI դ. Վերջերից): Ի դեպ, շատ ուշագրավ է, որ Խորենացին հատուկ նշել է այս երկու տարրերակները՝ Արմէնիք-Արամանիք (այսպես ասած, սեմական ավանդույթ): Արմէն-Արմէնք (հունական ավանդույթ), ինչպիսի տարրերակներով մեզ կոչում է աշխարհը մինչև այսօր՝ Արմանի-էրմանի և Արմեն (Ա, գլ. ԺԲ, Վերջը):

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Խորենացու տեղեկություններով ենթադրվող հենց այդ երկրամասերն են համարված արմենների բնակավայրեր ըստ արտաքին աղբյուրների՝ սկսած մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջերից: Օրինակ, Սարգոն Ա ասսուրացու (թագավորած մ. թ. ա. մոտ 1980—1948 թթ.) հանրահայտ արձանագրության մեջ, ի թիվս 17 երկրների, հիշված է նաև Արմանի (=Արամանի) երկիր, որը տեղագրվում է Աղձնիքում, կամ՝ «ուրարտական» կոչված մի շարք արձանագրություններում հիշված է Արմե-Ուրմե երկիր, դարձյալ տեղագրվում է Աղձնիքում, կամ՝ հեթիթական արձանագրություններում՝ Թեգ-Արամա երկիր, տեղագրվում է Ծոփքին սահմանակից, Եփրատի ոլորտ, Մալաթիա (=Մելիտինե) քաղաքի շրջակալքում, և ահա Հերոդոտը, ըստ որի՝ արմենները տեղագրվում են Ծոփքում, Աղձնիքում, մասմար Կորդուքում:

Օրինաշափության հասնող այս իրողությունը մի կողմից, մյուս կողմից էլ այն, որ միենալու աղբյուրներում (նաև ուրիշներում) Արմենիա-արմեններ անուններին կամ նրանց նախաձեւերին գուգահեռ հիշված են նաև հայարանակ այլ երկրամասեր՝ բոլորովին այլ անուններով

(օրինակ, թեկուզ, հեթիթական արձանագրություններից հայտնի Հայաստան և Ազգին, Հերոդոտի՝ ալարոդները, սասպեյրները, Պակտյոփիկներն ու Փսենոֆոնի՝ կարդուխները, փասխանները, հեսպերիտները, տառիները, և այլն, և այլն), բացահայտ են դարձնում, որ Արմենիա, արմեններ աշունները տվյալ գործածություններում զուտ մասնակիացնող իմաստ ունեն և բնավ էլ էթնոտարբերություն չեն նշանակում, ինչպես սխալմամբ կարծում են և զանազան թյուրիմացությունների տեղիք տալիս: Այսինքն՝ նույն ժողովրդի տարբեր հատվածներին տարբեր անուններով, հիմնականում երկրամասերի անուններով կոչելու շատ սովորական մի երեվույթ, որը հատուկ չէ միայն հայերին, կամ էլ՝ հնագույն ու հին դարերին:

Այսպիսի օրինակները բազմաթիվ են, անգամ ընտրելու հնարավորություններն են համարյա անսահմանափակ, սակայն բերենք դրանցից երկուսը՝ երբ ընդհանրական անունը նաև մասնակիացնող է հանդեպ:

Հանրահայտ է, որ հույնները կամ հելլենները իրենց իսկ՝ հույն հեղինակների կողմից (ուրիշներից ևս) կոչվել են նաև աթենացիներ, աքայացիներ, բեովտացիներ, գորիացիներ, դելոսցիներ, դելփյաններ, էփնացիներ, թեսալացիներ, լակեդեմոնացիներ, լոկրիացիներ, կիպրացիներ, կորնթացիներ, հոնիացիներ, մակեդոնացիներ, միլետացիներ, միտիլենացիներ, սպարտացիներ, փոկեացիներ և այլն, և այլն, երբ հելլեն-հելլադացիներ անունը տրվում էր հիմնակնում բուն Հելլադայի բնակիչներին: Զի խանգարել նաև, որ սրանք ևս (հելլադացիները) զուգահեռ կոչվեն իրենց երկրամասերի անուններով:

Կամ՝ սլավոնները կոչվել են նաև պոլյաններ, կրիվիչներ, դրեյվաններ, ուկիչներ, տիվերցիներ, վյատիչներ, իլմենյաններ, սևերյաններ և այլն, իսկ ընդհանրացնող անունը պահպանվել է միայն սլավեններ և սլովակներ անուններում:

Ահա այս, կարելի է ասել, համաշխարհային սովորույթի համաձայն, որը առկա է նաև այսօր, պետք է ձերբազատել Հայաստանը բազմացեղայնության բարդույթից ու խճճանքներից՝ սոսկ մակերեսային տպավորությամբ ստեղծված: Սակայն հեռուն շգնանք: Սույն պահին արմենների հիշատակումը Հերոդոտի մոտ, ի թիվս նրա իսկ հիշած մյուս հայերի, պարտավոր ենք հասկանալ մասնակիացնող իմաստով, նրանց միջև շփնելով էթնոտարբերություններ: Այս իրողությունը, ինչպես տեսանք, ու միայն Հերոդոտի, այլև նախահերոդոտյան արտաքին, խիստ հավաստի աղբյուրների թելադրանքն է, քանզի նրանց վկայությունների հանրագումարը առավել հստակ է ուրվագծում նախահերոդոտյան Հայաստանի տարածքն ու սահմանները, ինչպես նաև՝ էթնոպատկանելությունը (=հայաբնակությունը) և ավելի է պարտավորեցնում այդպես մտածելու:

Ինչ վերաբերում է Հայաստանի մասին հերոդոտյան տեղեկությունների այս քննությանը (գուցե փոքր-ինչ էլ շեղվելով բուն խնդրից), մեր նպատակն էր ցուց տալ, որ նրան նախորդած արտաքին աղբյուրների միջև էական տարբերություններ չկան, որ էական տարբերություններ չկան նաև նրանց ու հայ պատմիչների միջև և այս բոլորը միասին ավելի ու ավելի են խարիսլում «Ուրարտու» կոչվածի «ոչ հայկանության» տեսությունը, խարիսլում ոչ միայն իրենց համատականության» տեսությունը, խարիսլում ոչ միայն իրենց համատարած լուսաբանմբ, այլև հակառակն ապացուցող անբեկանելի փաստերով:

ԳԼՈՒԽ Դ

ՀԱՅ-«ՈՒՐԱՐՏ» ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ուրարտերեն» կոչված լեզուն գիտությանը հայտնի է ընդամենը 110 տարի, այսինքն՝ 1880 թվականից, երբ Ստանիսլավ Գյույարը վերծանել սկսեց Հայաստանում հայտնաբերված սեպագրերը:

Այսօրվա դրությամբ հայտնի են «ուրարտական» կամ Վանի թագավորների շուրջ 500 արձանագրություններ, որոնք բոլորն ել գտնվել են պատմական Հայաստանի, այսինքն՝ Մեծ և Փոքր Հայքերի տարածքում, մասնավորապես՝ Վան քաղաքում և Վանա լճի շրջակայքում:

Այս արձանագրություններից շատերը դեռևս իր ժամանակին (մ.թ. Վ դար) առաջին անգամ տեսել ու նկարագրել է Մովսես Խորենացին: Խոսելով Ասորեստանի թագուհի Շամիրամի՝ Հայաստանում կատարած գործունեության մասին (մ.թ. ա. ՀՀ դարի երկրորդ կես), նա գրում է. «Իսկ քարաժայոփի բոլոր երեսը հարթելով (խոսքը Վանի միջնաբերդի քարաժայոփի մասին է.— Լ. Շ.), ինչպես գրշով հարթում են մեղրամոմբ, վրան շատ գրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմացնում է: Եվ ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշխարհի շատ տեղերում արձաններ կանգնեցրեց և նույն գրերով իր մասին ինչ-որ հիշտակ հրամայեղ գրել, և շատ տեղերում նույն գրով սահմաններ էր հաստատում» (Ա, գլ. ԺԶ):

Շատ ավելի ուշ Վան քաղաքի և շրջակայքի 42 արձանագրություններ գտավ, պատմենահանեց ու նկարագրեց Ֆ. Ե. Շուլցը, երբ ֆրանսիական «Ասիփական ընկերության» կողմից 1827 թվականին այդ նպատակով գործություն Արևմտյան Հայաստան: Շուլցի ընդորինակած արձանագրությունները հրատարակվել են 1840 թվականին: Այնուհետև՝ հաջորդաբար հայտնաբերվել են (նաև պեղումների ընթացքում) նորանոր արձանագրություններ, կազմվել են բնագրերի նոր և առավել ընդգրկուն ժողովածուներ, Այսպիսի ընդգրկուն ժողովածուներից են անգլիացի գիտնական Ա. Սեյսի հրատարակությունը «Բիթաւանական Ասիփական ընկերություն» հանդեսի էջերում՝ սկսած 1882 թվականից, Հ. Սանդալյանի ժողովածուն՝ հրատարակված 1910 թ., Վիեննայում («Les

inscriptions cuneras formes urartiques» վերնագրով), Բ. Նիկոլսկու մասնակի ժողովածուն (1896-ին), ուր ամփոփված են Անդրկովկասում մինչ այդ հայտնաբերված արձանագրությունները, վերջապես, Գ. Մելիքիշվիլի 1960 թ. հրատարակած ժողովածուն՝ «Ուրարտական կլինոօբրազներում» խորագրով:

Հայաստանում հայտնաբերված շուրջ 500 սեպագիր արձանագրությունները տարրեր են ըստ ծավալների: Ամենաընդարձակը բաղկացած է շուրջ 400 տողից, որը Արգիշտի Ա-ի թողած, այսպես կոչված, Խոռիսույան տարեգրությունն է՝ Վան քաղաքի միջնաբերդի ժայռակոփ պատերին, իսկ ամենահամառոտները բաղկացած են ընդամենը 2—3 բառերից: Մավալյախն առումով ևս ոչ բոլոր արձանագրություններն ունեն հավասարաշափ արժեք:

Ուրարտական կոչված արձանագրությունների վերծանումներով գրադիւ են դեռևս անցյալ դարի 70-ական թվականներից: Եղել է վերծանման երեք փորձ:

Արևելագետ դոկտոր Մորդմանը, ապա նաև Հ. Սանդալյանը փորձել են այդ արձանագրությունները վերծանել հին հայերենի (գրաբարի) օգնությամբ և ընթերցել են հայերեն: Ցավոք, նրանց վերծանման փորձը և ընթերցումը համարվեցին ոչ գիտական, արհամարհվեցին ու տըրքիցին մոռացման: Մերժողական վերաբերմունքի հիմնական պատճառն այն էր, որ Մորդմանն ու Սանդալյանը, ի թիվս շատ արձանագրությունների, հայերեն էին ընթերցել նաև Հայաստանում հայտնաբերված ասուլիքերն գրված մեկ-երկու արձանագրություն:

Ֆրանսուա Լենորմանը, իսկ հետագայում Նիկողայոս Մաոր առաջարկում էին և փորձում ուրարտական կոչված արձանագրությունները վերծանել վրացերենի միջոցով, որը ևս ոչ միայն շոշափելի արդյունքներ լրերեց, այլև ավելի անհավանական երևաց, քան հայերենով վերծանելու փորձը:

Վերծանման մյուս փորձի հիմնադիրը դարձավ ֆրանսիացի ասսուրագետ Ստանիսլավ Գյույարը՝ 1880 թ.: Վերծանման համար, կամ որպես վերծանման բանալի Գյույարը օգտագործել է ուրարտական կոչված արձանագրությունների, այսպես ասած, «անեծքի բանաձեռ», կամ «անեծքի գորմուլան»: Ավելի ճիշտ, այդ բանաձեռում հանդիպող որոշ բառերի կրկնություններ և բայական վերջավորությունների ընդհանրություններ, ինչպիսի կրկնություններ ու ձեռք կային նաև արդեն վերծանված աստրաբար արձանագրությունների ռանեծքի բանաձեռում: Եվ այսպես, համարդումների ու համեմատությունների միջոցով, ասսուրերնի օգնությամբ, Գյույարին հաջողվում է հասկանալ ուրարտական կոչված արձանագրությունների «անեծքի բանաձեռ», ընդհանրապես, առանձին բառերի իմաստը՝ մասնավորապես: Դա էլ, այսպես ասած, դուռ էր բացում դեպի ուրարտական կոչված անծանոթ լեզվի հնչյունական համա-

կարգը, հետեւյալ անցումներով՝ ասսուրական հնչյունական համակարգի դեպքի ուրարտական կոչված լեզվի բառիմաստների հայտնաբերում, իսկ ուրարտական կոչված բառերից էլ դեպքի նույն լեզվի հնչյունական համակարգը:

Վերծանման այս փորձը շուտով ընդունելի համարվեց, մասնավորապես՝ անգիտացի դիտնական Ա. Սեյսի ջանքերով: Օգտվելով Գյուղարի առաջին քայլերից, Սեյսը վեր հանեց ուրարտական կոչված արձանագրությունների համարյա ամբողջ բառապաշարը, նշեց այդ «լեզվի» քերականական ձևերը, նույնիսկ տվեց ուրարտական կոչված լեզվի քառականության ուրվագիծը:

Հաջորդ ուսումնասիրողները՝ Յ. Ֆրիդրիխ, Ա. Գյուտցե, Գ. Ղափանցյան, Բ. Պիոտրովսկի, Ի. Դյակոնով, Գ. Մելիքիշվիլի, Գ. Զահուկյան և ուրիշներ վերծանումը ավարտուն համարելով ու վերջնական, հիմնական ուշադրությունը դարձրել են ուրարտերեն կոչված լեզվի բառապաշարին, քերականական ձևերին ու օրենքներին, դրանց բացահայտմանն ու բացատրությանը, այլ լեզուների հետ նրա ունեցած աղերսներին կամ ազգակցությանը, անվանաբանության, տեղագրության, դրանց ճշգրտումների և համանման հարցերի վրա:

Ահա այս վերծանման և դրան հետևող ուրարտագետների ջանքերով (նկատի ունենք մեր դարի բոլոր ուրարտագետներին) ստեղծվել են մի շարք պատկերացումներ, այնպես որ կարող է նույնիսկ զարմանալի երեալ հակառակն ասված ամեն մի խոսք, անգամ հիմնավոր խոսքը: Առաջին հերթին նկատի ունենք այն, որ Վանի թագավորների արձանագրությունների լեզուն համարվում է ոչ հայերեն, առանձին, ուրուն լեզու, որ այն, իբր, ծագումնաբանական ազգակցական կապ ունի միայն խորրիներնի հետ: Սա է փաստորեն մեզ հետաքրքրող հարցերի հարցը, ուստի և խոսենք փոքր-ինչ հանգամանորեն՝ սկսելով, այսպես ասած, խորրի-ուրարտա լեզվական կապից:

Ինչպես տեսանք, խորրիների և Ուրարտու կոչված երկրի բնակիների միջև ազգակցական որևէ կապ չի եղել, որ եղել են սոսկ թեթևակի առնչություններ, այն էլ սահմանափակ տարածքում և կարճ ժամանակով: Բավական է ասել, որ խորրիները ոչ մի աղբյուրով և ոչ մի արձանագրությամբ Հայաստանի բնակիչ չեն համարված: Ոչ էլ մշակութային արժեքների նմանություն կա նրանց միջև: Նրանց լեզվական ազգակցությունը ևս չի ապացուցված, ավելի ճիշտ, ապացուցելու համար համոզիչ փաստեր չկան: Բավական ենք համարում նորից բերել ականավոր լեզվարան Գ. Զահուկյանի եղրակացությունը խորրի-ուրարտ լեզվական կապի և ազգակցության մասին: «Ներկայումս, — գրում է նա, — մի շարք դիտնականների ջանքերով (Յ. Ֆրիդրիխի, Ֆ. Բորբի, Ա. Գյուտցեի, Գ. Ղափանցյանի, Գ. Մելիքիշվիլու, Ի. Դյակոնովի և ուրիշների) հաստատված է (համարվում, — և Շ.) խորրիտական և ուրարտական լե-

զունիերի ազգակցությունը: Այդ լեզվաբնուանիքը անվանում են խորրի-տուրարտական կամ ալարողյան, Ի. Մ. Դյակոնովի կողմից փորձ է արվել գրելու այդ ընտանիքի համեմատական քերականությունը, և նույնիսկ վերականգնելու խորրի-ուրարտական նախալեզվի սկզբնական տեսքը: Սակայն, ցավոք, (նրա) մի շարք դատողություններ խոսում են այդ փորձի վաղաժամության մասին՝ շատ եղրակացություններ հենքում են սոսկ եղակի օրինակների վրա, մեծ տարբերություններ կան այդ փունիքի հնչյունաբանական կառուցվածքում, չեն սահմանազատված փոխառությունները բուն բառապաշարից, բացատրվող (համեմատվող) բառերի ընդհանուր մասը չի ներշնչում (=չի համոզում), չկա համապատասխանություն թվականների հարցում և այլն: Այս բոլոր հարցերի լուծումը ապագայի գործ է» (տե՛ս «Վզամոօտնոշունեցումներ» (1967), էջ 13):

Հստ ամենայնի ճշմարիտ է հարգարժան լեզվաբանը, նույնիսկ՝ թիվն է նշել: Ավելի քան 50-ամյա խիստ զանադիր պրատումներից ու համեմատություններից հետո, իրոք, այդպիսին է խորրի-ուրարտ, այսպես ասած, «լեզվական կապը», որը բնավ էլ արյունակից կամ ազգակցություններից լեզուն համարվում է ոչ հայերեն, առանձին, ուրուն լեզու, որ այն, իբր, ծագումնաբանական ազգակցական կապ ունի միայն խորրիներնի հետ: Սա է փաստորեն մեզ հետաքրքրող հարցերի հարցը, ուստի և խոսենք փոքր-ինչ հանգամանորեն՝ սկսելով, այսպես ասած, խորրի-ուրարտա լեզվական կապից:

Համոզված ենք այս բանում ոչ միայն այն պատճառով, որ շատ ականավոր լեզվաբանների ավելի քան 50-ամյա զանադիր պրատումները հիմնավոր ու համոզիչ արդյունքի չեն հասցրել (ապացուց՝ Գ. Զահուկյանի եղրակացությունները): ոչ էլ այն պատճառով, որ բազում փաստեր տարբեր ուղիներով հաստատում են Հայք-Հայաստանի հայանական լինելը նաև հիշյալ դարերում, այլև այն պատճառով, որ «ուրարտա անոնով ժողովուրդ և, հետեւաբար, «ուրարտերեն» կոչված լեզու գոյություն չի ունեցել: Փանիցս ասել ու նշել ենք, որ այդ բանը հաստատող ոչ մի հատիկ փաստ չկա, այսինքն՝ չի հաստատվում աղբյուրագիտորեն: Ընդհակառակը, աղբյուրների բոլոր տվյալները դրա դեմ են:

Ինչ վերաբերում է ուրարտական կոչված արձանագրությունների արդի վերծանված լեզվին կամ, ավելի ճիշտ, վերծանված համարվող լեզվին, այլ բան չէ, քան ոչ բավարար վերծանումով ստացված պատրանք-թյուրիմացություն, որը նման չէ մեռած ու կենդանի լեզուներից որևէ մեկին: Նման լինել չէր էլ կարող, քանի որ այն տարբեր լեզուների ասսուրերենի, խեթերենի, խորրիների, հայերենի և այլնի տարբերով կառուցված, այն էլ՝ մեծամբ աղավաղյալ տարբերով կառուցված, շնորու լեզու է: Դրան է հանգեցրել Ս. Գյուլարի վերծանման բանակին ու վերծանումը: Ի դեպ, եթե նմանություն էլ կա, ապա՝ ավելի շատ հայերենի հետ, քան մեկ ուրիշ լեզվի, չնայած դրանք էլ զուտ մոտավոր են՝ անվանաբանության մեջ, թե՛ բառապաշարում, թե՛ քերականա-

կան ձևերում: Եվ, առհասարակ, չի կարող լուրջ արժեք ունենալ և մոտավոր լինել գոյություն շունեցող լեզվի հետ ցանկացած համեմատություն: Պարզապես, համեմատելին պետք է համեմատվողն էլ ունենա:

Այս ամենի հիմքերի հիմքն ու պատճառը Գյույարի վերծանման դեռևս պակասավոր բանալին է, որը դեռ չհիմնավորված, կամ՝ բավարար չափով չհիմնավորված, համակողմանի քննություն շրունած, հրաշագործ միջոցի ուժ է ստացել: Բավական է ասել, որ Գյույարը այդ բանալիով ուրարտական կոչված, այսինքն՝ Վանի թագավորների կողմից օգտագործված սեպագրերին ասսուրական հնչեղություն է տվել և, փատորեն, ասսուրական հնչուններով ուրարտերեն կոչված շինծու բառեր է ստացել: Ուղղակի նշենք, որ սա է սխալների սխալը և ուրարտագրության մյուս՝ ածանցյալ սխալների ակունքը: Դրա վրա են կառուցված ուրարտագիտության ավելի քան 100-ամյա ուսումնասիրությունները կամ տեսական հարցերը՝ ուրարտական կոչված բառերի ու անոնների համեմատություններ ու ստուգաբանություններ, քերականական ձևերի ուսումնասիրություններ, հայ-ուրարտական աղերսների քննություններ և այլն: Այսինչ, բազում լեզուների ու նրանց օգտագործած այբուբենների կամ գրանշանների օրինակներով կարելի է ցուց տալ որ ասսուրական այս կամ այն սեպանշանի արտասանությունը (պարտադիր չէ բոլորը) կարող էր այլ արտասանություն ունենալ մեկ ուրիշ լեզվում, տվյալ դեպքում՝ ուրարտերեն կոչված լեզվում, իսկ դրանով էլ պայմանավորված են վերծանվող լեզվի թե՛ բառաձեւերը, թե՛ բափմաստները, թե՛ քերականությունը, մի խոսքով՝ լեզուն ընդհանրապես: Այսպես որ, նույնիսկ մեկ կամ երկու սեպանշանի անձիշտ արտասանությունը կարող է ավերակիչ դեր ունենալ վերծանվող, այն էլ՝ անհայտ լեզվի համար, աղավաղյալ տեսքով ներկայացնել այդ ամբողջ լեզուն: Սա վերծանման և լեզվաճանաշողության ամենատարրական օրենքն է, որը, ցավոք, չի գնահատվել տվյալ դեպքում: Ավելի ճիշտ, ցուցաբերվել է անհարկի շտապողականություն՝ հիմնաբարեր դեռ շդրած զբաղվել են գեղազարդման երեսակայական աշխատանքներով: Բանն այնտեղ է հասել, որ այդ հիմնամիալի և շտապողականության պատճառով գիտությանը մինչև օրս անհայտ է ուրարտերեն կոչված լեզվի հնչունական համակարգը, ավելի ճիշտ, ինչպես են արտասանվել ուրարտական կոչված արձանագրությունների սեպանշանները տեղում: Օրինակ, մեր օրերի ամենահմուտ ուրարտագետներից մեկը՝ Գ. Մ. Մելիքիշվիլին, հետեւյալն է գրել այդ առթիվ: «Առայժմ (այսինքն՝ 1960 թ. գրությամբ-Լ. Շ.)... մենք ի վիճակի շենք պարզելու «ուրարտական» նշանների իսկական արտասանությունը և ստիպված ենք դրանց տալ նույն հնչունային նշանակությունները, որպիսիք նրանք ունեին ասսուրերենում»:

Այս, այստեղ ասված է ամբողջ ճշմարտությունը, Այստեղից է հարց է առաջանում, եթե դեռևս պարզ չէ «ուրարտական» կոչված, կամ

չանի թագավորների օգտագործած սեպանշանների իսկական արտասանությունը, ել ի՞նչ հեմքերով, կամ ի՞նչ իրավունքով է ասվում ու ասվում, թե գիտենք նույն նշաններով գրված արձանագրությունների իսկական լեզուն, կամ՝ ել ի՞նչ հիմքերով և ի՞նչ իրավունքով է ասվում, թե դա հայերենը չէ, և դրան լուրջ փաստի արժեք է տրվում բանավեճերի ժամանակ, թե, տեսե՛ք, արձանագրությունների լեզուն հայերենը չէ, հետեւաբար դրանց գրողներն ու կարդացողները հայեր չեն, այլ՝ «ուրարտներ», թե մ. թ. ա. IX—VII դարերում Հայաստանի բնիկները հայեր չեն եղել, այլ՝ «ուրարտներ» և այլն, և այլն:

Հարկ է խոստովանել, որ այս հարցում անելիքները դեռ շատ են: Պարզապես անհրաժեշտ է դիմել վերծանման նոր փորձի, այսինքն՝ համակողմանիորեն ու հիմնավորապես պատասխանել այն անպատասխան մասցած հարցին, թե այստեղ՝ Ուրարտու կոչված երկրում, կամ՝ Վանի թագավորությունում ինչպես են արտասանվել սեպանշանները, ավելի ճիշտ, որ սեպանշանը ի՞նչ նոր արտասանություն է ունեցել, կամ նոր արտասանություն ունեցե՞լ է, թե՝ չի ունեցել: Քանի դեռ չի գտնվել այս հիմնահարցի հիմնավոր ու հանգամանալի պատասխանը, անհնար է խուսափել պատահականություններից ու սխալներից, ինչպիսի վիճակի հետ, փաստորեն, եղած վերծանումով ամեն քայլափոխի առնչվում ենք: Այսուհետեւ, թող այն պատկարեցումը շտացվի, որ ուրարտագրությունը անցած ավելի քան 100 տարում նվաճումներ չի ունեցել: Ընդհակառակը, նվաճումները ևս ակնհայտ են, և կարևոր ենք համարում նշել մի քանիսը:

Առաջին, Վանի թագավորների թողած արձանագրությունների հայտնաբերումը, նկարագրումը և հրատարակումը, Այս գործը սկսվել է 1827 թվականից և շարունակվում է:

Երկրորդ, այն բանի վերջնական ապացուցումը, որ Վանի թագավորների թողած արձանագրությունների լեզուն ասսուրերենը չէ, բայց այսպիս Սարգուր Ա.-ի ասսուրերեն գրած 10-ը արձանագրություններից և երկլեզվյան երկու արձանագրություններ՝ Իշպուխի թողած Քելիշնի և Մուսա Ա.-ի թողած Թոփուզավայի քարակոթողները:

Ասում ենք՝ «Կերչնական ապացուցում», քանի որ ուրարտական կոչված արձանագրությունների նշանները կարդացվել են ասսուրական արտասանաձեւով, սակայն արդյունքում ասսուրերեն լեզու չի ստացվել:

Երրորդ, ասսուրերենի, ինեթերենի և այլ լեզուների օգնությամբ հաջողվել է առանձնացնել ուրարտական կոչված արձանագրությունների գաղափարագիր նշանները, օրինակ՝ աստված, թագավոր, երկիր, քաղաքաբարեցի և այլ գաղափար արտահայտող նշաններ, որոնք բավականալավ, բերդ և այլ գաղափար արտահայտող նշանների բովանդակությունները հասկանալուն: Իրավ է, այդ նշանները գիտության մեջ ընկալվում են ասսու-

բերեն կամ խեթերեն, կամ խուրրիերեն, ապա՝ թարգմանվում, սակայն կարևոր դրանց ճանաչումն ու առանձնացնելն է, որը, ինչ խոսք, վերծանվող լեզվի համար մեծ ներդրում է:

Չորրորդ, ըստ եղած վերծանման, ուրարտական կոչված արձանագրություններից հայտնի են դարձել բազում տեղանուններ (դրանք երկրների, քաղաքների, այլ բնակավայրերի անվանումներ են (տես **Ա. Արյունյան**, Տոպոհիմիկա, Սրբության 1985), որոնցից շատ շատերը տեղագրորեն և անվանապես նույնանում են հայկական տեղանունների հետ և դարձալ նպաստում արձանագրությունների բովանդակությունները հասկանալուն: Այսուհանդերձ, ենելով վերծանման արմատական սխալից, մտածելի է, որ արձանագրությունների բազում այդ անվանումները (բոլոր) դեռ ճշգրտման կարիք ունեն, որ դրանք աղավաղված են ասուրական արտասանաձևերով: Օրինակ, ասենք, ոչ թե Աբիլիանի կամ Աբիլիանիեխի, այլ՝ ուղղակի Աբեղեանք, ոչ թե Ազա երկիր, այլ՝ Արա երկիր (=Արայի երկիր—Այրարատ), ոչ թե Ալզի, այլ՝ Աղզի (=Աղձնիք), ոչ թե Ալիա, այլ՝ Աղի (=Աղիովիտ), ոչ թե Ծովուկու, այլ՝ Ծովուկ (=Ծղուկ), ոչ թե Ախուրիանի, այլ՝ Ախուրյան, ոչ թե Բարիլոնի այլ՝ Բարելոն, ոչ թե Գիանիանի, այլ՝ Գանի, ոչ թե Դայաենի, այլ՝ Տայֆ և այլն:

Եվ այսպես, կարելի է օրինակների թիվը կրկնապատկել ու տասնապատկել: Ինչպես տեսնում ենք, սոսկ չնշին շտկումներ են պետք, որ արձանագրությունների անվանումները հայեցի հնչեն: Իսկ դա նշանակում է, որ վիճարկվող վերծանումը այնքան էլ մերժելի չէ, որ այդ վերծանումով քիչ սեպանշաններ են անճիշտ արտասանվում, այսինքն՝ ոչ տեղաբնիկների արտասանությամբ: Ահա, այդ քիլն էլ (առայժմ դժվար է ասել քանիսը) պետք է ճշգրտվի նոր վերծանումով կամ լրացյալ վերծանումով: Ի դեպ, նույնացող տեղանունները անփոխարինելի միջոց են նոր վերծանման համար: Այս իսկ առողմով առանձին մասնագետների կարծիքը, թե՝ «Ուրարտու անունից հրաժարվելու դեպքում պետք է հրաժարվենք հայկական տեղագրության... մեզ հաստատուն տեղ գրաված անուններից» (Գ. Տիրացյան, ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 196), խիստ ապակողմնորոշող մտավախություն է, զգացմունքների վրա ազդելու թույլ միջոց, որովհետև ոչ թե հրաժարում, այլ առավել հիմնավոր և ճշգրտված ընդունում է առաջարկվում: Եվ առանարակ ճիշտ չէ մտավախությունը հակադրել փաստերին, սարսափել նախապաշտումների (դոգմաների) կրոստից:

Հինգերորդ, ուրարտագիտության մեծագույն նվաճումներից է նաև այն բանի իմացությունը, թեպետ առայժմ անտեսված, որ «ուրարտական» կոչված արձանագրություններում չի հիշատակված հայաստանյան ոչ մի ցեղանուն, ուրեմն՝ Հայաստանում ապրող ոչ մի ցեղ կամ ցեղամիություն ըստ այդ արձանագրությունների նշել հնարավոր լի: Ավելին, կարծեք թե հատուկ նպատակով (երկիր ապագա սերումդներին

սիալից զերծ պահելու համար) արձանագրող վարպետները շփոթմունքի որևէ տեղ չեն թողել: Այն է՝ երկրանունները պարտադիր իրենց գաղափարագիր նշանը ունեն, ցեղանունները կամ էթնոանուններ՝ իրենց և, առաջասատանյան անվանումներում ամենուր երկիր նշող գաղափարագիրն է դրված: Իսկ այն բանը, որ առանձին ուսումնախրողներ այս ակնբախ փաստը դեն դրած (նաև ուրիշ փաստեր) և համառորեն որոր երկրանունները նաև ցեղանուն են հասկանում (տես՝ թեկուզ «Հայ տողվորի պատմության քրեստոմատիան», Երևան, 1981), բացառապես հիմնավորէ է, քմահաճ և կապ շունի ո՛չ ճշմարիտ գիտության, ո՛չ էլ գիտականության հետ:

Վեցերորդ, պակաս նվաճում չէ նաև, որ վիճարկվող վերծանման շնորհիվ համարյա հստակ ու հիմնավոր գիտենք արձանագրություններում նշանակած թվականների նշանները (նկատի ունենք թվականները): Այս սեպանշաններում նույնիսկ շատ հստակ ու որոշակի օրինաշափություն է նկատվում:

Յոթերորդ, Վանի թագավորների արձանագրություններում, ըստ եղած վերծանման, ընթերցված են հարյուրից ավելի բառեր, որոնք և՛ իմաստով, և՛ արտասանաձևերով նույնանում են հայերենում գործածվող բառերի հետ: Ներկայացնենք հետեւյալ աղյուսակի տեսքով:

| Հայերեն | Հունարարենք | | |
|----------------------------------|-----------------------------|---|---|
| | 1 | 2 | 3 |
| Նմանություններ բառ Գ. Ղափանցյանի | | | |
| 1 abilid=ավիլի-միացնել, ավելաց- | — ավելի— հավելու | | |
| 2 baba=բարա— լեռ, սար | — բարա— բարուր | | |
| 3 ebanı=էվանի— երկիր | — վական— վակալ | | |
| 4 euri=էուրի— տեր | — տեր— տերու | | |
| 5 *hat=(hatubi)— կտրել, բաժանել | — վաղանի— վաղան | | |
| 6 hus=հոս— հոս— զցել | — հոս— հոս— զցել | | |
| 7 qı(u)ra=գիուրա— հող | — գիուրա— գիուր | | |
| 8 pahini=պահինի— արշառ, եղ, | — պահանի— պահանի | | |
| 9 pili=պիլի— շրանցք | — պիլի— պիլի | | |
| 10 Sani=սանի— աման | — սանի— սանի | | |
| 11 Serd=շերդ— բաժանել, առանձ- | — շերդ— շերդ | | |
| 12 uiri=գիրի— պարարտ | — գիրի— գիրու | | |
| 13 uiri=գուրիի— պարարտ | — գուրիի— գուրիի | | |
| 14 ul=ուլ— զնալ, ուղուրվել | — ուլ— ուլ— զնալ, ուղուրվել | | |

* Այսուել և այսուհետև տեխնիկական պատճառներով տարբերի նշանները շենքում: Խմբ.:

| 1 | 2 | 3 |
|--|--|---|
| 15 ulh=ուղիս— ոռոգել, հոսեցնել | — ուղիս— ոռոգել, հոսեցնել | |
| 16 uduli=ուղուի— խաղող, խաղողի այլի | — տոլի (տոլիի) — վայրի խաղող, խա- ղողի որթ | |
| 17 sue=ծուե— ծով, լիճ | — ծով | |
| 18 sisuli=ծիսուի— ծես, արարո- ղոթյուն | — ծես— ծիսակատարություն, արարո- ղոթյուն | |
| 19 urh=սրպ=ուրփ— ուրփու— զոհել | — որ(ո)փել— որփել— որեէ հեղուկ գդալով կամ բաժակով լցնել ու թա- փել նույն ամանի մեջ | |
| 20 uruli=ուրուի— չոփի (*) | — ուրուուրուական— տեսիլք, ցնորք | |
| 21 ueli=գուեղի— զորագոնդ, ժո- ղով, հավաք, զոկատ, աշխարհազոր | — գեղ— գեղուղի | |
| 22 inukani=ինուկանի— նույն այդ | — ինքն— ինքեան | |
| 23 istini=իստինի— այստեղ | — աստին— այստեղոց | |
| 24 edini=էդինի— այնտեղց | — անդէն— այնտեղոց | |
| 25 edia=էդիա— էդիանի | — էնտի— այնտեղ | |
| 26 edini=էդինի— հնուկից եկող, | — ետինք— ետ մնացող, հնուկից եկող | |
| 27 mese=մեսե— տուրք | — մեսիմ— նվիրել | |
| 28 sutug=շոտուգ— ավերել, պոկել, շորթել, հեռացնել | — շոտուգնի— խառնել, բաժանել, քանդել | |
| 29 armuzi=արմուզի— սերունդ, ըն- տանիք | — արմ— զարմ— արմատ-սերունդ, ցեղ | |
| 30 seri-ser=սերի-սեր— առանձին, բարձր | — սար— բարձունք, նաև սարակ— զա- գաթ | |
| 31 ulquse=ուլգուսե— առողջություն | — ողջ— ողջություն | |
| 32 iph=իպի— զարդել, փշել | — փխուր— փշոր | |
| 33 kapi=կապի— շափի միավոր, ինչ-որ շափ | — կապիճ— մի շափ | |
| 34 kapi=կապի— կապ | — կապ— կապոց, նաև որպես շափի միավոր | |
| 35 patari=պատարի— քաղաք | — պատ— պատել-պատնեշել | |

Նույնություններ բառ Հր. Անտոյանի
(տե՛ս Գ. Բ. Զահուկյան, ՀՀՊ, էջ 429)

| | |
|--|------------------------------|
| 36 abilidu=ավիլիդու— աւելի, յաւելու (կրկնվեց) | — աւելի, յաւելու |
| 37 atu=ատու— տաել | — ուտել |
| 38 agu=տանել, ածել | — ած— ած+եմ |
| 39 arpiuse=առնիուս— արարք, առ- նել | — առնել— տիրել, անել, շինել |
| 40 arpiuse= մեծագործություն, հե- րոսություն | — առնել— գրավել |
| 41 aliki=ալիկի— այլ որ | — այլ որ |
| 42 harhartsu=խարխարշու— քանդել, կործանել | — խարխարել— քանդել, կործանել |
| 43 iese=ինսե— ես | — ես |
| 44 giura=գիուրա— երկիր, գավառ | — գավառ, երկիր |
| 45 paru=պարու | — բռնել |
| 46 susi=սուսի | — պարիսապ (*) |
| 47 susi=սուսի— սոսի տաճար | — սոսի— պաշտամունքի ծառ |
| 48 sia=շիա— շուել | — շուել— շվել |
| 49 teru=տերու— դիր | — դիր |
| 50 uli=ուլի— այլ | — այլ |
| 51 ulise=ուլիսե— ուրփ2 | — ուրփ2 |
| 52 ui=ուի— ու | — ու |

| 1 | 2 | 3 |
|---|--|---|
| Այլ նույնություններ Գ. Զահուկյանի նշած «Ուրարտական» բաների նման վրա* (տե՛ս «Եվզամօօտնոշություն») | Երևան, 1967, էջ 18—53) | |
| 53 bause=բառուշե— խոսք, հրաման, իր, առարկա, բան | — բան— խոսք- ասելիթ, իր, առարկա, նաև՝ բան-բաս-ել | |
| 54 gie=գիե— գինու մառան | — վիճ— խոր փառ, անդամնդ | |
| 55 andani=անդանի— դաշտ, մարզ | — հանդ— անդասան, դաշտ մա | |
| 56 uedianiqbənəñi=կին | — գեղանի- հիմն. գեղանի կին | |
| 57 makuri=մակուրի— գթասիրի | — մաքուր, նաև՝ ազնիվ, անշահ | |
| 58 tase=տասե— ընծա, նվեր | — տորբ— տրվելիթ, տալիթ, հարկ | |
| 59 edi=էդի— տալ, հանձնել | — ետ-ետու— տվեց, տվեցի | |
| 60 kuri=կուռի— ոռաք | — կոռու— ձեռոք | |
| 61 zalu=սալու— փայտար առարկա | — սալա-սլա— փայտար ճյուղերից գոր- ծած իր | |
| 62 zilibie=ցիլիվիե— ցեղ, ընտանիք | — ցեղ— սերնդակից, ցեղակից, արյու- նակից | |
| 63 zarie=ծառիե— պատառու ալիք | — ծառ— պատառու ալիք | |
| 64 badusie=բադուշիե— վեճ, վասմ, | — վասահեն, մեծաբարն ևն | |
| 65 kut=kutia=կոտիա— կոտիա- | — շարժիլ, հասնել, տեղաշարժել | |
| 66 aptini=ափահնի— կողմ | — արժուածել, հասրել, | |
| 67 iphu=իպիս— ջարդել, կոտրել, փշորել | — իպիս— ջարդել, կոտրել, փշորել | |
| 68 tegu=տեգու— տապալել, գլորել, հաղթել, զախշախել, նվաճել ևն | — տեգու— տապալել, գլորել, հաղթել, զախշախել, նվաճել ևն | |
| 69 tamh=տամի— հեռացնել, հեռու- տանել, մեկուսացնել | — տամի— տամի— հեռացնել | |
| 70 tur=տու— փշորել, ոչնչացնել | — տու— տուր ու դրոց, խիել, հար- վածել | |
| 71 taragie=targini=tardini=ուժեղ, հզոր, մեծագոր | — տեր— իշխող, հզոր, մեծազոր | |
| 72 taramani=տարամանի— ինչ որ կառուցի անվանում | — դարան— թակարդ, փառագ | |
| 73 gab-gar, gab-gas=տիրել, գրա- վել, զավել | — կապկապել | |
| 74 gargarani=ցառագունի— զրահ, պաշտամանական միջոց | — կանկառակառ— ամրակառուցի, անափիկ բերդ, ամրոց («պահէր ի կառկառի») | |
| 75 garbie=գարբիե— ծայր | — գերբ=քարպափ, քարփ, ծայր | |
| 76 has=հաշ—լսել | — հուշ— հուշել=լսեցնել | |
| 77 hubi=հովի— հովիտ, տարածք | — հովիտ— հարթավայր, գետի հօվիտ | |
| 78 asuni=աշոնի— տոն | — աշոն— տարվա եղանակ, երբ բերել տոնը | |
| 79 atgana=ատգանա— զոհարերամ, զոհաբերել | — հաշտ— աշտ—աշտանել=զոհաբերել, նվիրել | |
| 80 artu=առտու— նրանք տվեցին | — առու+տուր=առևառուր | |
| 81 garini=զառինի— բերդ | — Գառնի— նաև բերդ, ամրոց | |
| 82 usgi=ուզիի— ուժ | — ուժ— ուժգին | |
| 83 kurunie=կուռունիե— հզոր, ամ- րակուռ, բարձր | — կուռ=ամրակուռ, կուռ— կուռիլ ամ- րակուռ | |
| 84 sukuri=շուկուրի— կուռամ, նվի- րուս | — շուք=փառք՝ նվիրումի համար | |
| 85 tek-teku=թեկ-թեկու— գետի տապալել, գլորել, հաղթել | — թեկ-թեքել— խոնարհեցնել, ենթարկել, հաղթել | |

* Հայերեն համարժեքները հիմնականում նշվում են մեր կողմից:

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 86 sali=շալի— ատրի | — շար և սու— տոմարական ինչ-որ միավորներ | — տե-տի=տեսի— մեծ (շատ*) |
| 87 seri=շրի— առանձնաբար, հա- տուկ | — նէր— զգացմոնքի հատուկ նվիրում | — տւլու=ուղտ |
| 88 suri=sur(g)ie (ni)=զենք, սուր | — սուր— զենքի աեսակ, զենք, սուր բան են | 125 հարարի=խառարի— խաղաղություն, բարօրություն |
| 89 sudug=սուդուգ-շուդուգ— պոկել, հեռացնել, մի կողմ քաշել | — շառուկ— պանրի ստացումից հեռ մնացած, հեռացվող, թափկող հեղուկը | 126 quidi(ni)=քուդինի— խոպան (*), անպտուղ (*) |
| 90 arse=արշե— երթասարդ | — այրո— տղամարդ | 127 կա=կա— կանգել, հայտնիկել |
| 91 ereili=երելի— թագավոր | — երեւելի=նաև թագավոր | 128 tar(a)maqa=տառամանա— ինչ- որ կառուց |
| 92 lakud=լակուդ— վնասել (*) | — լքել=հեռանալ | 129 pulsuk=քուդուշի— կոթող, ար- ձանագրություն |
| 93 me=մե— իմ, ինձ | — իմ, ինձ | 130 pitulie=պիտուլի— ջարդի, |
| 94 muri=մորի— գաղտնի պահեստ | — ամուր— ամրոց | — պտիլ— վլանալ, ավեռվել (բրբո- վան, ելաթ) |
| 95 an=ան— ժխտական նախածանց | — ան— ժխտական նախածանց | 131 aniar-duni=անհարդունի— անկախ |
| 96 an+iarduni=անհարդունի— ան- կախ | — անարդյանք | 132 zil(i)bi(e)=ցիզիվի— ընտանիք |
| 97 uanise=գանիշե— հաղթանակ | — գանել— վանել=հաղթել, վասրել | |
| 98 ushanu=ուշանու— շնորհել, պարգևել, նվեր առել, նեն | — իշխան=նաև նվեր ավող | |
| 99 uelisini=գեղիշնի— ժազովուրդ | — գյուղ— շեն=համայնքի բնակավայր | 1 Airaini |
| | — գեղ-յուղ— համայնքի բնակավայր | 2 Arsibedini |
| 100 ueli=գեղի— հավաք (”), շոկատ | — ուղի=ուղի նշել | 3 Artu'arasi |
| 101 ulh=ուղի— հրամայել (*) | — հաւթի=փարթամ | 4 Astiuizi |
| 102 hulrishi=խորիշի— շրովի, շըր- արրի | — արշավ— արշավել, արշավեց | 5 Sinujardi |
| 103 ustabi=ուշտաճի— ելավ արշավի | — հուււ=հու անել, թշել հեռացնել | 6 Turani |
| 104 hu=խու— գրավել, ինել, առնել հեռացնել | — էնի=այն, նա | 7 Ziuquini |
| 105 ini=ինի— այդ, այս | — էսի=այս | |
| 106 isi=իսի— այն | — իր=յար | |
| 107 ie=իե— նրա | — աղէ=ասս, խոսիր («աղէ ինձ») | |
| 108 ale=աղե— խոսել | — տուր=խիթ, խիկել | Ամբ. Մրանց էլ գումարած ավելի քան 100 տեղանուններ և այլ անվանում-ներ, որոնք նույնանում են հայկական տեղանուններին, կամ էլ դարձյալ սմեն հայերեն բառեր, արմատներ (տե՛ս «Ուրարտու-Հայաստան», էջ 151-168, Ն. Վ. Հարությունյան, «Արքարատի տեղանուններ» (ռուսերեն), Երևան, 1985 և այլն: |
| 109 ture=տուրե— ունչացնել | — գուգան ետինք=կգան հետինները | |
| 110 ikukani edini=հետո կգան | — գուգան (բարբառ.)=կգան | |
| 111 ikukani=իկուկանի— կգան | — տուն=կառուց | |
| 112 tan=տան— անել, ստեղծել, կա- ռուցել | — զեղուհի— շքնաղ, գեղեցիկ | |
| 113 qazuli=գազուլի— շքնաղ, լավ | — շերմ— շերմություն— նաև մտերմու- թյուն, նվիրվածություն | |
| 114 qarmehi=շարմեխի— տոնակա- տարություն (*) | — արծիվ | |
| 115 arsibi=արծիվի— արծիվ | — բուրգ— ամրոց, բերդ (եղիպատակն բուրգեր) | |
| 116 burgana=բուրգանա— ամրոց, | | |
| բերգ | | |
| Այլ նույնուրյուններ բառ Գ. Զահուկյանի (բերվում են ընտրանքով՝ վերևում շրերքածները, անշատ մասնաւությունուն և անշատ մասնաւությունուն առաջաւագայության մեջ): | | |
| 117 ar=առ— տալ | — առնում, տռ | |
| 118 d=դ— անել | — դ-ն-եմ | |
| 119 man=ման— լինել | — մնամ | |
| 120 me(i)=մեի— մի | — մի | |
| 121 pari(e)— մինել | — առ=մստ, դեպի | |
| 122 par=պառ— քել, տանել | — հորդեմ— հանապարհ բանալ | |

| 1 | 2 | 3 |
|--|--|---|
| 123 te-ae=տեսի— մեծ (շատ*) | — տե-տի=մեծ (տի+եզերք, տի+կին, տի+ալր>տէր) | |
| 124 ultu=ուղտ | — տւլու | |
| 125 harari=խառարի— խաղաղություն, բարօրություն | 126 խաղաղություն, հոպան (*), անպտուղ (*) | — կորդ (կորթ՝ բրբո.)=խոպան, ան- մշակ |
| 126 quidi(ni)=քուդինի— խոպան (*), անպտուղ (*) | 127 կա=կա— կանգել, հայտնիկել | — կա=առ+կա, հարա+կա, մոտա +կա են) |
| 127 ka=կա— կանգել, հայտնիկել | 128 tar(a)maqa=տառամանա— ինչ- որ կառուց | — թարմա— թառմա (բրբո.) |
| 128 tar(a)maqa=տառամանա— ինչ- որ կառուց | 129 pulsuk=քուդուշի— կոթող, ար- ձանագրություն | — փող, դրամ (*) |
| 130 pitulie=պիտուլի— ջարդի, | — պտիլ— վլանալ, ավեռվել (բրբո- վան, ելաթ) | |
| 131 aniar-duni=անհարդունի— անկախ | | — անհար=հարդող, անշատ |
| 132 zil(i)bi(e)=ցիզիվի— ընտանիք | | — ցեղ=սերունդ, տոհմ, ընտանիք |

«Խարարական» դիցանուններում հայերեն բառեր, արմատներ

- 1 Airaini
2 Arsibedini
3 Artu'arasi
4 Astiuizi
5 Sinujardi
6 Turani
7 Ziuquini

Ծան. Մրանց էլ գումարած ավելի քան 100 տեղանուններ և այլ անվանումներ, որոնք նույնանում են հայկական տեղանուններին, կամ էլ դարձյալ սմեն հայերեն բառեր, արմատներ (տե՛ս «Ուրարտու-Հայաստան», էջ 151-168, Ն. Վ. Հարությունյան, «Արքարատի տեղանուններ» (ռուսերեն), Երևան, 1985 և այլն):

Ինչպես տեսնում ենք, գիտությանը իրենց իմաստներով առայժմ հայտնի «ուրարտական» կողմանը 200 կամ քիչ ավելի բառերից և արմատներից ավելի քան 130-ը թե՛ արտասանությամբ, թե՛ իմաստով նույնանում կամ նմանվում են հայերենի (հին լեզվի և բարբառների) բառերի և արմատների հետ, այսինքն՝ ավելի քան 65 %-ը: Իսկ սա նշանակում է, որ խոսք պետք է գնա այդ լեզվների ոչ թե ազգեցության կամ փոխազդեցության, այլ ազգակցության, նույնիսկ նույնության մասին:

Նկատենք նաև, որ բերված բառացանկը ոչ թե նվազելու, այլ ավելանալու միտում ունի, քանզի մինչև այսօր հայ-ուրարտա» լեզվահամեմատությամբ. Նվիրված թեկուղ մեկ ուսումնասիրություն, որը բոլոր բնագավառներում և ամփոփ տեսանելի դարձներ եղած իրավիճակը: Ի դեպ, դատելով ականավոր լեզվաբան Գ. Զահուկյանի վերջին ՅՈՒՄա հարակից ուսումնա-

սիրություններից և այլոց գործերից, այս բանը, կարծում ենք, կատարելի է և ցանկալի է, որ կատարվի:

Հայ-«ուրարտու» բառացանկի ավելանալու միտումը պայմանավորված է նաև այլ հանգամանքներով, որոնք առկա են և ընդունված ուրարտագիտության մեջ: Նախ այն, որ «ուրարտական» արձանագարություններից հայտնի ավելի քան 200 բառ էլ առ այսօր մնում են շրացատըրված՝ իմաստները հայտնի չեն: Կասկած չի հարուցում, որ այդ զանգվածից ևս կհայտնաբերվեն նույնություններ: Գի բացառվում նաև, որ հայերենը մեծապես կնպաստի դրանց իմաստների բացահայտմանը, մասնավորապես բարբառները: Երկրորդ, տեղանունների և այլ անվանումների զանգվածից կարելի է առանձնացնել բաղադրիչներ, որոնք և արտասանությամբ, և իմաստով նույնանում են հայերենի համապապատասխան բաղադրիչների հետ, ինչպիսիք են արդեն ընդունված «տուն», «հովիտ» («հիւի») և այլ բաղադրիչները: Գ. Զահուկյանը այս առումով ևս առաջին ուսանելի աշխատանքը կատարել է (տե՛ս ՀՀՊ, էջ 443—444, «Ուրարտու—Հայաստան», էջ 155—158): Երբերդ, բառացանկի ավելանալուն նպաստելու են նաև վերծանման ճշգրտումները, դրանով իսկ ճիշտ հնչյունափոխություններն ու բառանշատումները: Չմոռանանք, որ «ուրարտական» արձանագրություններում բառանշատումներ չկան, որ «մեռաք»—անժանոթ լեզվի բառանշատումը մեծ դժվարություններ է հարուցում, եթե մանավանդ չկա (չի գիտակցվում) մեկ այլ ուղղեցույց լեզու: Ի դեպ, եղած փաստերը թույլ են տալիս մտածելու, որ այդպիսի դեր կարող է կատարել հայերենը, քանզի մեռած ու կենդանի լեզուներից ոչ մեկը այդքան մոտ չի կանգնած «ուրարտերեն» կոչվածին:

Ուրերորդ, թեպետ ոչ վերջնական վերծանման և լեզվից-լեզու հընկալություններին, «ուրարտական» կոչված լեզվի հնչյունական համակարգը ավելի շատ առկա է հայերենում: Ի հաստատումն այս իրողության և որպես իրեղեն ապացուց, նախ բերենք Գ. Զահուկյանի կազմած համապատասխան աղյուսակը (տե՛ս ՀՀՊ, էջ 430—431):

«Ուրարտա»-հայկական հնչյունական համապատասխանությունների ընդհանուր պատկերը ամենից առաջ հավաստի հատուկ և հասարակ անունների զուգագիպությունների հիման վրա.

| Ուրարտ. | Հայ. | Օրինակներ |
|---------|------|--|
| 1 | 2 | 3 |
| Բ | Բ | Baba «լեռ»—բարայ «բլուր» Burgana—բուրգն Abilian—Աբելիանը |

| 1 | 2 | 3 |
|---|--------------|---|
| d | վ, ւ (դ՝) | Biaina— Վան, -այ —»— Diau(e)hi— Տայք |
| g | գ | Giarniani— Գարնի (հմմա. և գարին («բերդ, ամրոց»)) Burgana— բուրգն ամրոց») |
| p | փ | Surani— Սոփք pili «զրանցք»— պեղ-ել |
| t | պ | Tuspa— Տոսպ, -այ tia(u) թիւ ասել (՝) Alistu— Աղստեւ |
| k | ք | Uelikuni— Գեղա(ր)քունի Uskiani— Ոսկեան-ք |
| t | տ | Tuarasini— Տուարաթ (-ա-տափ) Tuspa— Տոսպ, -այ tia(u)— ասել, պատմել— թուել— «ասել, պատմել», ultu— ուղա-ու |
| q | կ | garbi(e)— «ժայռ(՝)»— կարբի(՝) (բատ մեզ՝ քարփի— քարափ, ժայռ, կ. Շ.) |
| s | շ | Quriani (կրկիր)— Կուր (գետ) |
| s | ս | Sirimutara— շիրիմ (՝) sain «աման»— սան «կաթսա» |
| s | չ | Alistu— Աղստեւ |
| z | ձ | Anase— Ալաշ(կերտ) (՝) |
| z | գ | Sue «լիճ»— ծով |
| z | կ | Supani— Սոփ-ք |
| z | կ' | Alzini— Աղձնի-ք |
| r | հ | Huzama— Խոզան |
| l | լ | harhar-s(u)— խարխարել (խալխալել) |
| m | լ | Huzana— Խոզան |
| n | ն | Ahurianи— Ախուրեան |
| r | ր | hubi— Հովիտ |
| l | լ(՝) | Erimena— Արմեն (արմեն) |
| m | լ | —»— Alia— Աղի (ովիտ) |
| n | ն | Alistu— Աղստեւ |
| i | լ(՝) | Erimena— Արմեն (արմեն) |
| i | ի | Sani— «աման»— սան «կաթսա» |
| a | ե | Uelikuni— Գեղա(ր)քունի Anasa— Ալաշ(կերտ) |
| | գ | —»— tia(u)— ասել, պատմել— թիւ (ասել) Alistu— Աղստեւ, Աղստեւ pili «զրանցք»— պեղել Uelikuni— Գեղա(ր)քունի |

| 1 | 2 | 3 |
|---|----------------|---|
| u | Աւ ("") " " | — burgana— բողքն Quri(ani)— Կուր ultu— ուլտ (v)— " " |
| a | " " | Supani— Սոփ-ք Tuspa— Տոսպ-այ babə— բաբա— բաբայ «բլուր» abili-d(u)— յաւելով |
| e | ե ա ա | Uelikuni— Գեղա(ր)քունի Erimana— Արմեն (արմեն) ("")» |

(տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն— նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 430—431):

Ինչպես տեսնում ենք, «ուրարտա»-հայկական հնչյունական համապատասխանությունների ընդհանուր պատկերը այստեղ պարզից էլ պարզ ներկայացված է, այն էլ՝ ջահուկյանական բժախնդիր հիմնավորումներով (տե՛ս ՀՀՊ, էջ 431 և հետո): Եվ քանի որ այդ հիման վրա ընդհանրացում չի կատարված, դիմենք մեկ ուրիշ ուրարտագետի՝ Ի. Մ. Դյակոնովի ավելի վաղ կատարած ընդհանրացմանը:

«Հայոց լեզվի հնչյունական համակարգը,— գրում է նա,— բացահայտեն ուրատական բնույթ է կրում (ընդգծ.— Լ. Շ.), որը վկայում է անցյալում լայնարձակ տերիտորիայի վրա հայ-ուրարտական երկեղվային երկարատև գոյակցության մասին» (ՀՃՊ, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 1, 1971, էջ 443):

Այստեղ կարևորը փաստն է՝ ուրարտագիտության հերթական նվաճումներից մեկը ևս, և ոչ մեծանուն գիտնականի բացարությունը, որը, կարծում ենք, փակուղուց գուրս գալու փորձ է միայն: Այն փակուղուց, որը արհեստականորեն և թյուրիմացարար ստեղծվել է ուրարտագիտության արշալուսին, երբ շատ բան անհայտ էր, երբ գուտ կամայականորեն ընդունելի է համարվել հայ-սուրարտ» լեզվական ոչ ազգակցությունը:

Մեր կարծիքով, հնչյունական համակարգի այդ աստիճանի նույնականությունը, ըստ գիտնականի՝ «բացահայտորեն ուրարտական բնույթը», չեր կարող լինել ազդեցության հետևանք: Այլապես, անհնար է մտածելն իսկ, որ այդ լեզուներից մեկնուամեկը (ավալ դեպքում հայերենը) «բացահայտորեն» կորցրել է իր հնչյունական համակարգը, մանավանդ որ հնչյունական համակարգը ամենաերկարակյացն է լեզուներում, ամենապահպանականը լեզվական մյուս բոլոր բաղադրատարրերից:

Մի շատ կարևոր գիտական իրողություն ևս, ըստ համեմատական լեզվաբանության, նշանավոր տեսաբանների, հնդեվրոպական նախալեզվի հնչյունական համակարգը մեծապես պահպանվել է հայերենում: Այս առթիվ, օրինակ, Թ. Գամկրելինեն և Վ. Խվանովը գրում են. «Հնարավոր է նաև, որ հնդեվրոպական լեզուների համակարգում ամենաարխայիկը և մոտիկը համահնդեվրոպական հնշակարգին հայերենի բաղայնական համակարգն է» («Ինդօևրոպեյսկի յանկ և ինդօևրոպեցի», տ. 1, ս. 41»):

Կամ՝ «Այսպիսով, հին հայերենի պայմանական համակարգի համեմատությունը հնդեվրոպական համակարգի հետ թույլ է տալիս դատելու հայերեն համակարգի բացառիկ հնության մասին» (նույն տեղում, էջ 44):

Կամ՝ «Հայերենի պայմանական համակարգը գերմաներենի հետ միասնական ավելի մատ է հնդեվրոպական նախահամակարգին» (նույն տեղում, էջ 45):

Կամ՝ «Այս առումով (հնչյունաբանական առումով,— Լ. Շ.) նինիայերենը կարելի է համարել ամենաարխայիկը հնդեվրոպական լեզուների միջավայրում» (նույն տեղում, էջ 79, ընդգծումները— Լ. Շ.):

Արդ, եթե հին հայերենի կամ գրաբարի հնչյունական համակարգը, թեկուղն բաղաձայնական համակարգը ամենաարխայիկն է հնդեվրոպական լեզուների համակարգում և ամենամոտիկը այդ լեզվաբնանիքի համակարգը լեզվի հնչյունական համակարգին, էլ ինչպես ընդունել կամ նախամայր լեզվի հնչյունական համակարգին, էլ ինչպես ընդունել կամ նախամայր լեզվի հնչյունական համակարգի թիւ «Հայոց լեզվի հնչյունական համակարգը բանաձեռնորեն ուրարտական բնույթ ունի» և դրանում տեսնել «ուրարտական» ոչ ազգակից լեզվի ազդեցություն: Այսպիսի կարծիքը, մեղմ ասած, փաստերի անտեսում է նշանակում, կանոնադրությունը կառչած մնալու ճիգ ու ջանք:

Այստեղ մեծ հանելուկ չկա, ոչ էլ խճողել է պետք, Փաստերով հաստատվող իրողությունն այն է, որ հնչյունական համակարգով ևս «ուրարտական» կոչված լեզուն ու հայերենը նույնանում են, այլ կերպ՝ բացահայտորեն նույնության բնույթ ունեն. որ այդ նույնությունը ազդեցության կամ փոխազդեցության հետեւանք լինել չի կարող (շատ է հակապատմական), մանավանդ, որ հայերենում աննշան փոփոխություններով հարատեսում է նույն հնչյունական համակարգը հնդեվրոպական նախալեզվից մինչև այսօր: Այսինքն հնչյունական համակարգի կորուս կամ մեկ ուրիշի սեփականում աեղի չի ունեցել և ունենալ չեր կարող:

Իններուդ, ուրարտագիտության կարևորագույն նվաճումներից մեկն էլ քերականական ձեռքի նույնության հայտնաբերումն է հայերենում և «ուրարտերեն» կոչվածում: Համոզվելու համար նորից դիմենք Գ. Զահուկյանի ուսումնասիրություններին, քանզի իրենց ընդհանրացման-հուկյանի

րով և հիմնավորումներով դրանք ամենահուսալին են, միաժամանակ՝ գ. Զահուկյանն է դրանց առաջին հայտնագործողը:

1. Տեղանվանակերտ բաղադրիչներ, զգալի քանակ են կազմում և հայերենում, և «ուրարտերեն» կոչվածում:

ա) Տան բաղադրիչ, «ուրարտերեն»-ում՝ Etiuni—Etun=Մեծ+տուն, է-ի+տուն, բարձր աստծու տուն, Maqaltuni=Մակաղ+տուն, Barzanistun=Բարձր+տուն (գուցե՛ Բարձրանիստ+տուն), Nistun=՞, Aiduni=Հայ+տուն, Հայտուն, Nirdun=՞, Tuistuni=՞, Tunibuni=Տունի+թունի—Տուն ու բուն, Eridun=Երդուն=էրի կամ Արի+տուն և այլն, հայերենում՝ Թորգոմայ+տուն, Հայոց+տուն, Վրաց+տուն, Անգլուն+տուն, Ծոփաց+տուն և այլն:

բ) Հովիտ բաղադրիչ, «ուրարտերեն»-ում՝ Tuarasini—hubi=Տուարտի+հովիտ (հայ.) Տուարտատափ), Niribai—hubi=Նիրիվայի հովիտ, Quarlini—hubi=Քուարլինի հովիտ, Rusaini—hubi= Իուսայի հովիտ, հայերենում՝ Աղի+հովիտ, Արճիշակ+ովիտ, Կոգ+ովիտ կամ Կոգայ+հովիտ, Կողան+ովիտ, Բալաւ+հովիտ և այլն:

գ) Վան (=տեղ, երկիր) բաղադրիչը, «ուրարտերեն»-ում՝ E+banı=Երկիր (նաև Մեծ+Վան, Մեծ+երկիր, Մեծ+տեղ), Bianı=Վյանի-Վանի, Darbani=թերևս՝ բարձր+տեղ, Durubani=թերևս՝ Դռնա+տեղ, Դռնա+վայր, Qualbani=՞, հայերենում՝ Երուանդավան (Երվանդին վանելու տեղ), Բագավան (թերևս՝ Բագայ+Վան=Բագանց տեղ) Վան—բաղաք՝ Վասպուրականի Կենտրոնը՝ Դատվան, Վանեվան և այլն:

դ) Աւան-եւան բաղադրիչով, «ուրարտերեն»-ում՝ Ebani=Ավան (Մեծ ավան իմաստով), հայերենում՝ Վաղարշ+ավան, Թոռն+ավան, Վարդէսի ավան և այլն:

ե) Ալ-աղի բաղադրիչով, «ուրարտերեն»-ում՝ Alaini=Աղային, Alate(ս')=գուցե՛ Աղատեղ, Alia—Աղիա—Աղի, Aliala=Աղի+աղա, Alistu= Աղիստու—Աղստե և այլն, հայերենում՝ Աղիովիտ (գավառ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում), Աղի (գավառ Մեծ Հայքի Պարսկահայք նահանգում), Աղի (գետ Արաքսի ավազանում), Աղի (գետ Ուրմիո լիի ավազանում), Աղի (գետ Վանա լճի ավազանում), Աղի (գյուղ Աղիովիտ գավառում), Աղի (գյուղ Եկեղեց գավառում), Աղի (գյուղ Պարսկահայք Հայաստանում), Աղի (լեռ ծաղկանց լինսերում) և այլն:

զ) Թիր բաղադրիչով, «ուրարտերեն»-ում՝ Aludiri=Աղուր+դիր (բաղաք-ամրոց), Surdira կամ Paddira=Նախրիի բաղաք, հայերենում՝ Հիմնականում հասարակ բառերում՝ մեծադիր, բարձրադիր, գեղադիր, ծընրադիր և այլն:

է) Կուռ բաղադրիչով, «ուրարտերեն»-ում՝ Kurun=Կուռ—ամրակուռ, պինդ, Kuriaka—Kuria—՞, հայերենում՝ մեծամբ հասարակ բառերում՝ կոել-կոփել, ամրակուռ, պողպատակուռ, արծաթակուռ և այլն:

ը) Զիւն—ձյուն բաղադրիչով, «ուրարտերեն»-ում՝ Danziun=Դան-

զիւն, Zanziuna=Զանձիւնա, Հայերենում՝ Զիւնական (նախարարական տոհմանուն):

թ) Հայ բաղադրիչով, «ուրարտերեն»-ում՝ Aña— լեռնանուն, Ai(a)-ganani=Բնակավայր, Ajale=Բնակավայր, Ajasun= ամրոց-բաղաք, Ajusias, Aidun=Հայ-տուն՝ երկրանուն, և այն, Հայերենում՝ Հայկաշնեն, Հայոց ձոր, Հայք, Հայկաբերդ, Այտուանք, Այվանք և այլն:

2. Հայերեն այլ բաղադրիչներ՝ «ուրարտական» տեղանուններում:
Andiabe/u Anduarselia, Ubianda տեղանուններում անդ>հանդ—«արտ»— գուցեկ անդ— «շեմք» բաղադրիչներում:

Amuraska տեղանվան մեջ ամուռ—պինդ, ամրոց բաղադրիչը: Arasu տեղանվան մեջ արած (արաւտ-արօտ) բաղադրիչը: Armar(i)li-ի մեջ յ-արմար բաղադրիչը: Ardarakih-i մեջ արդար բաղադրիչը, Հայերենում նաև Արդարաց գուղանուն:

Ardiumak բաղաքանվան մեջ արդիւն բաղադրիչը: Armuna-ի մեջ արմն բաղադրիչը: Gaurahi-ի մեջ գաւ- (առ)՝ բաղադրիչը: Erikuahi-ի մեջ երեկոյ բաղադրիչը՝ արևմուտք իմաստով: Halua-ի մեջ խաղ,— ոչ «խաղ» կամ խաղ,—ի «ճահիճ» բաղադրիչը: Harurga-ի մեջ հարցիր կամ հարուր (բուանուն) բաղադրիչը: Hulmeruni-ի մեջ հողմ,—ոյ (՞) բաղադրիչը: Hulun-ի մեջ հող բաղադրիչը: Inisti-ի մեջ նիստ,—ոյ (՞) բաղադրիչը: Irdua-ni-ի մեջ երդ,—ոյ (՞) բաղադրիչը: Liqiu-ի մեջ լիկ «լիճ» բաղադրիչը: Lusia-ի մեջ լոյց, լուց անեմ, լոյս բաղադրիչը: Lusa-ի մեջ լոյս,—ոյ բաղադրիչը: Matara-ի մեջ մայր բաղադրիչը: Nilipahri-ի մեջ նեղ և պախտե—«տավար», «նախիր» բաղադրիչները:

P/Buinialhi-ի մեջ բոյն,—ոյ բաղադրիչը: Qualbani-ի մեջ կոյ (կու) և աղբ բաղադրիչները: Qulbutarrini-ի մեջ կողբ և քառ (՞) բաղադրիչները: Alburi-ի մեջ աղբյուր բառը: Ardiunaki-ի մեջ արդյուն(՞)-ը: Ars/zugu-ի մեջ արծ (արծաթ)-ը: Aluarsa-ի մեջ արծ (արծնեմ)-ը: Balduarsa-ի մեջ արծ (արծաթեմ)-ը: Dilizia-ի մեջ դեղձը: Saruardi-ի մեջ սար և արդ բաղադրիչները:

Altuquja-ի մեջ աղտ և կու (գոմազը) բաղադրիչները:
Barzusiani-ի մեջ բարձր-ը:
(Ման. Այս բաղադրիչները ըստ Գ. Զահովյանի, տե՛ս «Ուրարտու-
Հայաստան», Երևան, 1988, էջ 157—160; եվ քանի որ դրանք բոլորը
չեն, ստորև բերենք նաև մեր նկատաժները):

Abuqu-ի մեջ հավ (Հավուք) բաղադրիչը:

Abuni-ի մեջ հավ (Հավունի) բաղադրիչը:

Adduru-ի մեջ դրու-ը:

Azameruni-ի մեջ Ազա (ազն) և մայր (մեր) բաղադրիչները:

Arbu-ի մեջ առու բառը:

Arzasku-ի մեջ Արճեշը:

Arkania-ի մեջ արկան-ը (Արդանա-մադեն):

Artarapsa-ի մեջ արդար և ափ բաղադրիչները:

Arha-ի մեջ արխ-ը (առու):

Arhi-ի մեջ դարձյալ արխ-ը (առու):

Arsabia-ի մեջ արծիվ-ը (Արծուիք):

Durubani-ի մեջ դրու և վաճ բաղադրիչները, գուցեն՝ դրու և
քան(դ)-ը:

Ziquni-ի մեջ ձուկն (ձկուն) բաղադրիչը:

Zuaina—Zuani-ի մեջ ձյուն-ը (Ձիւնական):

Ki(e)huni-ի մեջ զեղ-ը (զեղեցիկ):

Kukunu-ի մեջ կրիու բառը:

Maquru-ի մեջ մաքուր-ը:

Malmali-ի մեջ մաղ+մաղ-ը:

Melujani-ի մեղու բաղադրիչը (Մեղուանոց):

Musani, Խոսուն անունների մեջ մուշ (-մուշուշ-մշուշ) բաղադրիչը:
Panirasu-ի մեջ պանիր-ը:

Parala-ni-ի մեջ փարախ-ը (պարազ>փարախ):

Pasa-ի մեջ պաս-ը (=սպաս):

Salurija-ի մեջ սալոր-ը:

Sirimutara-ի մեջ շիրիմ-ը:

Surzi-ի մեջ սուր-ը:

Sura-ի մեջ ևս սուրը:

Surra-ի մեջ նորից սուր-ը:

Surikas-ի մեջ դարձյալ սուր-ը:

Tarhuna-ի մեջ թարխոն-ը (*):

Tasa/u-ի մեջ քաս-ը (բրբ. գավաթ):

Tase—Tasa/u-ի մեջ ևս քաս-ը:

Tastami-ի մեջ տաշտ-ը:

Tela-ի մեջ տեղ-ը:

Urini-ի մեջ ունենի-ն:

Urjani-ի մեջ հուր-ը (Հուրյան):

Usqaja և Uskiani-ի մեջ ոսկի-ն (Ոսկեանք):

Hars-ի մեջ խարս-ը (=հարս):

Huzanani-ի մեջ խզան-ը:

Sarara, Sarim, Sarni, Sarum, Sarmida ևն տեղանունների մեջ
սուր-ը:

Sarituni-ի մեջ սար և տուն բաղադրիչները:

Sarru-iqbni-ի մեջ սար-ը և գուր-ը (*):

Satiraraga-ni, Satiruni, Sattera տեղանունների մեջ շատ-ը:

Sezu-ի մեջ սեզ-ը: Գուցեն՝ Sese-ի մեջ սեզ-ը:

Seres(s)eu—Seris(s)eu-ի մեջ շերեշ (շըրեշտ բույս, Շրեշ բլուր):

Sura-Sura-ի մեջ սուր-սուր-ը (=Սուրասուր):

Surdira-ի մեջ սուր և դիր բաղադրիչները, և այն և այն (տեղա-
նունները տե՛ս և Հ. Բ. Արցունյան, Տոպոնիմիկա Յորդյ):

3. Տեղանվանակերտ և տահմանվանակերտ ածանցներ «ուրարտե-
րեն» կոչվածում և հայերենում:

ա) Սու—ունի-ունիք վերջածանցով, «ուրարտերեն»-ում՝ Adahuni,
Ahiuni, Apuni, Azameruni, Dirguni, Eruji, Hulmeruni, Irapuni, Lib-
liuni, Luhuni, Luipruni, Muşuni, Qaduganuni, Qiehuni, Qur-
pununi, Kasuni, Tariuni, Uelikuni, Uhuni, Urieliuni, Ziuguni և այլն,
և այլն, Հայերենում՝ Խորխոռունի-Խորխոռունիք, Խշոռնի-Խշոռունիք,
Պալունի-Պալունիք, Վարաժնունի-Վարաժնունիք, Արշարունի-Արշարու-
նիք, Տրպատունի-Տրպատունիք, Վահեւունի-Վահեւունիք, Բզնունի-Բզ-
նունիք, Հավնունի-Հավնունիք, Պահլաւունի-Պահլաւունիք և այլն, նաև
Արծրունի, Ամատունի, Որդունի, Տրունի, Գնունի, Մաղսազունի, Ման-
դակունի, Սլկունի, Բագրատունի և այլն, նաև՝ Կարթունիք, Քաշունիք,
Վայկունիք, Ասպակունիք, Կրճունիք, Բուժունիք, Մեհնունիք, Մեծնու-
նիք և այլն և այլն:

բ) Ini-ian-i-ani=եան-եանք վերջածանցով, «ուրարտերեն»-ում՝
Abilian (=Աբեղեանք), Ahuriani (=Ախուրեան), Bihurani, Giarniani,
Gituhani, Quriani, Darani, Darbani, Zamani, Zuanı, Qalani, Mar-
m(u)ani, Musani, Ruisiani, Taplani, Teriani, Uqu'ani, Uluani, Աս-
կiani, (=Ոսկեանք), Hazani, և այլն, Հայերենում՝ Աբեղեանք, Ախու-
րեան, Գարեղեանք, Գարիթեան, Գազրիկեան, Տալգրեան, Թամեան, Խո-
ճանան-Խործեանք, Հաշտեան-Հաշտեանք, Առաւեղեան, Առաւենեան, Դի-
մաքսեան, Քողեան, Ոսկեանք և այլն:

գ) Ni-ini=նի վերջածանցով, «ուրարտերեն»-ում՝ Aristani, Aruni, Asini,
Babiluni, Bamni, Didini, Idni, Ijani, Qalani, Quarlini Matni, Me-
mabsyni, Pazalani, Ruisiani, Tarhigamani, Tejsebani, Uitani, Hal-
pani, Sarni և այլն, Հայերենում՝ Բչնի, Գառնի, Մուղնի, Պաղնի, Պարնի,
Պտղնի, Քռնի, Առբերանի, Պալունի:

դ) Stania-stan վերջածանցով հիշված են «ուրարտական» երկու բնակավայր: Մեկը՝ Aniastania անոնսով Այած երկրում, համապատասխանում է միջնադարյան Անստան գյուղին (Վանի մոտ), մյուլը՝ դարձյալ Aniastania Սանիգուրտու երկրում՝ Ուրմիա լճի հս-արևելյան անկյունում: Հայերենում ստան աժանցով տեղանունները սովորական են:

4. Նույնիմաստ նախածանցներ և վերջածանցներ «ուրարտերեն»-ում և հայերենում:

ա) Nah=նախ նախածանցը «ուրարտերեն»-ում «բերել», «գալ», «ելնել», «բարձրանալ» իմաստներով, հայերենում նախ-ը «առաջին», «առաջ», «բարձր», «գլխավոր» և այլ իմաստներով (օրինակ, նախագահ, նախարար, նախադուռ, նախաշեմ, նախագիծ, նախագիր, նախարան, նախադաս և բազում այլ բառեր):

բ) An=ան ժխտական իմաստով նախածանցը, «ուրարտերեն»-ում (օրինակ, an-iarduni=ան-արդյունք, ան-կախ), հայերենում և ան-ը ժխտական իմաստով (օրինակ. անգաղ, անտուն, անտեր, անբիծ, անգոթ, անգետ և բազում այլ բառեր):

գ) Ка բառը կամ մասնիկը «ուրարտերեն»-ում ունի «առաջ», «մոտ», «ներկայանալ» (*), «վեր կենալ», «կանգնել» (*) իմաստները, հայերենում որպես առանձին բառ և բաղադրիչ համարյա նույնն է (օրինակ, կա՛ այստեղ է, ներկա է, գոյություն ունի, նաև՝ մոտակա, առկա, հարակա, ներկա, հեռակա և այլն):

դ) Ni—նի՝ «ուրարտերեն»-ում որպես որոշիչ հոդ, ինչպես նաև ուղղական հոլովի ձևափորիչ: Հայերենում ի տարի անկումով և որոշիչ հոդը՝ նույն նշանակությամբ (օրինակ, գառն, մատն, ոտն, ձուկն և այլն), իսկ բարբառային ձևերում նաև մատնը, ոտնը, գառնը, ձուկնը, և այլն՝ իշխ անցումով կրկնակ հոդավորում:

ե) I—ի՝ «ուրարտերեն»-ում՝ անցյալ ժամանակի, եղակի թվի, առաջին դեմքի վերջավորություն (օրինակ, agubi— ես տարա, արսի— ես տվի, ստադի— ես ելա (արշավի), հուտադի— ես աղերսեցի և այլն), հայերենում ևս՝ տուի (տվի), եղի (դրեցի), ագուցի (հագցրի) և այլն:

զ) D—դ՝ «ուրարտերեն»-ում վերջածանց, երկի կատարյալի հիմքի կազմիչ (օրինակ, ար-դ=տալ, նվիրել, մատուցել, տեր-դ=դնել, տեղափորել, հարմարեցնել, երի-դ=գալ, ներկայանալ), հայերենում ևս, օրինակ՝ ար+դ=ձեւ տալ արդուկ=ձեւ տվող, արդուկել=ձեւ տալ, ե+դ=դրեց, ե+դի=դրի, դրեցի և այլն:

է) Eia, eai, éa=և, այնպես, ինչպես շաղկապներ «ուրարտերեն»-ում, հայերենում եւ=և շաղկապ:

ը) Tu-ի՝ «ուրարտերեն»-ում վերացական գոյականակերտ բարդ վերջածանց (օրինակ, հուտ-tu-ի=հաջողութիւն, tarsua-tu-ի=քաջու-

թիւն և այլն), համապատասխանում է հայերենի թիւն վերջածանցին (օրինակ, թյուրիմացութիւն, հաղթութիւն, իմաստութիւն, արիութիւն և այլն):

թ) I/ե «ուրարտերեն»-ում սեռական հոլովի եղակի թվի վերջավորություն: Հայերենում ևս ի պարզ հոլովման բառերը եղ. թվի սեռականում ստանում են ի հոլովիշ-վերջավորությունը (օրինակ, սրտի, ազուի, այծի, այտի, բախտի, որովայնի, սրահի, ծայրի և այլն):

5. Քերականական այլ մասնիկներ— նույնություններ: Սրանք ևս յատ են, այն էլ ավելանալու միտումով, սակայն բերենք միայն Գ. Զահանկյանի նկատած նույնությունների մի մասը՝ առանձնացնելով «ուրարտերենն» ու հայերենը:

«Ուրարտ. աց— «տանել, անցկացնել», հայ. ած-եմ, ուրարտ. ար— «տալ», հայ. առնում (առ), ուրարտ. աւ— «ուտել», հայ. ուտ-եմ, ուրարտ. աւ— «անել», հայ. դ-ն-եմ, ուրարտ. իու— «այս», հայ.— ն, պ-ն, ն-ա, ուրարտ. տան— «լինել», հայ. մնամ, ուրարտ. տե— «ինձ» հայ. իմ, ինձ, ուրարտ. տե(i)— «մի», հայ. մի, ուրարտ. րագ(i)— «մինչե», հայ. առ— «մոտ», «գեպի», ուրարտ. րագ— «քշել, տանել», հայ. հորդեմ՝ «ճանապարհ բանալ», ուրարտ. տասե— «նվեր» հայ. տա-մ, տուր-է, ուրարտ. սլի «այլ», հայ, այլ և այլն» (տե՛ս «Ուրարտու— Հայաստան», էջ 139):

6. Տեղանվանական-տեղագրական նույնություններ, որպես նաև ինքական ազգակցության արդյունք: Այս կարգի նույնությունները հարյուրից ավելի են, որոնց անդրադանք այլ առիթներով, ուստիև այժմ բավարարվենք Գ. Զահանկյանի նշած մեկ այլ խմբի վկայակոչումով:

«Abaindi—Ավանց (գյուղ Վանի մոտ), Alli—Աղի (գյուղ Վանի վիլ.), Anzalia—Անձավ (գյուղ Վանի վիլ. Բերկրի գվո.), Aniastania—Անստան (գյուղ Վանի վիլ.), Arsgu—Արեակ թե՛ Արծկէ (*), Banio—Բանոն (գյուղ Վանի վիլ. Արձեշի գվո.), Birt-hiluza—Բերկրի (գյուղ Վանի վիլ. Համանուն գվո.), Hasrana—Կասր (գյուղ Վանի վիլ. Շատախի գվո., հմմտ. նաև Մոկսի և Խոշարի Կասր (գյուղ Վանի վիլ. Չատախի գվո.), Qutta—Կուտք (գյուղ Վանի վիլ. Կարճկանի գվո.), Sisqarra—Ջիոր (գյուղ Վանի վիլ. Կառկասի գվո.) և այլն» (տե՛ս «Ուրարտու— Հայաստան», էջ 160):

7. Դերանունների էական նույնություններ «ուրարտերեն»-ում և հայերենում: Սրանք արտացոլված են բառացանկում:

(Քննականական ձևերի և այլ համեմատությունների հիմքերը տե՛ս Գ. Զահանկյան, Եզանությունը..., Երևան, 1967, էջ 18—53, նույնի, Հայոց լեզվի պատմություն..., Երևան, 1987, էջ 427—445, «Ուրարտու— Հայաստան»-ում՝ «Ուրարտերենը և հայերենը», էջ 127—168):

Ինչպես տեսնում ենք, քերականական ձևերի էական նույնություններ, նմանություններ և զուգահեռներ կան «ուրարտերեն»-ում և Հայերենում, թեպետ զիտությանը Հայտնի ոչ բոլոր ձևերը կարողացանք ներկայացնել: Ընդգծենք նորից, որ զանազան պատճառներով շատ բան էլ դեռևս զիտությանը Հայտնի չէ: Բացի վերծանման պակասություններից, որոնք նկատվում կամ ենթադրվում են, կարեոր պատճառ է և այն, որ «ուրարտ»—Հայ լեզվական աղերսները, ինչպես նշվեց, դեռևս բավարար շափով ուսումնասիրված և ընդհանրացված չեն: Ավելին, ինչ-որ անտեսանելի թաբու է իշխել այդ ասպարեզում, մի տեսակ խորական վերաբերմունք, միայն թե շտուժեր կանխադրություն՝ որ ուրարտացիները Հայեր չեն, որ Հայերենը սոսկ ազգվել է «ուրարտերեն»-ից, որ «ուրարտերեն» ու Հայերենը ազգակից լեզուներ չեն և այլն:

Այս իրողությունը դրսկորվել է անգամ լեզվագիտական մեծ վաստակի և մեծ կարողությունների տեր գիտնականների վերաբերմունքում: Օրինակ, Գր. Ղափանցյանը առանձնացրել է խուսիերեն և «ուրարտերեն» ընդամենը 7 բառ, որից 4-ը վիճելի, և Համապատասխան ենթաբաժինը կոչել է «ուրարտական-խուրիթական ընդհանուր բառեր», կամ ենալով ասել (այլ տեղերում նաև ասել է), որ դրանք ազգակից լեզուներ են, իսկ «ուրարտու»-Հայկականի համար 29 բառ, որից 20-ի նույնությունը կասկած չի հարուցում, սակայն վերնագրել է «Ուրարտերենի տարրերը Հայերենում», այսինքն՝ «ուրարտերենի» ազգեցություն Հայերենի վրա (տե՛ս «Ուրարտուի պատճություն», Երևան, 1940, էջ 33—35, 37—40): Իրոք, զարմանալի թվաբանություն է: Երեք կամ յոթ բառերը ազգակցության «ապացույց են», իսկ 29-ը՝ սոսկ ազգեցության հետևանք: Բացի այդ, տեսանք, որ 29-ը չեն, այլ ավելի քան 130-ը:

Կամ՞ ի. Մ. Դյակոնովը հատուկ զլուխ է նվիրել խուսի-ուրարտական լեզվական կապերին, բժամնդիր մանրամասնությամբ հետախուզել ու քննել է այդ «կապերը», շնայած վերջնարդյունքում չի ապացուցել իր ցանկացածը՝ դրանց ազգակցությունը (ապացույց՝ Գ. Զահուկյանի եղբակացությունը), իսկ «ուրարտու»-Հայկականի մասին համարյա ոչինչ, կամ էլ հպանցիկ, մակերեսային խոսքեր (տե՛ս «Յանկի դրենել Պերճեն Ազի, Մ., 1967):

«Ուրարտ»—Հայ լեզվաքննությամբ, որն ընդգրկեր տվյալ լեզուների բոլոր բնագավառները, չեն դբարվել նաև մյուս ուրարտագետները: Եվ, ահա, Գ. Զահուկյանն է առաջինը, որ խախտել է թաբուն և համակողմանի լեզվաքննությամբ պատկառելի նույնություններ է Հայտնաբերել կամ հիմքեր տվյալ այդպիսիք Հայտնաբերելու: Ավելին, Գ. Զահուկյանը լեզվական այդ նույնություններն ու նմանությունները չի դիտել միակողմանիորեն՝ սոսկ «ուրարտերեն»-ի ազգեցություն Հայերենի վրա, ինչպես ընդունված էր, այլ ապացուցել է նաև Հայերենի ազդեցու-

թյուններ «ուրարտերեն»-ում, ինչպես նաև, այսպես կոչված, նոստրատիկ լեզուների ազգեցություններ թե՛ մեկի, թե՛ մյուսի վրա: Սրանք, իհարկե, լեզվաբանական անուրանալի նվաճումներ են, հատկապես պատմագիտության համար, սակայն կարծում ենք (իր իսկ բրած փաստերի հիման վրա), որ վաստակաշատ լեզվաբաննին մեծապես խոշընդոտում է «ազգեցություն-փոխազդեցությունների» վարկածը, այսինքն՝ Հայերենը և «ուրարտերեն»-ը (արձանագրությունների լեզուն) ազգակից Համարելու:

Կարծում ենք միաժամանակ և, ինչպես տեսանք, Հայ-«ուրարտ» լեզվական նմանություններն ու նույնությունները թե՛ էությամբ և թե՛ քանակով շատ ավելին են, քան «ազգեցություն-փոխազդեցություն» կոչվածը, որ հետեւաբար, պետք է փոխել մոտեցումը և ելնել նաև նրանց ազգակցության կամ նույնության հատկանիշից:

Ի դեպ, ասում ենք՝ նաև, քանի որ լեզվական փաստերի առկա վիճակի դեռևս հնարավոր չէ անառակելիորեն պնդել նրանց ազգակիցու ազգակից լինելը: Տարբերություններն էլ քիչ չեն: Հենց սա էլ համարվելու է ուրարտագիտության հերթական և շատ կարևոր նվաճումներից մեկը: Այսինքն այն, որ այսուհետև լեզվական առումով չի կարելի միանշանակ ասել, թե ուրարտացիները Հայեր չեն, «ուրարտերենը» Հայերենը չի, «ուրարտական» պետությունը Հայկական չէ: Եվ ինչպես ասել, երբ տեսանք, որ այդ լեզուների հնչյունական համակարգերը հիմնականում նույնն են, տեղանունների մեծագույն մասով նույնանում են, բառային հիմնական ֆոնդով նույնն են, քերականական մի շարք ձևերով նույնն են և այլն: Այնպես որ, «Ուրարտու»-ի ոչ Հայկականության պաշտպանները զրկվում են իրենց միակ և «ամենազոր» փաստարկից և, համոզված ենք, զրկվում են առնավետ:

Այս պարագաներում առավել արժեք և հնչեղություն են ստանում Հայ-«ուրարտ» նույնացնող մյուս փաստերն ու փաստախմբերը՝ ժամանակական, տեղագրական, տեղանվանական, մարդաբանական, մշակութային, մասամբ նաև լեզվաբանական և այլ նույնությունները: Այնպես որ, վերոհիշյալ փաստախմբերի առկայությամբ «Ուրարտու»-ի Հայկականությունը որևէ կասկած չի հարուցում և «Ուրարտու» այսուհետեւ պետք է դիտել հենց այս տեսանկյունից:

Իսկ թե ինչպիսին է «Ուրարտու» կոչված Հայկական պետությունը և ինչո՞ւ չի երևում Հայոց ավանդական պատմագրության մեջ, փորձենք ներկայացնել ստորև:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Նախքան այս հիմնախնդրի պատասխանը կամ բացատրությունը տպալը, անհրաժեշտ ենք համարում շատ համառոտակի վերաշարադրել «Ուրարտու» կոչված պետության պատմությունը, ուշադրություն դարձնելով հատկապես «ուրարտացի» թագավորների արշավանքներին, նվաճումներին, ինչպես նաև տվյալ պետության տարածքային փոփոխություններին: Ի դեպ, նախապես խոստովանենք, որ մեր շարադրանքը փաստական հագեցվածությամբ կամ փաստական առումով լինելու է «Ուրարտու»-ի պատմության ամենավերջին և ընդունված շարադրանքի համառոտագրումը, այսինքն հարազատ ենք մնալու ուրարտագիտության փաստական բոլոր նվաճումներին, սակայն մեկնաբանություններով՝ տրամագծորեն տարբեր, քանզի հայեցակետերն են բոլորովին տարբեր:

Այս, եթե ընդունվածի հիմքում ընկած է, այսպես ասած, «նախարարտական Հայաստանը առանց հայերի» անհիմն տեսությունը, կամ էլ՝ հայերին խղճուկ դեր հատկացնելը ծայրամասային անձուկ տարածքներում, այն էլ՝ «նախահայեր» անհեթեթ, ուրիշ ոչ մի ժողովողի համար Ասված ու շգրված հորջորջումով, ապա մերում՝ ընդհակառակը, «Ուրարտու» կոչվածից էլ շատ ու շատ առաջ և «Ուրարտու»-ի ժամանակ ամբողջ Հայաստանի հայաբնակության տեսակետը, որը բազում ազգություններ քրքրելով ավանդել են մեր պատմիչները և, ինչպես տեսանք, հաստատում է արտաքին աղբյուրների տարբեր ու տարատեսակ փաստերով:

Իսկ այժմ էլ, ահա, նույն իրողությունը փորձենք ապացուցել «Ուրարտու»-ի քաղաքական պատմությամբ, այսինքն՝ «ուրարտական» կոչված, և այլ արձանագրություններով տեսանելի դարձնել, որ «Ուրարտու»-ի իշխողները կամ թագավորները, ինչպես նաև ուրարտացիները կամ բիայնացիները ընդհանրապես այլ ոք չեն, քան հայեր, որ Հայաստանում նրանց կատարած արշավանքներն ու նվաճումներն էլ այլ բան չեն, քան գերագահության համար մղվող պայքար Հայաստանի այլ տարածքների հայերի, մասնավորապես՝ Էտիունի (ոչ՝ Եթիունի) երկրի դեմ, որը եղել է նրանց անզիջում հակառակորդը:

Եվ այսպես, սկսենք մեր խոսքը «Ուրարտու»-ի ամենավաղ հիշատակումից: Նշենք նաև, որ այս և հետագա բոլոր մեջքերումները հիմնանում կատարվում են «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիաց» (Երևան, 1981)՝ ընթերցողների լայն զանգվածներին հասանելի դարձնելու համար, և ամենուր մեր ըստգծումներով:

ա. «Ուրարտու»-ի առաջին հիշատակումները

«Ուրարտու» երկիրը «Ուրուատրի» ձևով առաջին անգամ հիշատակել է Ասորեստանի թագավոր Սալմանասար (Շուզմանուաշարեղ) Ա-ը՝ թագավորած մ. թ. ա. 1274—1245 թթ.: Աշուուր քաղաքի ավերակներում հայտնաբերված իր արձանագրության մեջ նա գրում է. «Երբ Աշուուրը տես... պարզեց ինձ տիրապետության օրինական թագը, այն ժամանակի իմ գահակալության արդին, ուրուատրիները (—ուրուատրիի բնակիները, — լ. Շ.) ըմբոստացան իմ դեմ: Զեղք կարկառեցի Աշուուրին և մեծ աստվածներին՝ իմ տերերին: Իմ զորքի հավաքը կազմակերպեցի (և) երանց ամուր լեռնաշղթաները ես բարձրաց: Խիմմե, Ուատկուն, Մաշգուն, Սալուա, Խալիլա, Լուիս, Նիլիպախրի և Զինգուն՝ երանց ութերեներին և նրանց աշխարհազորին ես հաղթեցի: Երանց 51 քաղաքները (=բնակավայրերը, — լ. Շ.) քանդեցի, այրեցի, նրանց ուզմավարը, նրանց ունեցվածքը հափշտակեցի, բոլոր ուրուատրիներին երեսօրում խոնարհեցրի իմ տիրոջ՝ Աշուուրի ուժքերի (առաջ): Նրանց ընտրյալ սերունդը բռնեցի, ծառայության և իմ աշխատանքի համար վերցրի, ինոների ծանր հարկը նրանց վրա հավիտայան դրի: Արինու քաղաքը (նաև՝ Արիննա, — լ. Շ.)՝ ամրոց ու լեռ, որ նախապես ընդգծել էր, արհամարհել Աշուուր աստծուն՝ ես այդ քաղաքը Աշուուրի և մեծ աստվածների՝ տերերիս օգնությամբ հաղթեցի, ավերեցի, մոխիր թափեցի վրան, (իսկ) նրա (մնացորդ) փոշին ժողովեցի և իմ քաղաքի՝ Աշուուրի դարպասի մոտ կուտակեցի՝ ապագային (ի սարսափի)» (էջ 14):

Սրանից զատ, նույն արձանագրության մեկ այլ հատվածում էլ կարդում ենք. «...Կութիները, որոնք անթիվ էին ինչպես երկնքի աստղերը և կոտորածի սովոր, ըմբոստացան, ինձ հետ թշնամացան, անախործ դարձան... Ես թողեցի իմ զորքի ճամբարը, վերցրի իմ լավագույն մարտակառքերի մեկ երրորդը և նրանց դեմ ճակատամարտի նետվեցի: Ուրուատրի (երկրի) սահմանից մինչև Կուդմուխի Երկիր՝ Երկար բերուննեա (1 բերու=7—8 կմ.— լ. Շ.), հեռավորության վրա ընկած շրջանը, նրանց բազմաթիվ զինվորների կլանքը ջրի պես պարպեցի, նրանց զինվորների դիակներով ընդարձակ դաշտը լցրի...» (էջ 15):

Այսպիսով, ըստ այս արձանագրության, Ուրուատրին (=Ուրարտու) Ասորեստանին հյուսիսից սահմանակից, լեռնային փոքրիկ մի երկիր է քաղակցած 8 երկրամասերից կամ շրջաններից, 51 բնակավայրերով, այդ թվում նաև Արինու կամ Արիննա քաղաքը, որոնք նվաճվելու մեջ էր կատարու են դարձել ընդամենը 3 օրում: Կարեոր է իմանալ նաև, որ «Ուրուատրիներ» ասվածը կամ ասվանումը, ըստ արձանագրության, բնավ էլ ցեղանուն չէ, այլ տեղանվանական իմաստ ունի, այսինքն՝ Ուրուատրի (=Ուրարտու) երկրի բնակիչներ, ինչպես երեսում է երկրորդ նշումից: Իսկ թե ինչու է կոչվել «Ուրուատրի» (=«Ուրարտու»), որից էլ

«ուրուատրիներ» կոչվածը, տվյալ արձանագրության շրջանակներում դժվար է պատասխանել: Այդ մասին՝ Քիչ հետո:

Հարցին առնչվող ուսումնասիրողների, մասնավորապես, ուրաքագետների կարծիքով Սալմանասար Ա.-ի հիշած Ուրուատրի երկիրը գտնվել է Մեծ Հայքի Կորճայք (Նախապես՝ Կադմեա Տուն) նահանգի տարածքում, որը, ինչ խոսք, հիմնավոր և անկասկած է: Այսուհետեւ Կորճայք նահանգի ո՞ր մասում. ահա հարցը, որի շուրջ կան տարակարծիքներ և անորոշություններ, սակայն ուշադրություն դարձնենք դրանցից երկուսի՝ առավել հավանական ճանաչվածների վրա:

Հստ կարծիքներից մեկի՝ «Նա (Ուրուատրին,— և. Շ.) գտնվում է Բոհոտանում, համարյա Արևելյան Խաբուրի ակունքների վրա» (Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 67–68), իսկ ըստ մյուսի՝ «...Սալմանասար Ա.-ը իր զորքերով ներթափանցել է միայն Մեծ Զաք գետի ձորը և Ասորեստանին էր ենթարկել այդ գետի աջակողմյան և ձախակողմյան վտակների ձորերում գտնվող շրջանները՝ Արևելյան Խաբուրի հովտի ընդգրկմամբ: Ահա այն տարածքը, որն ընդգրկում էր Ուրուատրու երկրների համագաշնակցությունը» (Ս. Երեմյան, տե՛ս ՀԱԱ, ՀԺՊ, հ. 1, էջ 280, ծ. 2):

Այս տեղագրումներից առավել ճշմարտամոտը առաջինն է, քանի որ, մյուսի համեմատությամբ, ավելի փոքր տարածք է ենթադրում «Ուրարտուային և այլն, սակայն, կարծում ենք, որ դա ևս համարյա անշան, բայց կարենոր ճշգրտման կարիք ունի: Դատելով արձանագրության համապատասխան նշումներից, ինչպես նաև Ուրուատրի–Ուրարտու–Արարատ (Ֆիշտը՝ Արարադ) արդեն անառարկելի դարձած նոյնությունից, Ուրուատրի երկիրը պետք է զետեղել տվյալ տեղագրումից փոքրինչ հարավ-արևմուտք՝ հանելով Արևելյան Խաբուրի ակունքատարածքներից, այսինքն զետեղել նույն՝ Արևելյան Խաբուրի և Տիգրիսի խառնման վայրից դեպի հյուսիս, մինչև Հայկական Տավրոսի արևելյան վանահայաց հատվածի հարավային լեռնաբազուկները, այլ կերպ՝ Արևելյան Խաբուրի վտակ հանդիսացող հետագա Խեզիլ կոչված գետակի ավագանում, նույնացնելով Մեծ Հայքի Կադմեա Տուն կամ Կորճայք նահանգի Կորդուք գավառի համեմնի Արարադ կոչված երկրին՝ Արարադ (այժմ՝ Ձուփի դադ) լեռան շրջակային (տե՛ս Կորճայք նահանգի քարտեղը՝ ՀԱՀ, հ. 5, էջ 659): Այսպիսի տեղագրումով ի դեմ՝ «Ուրուատրի»-ի կունենանք Սալմանասար Ա.-ի նկարագրած այն փոքրիկ լեռնային երկրը՝ ընդամենը 51 բնակավայրերով, որն անմիջապես սահմանակից է Ասորեստանին, կարելի է ասել՝ հյուսիսից կախված է Ասորեստանի գըլխին, տարածքային առումով, իրոք, կարող էր նվաճվել Յորում, անգամ կենտրոնական բնակավայրի՝ Արինու կամ Արիննա քաղաքի մոխիրը (ինչպես նշված՝ մի մասը) գետային ճանապարհով հեշտորեն տեղափոխվեր դեպի Աշուուր, և, ամենակարենը, որ Ուրուատրին (=Ուրար-

տուն), այսպես ասած, ի վերջու գտնում է իր նախաձեռ՝ Արարադ—Երկիր անվան մեջ:

Այսպիսով, Սալմանասար Ա.-ը ականատեսի և կատարողի իր վկայությամբ հաստատուն հիմք է տալիս ձերբագատվելու պատմագիտության մեջ տեղ գտած դարավոր խճճանքից և համոզված պնդելու, որ Ուրուատրի–Ուրարտուն անվանապես՝ իր անվան ծագումով, նախապես բնավագ չի ունեցել Երասխ-Արաքս գետի հովտում գտնվող Այրարատ (=Այրարատյան նահանգ), Արարատ (=Արարատյան դաշտ կամ՝ ողաշտն Արայի), Արարատ (=Մասիս) անունների հետ, որ այդպիսի կապ տեսնելը պարզագույն թյուրիմացություն է՝ փաստերում չկողմնորշվելու արդյունք: Սա էլ այն պատճառով, որ Սալմանասար Ա.-ը, պարզապես, Կադմեա տաւն կամ Կորճայք նահանգի սահմաններից դեպի հյուսիս չի արշավել, որ Այրարատյան նահանգի կամ Արարատյան դաշտի հետ, բարեբախտաբար, գործ չի ունեցել: Այլ հարց է արդեն, Ուրարտու–Բիայնայի տերերը հետագա դարերում նաև Արաքսի հովտի հետ են գործ ունեցել, այն էլ համար հետևողականությամբ, որի մասին կխոսվի:

Իսկ թե ստուգաբանորեն ինչ է նշանակում Արարադ—Ուրարտու անունը, վաղուց բացատրված է՝ «Բարձր երկիր», այսինքն՝ աշխարհապական հատկանիշով ստեղծված անուն (աշխարհագրական և ոչ էթնիկական), ինչպիսին համապատասխանում է նաև Կորճայքի Արարադու երկրին, մանավանդ, որ համանուն լեռնազանգվածով և լեռնային դիրքով բարձր էր Ասորեստանից և, առհասարակ, հարավի ցածրավայրերից: Խնձոր էր Ասորեստանից և, առհասարակ, հարավի ցածրավայրերից: Խնձոր էր Արարադի կամ Արարադի այս հատկանիշը ևս նկանալիքն առաջարկած է Սալմանասար Ա.-ի արձանագրության մեջ՝ «...նրանց ամուր խռնաշղթաները են բարձրացած» վկայությամբ:

Մի շատ կարենոր հարց ևս՝ ի՞նչ էթնոպատկանելություն է ունեղել Արարադ կամ Ուրուատրի-Ուրարտուն, այսինքն՝ այն նախնական երկիրը, որի անունից էլ առաջացել են Ուրուատրի-Ուրարտու անվանաձեռը:

Սալմանասար Ա.-ի արձանագրությամբ այս հարցին պատասխանելը հնարավոր չէ, քանի որ այնտեղ բացառապես երկրանուններ են հիշված, կամ էլ երկրանունով են հիշված այս կամ այն տարածքի բնակիչները (նկատի ունենք նաև «կութիներ» կոչվածներին), ուստիև լրացնելով տեղեկություններ են անհրաժեշտ:

Բարեբախտաբար այդպիսի տեղեկություններ ավանդել են հայ պատմիշները, մասնավորապես՝ Սեբեոսի «Պատմությանը» կից Աղիսի հեղինակը՝ Անանուն Ա (Երևան՝ մ. թ. IV դար) և Մովսես Խորենացին: Դ զեզ, ըստ նրանց վկայությունների, երկուսն էլ օգտվել են Մար Արասի «Պատմություն»-ից (մ. թ. ա. II դար), մեր կարծիքով և՝ իրարից անփոխվեր դեպի Աշուուր, և, ամենակարենը, որ Ուրուատրին (=Ուրար-

գրված մ. թ. ա. IV դարի «Մատյան»-ից (Խորենացի, Ա, գլ. Ը-թ): Այլ կերպ ասած, աղբյուրագիտորեն Անանուն Ա-ի և Խորենացու տվյալ տեղեկությունները ակունք-արմատներով գնում են խոր հնադարերը և դրանով իսկ ավելի կարևորվում:

Այժմ դիմենք փաստերին:

Ներկայացնելով Հայկ Նահապետին և Հայք-Հայաստանը ժառանդաբար կառավարող նրա անդրանիկ զարմերին մինչև Արա Գեղեցիկ, Անանուն Ա-ը, որպես ամփոփում, շարունակում է. «Ալրդ՝ այս են անուանք պատճինն, արանց, անդրանկելոցն ի Բաբելոն, գնացելոցն ընդ կողման հիւսիսոյ յերկիրն Արարադայ: Զի շուեաց խաղաց գնաց Հայկն ի Բաբելոնէ կաւան և որդուվքն ամենայն աղխին հանդերձ, և շոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն որ ի լեռնոտինն, որ զառաջինն շինեալ էր Ջրուանայ Հաւրն՝ և եղբարբք հանդերձ:»

Եւ ապա ետ զնա (Արարագա երկիրը, — Լ. Շ.) Հայկն կալուած ժառանգութեան Կաղմեայ բողին իւրում որդույն Արամենակայ: Եւ ինքն (Հայկը, — Լ. Շ.) շուեաց գնաց անտի ևս ի հիւսիսակողմն և շոգաւ բնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայրի միոց. և կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարք, յանուն Հարց:

Իսկ Երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են հայզամբք հանդերձ:

Եւ արդ՝ այս Հայկ հզաւը զաւրութեամբ և բարի անձամբ և կորով աղեղամբ և մարտիկ յոյժ:

Յայնմ ժամանակի (աշտարակաշինությունից հետո, — Լ. Շ.) թագաւորեաց ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն Տիտանեան, ճոխն շաստուածացեալ...

Եվ վաղվաղակի կատարէին ամենայն աղգքն զհրամանս նորա. բայց մի ոմն Հայկ անուն, նահապետ ազգացն, ոչ հնազանդեցաւ ի ժառանգութիւն նորա. և ոչ կանքնէր ի տան իւրում զպատկէր նորա, և ոչ մեծարէր զնա աստուածաւրէն շքով:

... Եւ զաւրաժողով լինի Բէլ արքայ ի Բաբելոն և դիմէ զնայ ի վերայ Հայկայ սպանանել զնա:

Գայ հասանէ (Բելը, — Լ. Շ.) յերկիրն Արարադայ ի տունն, որ էր նոցա (Բելի նախնեաց, — Լ. Շ.) հայրենի, զոր շինեալն էր ի լեռնոտին. և Կաղմոս փախստական զնայց ի Հարք առ հայր իւր ազդ առնել նմա է ասէ. «Դիմեալ գայ Բէլ արքայ ի վերայ քո, և եկն եհաս մինչ ի տուն անդր և ես կնաւ իմով և որդուվք ահաւասիկ գամ փախստական»:

Առնու Հայկն զԱրամենակ և զԿադմոս զորդի իւր, և զորդիս նոցա և զորդիս եւթանեցունց դստերաց իւրոց, արս հսկայս և նուազուն թուով:

... Եւ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ արքայի. և ոչ կարաց զդէմ ունել բազմութեան արանց հսկայից սպառազինաց:

Անդ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ, և կամեցաւ ըմբռնել զնա Բէլ ի բուռն իւր: Խոյս ետ Հայկն յերեսաց նորա, և գնայր նա փախստական. և Բէլ զհետ նորա երթայր պնդագոյն հանդերձ զինակրան իւրով»:

Այնուհետև բերված են Հայկի և Բելի հարց-պատասխանները, նկարագրված է Բելի նետահար մահը և ապա գրված է. «Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր. և շոգաւ կալաւ Հայկն զերկիրն Արարադայ, և բնակեցաւ անդին ազգաւ իւրով մինչև ցայժմ: Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ զնա փալուած ժառանգութեան Կաղմեայ բողին իւրում, որդոյ Արամենակայ Եղաւր Հարմացի: Եւ Արամենակայ Հրամայեաց երթալ ի հիւսիսակողմն, որ ինքն իսկ դադարեաց զառաջինն:

Եւ եղել յետ մահուանն Հայկայ առ Արամենակ զորդիս իւր և զդբստերս իւր և զարս նոցա, և զքորս եւթանեսին և զարս նոցա, զուտերս և զդմտերս նոցա և զամենայն աղին իւր, և շոգաւ բնակեցաւ անդէն յառաջնումն գաւառին, զոր կոչեցին յանուն Հարց իւրեանց՝ Հարք: Ապա զնայ անտի ևս Արամենակ ի հիւսիսակողմն, և երբեալ իշանէ յերկիր մի խորին դաշտավայր, որ կայ մէջ բարձրաբերձ լեռնաց. և հատանէ անցանէ ընդ մէջ նորա գետ հորդահոսան (այստեղ արդեն նկատի ունի Արարատյան դաշտը, — Լ. Շ.), որով անցեալ Արամենակ բնակէ անդ, և շինէ զերկիրն կալուած ժառանգութեան իւրոյ՝ զվայրն լեռնակողմն և դառապար» (Սերեսոս, գլ. Ա, ընդդժ. — Լ. Շ.):

Այժմ էլ դիմենք Մովսես Խորենացուն:

Խոսելով աշտարակաշինության խափանման և Բելի (=ներովթի) բնակալության մասին, այնուհետև Խորենացին գրում է հետեւյալը. «Որում (Բելին, — Լ. Շ.) ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնակելոյ զորդին իւր զԱրամենակի Բաբելոնի՝ շու արարեալ զնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս նիւսիսոյ, հանդերձ որդուվք իւրովք և դստերօք և որդուց որդուվք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեքհամբիր, և այլովք ընդոնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղմիւն Երբեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ դիր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կաղմեայ որդոյ Արամենակայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյց:

«Եւ ինքն խաղայ, ասէ (Մար Արաւու, — Լ. Շ.), այլով աղմիւն ընդ արևմուտս նիւսիսոյ. զայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այսինքն թէ Հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն թորգումայ: Եինէ և գիւղ մի, և անուանէ յիւր Հայկաշէն»: Յիշի և աստանոր ի պատմութեանս (նորից Մար Արաւու, — Լ. Շ.)՝ ի հարաւոյ կողմանէ դաշտի այսորիկ, առ երկայնաստիւ միով լերամբ (նկատի ունի Տավրոսը, — Լ. Շ.), բնակեալ յառա-

շագոյն արք սակաւք, ինքնակամ հնազանդեալ դիւցազինն: Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս (Ա. գլ., Ժ, ընդգծ.— Լ. Շ.):

Հաջորդ գլխում (Ա. գլ. ԺԱ)՝ «Յաղագս պատերազմին եւ մահուանն թելայ» խորագրով, քննարկվող հարցի համար ուշագրավ են հետեւալ հատվածները: Բերում ենք որոշ վերապատմումներով:

Այս գլխի առաջին հատվածում, դարձյալ ըստ Մար Արասի, պատմվում է այն մասին, որ Բելը իր որդիներից մեկին ուղարկում է դեպի հյուսի՝ Հայկի մոտ, դարձի գալու և հպատակվելու պահանջով, սակայն Հայկը «խստագույն պատասխանով» նրան հետ է դարձում Բաբելոն:

Հաջորդ հատվածներում գրում է. «Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն թէլ ամրոխի հետեակ զօրաց. զայ հասանէ ի հիսխի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կաղմեայ: Փախստական լինի Կադմոս առ Հայկ...»

Իսկ Բէլն, յանդուգն և անձոռնի զօրութեամբ ամբոխին, որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ, ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրատրաց: Աստ ուշիմ և խոհեմ սկայն, քաջագանգուրն և խայտակնն աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զիտոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայսն որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի զուրբն, մանունս ունելով յինքեան ձկրն: Եւ կոշեցեալ զզօրս իւր՝ ասէ ցնոսա. «Յելանելն մեր հանդէպ ամրոխին Բելայ՝ դիպակ շանասցուք տեղւոյն, ուր անցեալ կայցէ ի մէջ խոռան քաշացն Բէլ: Զի կամ մեղցուք, և աղիս մեր ի ծառայութիւն թելայ կացցէ, կամ զաղողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»:

Ապա նկարագրված է ճակատամարտի վայրը՝ «ի միջոց ինչ դաշտածն՝ լերանց բարձրագունից» հակառակորդ կողմերի հասնելը ինչ-որ գետի երկու ափերին՝ աշից Հայկի զորագունդը, ձախից Բելի զորքերը (նկատի է առնված հետագա Խոշաբ գետը), ճակատամարտի ընթացքը, Բելի նետահար մահն ու նրա զորքի խումապահար փախուստը:

Գլխի վերջին հատվածում գրված է. «Բայց զտեղի ճակատուն շինէ (Հայկը,— Լ. Շ.) դաստակերտ, և անուն կոչէ Հայք (այս ընթերց. Հայկ,— Լ. Շ.), վասն լաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց ծոր: Իսկ զբուրն, ուր քաջամարտկօֆն անկալ Բէլ՝ անուանեց Հայկ գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանակը, Բայց զդիմակն թելայ պաճումեալ դեղովք, ասէ (Մար Արասը,— Լ. Շ.), երամայէ Հայկ տանել ի Հարէ, և թաղել ի բարձրաւանդակ տեղուոց, ի տեսիլ կանանց և որդուց իւրոց: Իսկ աշխարհամեր կոչի յանուն նախնաւոյն մերոյ Հայկայ Հայք»:

Գիրք Ա, գլ. ԺԲ

«Յաղագս որ ի Հայկայ ազգի եւ ծնունդի, եւ թէ զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց»:

«Բազում ինչ զկնի այսորիկ պատմի ի մատենին (Մար Արաս,— Լ. Շ.); այլ մեք՝ որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է, շարեսցուք:

Զկնի այսորիկ զառնալ ասէ Հայկին ի նոյն տեղի բնակութեան, և զազմեայ թողին իւրում բազում ինչ յանկածէ պատերազմին պարգևէ, և յիրոց ընդունացն արս անուանիս: Հրամայէ զենյն տեղի բնակութեան ոննել նմա զառաջնոյ իւրոյ տանն, և ինքն երալ դադարէ յանուանեալ դաշտին Հարէ: Սա կեցեալ ամս՝ ծնանի զԱրամանեակ ի Բաբելոնի, որպէս վերագոյն ասացաք: Յետ որոյ կեցեալ և այլ ևս ամս ոչ սակաւս՝ մեռանի յանձն առնելով զբովանդակ ազնն Արամանեկայ որդոյոյ իւրում:

Իսկ նորա (Արամանեակը,— Լ. Շ.) բռնեալ զերկուս յեղբարց իւրոց, զիոն և զՄանաւազ, ամենայն աղիսին իւրեանց ի կոշեցեալն Հարէ, և զորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք, իսկ որդի նորա Բազ՝ յարեմտից հիւսիսոյ զեզր ծովուն աղույ, և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբ: Եւ ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս Մանաւազեան և Բզնունեաց, և Որդունին անուանեալ, որք աստ ուրեմն յետ սրբոյն Տրդատայ բարձեալ ասին ի միմեանց պատերազմաւ: Իսկ եռուն ի կողմանս հիւսիսոյ բազմանայ, կարգէ զշէնս իւր, և ի նմանէ ծեալ ասի մեծ նախարարութիւն ազգին եռոխոռունեաց, արք քաջք և անուանիք, որպէս և որք առ մեօք են այժմ երևելիք:

Իսկ Արամանեկայ առեալ զամենայն բազմութիւնն՝ խաղայ (Հարքից,— Լ. Շ.) յարեելս հիւսիսոյ, և երեալ իշանէ ի խորին դաշտավայր մի, ի բարձրագագաթանց պարսպեալ լերանց, զետոյ կարկաչասահի յարեմտից ընդ մէջ անցանելով» (ընդգծ.— Լ. Շ.):

Այս գլխի հաջորդ շարադրանքում ևս շարունակվում է տվյալ դաշտի նկարագիրը, որն արդեն անկասկած Արարատյան դաշտն է Երասխի հովտում, չնայած դեռևս, ըստ պատմիչների, անվանակոշված չէ:

Այսպիսով, ոչ թե մեկ, այլ մի շարք նշումներով ակնբախ է դառնում, որ Հայկ նահապետի և նրա թոռ Կաղմոսի առիթներով հիշված Արարադա երկիրը, երբեք էլ Երասխ—Արաքսի հովտի Արարատյան դաշտը չէ, այլ Հենց նույն՝ Սալմանասար Ա.-ի վկայած «Ուրուատին» («Ուրուատուն»), ավելի ճիշտ, վերջինները Արարադա երկիրի ասսուրաբելական արտասանաձերն են: Ի դեպ, մեր համոզումով, կադմա տուն նահանգի այս Արարադա երկիրն է, որ Արարատ անունով քանից հիշված է մ. թ. ա. երրորդ հաղարամյակի սկզբներին վերաբերող շումերական հինգ դյուցազնավերում (կամ մեկ դյուցազնավեաի

հինգ վիպերգերում)¹, որ դրանք նույնանում են թե՛ պատմականորեն (ունեցած գերով), թե՛ տեղագրորեն (ավելի քան տասը տեղագրական նմանություններ կան), թե՛ ժամանակագրորեն (Հայկն ու Կաղմոսը ևս մ. թ. ա. երրորդ հազարամյակում, թեպետ կեսերին), թե՛ անվանապես (Արարադ>Արարտա>Արատտա, կամ՝ հակառակ անցումով): Այնպես որ, խոսքը անհայտ երկրի մասին չէ, այլ պատմական ինչ-որ պահպայթի տեր, հնագույն աշխարհին քաջահայտ երկրի, որի համար էլ թերևս եղել է ուշագրության կենտրոնում՝ Հայկի, Բելի, Սալմանասար Ա-ի, Մար Արասի, Անանուն Ա-ի, Մովսես Խորենացու, իսկ մ. թ. ա. IX և հետագա դարերի ասսուրական թագավորների համար էլ՝ տարածքային այլ ընդգրկումով և այլ էությամբ:

Ինչ որ է: Անանուն Ա-ի և Մովսես Խորենացու տեղեկություններով արդեն, ինչպես տեսանք, հստակ երեսում է Արարադի երկրի էթնոպատկանելությունը, այն էլ ոչ միայն Սալմանասար Ա-ի ժամանակի, այլև մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից: Արդ, եթե հայերի անվանադիր (Էպոնիմ) նահապետ Հայկը՝ Բաբելոնից իր նախնիների երկիրը վերադառնալիս, իր ամբողջ աղխով նախապես հաստատվել է Արարադա երկրում, հպատակելով նախկիններից ապրող արյունակիցներին, մասամբ էլ՝ ոչ արյունակիցներին (երեսում է, Սեմի զարմերից ոմանց), եթե նրա անունով Հայկ-Հայք են կոչվել այդ երկրամասի բնակիչները ևս, այսինքն՝ այդ երկրամասը ևս, և առաջին հերթին ընդգրկվել է հայ անունը կրող ժողովրդի կազմավորման գործընթացում, եթե այդ երկրամասն է հանդիսացել Հայոց հնագույն կամ Հայկյան պետության առաջին կորիգ-կենտրոնը (սա ևս բացահայտ երեսում է), թեպետ կարճատես, մինչև Հայկի հաստատվելը Հարքում, այսինքն՝ մինչև պետության երկրորդ կորիգ-կենտրոնում, եթե Հայկը այդ նույն Արարադա երկիրը որպես բաժնեկալված հանձնել ու վերահանձնել է իր թոռ Կաղմոսին և նրա զարմերին, որոնք հարատեել, իշխել և ապրել են այնտեղ (և ոչ միայն այնտեղ) հետագա հազարամյակներում և այլն, և այլն, ինչպես ասում են, պարզից էլ պարզ է դառնում, որ Կաղմեա տուն կամ հետագա Կորճայք կոչված նահանգի Արարադա երկիրը ևս մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից հայարեակ էր և Հայք-Հայաստանի մասն էր կազմում:

Հայ պատմիչների տեղեկություններից բխող մեր այս եզրակացությունը, կարծում ենք, վիճարկելի չէ, մանավանդ որ արտաքին աղբյուրները բացասող որևէ փաստ չեն ընձեռում: Ավելին, բերված տեղեկությունների նպաստը չի սահմանափակվում միայն Արարադա երկրի ճրշդրություն տեղագրումով, կամ էլ նրա էթնոպատկանելության բացահայտումով: Ամենաին: Հենց այն բանը, որ Արարադա երկիրը, ըստ նույն պատմիչների, զուգահեռ կոչվել է Կաղմեա տուն, որ ըստ այդմ Կաղմեա

ուն է կոչվել նաև ամբողջ նահանգը, որը Արամ նահապետի ժամանակից (ինչպես նշել ենք, մ. թ. ա. 2036—1978 թթ.), ըստ Խորենացու (Ա, դ. ԺԴ), եղել է Հայոց հարավային կուսակալությունը՝ ընդդեմ Ասորեստանի, և երեսում է՝ պահպանել է այդ դերը ձիգ դարեր, կնշանակի, այն և Հայաստանի երկրամաս էր և անպայման հայարեակ: Այսինքն՝ Կաղմուսի զարմերի իշխանության և բնակության երկիր:

Ահա այս մեկնակետով հայ պատմիչները (ոչ միայն նշվածները) դարձյալ համահունչ են ասսուրական արձանագրությունների տեղեկություններին և կարող են հստակել պատմագիտական մի շարք անորոշություններ ևս: Հեռուն շգնալու համար նորից դիմենք Սալմանասար Ա-ին:

Ինչպես տեսանք, իր պատժից արշավանքներից մեկը նա ուղղել է, այսպես կոչված, «կութիներ»-ի դեմ, որոնք եղել են բազմաքանակ («ինչպես երկնքի աստղերը»), ըմբուտ և ուազմիկ («կոտորածի սովոր»), ընակվել են Ուրուատրի երկրից մինչև Կուղմուխի երկիրն ընկած ընդարձակ տարածքների վրա, Ասորեստանի սահմաններից «երկար բերուներ» հռու:

Հետազոտողների խիստ հիմնավոր և ընդհանրացված կարծիքի համայն այստեղ հիշված Կուղմուխի (այլ ընթերցմամբ՝ Կուտմուխի) երկիրը անվանապես նույնանում է ասսուրական հթտագա թագավորների արձանագրություններից հայտնի Կաղմուխի (այլ ընթերցմամբ՝ Կատմուխի) անվան հետ (Հ. Արյունյան, Տոպոնիմիկա Սր-ս, էջ 98, 114) և տեղագրվում է Կաղմեա տուն կամ հետագա Կորճայք նահանգի Կորդուք գավառում, կամ էլ՝ նույնացվում այդ ամբողջ գավառին, կամ էլ, անգամ՝ Սաղմեա տուն նահանգի ամբողջ տարածքին (Հ. Արյունյան, նույն տեղում, էջ 99):

Այս տեղագրումները, կարծում ենք, բոլորն էլ ճիշտ են, սակայն նկատի չեն առնված ժամանակը և այլ պարագաներ: Օրինակ, Սալմանասար Ա-ի հիշած Կուղմուխի-Կաղմուխին, որը Ասորեստանից «երկար թիրուներ» հեռու է, Ուրուատրի-Արարադա երկրից դենը (ըստ ասսուր-ների), պետք է զետեղել Կորդուք գավառի հյուսիս-արևմտյան մասում, որը միաժամանակ Կաղմեա Տուն նահանգի հյուսիս-արևմտյան տարածքն է Արեւլյան Տիգրիսի ստորին հոսանքից հարավ-արևելք: Եվ քանզի «Կուղմուխի» (=«Կաղմուխի») երկիր անվանումը այլ բան չէ, քան Կաղմեա Տուն անվան ասսուրական արտասանաձեր (սա ևս վաղուց ապացուցված է, տե՛ս Հ. Արյունյան, նույն տեղում, էջ 99), և Սալմանասար Ա-ն էլ դրա մեջ էթնոիմաստ չի դրել, ուրեմն՝ զարմանալի չի լինի, որ այդ տարածքում ևս տեսնենք Կաղմուխ զարմերին, այսինքն՝ Հայերին: Ավելին, Սալմանասար Ա-ի, ինչպես նաև ասսուրական հետագա թագավորների վկայությունները Կուղմուխի-Կաղմուխի երկրի մասին (Հայերին՝ Կաղմեայ Տուն, Կաղմեայք, Կաղմուք) հնագույն և առաջնակարգ

¹ S. N. Kramer, The SUMERJANS, Chicago, 1972, էջ 269—267:

ապացույցներ են հայ պատմիչների՝ արդեն մեզ ծանոթ տեղեկությունների արժանահավատության, որոնց վրա, ցավոք, պատշաճ ուշադրություն չի դարձվել, կամ էլ՝ ուշադրություն չի դարձվել ընդհանրապես:

Այսպիսով, Սալմանասար Ա-ի հիշած Ուրուատրի=Ուրարտու=Արարադ երկիրը հայաբնակ, այսինքն՝ Կադմոսի զարմերի հնամենի բնակավայր, նաև վարչական կենտրոն, Կուղմուխի=Կադմուխի=Կադմեայքը՝ հայաբնակ, դարձյալ՝ Կադմոսի զարմերի բնակավայր, և, ահա, դրանց միջև «կուրիներ» (այլ ընթերցմամբ՝ կուտույց)՝ մի՞քև առանձին, նշված հարեաններից տարբեր ցեղեր են, կամ՝ ցեղեր են, ինչպես կարծում են (տե՛ս ՀԺՊ քրեստոմատիա, էջ 16, ծան. 15, հմմտ. Տոպոնիմիկա Սարդար, էջ 124):

Մեր կարծիքով, կութի-կուտի անունով ոչ հայկական ցեղ կամ ցեղեր տեսնելը զանազան դժվարություններ է հարօւտում: Նախ այն պատճառով, որ Սալմանասար Ա-ը, ոչ էլ ուրիշները (օրինակ, Թուկութի-Նինուրտա Ա-ը, տե՛ս Տոպոնիմիկա Սարդար, էջ 124) այդ անվան մեջ էթնոիմաստ շեն դրել, այսինքն՝ շեն նշել որպես ցեղ, այլ ավելի շատ տեղանուն է հիշեցնում՝ կր Կուլիս կամ կր Կուլի (ստ): Երկրորդ, կութի կամ կուտիներից հարավ Կադմոսի զարմեր են (Արարադա երկիրը), հյուսիս-արևմուտքում ևս կադմեայք (Կուղմուխի=Կադմուխին), ուստին հավանական շի երեւմ միջանկյալ տարածքում ուրիշ՝ ոչ արյունակից ցեղերի բնակությունը: Երբեք, կր Կամուհ կամ կր Կամուհ երկիրը, ըստ ասսուրական արձանագրությունների, լայն առումով համապատասխանում է Կադմեա Տուն նահանգին (տե՛ս Տոպոնիմիկա Սարդար, էջ 98—99), որը մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջերից (Արամի ժամանակից), ըստ հայ պատմիչների, համակ հայաբնակ էր՝ բնակեցված Կադմոսի զարմերով, ուստին՝ այլացեղ, այն էլ՝ «երկնքի աստղերի շափ» կութիներին կամ կուտիներին ավյալ նահանգի տարածքներում նորից տեղ չի մնում կամ, մեղմ ասած, անհավանական է: Չորրեց, կութիներ-կուտիներ «ցեղի» կամ «ցեղերի» մասին կարծիքը սոսկ մերկապարանոց վարկած է, փաստերի հապանցիկ տպավորության արդյունք, դրանով իսկ ոչ գիտական և անընդունելի: Վերջապես, Կուլիս անվան կատ արմատը կարելի է նույնացնել Կադ-մ-ոս անվան կատ արմատին, ժիշտ այնպես և այն օրինաշափությամբ, ինչպես Կու-մ-ոս-ին է նույնացվում Կու-մ-ոս=Կու-մ-ոս-ի հետ: Այսինքն՝ կութիներ=կուտիներ=կուդիներ ասվածը հասկանալ կադի-ներ=կադմեայք-կադմյաններ: Նկատի ունենալ, որ այս ստուգաբանությամբ վերոհիշյալ դժվարությունները իսպառ վերանում են և, այսպես ասած, շինժու մեկ ցեղից էլ ենք ազատվում:

Այսպիսով, փաստերի համատեղ քննարկումից երեսում է, որ Սալմանասար Ա-ի երկու արշավանդները՝ ընդդեմ «ուրուատրիներ»-ի և «կուտիներ»-ի, ընթացել են Կադմեա Տուն կամ հետագա Կորճայք նա-

հանգի Կորդուք գավառում (ի դեպ, նահանգի ամենամեծ գավառը՝ 5825 քառ. կմ), երկուսն էլ ուղղված Կադմոսի զարմերի, այսինքն՝ հայերի դեմ: Ապացույց, թեկուզ, որ նշված տեղավայրերից երկուար՝ Կուդմուխի-Կադմուխին և Կուդի-Կադին, նաև անվանապես կապված են Կադմոսի անվան հետ: Արդ, կարող է օրինական հարց առաջանալ՝ եթե Կադմոսի անունով է ամբողջ նահանգը՝ Կադմեա Տուն՝ Կադմուխի, եթե նրա անունով են նաև նահանգի երկու երկրամասեր, այսինքն՝ եթե տվյալ ժամանակ Կադմոսի զարմերն են բնորոշել նահանգի էթնոպատկերը, մասնավորապես՝ Արարադա երկիրի, ուրեմն ինչո՞ւ Ուրուատր-Արարատու-Արարադա երկիրը անվանապես տարբերակված է մյուսներից, չի կոչվել Կադմոսի անունով: Այս բանը ուշագրավ է դառնում հատկապես, քանզի ըստ հայ պատմիչների, ինչպես տեսանք, Արարադա երկիրը զուգահեռ կոչվել է Կադմոսի Տուն՝ Կադմոս նահապետի ժամանակից (մ. թ. ա. ԱՀՎ դար), այսինքն՝ Սալմանասար Ա-ից շուրջ 1200 տարի առաջ:

Հարցի պատասխանը, կարծում ենք, պետք է փնտրել Արարադ երկր-անվան ավանդական, այսպես ասած, հաստատագրված բնույթի մեջ (մոռանանք ասսուրական հնագույն դյուցազնավեպում նրա կարեռումը և նրան տրված Արատտա-Արարտա-Արարդա անունը): Այսինքն այն բանում, որ ավանդույթի ուժով ասսուրների համար այն եղել է անփոխարինելի անվանում, անկախ նրանից՝ երկրամասի բնակիչները Կադմոսի զարմերն էին, թե ոչ, կամ մեկ այլ անուն ունեին: Թե շունեին: Սրանով պետք է բացատրել նաև, որ ավելի ուշ դարերում (նկատի ունենք մ. թ. ա. IX—VII դարերը), երբ Արարադա տերերը առավել քննարձակ տարածքների էին իշխում և, նույնիսկ, փոխել էին վարչական կենտրոնը, այսինքն՝ կենտրոն էին դարձրել Տուշպան կամ Տոսպը և իրենց կողում էին Բիայնայի կամ Վանի տերեր, ասսուրական թագավորները նորից շարունակում են նրանց կոչել ուրարտացիներ-արարադցիներ՝ նկատի ունենալով, կարծում ենք, նրանց հնագույն վարչական կենտրոնը:

Արարադա երկիրը դարձյալ «Ուրուատրի» ձևով հաշորդ անգամ հիշատակել է Ասորեստանի թագավոր Աշուրբեկալան (Աշուր-Բել-Կալա՝ 1077—1060 կամ 1074—1057 թթ.): Նա «Ուրուատրին» զետեղում է Արեկելան Տիգրիսի շրջանում և ասում, որ իր թագավորության առաջին տարում գրավում է Ուրուատրին և Մաշգուն, իսկ երկրորդ տարում՝ Ուփուատրին, Մաշգունը և Խիրուան (Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, էջ 67):

Այս տեղեկությունը, իհարկե, թույլ է տալիս Արարադա երկրի նախորդ 200-ամյակի քաղաքական վիճակի մասին մոտավոր ենթադրության գալու (այսինքն՝ Սալմանասար Ա-ի մահից մինչեւ Աշուրբեկալա), սակայն առավել ճշմարտամոտի համար կարելոր ենք համարում դիմել նաև Թիգլաթպալասար Ա-ի (1115—1077 թթ.) արձանագրության՝ դարձյալ հայտնաբերված Աշուրբեկան ավերակներում (տե՛ս ՀԺՊ քրեստոմատիա,

էջ 16—20): Իրավ է, այս արձանագրության մեջ Ուրուատրի, Ուրարտու կամ Արարադ չի շշված, սակայն Կաղմուխի (Կամուխ) երկրի շուրջ տասը հիշատակումները և նրա դեմ ձեռնարկած արշավանքները, կարծեք թե, լրացնում են այդ բացը: Մա էլ այն պարզ պատճառով, որ Կաղմուխի երկիրը (=Կաղմեա Տուն նահանգը), ինչպես տեսանք, շատ ավելի վաղ ժամանակներից ընդգրկել է նաև Արարադա երկիրը, այսինքն՝ Ուրուատրի—Ուրարտուն, կամ, ավելի ճիշտ, վերջինն է եղել նահանգի Կորիգ-կենտրոնը և «Կաղմեա Տուն» անվան առաջին կրողը:

Հստ արձանագրության, Թիգլաթպալասար Ա-ը Հայաստան է արշավել վեց անգամ, որից երեքը՝ դեպի Կաղմուխի երկիր, մեկը՝ դեպի Ալզի, Պուրուլումզի և Շուբարի երկրներ (այսինքն՝ Աղձնիք), մյուսը՝ նահիրիի 23 երկրների (այլ անգամ՝ 60, 42, 30 երկրներ են նշված) համագործակցության դեմ, մեկ ուրիշը՝ դեպի Խանիկալբատ՝ «անհնազանդ Միլիդիա քաղաքի» դեմ: Մեր կարծիքով, այս բոլոր արշավանքները ուղղված են հայերի դեմ, սակայն, նկատի ունենալով, որ հենց այդ հարցն է վիճելին, ուշագրություն բևեռնք Կաղմուխի երկրի կամ Կաղմեա Տուն նահանգի դեմ ձեռնարկած արշավանքներին, եվ որպեսզի առար-

կայական դառնան մեր պատկերացումները, բերենք Կաղմեա Տուն կամ Կորմայք նահանգի 11 գավառների ցուցակը՝ ըստ «Աշխարհացույց»-ի:

Մեծ Հայքի 6-րդ նահանգ՝ Կորհայք (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 108, 109, 117), նաև ապես՝ Կաղմեա Տուն:

Այժմ վերադառնանք արձանագրությանը:

«Իմ թագավորության սկզբին,— ասում է Թիգլաթպալասար Ա-ը, — 20.000 մոլցեր և նրանց հինգ թագավորները (=առաջնորդներ, — Լ. Շ.), որոնք հիսուն տարի է (այսինքն՝ մ. թ. ա. 1165-ից, — Լ. Շ.) սվաճել էին Աղջորին՝ տիրոջս, հարկ ու տուրք բերող Ալզի (=Աղձնիք, — Լ. Շ.) և Պուրուլումզի (=Ալզիի մոտ, Աղձնիքում, — Լ. Շ.) երկրները (և ոչ մի թագավոր ճակատամարտում չէր թեքել նրանց կուրծքը, հույսը դրին իրենց հզորության վրա և եկան, նվաճեցին Կաղմուխի երկրը: Իմ տիրոջ՝ Աշշուր աստծու հույսով հավատեցի իմ մարտակառերն ու զորքեր..., անցա Քաջիյարա լեռաւ դժվարին վայրը. Նրանց 20 000 ուազմիկների և նրանց հինգ թագավորների հետ Կաղմուխի երկրում շափվեցի, նրանց պարտության մատնեցի, նրանց մարտիկների դիակները ինչպես հեղեղ կիտեցի... Նրանց գլուխները կտրեցի (և) նրանց քաղաքների շուրջը ցորենի կույտերի նման դիգեցի... Նրանց զորքից մնացած 6000-ը, որոնք փախել էին իմ զենքից, (եկան (և) գրեցին իմ ոտքերը: Նրանց ընդունեցի և որպես իմ երկրի ծողովուրդ համարեցի (Հծ՛ քրեստոմատիա, էջ 16—17, ընդգծ. — Լ. Շ.):

Այսպիսով, ըստ այս տեղեկությունների, Թիգլաթպալասար Ա-ը արշավել է դեպի Հյուսիս, ուր, ինչպես տեսանք, Կաղմեա Տուն նահանգի Կաղմեա Տուն կամ Կաղմեայք գավառն էր, ասսուրական արտասանությամբ Կաղմուխին, հետագա Կորդուքը՝ Արևելյան Տիգրիս և Արևելյան Խարուր գետերի միջագետքում, Այս ընթացքում Թիգլաթպալասարը անպայման պետք է անցներ Արարադա երկրով (կամ Ուրուատրի—Ուրարտուով) և անկասկած անցել է, սակայն չի նշել, ապա նոր հասներ Քաջիյարա լեռները, մեր կարծիքով՝ Հայկական Տավրոսի արևելյան հատվածը: Անցնելով լեռների հյուսիսակողմը, քանզի Տավրոսյան լեռները արևմուտք-արևելք ուղղվածություն ունեն, Թիգլաթպալասար Ա-ը պատերազմել է այստեղ նոր հաստատված մուշկերի դեմ, որոնց բնակավայրը ևս կոչել է Կաղմուխի, այսինքն՝ Կաղմեայք-Կաղմուխի զարմերի երկիրը: Արքեմն՝ ասսուրների համար «Կաղմուխի» էր ոչ միայն Կորդվաց լեռներից հարավ տարածվող երկրը՝ մինչև Ասորեստան, այլև նույն լեռներից հյուսիսը՝ մինչև Վանա լճի հարավային ափեր, ուր հետագայում (գուցեն այդ ժամանակից) կազմավորվել է Մեծ Հայքի Մոկք նահանգը, ինչպես այսպահանությամբ:

3. Կաղմեա Տուն կամ Կորմայք նահանգի ընդհանուր տարածքը կազմել է 14.767 քառ. կմ, իսկ հարկան Մոկք նահանգը՝ իր 8-ը գավառներով ընդամենը 2962 քառ. կմ:

| Հաշորդական. | Գավառները | Տարածքը՝ քառ. կիլոմետրերով |
|-------------|----------------|----------------------------|
| 1 | Կորդուք | 5825 |
| 2 | Կորդուք Վերին | 1075 |
| 3 | Կորդուք Միջին | 1025 |
| 4 | Կորդուք Ներքին | 625 |
| 5 | Արտարուանք | 325 |
| 6 | Ալգառք | 302 |
| 7 | Մոթովանք | 875 |
| 8 | Որսիրանք | 1250 |
| 9 | Կարթսանիք | 550 |
| 10 | Ճահուկ | 2450 |
| 11 | Աղբակ Փոքր | 405 |

Մանօրաբայան. 1. Կաղմեա Տուն կամ Կորմայք նահանգը արևմուտքում սահմանակից էր Աղձնիք նահանգին՝ սահմանաբաժան էր Արևելյան Տիգրիսը կամ Ձերմ գետը, այժմ՝ Բոհոտան, Հյուսիսամ՝ Մոկք և Վասպուրական նահանգներին, արևելքում՝ Պարկահայք նահանգին, Հարավում՝ Ասորեստանին:

2. Գավառները թվարկված են ըստ «Ախարհացույց»-ի՝ արևմուտքում արևելք հայոցականությամբ:

3. Կաղմեա Տուն կամ Կորմայք նահանգի ընդհանուր տարածքը կազմել է 14.767 քառ. կմ, իսկ հարկան Մոկք նահանգը՝ իր 8-ը գավառներով ընդամենը 2962 քառ. կմ:

կայացրել է Թիգլաթպալասարը, այլ տեղաբնիկների համաձայնությամբ՝ և դաշնակցությամբ՝ ընդգեմ ընդհանուր հակառակորդ Ասորեստանի:
Այս առթիվ ուշագրավ է ն. Աղոնցի հետևյալ եզրակացությունը.
«Մի բուռ մուշկերի քաջարի դիմադրությունը Ասորեստանի հզոր թագավորին՝ քաջալերեց նրա լծի տակ գտնվող հարևան ցեղերին ու ժողովուրդներին: Առաջինը գլուխ բարձրացրեց Կուտմուխին, նա, որին ներխուժողների դեմ պաշտպանել էր Թիգլաթպալասարը, ըստ երևույթին, առանց երախտագիտության որևէ գացում ներշնչելու» (Հայաստանի պատմություն, էջ 55):

Այս, հենց այս՝ «երախտագիտության» պակասն է նաև հիմքն այն բանի, որ մուշկերը Կադմուխի երկրի նվաճողներ չեն երևում, այլ, ընդհակառակը, դաշնակիցներ ու զինակիցներ, որ Կադմուխի բնակիչներն էլ, այսինքն՝ կադմեայք, նոր չէին «գլուխ բարձրացնում» հզոր Ասորեստանի դեմ, այն էլ՝ մուշկերի քաջարի դիմադրությամբ ոգեսրված, Հիշենք թեկուզ Արա Դեղեցիկ (ըստ Խորենացու թագավորած՝ 1978—1968 թթ.) և Շամիրամ «սիրախառն» պատմությունը, որը հայ-աստորական հակամարտությունների խիստ պարտավորեցնող նկարագիր է, կամ՝ փորձենք մի պահ հավատալ: Հիշենք նաև Սալմանասար Ա-ի պատժի արշավանքները Ուրուատրի-Ուրարտու-Արարադ և Կուտի-Կադի երկրների դեմ: Վերջապես, ինչու հեռուն գնալ, դիմենք իր իսկ՝ Թիգլաթպալասար Ա-ի՝ Կադմուխի կատարած երկրորդ արշավանքի նկարագրությանը:

«Այդ ժամանակ (այսինքն մուշկերի դեմ՝ Կադմուխի կատարած արշավանքից հետո,— լ. Շ.) դեպի անհնազանդ Կադմուխի Երկիրը, որը դադարեցրել էր Աշշուրի՝ իմ տիրոջ, հարկն ու տուրքը, իրոք արշավեցի: Ամբողջ Կադմուխի Երկիրը նվաճեցի, նրանց ուազմավարը, նրանց հարստությունը և ունեցվածքը խլեցի, նրանց քաղաքները կրակով այրեցի, քանդեցի և ոչնչացրի: Կադմուխի Երկիրի մնացած (մարդիկ), որոնք իմ զենքից փախել էին, անցան Տիգրիս գետի (մեր կարծիքով՝ նկատի ունի Արևելյան Տիգրիսի միջին հոսանքը՝ Տավրոս լեռների արևելյան զուգահեռ մասում,— լ. Շ.) մյուս կողմը գտնվող Շերեշե քաղաքը, որը իրենց ամրոցը դարձին: Իմ մարտակառքերն ու զինվորները վերցրի, ուղղաձիգ ու դժվարանց լեռների ճանապարհները պղնձե բրիչներով հարթեցի՝ իմ մարտակառքերի և զորքերի անցման համար հարմարեցրի, Տիգրիս գետը անցան, նրանց Շերեշե ամուռ քաղաքը նվաճեցի, նրա ռաշմիկների (դիակները) աղբակուտերի նման դիգեցի, նրանց արյանը Տիգրիս գետում և լեռների բարձունքներում թափեցի:

Այդ ժամանակ բարիխների զարգը (ստուգաբանորեն՝ բարիխ-լեռնական, լեռնաբանակ,— լ. Շ.), որը եկավ Կադմուխի Երկիրը փրկելու և օգնելու, ուշարի նման զգետնեցի, նրանց ուազմիկների դիակները լեռների ստորոտում կուտերի վերածեցի, նրանց ուազմիկների մարմին-

ները (հանձների) նամե գետին, (նկատի ունի Արևելյան Տիգրիսի հետագա Կեծան կոչված վտակը, — լ. Շ.)՝ տանելու դեպի Տիգրիս գետը»:

Ապա Թիգլաթպալասար Ա-ը հայտնում է, որ իր ձեռքով բռնել է նրանց Քիլի-Թեշշուր թագավորին՝ Քալի-Թեշշուր որդուն, որին կոչել են նաև իրրուպի (ըստ Ն. Աղոնցի՝ Շարրուպի), տարել նրա հարազատ-ներին ու լավագույն ունեցվածքը, այրել, ոչնչացրել նրա պալատն ու բաղաքը: Հայտնում է նաև որ Պանարու լեռան վրա եղած նրանց ամրակույցը Ուոախինաշ քաղաքի բնակիչները վախից փախել են իրենց բարձր լեռները, որ, ի վերջո, Ուոախինաշի թագավոր Շաղի-Թեշշուրը՝ Խթիթուխի որդին, ստիպված մեծամեծ նվերներով եկել, անձնատուր է դարձել իրեն, իսկ ինքը՝ «Ընդունեցի նրա այս (հարկն ու տուրքը), նրան ազատեցի, իմ տերության ծանր լուծը հավիտյան նրա վրա դրի: Ենթարձակ Կադմուխի Երկիրը ամբողջությամբ նվաճեցի, իմ ուժերին խոնարհեցրի...» (տե՛ս ՀԺՊ քրեստումատիա, էջ 17—18, ընդգծ. — լ. Շ.):

Այս այսպիսին է Կադմուխի կատարած երկրորդ արշավանքի վերջնարդյունքը՝ անհնազանդ և ընդարձակ Կադմուխի Երկիրը ամբողջությամբ նվաճեցի, իմ ուժերին խոնարհեցրի:

Թիգլաթպալասար Ա-ի հաջորդ արշավանքը ուղղված է եղել Շուրարթու երկրի դեմ՝ «ենթարկել է հզոր և անհնազանդ շուրարթիներին», նորից հարկատու դարձրել Ալզի և Պուրուրումզի երկրները: Սրան էլ հաջորդել է Կադմուխի կատարած երրորդ արշավանքը:

«Իմ բազության զայրույթի մեջ— ասում է նա, — երկրորդ անգամ դեպի Կադմուխի Երկիրը գնացի (նկատի չի ունեցել մուշկերի դեմ՝ Կադմուխի կատարած արշավանքը, — լ. Շ.), նրանց բոլոր քաղաքները նվաճեցի, նրանց ուազմավարը, նրանց հարստությունը և ունեցվածքը բռնագագեցի, նրանց քաղաքները կրակով այրեցի, քանդեցի, ոչնչացրի, նրանց մնացած զինվորները, որոնք վախեցել էին իմ ահեղ զենքից և իմ մոտալուս ուժեղ ճակատամարտից, իրենց կյանքը փրկելու համար բռնեցին լեռների դժվարամատույց, ուղղաձիգ վայրերը: Նրանց հետեւ բարձր լեռնաշղթաների գագաթները և դժվարանց լեռների ժայռերը բարձրացա, որոնք մարդու ոտքի համար անմատչելի էին. նրանք ինձ հետ պատերազմ, կոիվ և ճակատամարտ տվեցին, նրանց պարտության մատնեցի, նրանց ուազմիկների դիակները լեռների կիրճերում ու բարձունքներում թափեցի, նրանց ուազմավարը, հարստությունը, ունեցվածքը լեռների ժերապերից իշեցրի: Կադմուխի Երկիրը՝ նրա ողջ սահմաններով, պիրեցի և իմ երկրի սահմանների մեջ ընդգրկեցի» (ՀԺՊ քրեստումատիա, էջ 18—19, ընդգծ. — լ. Շ.):

1. Խնչես տեսնում ենք Կադմուխին տարածքապես, տնտեսապես և ուազմականապես ինչ-որ փոքրիկ, անզոր և աննշան երկիր չէ, որ Թիգլաթպալասար Ա-ը իր ամրող զորությամբ («մարտակառքերն ու զորքերն հավաքած») բախվել է ուազմականապես բավականաշափ զորեղ

մեկ այլ ուժի, իսկ հաջողություններն էլ, չնայած սնապարծական հայտարարություն-նկարագրություններին, այնքան էլ գոհացնող չեն: Այլապես, ավելորդ կդառնային միևնույն երկրի դեմ պարբերաբար և արագարագ կրկնված նրա պատժիշտ արշավանքները, այն էլ՝ անընդհատ աստիճանով նրա ցասումով ու զայրություն:

2. Այսուհանդերձ, արշավանքների երթուղիներից և տեղագրական այլ նշումներից երկում է, որ Թիգլաթպալասար Ա-ի արշավանքները ուղղված են եղել ոչ թե ամբողջ Կաղմուխի երկրի կամ Կաղմեա Տուն նահանգի դեմ, այլ նույն նահանգի մեջ մտնող նույնանուն՝ Կաղմուխի կամ Կաղմեա Տուն կոչված գավառի դեմ, այսինքն՝ հետագա Կորդուք կոչված գավառի, որը նահանգի ամենամեծ գավառն է, ունեցել է 5825 քառ. կմ տարածք, այն էլ վաղ միջնադարի վիճակով:

3. Ասում ենք «վաղ միջնադարի վիճակով», քանզի երկում է նաև, որ Կաղմուխի կամ Կաղմեա Տուն գավառը Թիգլաթպալասար Ա-ի ժամանակ ավելի մեծ տարածք է ունեցել: Այն է՝ հարավում ընդգրկել է նաև Արարադա երկիրը, այսինքն՝ Ուրուատրի-Ուրարտուն, որը տարածքապես համապատասխանում է Կաղմեա Տուն կամ Կործայք նահանգի հետագա ներքին Կորդուք կոչված գավառին, տարածքը 625 քառ. կմ, իսկ հյուսում, ինչպես տեսանք, հետագա Մոնկը կոչված ամբողջ նահանգը, որը տվյալ ժամանակ հենց Կաղմուխի էլ կոչվել է, այսինքն եղել է գավառի նույնանուն մասը, տարածքը 2962 քառ. կմ: Այսպիսով, Կաղմուխի կամ Կաղմեա Տուն գավառը տվյալ ժամանակ ունեցել է 9412 քառ. կմ տարածք ($5825+625+2962$), այսինքն՝ 2059 քառ. կմ-ով ավելի, քան Կաղմեա Տուն կամ Կործայք նահանգի տարածքի կեսը: Սա, իրոք, պատկառելի տարածք է, եթե, մանավանդ, նկատի ունենանք նրա լեռնաշատ բնույթը, ժամանակի ուղղմական հնարավարությունները և այլն, և կարող էր բավականաշափ «տառապանք» պատճառել Ասորեստանի հզոր տիրակալին, ինչպես և պատճառել է:

4. Արձանագրության թեկուզեւ ակամա նշումներով ակնբախ է, որ Կաղմուխի բնակիչները, այսինքն՝ Կաղմեայք, այսինքն՝ գավառի հայքանակի ու նրանց հետ դաշնակցած մուշկերը համառ և հերոսական պայքար են ժավալել ահարկու նվաճողի դեմ և հասել որոշակի հաղողությունների: Ապացույց են թեկուզ Թիգլաթպալասար Ա-ի արագորեն իրար հաջորդած երեք պատժիշտ արշավանքները (ընդամենը իր թագավորության առաջին հինգ տարիներում), ինչպես նաև հակառակորդների դիմադրության մասին նրա իսկ ակամա խոստովանությունները: Օրինակ, Քաշիյարա լեռների դժվարանց վայրերը մտնելը, և մուշկերի գեմ (մեր կարծիքով, ոչ միայն մուշկերի) լեռան կիրճերում ու բարձունքներում «մաքառելլ», կամ Կաղմուխի բնակիչների դեմ «ուղղաձիգ ու դժվարանց լեռներ» բարձրանալը, ոչ դյուրին գետանց կատարելը, նրանց ամրակառուց Շերեշե և Ուռախինաշ քաղաքները «հերոսաբար» գրա-

վելը, «փախչողների» հետեւ համառորեն ընկնելն ու կովելը, կամ կաղմուխի բնակիչների դեմ մեկ անգամ ևս (գուցեն շատ անգամ) «լեռների դժվարամատուց», ուղղաձիգ վայրերը զորքով բարձրանալը, «բարձր լեռնաշղթաների գագաթները և դժվարանց լեռների ժայռերը» համարյա մազցելը՝ դարձյալ զորքով ու ուղմակառերով, նրանց գեմ «պատկերագմ, կոիվ և ճակատամարտ տալը» և այլն և այլն: Այս, ծանր, շատ ծանր են եղել Ասորեստանի այդ հզոր տիրակալի նվաճումները (ուղղակի չի խոստովանել) և դրան համապատասխան՝ տեղաբնիկների համառ ու հերոսական դիմադրությունը (բոլորովին չի խոստովանել), և այդ հերոսական դիմադրության կազմակերպողը, առաջամարտիկը, մեր կարծիքով, լինելու էր Արարադա երկիրը, այսինքն՝ Ուրուատրի-Արարտուն, քանզի նա էր Կաղմուխի-Կաղմեա Տուն գավառի և նույնանակի իշխանական նստավայր կենտրոնը՝ արդեն ավելի քան 1200 տարի:

5. Ընդունելի համարելով Կաղմուխի երկրի կամ Կաղմեա Տուն գավառի նվաճումը Թիգլաթպալասար Ա-ի կողմից, գուցեն ամբողջ նահանգի վրա գերիշխանության հաստատումը, այսուհանդերձ երեվում է, որ այն եղել է ոչ երկարատև, քանզի Աշուրբեկալյի ժամանակ, ինչպես նշվեց, նորից արշավանք է կազմակերպվել դեպի Ուրուատրի-Արարտու-Արարադ, նորից խոսվում է Ուրուատրի, Մաշտուն և Խիրուա երկրների նվաճումների մասին: Ի դեպ, այստեղ նկատի ունենալ, որ Մաշտունը, ըստ Մալմանասար Ա-ի, Ուրուատրիի ութ երկրամասերից (շրջաններից) մեկն է, իսկ Խիրուան, գուցե, նույն ութ շրջաններից մեկը որիշը՝ Մալմա կոչվածը:

Ինչեւ: Ուրուատրին-Արարտուն-Արարադը՝ Կաղմեա Տուն կամ Կաղմուխի գավառի և համանուն նահանգի նստավայր կենտրոնը Աշուրբեկալյի ժամանակ, թագավորության նախաշեմին, նորից անկախացած է, նորից անհնազանդ և նորից նվաճվում է, այն էլ, ըստ Աշուրբեկալյի, երկու անգամ՝ իր թագավորության առաջին և երրորդ տարիներին (տե՛ս Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, էջ 67):

Արդ, այն հարցին՝ արդյո՞ք վերջնական եղան Ուրուատրիի-Արարտուի-Արարադի կամ, ընդարձակ առումով, Կաղմուխի-Կաղմեա Տան նվաճումները, միանշանակ և համոզված կարելի է պատասխանել՝ ՈՉ շնայած հաջորդ ավելի քան 200 տարիները ևս Ուրուատրի-Արարտու-Արարադ երկրի համար, այսպես ասած, համակ լոռության ժամանակներ են՝ չկան կամ չեն հասել ոչ ուղղակի, ոչ էլ անուղղակի տեղեկություններ: Եվ, ահա, այդ 200-ամյա լոռությունը նորից խախտում են մ. թ. ա. IX և հետագա դարերի ասուրական թագավորները, ինչպես նաև երբեմնի Արարադ-Ուրուատրու կոչված տիրակալների զարմերը, որոնք այժմ իրենց կողում են Բիախայի (=Կանի) տերեր, և համատեղ պահանջում ու թեքում են Բիախայի տերեր, որ նշված 200-ամյակում Ուրուատրի-Արարտու-Արարադը լադրում են, որ նշված 200-ամյակում Ուրուատրի-Արարտու-Արարադը

ՀՀամարվի նվաճված (խոսքն, իհարկե, տևականորեն նվաճված լինելու մասին է) որ, վերջապես, բացատրելի են դարձնում ուշարտական կամ բիայնական պետության հանկարծակի առաջացման անբացատրելի հրաշքը: Իսկ թե ինչպե՞ս և ինչո՞ւ, նորից կիսուեն փաստերը:

Սակայն, նախքան համապատասխան փաստերին դիմելը, որպեսզի մեր խոսքը հենց նույն՝ Ուրարտու կոչված երկրի (նկատի ունեսք այսուհետը) և պետության մասին միակողմանի ու միաթև շդառնա, և դուզն ինչ պատկերացում ունենանք Հայաստանի վերոհիշյալ 200-ամյակի անցուղարձերից, համառոտակի ժանոթանանք «Նաիրի»-ին, կամ նաիրյան երկրների դաշնությանը. ի՞նչ է «Նաիրի»-ն, ի՞նչ տարածքներ է ընդգրկել, ի՞նչ էթնոպատկանելություն է ունեցել:

Բ. «ՈՒՐԱԲՏՈՒՆ» ՆԱԻՐԻԻ ԵՐԿՐԱՄԱՍ

Նաիրին ընդհանրական երկրանուն է և երբեք, և ոչ մի աղբյուրով էթնոիմաստ չի ունեցել: Մ. թ. ա. XIII դարից ասսուրական թագավորները այդպես են կոչել Հայքը (=Հայաստանը), որին մինչև այդ անվանում էին Արամանի (=Արմանի): Այլ կերպ ասած, նաիրին Ասորեստանից և Հյուսիսային Միջագետքից հյուսիս տարածվող «երկրների» ընդհանրական անվանումն է՝ ասորեստանյան արձանագրություններում (ՀԱՀ, հ. 8, էջ 145): Նաիրին հիշատակել են նաև Բիայնայի տերերը կամ թագավորները, հետևելով ասսուրական ավանդույթին: Նրանք իրենց հաճախակի կոչում են նաև Նաիրիի տերեր, նկատի ունենալով ամբողջ Հայքը (=Հայաստանը) կամ էլ նրա առանձին երկրամասեր:

Մասնագիտական ուսումնասիրություններում «Նաիրի» անունը ունեցել է երկու ստուգաբանություն: Ըստ մեկի՝ այն առաջացել է աքբագերեն ուրագ=«գետ» բառից, որով կնշանակի գետերի երկիր (նաև՝ գետերի և լճերի երկիր); ըստ մյուսի՝ ասսուրական ուսցակամ ուրագ=«կրակ» բառից, որով՝ կրակների երկիր, նաև՝ հրաբուխների և կրակների երկիր (տե՛ս ՀԱՀ, հ. 8, էջ 145, հմմտ. Ա. Վարպետյան, Ովքը բն... արիացիները, էջ 46 և այլն):

Այս ստուգաբանություններից մեր կարծիքով, առավել հավանականը; առաջինն է՝ Նաիրի=«գետերի երկիր», մանավանդ՝ երբ նկատի ենք ունենում առաջին գործածության ժամանակը (մ. թ. ա. XIII դար), սակայն քննարկվող հարցի համար մեկի կամ մյուսի նախադասելի լինեն այնքան էլ էական չէ: Էականն ու կարևորն այն է, որ երկու դեպքում էլ «Նաիրի» անունը Հայաստանի աշխարհագրական առանձնահատկությամբ առաջացած անվանում է, այսինքն՝ ծագումնաբանության մեջ էթնոիմաստ չունի՝ որևէ ցեղանունից չէ և, ինչպես ասվեց, իր բոլոր գործածություններում երբեք ցեղանվան իմաստ չի արտահայտել: Ուս-

տին՝ ճիշտ չեն բոլոր նրանք, ովքեր նաիրի անվանը գուտ արհեստականըն, առանց փաստի ու փաստարկի, էթնոիմաստ են ներարկում: Այսպես որ՝ «Նաիրյան ցեղեր» ասելու փոխարեն, պետք է և պարտադր ենք (սա ևս գիտականության պահանջն է) գործածել «Նաիրյան եղբներ» արտահայտությունը տալու համար: Ինչպես գործածել են արձանագրողները:

«Նաիրի երկրներ» ընդհանրական անվանումը առաջին անգամ (առաջին՝ առաջին) հանդիպում է Թուկուլտի-Նինուրտա և թագավորի (մ. թ. ա. 1243—1221, նաև 1244—1208 թթ.) արձանագրություններից մեջ, ուր նա պատմում է Նաիրիի 43 դաշնակից «թագավորների» (=երկրամասերի տերերի) դեմ իր կովի ու հաղթանակի մասին (տե՛ս ՀԱՀ, հ. 8, էջ 146):

Նաիրիի երկրների մասին հաջորդ անգամ պատմել է Թիգլաթպարար Ա-ը՝ արդեն մեզ ծանոթ արձանագրաբության մեջ: Կազմուխի կատարած երրորդ արշավանքից հետո (ենթադրվում է իր թագավորության ջրբորդ տարում՝ մ. թ. ա. 1112 թ.) նա նախապատրաստվում և արշավում է «դեպի հեռավոր թագավորների երկրներ, որոնք Վերին ծովի ափին էին (նկատի ունի Սկ ծովը, — լ. Շ.)» և որոնք երբեք չեն նվաճվել: Ապա հայտնում է, որ հաղթահարել ու անցել է 16 հզոր լեռների անանցանելի ճանապարհներով (16 լեռները հաջորդաբար թվարկված են), ապա անցել Պուրատտու գետը (=Եփրատ-Արածանի) և ապա ինչպես տեղ ճակատամարտ տվել Նաիրյան թագավորների ու նրանց միասնական զորքերի դեմ: Ի դեպ, անուն առ անուն թվարկված են նաիրյան 23 երկրներ՝ առաջինը՝ Թումմե, վերջինը՝ Դայաենու (=Տայք): Ահա՝ «Նաիրի երկրի 23 թագավորներ, — ըստ նրա, — իրենց երկրներում իրենց մարտակառքերն ու իրենց զորքերը Միավորեցին, կոիվ ու ճակատամարտ ցանկացան: Իմ դաժան (ու) ահեղ զենքով ես նրանց մոռացա, նրանց բազմաթիվ զինվորներին... շարդեցի: Նրանց զինվորների դիակները լեռների բարձունքներում... դիզեցի: Նրա 120 մարտականքերը ճակատամարտում ես գրավեցի: Նաիրի երկրների 60 թագավորներին և նրանց օգնության եկածներին իմ տեղերով հետապնդեցի մինչև Վերին ծովը (=Սկ ծով, հիշված երկրորդ անգամ, — լ. Շ.): Նրանց խոշոր կենտրոնները նվաճեցի... Զիերի մեծ երամակները, զորքները, հորթերը, նրանց գաշտերի անքիվ անասուն(ներ)ը բերեցի: Նաիրի երկրների բալար թագավորներին կենդանվույն ձեռքերավա բռունցի, (նրանց) ճերամ շնարնեցի, նրանց կյանքը փրկեցի գերեվարությունից ու կալանավորությունից... Նրանց ճապարտ որդիներին պատանդ վերցի: 1200 ձի, 2000 (խոշոր եղջերավոր) անասուն որպես հարկ նրանց կարգեցի (և) ազտա արձակեցի գեպի իրենց եւկրները:

Դայաենու երկրի թագավորին՝ Սենիրին, որը չէր հնագանդել իմ սիրոշը՝ Աշուլուին, գերեվարված և կալանավորված Աշուլու՝ իմ հաղաքը

բերի, ներում շնորհեցի և իմ Աշշուր քաղաքից նրան կենդանի թողեցի մեծ աստվածների փառքը փառարանելու համար: Ընդարձակ նաիրի երկրին իր ողջ սահմանով ես տիրեցի (և) նրանց բոլոր թագավորներին իմ ոտքերին խոնարհեցրի:

Իմ արշավանքը շարունակելով (հետադարձին,— լ. Շ.)՝ Խաճիգալքատ երկրի ուժեղ և անհնազանդ Միլիդիա խաղաք գնացի. նրանք իմ ուժեղ մարտական գործից վախսեցան, իմ ոտքերը գրկեցին: Ես նրանցից այս քաղաքը չնվաճեցի, պատանդներ վերցրի: Նրանց վրա հարկ դրեցի տարեցտարի մեկ «իմերուի» շափ հանքաբար՝ զոհաբերության համար» (ՀՃՊ, քրեստ., էջ 20—21):

Նաիրիի մասին Թիգլաթպալասար Ա.-ի տեղեկությունները այս արձանագրությամբ չեն ավարտվում, չնայած դա է ամենահանգամանալին և հիմնականը:

Ալաշկերտի մոտ (Խոտանլուում կամ Ցոնջալուում) հայտնաբերված իր մի արձանագրության մեջ նույն Թիգլաթպալասար Ա.-ը հայտնում է. «Թիգլաթպալասար, աշխարհի թագավոր, Աշշուրի թագավոր, շորս երկրամասերի թագավոր, Նաիրի երկրների նվաճող՝ Թումերից մինչև Դայանենի, Խաբրի, Խաբրիից մինչև Մեծ ծով ընկած երկրների նվաճող» (Ն. Արտեգ, ՀՊ, էջ 59):

Իր մեկ ուրիշ արձանագրության մեջ՝ Բիրկալեյն գետնուղիում հաստատված, Թիգլաթպալասար Ա.-ը ասում է, որ գրավել է ամեն ինչ՝ սկսած Ամուրրու երկրի Մեծ ծովից (=Միջերկրականից) մինչև Նաիրիի ծովը (=Վանա լիճ) և երեք անգամ հասել է Տիգրիսի ակունքը (թերևս Արեմայան Տիգրիսի), երեք անգամն էլ Նաիրի երկրների դեմ (Ն. Արտեգ, ՀՊ, էջ 62):

Մեկ այլ արձանագրությամբ Թիգլաթպալասար Ա.-ը նորից հայտնում է, որ միայն Նաիրիում նա հպատակեցրել է 60 թագավորների, սակայն նույն արձանագրության վերջում, իր սիրագործությունները ամփոփելիս, գրաված երկրների թիվը համարում է 42-ը: Ի դեպ, իր իսկ ասելով, Նաիրիի թագավորները ապրում էին «Վերին ծով»-ին մոտիկ, և հաղթանակից հետո նրանց հետապնդում է մինչև «Վերին ծովը» (Ն. Արտեգ, ՀՊ, էջ 63—64):

Թիգլաթպալասար Ա.-ի մեկ ուրիշ արձանագրության պահպանված կտորում Նաիրիի թագավորներն այլևս 60-ը կամ 42-ը չեն, այլ միայն 30, որոնց քթերին նա օղակ անցկացրեց «ինչպես ցուլերի» և տարավ Աշշուր: Հատ Ն. Արտեգի. «Դրանք հավանաբար Նաիրիի 23, Մուշկիի ծ, Կուտմուխիի և Ուրբախինայի 2 թագավորներն են» (Ն. Արտեգ, ՀՊ, էջ 64):

Մի տեղեկություն ևս, որը կարևոր ենք համարում, չնայած Նաիրին չի նշված: Թիգլաթպալասար Ա.-ը պատերազմական գործողություններ է ծավալել նաև Մուզրի և Կուտմանի երկրների դեմ: Հատ արձանագրու-

թյան, նա անցնում է Էլամունի, Թալա և Խարուսա լեռներով, հաղթում է Մուզրիին և երկրիը կրակի ճարակ դարձնում: Կումանին օգնության հասնում իր հարեւան Մուզրիին, սակայն պարտություն է կրում: Քսան հազարի շափ նոր ուժեր են օգնության գալիս, Թիգլաթպալասարը հարձակվում է նրանց վրա և փախուստի մատնում, հետապնդելով մինչև Խանուսա լեռ՝ Մուզրիի սահմանը: Խանուսայի բերդը, ինչպես նաև թագավորական քաղաք Կիբունան գրավելուց հետո, Կումանիի թագավորը հաղթական թագավորից գութ է հայցում և «ընկնում նրա ուժերը» (տե՛ս Ն. Արտեգ, ՀՊ, էջ 62—63):

Ն. Արտեգն այս երկրները տեղագրում է հետեւյալ կերպ. «Կումանին և Մուզրին (կամ Մոււրին) երկու թագավորություններ են (հիշված են՝ երկրներ, ոչ՝ թագավորություն, — լ. Շ.): Կիբունան Կումանիի մայրաքաղաքն է: Զախոյից տասը կիլոմետր հեռավորության վրա գտնվող ներկա Գիգչե գյուղը, Արևելյան Խաբուրի ափին, պահպանել է Կիբունա սնունը, որը ծանոթ է նաև Կիբուն հորջորջմամբ: Դա ծշտում է Կումանիի տեղը Խաբուրի հովտում, Զեբել-Արիադ լեռան փեշերին:

Մուզրին գտնվում էր Կումանիի հարավում, Դեհոկի շրջանում, ուր Մուսիրիի կոչված քրդական ցեղը պահպանել է նրա անունը:

Կումանեցիներն այն միենույն ժողովուրդն են, որ երեան են գալիս Ասարիացոնի օրով Կուման անվան տակ, ուրեմն առանց — նի վերջավորության, ինչպես Կիբշու՝ Կիբշունիի փոխարեն, կամ Թուշխա՝ Թուշխանիի փոխարեն:

...Երկու ժողովուրդները (ժողովուրդ կոչելու ոչ մի հիմք չկա, — լ. Շ.)՝ Կումանին և Մուզրին, սեմական աշխարհին չեն պատկանում, ապելի շուտ, ինչպես մյուս լեռնցիները, կապված են Հայաստանի բնակչության հետ» (ՀՊ, էջ 63):

Մուզրի և Կումանի երկրների այս տեղագրումները համարյա չեն առարկվել, եթե նկատի շունենանք առավել ճշգրտման փորձերը: Այս է տեղագրել ոչ թե Արևելյան Խաբուրի ավազանում, ինչպես ն. Արտեգը, այլ՝ Մեծ Զաքի վերնագավառում և միջին հոսանքի ձախ ափին՝ Կուման սակայն, կարեռվում է այն, որ դրանք ևս գետեղվում են Կաղմեա Տուն սակայն, կարեռվում է այն, որ դրանք ևս գետեղվում են Կաղմեա Տուն սակայնի կամ Սորճայք նահանգի տարածքում: Օրինակ, Ն. Արտեգի տեղագրումը կամ Սորճայք նահանգի տարածքում: Օրինակ, Ն. Արտեգի տեղագրումը հիմնականում համապատասխանում է Կորճայք նահանգի Տմորիքի գավառին կամ ավելի ուշ՝ Ներքին Կորդիքիին, իսկ մյուսը, այսպես ասած՝ վառին կամ ավելի մյուսը՝ Ներքին Կորդիքի գավառին կամ ավելի մյուսը՝ Ներքին Կորդիքի գավառին տարածքներին: Ինչպես, Երկու Ռսիրանք և Փոքր Աղբակ գավառների տարածքներին: Ինչպես, Երկու դեպքում էլ Կաղմեա Տուն կամ Կորճայք նահանգը չի բացառվում, իսկ դեպքում էլ Կաղմեա Տուն կամ Կորճայք նահանգը նահանգի բնակչության:

Արդ, նորից դիմենք Խոտանլուի արձանագրությանը, ուր Թիգլաթ-պալասար Ա-ը իրեն համարում է Նախրի երկրների նվաճող և ապա բայց աշտրում, որ դա նշանակում է «Թումմեից մինչև Դայաենի, Բաբիլոն մինչև Մեծ ծով՝ ընկած երկրների նվաճող»։ Սրան էլ ավելացնենք, որ Նախրի եղբերկրներից մեկը՝ Դայաենին՝ ըստ Թիգլաթպալասարի, հասնում էր կամ մերձ էր «Արևմուտքի վերին ծովին» կամ, պարզապես, «Վերին ծովին»։

Նախրի մասին Թիգլաթպալասար Ա-ի այս նշումները վաղուց արդեն քննարկված և հիմնավոր բացատրություններ են ստացած, ուստիև, ապացուցվածը նորից շապացուցելու համար, մեզ մնում է սոսկ վերջիշել դուանք, Օրինակ, մեր կարօքիով, ապացուցված է և կասկած չի հարուցում, որ «Վերին ծովը» Սև ծովն է, իսկ նրան հարող Դայաենին Մեծ Հայքի Տայք նահանգը (տե՛ս Հ. Արյունյան, ՏΥ, էջ 70—71), որ «Մեծ ծովը» Մեծերկրականն է, իսկ նաբրի երկիրը գետեղվում է Արևելյան Տիգրիսի կամ Բոհտանի վերին հոսանքների և Մեծ Զարի միջև։ Ենթադրվում է նաև, որ հարավում Խարխին սահմանակցել է Մեխրի, Կումմե և Կիրրուրի երկրներին, արևմուտքում՝ Կաղմուխին և Բաբիխին, հյուսիսում՝ Խուրուշկիային։ Բացի այս, աղբյուրներում տարրերակվում է նաև «Ներքին Խարխի» երկիր, որին մասնագետները տեղագրում են Խուրուշկիայի և Խարխի միջև (տե՛ս նույն տեղում, էջ 217—219)։ Այլ կերպ ասած և կարծ ասած, թե «Ներքին Խարխին», թե մյուս Խարխին, որոնք համարվել են Նախրիի ծայրամասը, տեղագրվում են Մեծ Հայքի Կաղմեա Տուն կամ Կորճայք նահանգում։

Այսպիսով, Թիգլաթպալասար Ա-ի նշած Նախրիի երեք սահմանակետերը համարյա կասկած շեն հարուցում, դրանք են. Հարավ-արևելքում՝ Մեծ Զարը, Հարավ-արևելուտքում՝ Միջերկրականը (այս ուղղությամբ բացատրելի շափազնցում կա), Հյուսիս-արևելուտքում՝ Սև ծովը։ Մնում է, փաստորեն, Թումմե (—Տումմե) երկրի նշումը, որի տեղագրման շուրջ կան լուրջ տարակարծիքներ։

Հնարավոր շփոթից զերծ մնալու համար ասենք, որ այս երկրանումը սկզբում ընթերցվել է «Նումմե», «Նիմմե» կամ «Նեմմե» ձևով, որը, սակայն շուտով ճշգրտվել է (ըստ Խոտանլուի արձանագրության) և ընդունելի դարձել «Թումմե» (=Տումմե) ընթերցումը, լատիներեն արասանությամբ՝ Tumme/u—Tum(m)ina։ Ի դեպ, կարծում ենք, որ այս դիպանա պարտադիր չէ և առ տառադարձել թումմ և Տումմե անսնը կարդալ Թումմե, ուստիև՝ այսուհետ գործածելու ենք Տումմե անվանաձև։

Մասնագիտական ուսումնասիրություններում Նախրիի այս երկիրը՝ Տումմեն, որը Թիգլաթպալասարի երկու տարրեր արձանագրություններում (Աշուրի և Խոտանլուի) հիշված է որպես Նախրիի եղբերկիր, զետեղվում է Հայաստանի բոլորութին տարրեր վայրերում։ Ըստ է. Ֆորերի, Տումմեն գտնվել է Վանից 68 կմ հեռավորության վրա, որի անունը պահ-

պանվել է Թում գյուղի անվան մեջ, ն. Աղոնցը այս առթիվ գրել է. «Թում կամ ավելի շուտ՝ Թյուն գյուղը, ինչպես ներկայումս արտասանվում է, չի կարելի նմանեցնել Թումմեին հենց այն բանի համար, որ Ասորեստանի թագավորը Վանա լիճը չի շրջանցել, այլ վերադարձել է նույն հանապահով, որով եկել էր Թումմե և իր վերադարձին հպատակեցրել Մելիտենե քաղաքը։ Զետ մի նշան, որից երևար, թե նա շրջանցել է ինը՝ իր մայրաքաղաքը գնալու համար» (ՀՊ, էջ 62, ծ. 1)։ Առարկելով է Ֆորերին, ն. Աղոնցը միաժամանակ գտնում է, որ Թումմե երկիրը պետք է փնտրել Մանազկերտից Խոտանլու կամ Յոնջալու ընկած տարածքում, ավելին, հակված է Յոնջալուի շրջակայքում գետեղել Թումմե երկիրը, այսինքն՝ Հայաստանի կենտրոնում, Արածանի գետի վերին հոսանքների մերձակայքում։ Թիգլաթպալասար Ա-ի հիշած նախրյան 23 երկրներից վեցը այդ տարածքներում տեղագրելուց հետո, կամ՝ առաջարկելով իր տեղագրումները, եղբակացըրել է. «Այսպիսով, ցուցակի 23 երկրով իր տեղագրումները, եղբակացըրել է. «Այսպիսով, ցուցակի 23 երկրներից վեցը տեղագրվում են Մելազկերտի և Ուշ-Քիլիսեի միջև ընկած տարածության վրա։ Ավելացնենք նաև Թումմեն՝ նախատամարտի քառերեմը, Յոնջալուի դաշտում, եթե մասնագետները շհամաձայնվեն այն նույնացնել Խումբո-ծումբի հետ» (ՀՊ, էջ 61, ընդգծ. — և. Շ.)։

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Երեմյանը Տումմեն նույնացնում է հին հայկական Տմորիքի հետ և ըստ այդմ Թիգլաթպալասար Ա-ի հիշած նախրյան 23 երկրները գետեղում Տմորիքից—Տայք ընկած տարածքում՝ Մեծ Հայքի Հարավ-արևելքից Հյուսիս-արևելուտք ձգվող անկյունագծի մերձակայքում (տե՛ս ՀՀ Հանրագիտարան, 8, էջ 146)։ Վերջապես, կանակ ամենավերջին, ընդհանրական համարված և, այսպես ասած, «խաղաղարար» մի կարծիք, որը և նպատակհարմար ենք համարում բերել ուսուերեն բնագրով. «Из приведенных выше данных как буд-то видно, что на Древнем Востоке существовали две разные области под одним и тем же названием— Тумме-Тумми: одна на северо-западе, северо-западнее Малатии, между Сивасом, Кайсери и Гюрюном (она же хеттск. Туттаппа, антич. Dötama, а другая— на юго-востоке, южнее (юго-восточнее) Киррури (см.), т. е. южнее Джуламерк—Челемерика» (Հ. Արյունյան, ՏՅ, стр. 188—189).

Ինչպես տեսնում ենք, Թիգլաթպալասար Ա-ի հիշած նախրյան 23 երկրներից մեկը և առաջինը՝ Տումմե եղբային երկիրը, մեծ մասի կարծիքով տեղագրվում է Մեծ Հայքի Հարավ-արևելքում («Հին Արևելք» նշումը շատ է ընդգրկուն և դրանով իսկ ապակողմնորոշող), ավելի ճշշգիտ, Մեծ Հայքի Կաղմեա Տուն կամ Կորճայք նահանգի Հարավ-արևելքում («Հին Արևելք» մասում, որը տարածքային ավելի կամ պակաս ընդգրկումով համապատասխանում է նույն նահանգի երբեմնի Արարադա երկրին («Ուրուատրի—Ուրարտու»), ավելի ուշ՝ Տմորիքին, վաղ միջնադարի՝

Ներքին կորդորիք գավառին (*Տմորիքի հարավ-արևմտյան ծայրամասն* է), շատ ավելի ուշ՝ Ձաւամերկ կոշվածին հարավ-արևմուտքից սահմանակից տարածքին, անմիջապես սահմանակից Ասորեստանին: Տումմե երկրի այսպիսի տեղագրումը հաստատվում է նաև Ասորենազիրպալ Ա-ի (883—859 թթ.) արձանագրությամբ, ըստ որի իր թագավորության առաջին իսկ տարում (մ.թ. ա. 883-ին)՝ ղեպի նախրի արշավելիս, նախ մըտնում է նախրի Տումմե լեռներկիրը, գրավել այն, ապա դրա հարեան կիրուրի երկիրը, ապա սրան հարեան Կիրխի երկիրը և այլ երկրներ (տե՛ս Են, երկերի ժողովածու, հ. Ա, 1966, էջ 198—199): Այսինքն երկրներ, որոնք դարձյալ, ըստ մասնագետների, զետեղվում են Կաղմեա Տուն նահանգում (տե՛ս Հ. Արյունյան, ՏՅ, էջ 111—112): Ուշագրավ է հատկապես, որ Ասորենազիրպալը Կիրխի երկրում հիշատակել է Արարդի անունով լեռ, որն անկասկած Կաղմեա Տուն նահանգի Արարադա երկրի Արարադ լեռն է, այժմյան ջուղի դադ կոշվածը, Ահա արձանագրության համապատասխան հատվածը. «Կիրրուրին ելա, Խուլուն քաղաքին կիրճին մեջ միեցա, որ Կիրխի երկրին դիմացն է: Խաղու, Խատարու, Նիստուն, Իրեդի, Միտքի, Արձանիա, Տիլա, Խալուա քաղաքներուն՝ որոնք Կիրխի երկրին Ռատու, Արուա, Արարդի ահազին լեռներուն մեջ կփառվեին, տիրեցի...» (տե՛ս Են, նույն տեղում, էջ 199, ընդգծ.—Լ. Շ.):

Այս փաստերից հետո, կարծում ենք, շարժե նորերը բերել Տումմե երկրի տեղագրման համար, կամ էլ՝ ցույց տալ ն. Աղոնցի տեղագրման անհշտությունը: Աղելացնենք միայն, որ տվյալ տեղագրումով, այսինքն՝ Տումմե երկիրը Արարադա երկրում կամ հարավից նրան սահմանակից տեսնելը, հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ ուրվագծել Թիգլաթպալասար Ա-ի ձեռնարկած նախրյան արշավանքի երթուղին և նրա նշած նախրյան երկրների տարածքային ընդգրկումը Մեծ Հայքում: Խնչու չէ, նաև հստակել պատմագիտության համար (և ոչ միայն պատմագիտության) ոչ պակաս կարեոր հարցեր, օրինակ, Կաղմեա Տուն նահանգի և նրա փոքրիկ մասը կազմող Արարադա երկրի նախրյան երկիր կամ երկրներ լինելը, նախրյան երկրների էթնոպատկանելությունը, նրանց պետական կարգավիճակը տվյալ ժամանակ և այլն, սակայն, ինչպես ասում են, ամեն ինչ ըստ կարգի՝ հաշորդաբար:

Եվ այսպես, Թիգլաթպալասար Ա-ը, որին աստվածները տվել էին, իր ասելով, աշխարհի շորս մասերի իշխանությունը և անպարտելիություն, մեծաքանակ զորաբանակով Աշուր (=նինվե) մայրաքաղքից շարժվում է ղեպի նախրի և գալիս մտնում է նախրի սահմանային Տումմե երկիրը: Մեր կարծիքով, գալիս է ճիշտ այն ճանապարհով և այն երկիրը, որով շատ ավելի վաղ եկել էին շումերական էպոսի առասպելականացած հերոսները, որով իր նախնիների հայրենիքն էր վերադարձել Հայկ նահապետը՝ իր զարմերով, որով Ուրուատիր—Արարադ էր խօսվել:

Թիգլաթպալասար Ա-ի ոչ վաղ նախորդներից Սալմանասար Ա-ը, իսկ հաջորդներից Ասուլնազիրպալ Բ-ը և էլի ուրիշ տերեր Ասորեստանի, որով մ.թ. ա. V դարի վերջին տարում հունական 10.000-ոց զորքը, ըստ Քսենոֆոնի, մազապուրծ նահանջեց և այլն, և էլի ուրիշներ՝ հայտնի և անհայտ, բարի կամ շար նպատակներով: Մի խոսքով, Թիգլաթպալասար Ա-ը ևս տվյալ արշավանքում ընտրել է նինվեից Նախրի բերող ամենակարճ, ամենաբանուկ, ամենաանվտանգ ճանապարհը, մանավանդ որ որանից քիչ առաջ նույն ճանապարհով եկել ու նվաճել էր Կաղմուկի երկիրը, նվաճել և, իր կարծիքով, «անվտանգ» դարձրել:

Տումմեից Թիգլաթպալասար Ա-ի զորքը, ամենայն հավանականությամբ, արդեն երիցս նվաճված Կաղմուկի վրայով, այսինքն՝ ծանոթության մեջ լինի հարավ-արևմտյան անկյունը, ապա՝ փոքր-ինչ թեքվելով ղեպի արեմուտք, իշել Արածանի գետի հովիտը՝ միշին հոսանքի ուղղությամբ, ապա գետի ձախափնյա տարածքն երով նորից ղեպի հյուսիս, հասել վերին հոսանքները, գետանց կատարել (նշված է Պուրատտու=Եփրատ=Արածանիի գետանցը) և այսուհետ՝ Արածանիի ակունքամերձ տարածքում, ինչպես իրավացիորեն նշել է ն. Աղոնցը՝ հետագա Յոնչալու կամ Խոտանու կոշված բնակավայրի մերձակայքում (վաղ միջնադարում հայտնի Առվույտոց գյուղ Կոգովիտ գավառում), ուր հայտնաբերվել է Թիգլաթպալասար Ա-ի ամփոփագիր արձանագրությունը, նա ճակատամարտ է տվել Նախրիի միասնական արձանագրությունը, նա ճակատամարտ է տվել Նախրիի միասնական գորքերի գեմ և հաղթել: Ինչպես ինքն է ասում, հաղթել է «Նախրիի երգորքի գեմ և հաղթել: Ինչպես ինքն է ասում, հաղթել է Եպունի երկրի 60 թագավորներին (որից 23 երկրներ անվանապես նշված են, — Լ. Շ.) և նրանց օգնության եկածներին...», իր տեգերով հետապնդել նրանց մինչև Վերին ծովը (=Սև ծով): Հետապնդման ընթացքում նա մտել է նաև Դայանենու երկիրը (=Տայք) Նախրիի հյուսիս-արևմտյան մասել է նաև Դայանենու երկիրը, պատվել այն, կալանավորել նրանց «անհնազանդ» թագաղբերկիրը, գրավել այն, կալանավորել այս գորքին՝ Սևնիին, և բռնել վերադարձի ճանապարհը:

Թիգլաթպալասար Ա-ը շի վերադարձել եկած ճանապարհով: Այդպիսի ճարկադրանք շկար, ոչ էլ որևէ նշում կա: Ընդհակառակը, ըստ պատմության մեջ կատարել Դայանենու երկիրից, հավանաբար, նրա զորքը շաղած տվյալների, Դայանենու երկիրից, հավանաբար, նրա զորքը շաղած է Բարձր Հայք, ապա՝ Արևմտյան Եփրատի ձախափնյա տարածքներով իշել է «Խանիգալբատ» երկիրը: Օրինակ, Դայանենու երկրի գրավումից հետո նա գործ է: «Իմ արշավանքը շարունակելով՝ ղեպի Խանիգալբատ երկրի ուժեղ և անհնազանդ Միլիդիա (=Մալաթիա— Լ. Շ.) քաղաքը կատարվեցի...»: Ահա այստեղից էլ, այսինքն՝ Եփրատի ուղրանից, ասսուլագնացի...: Աղջ գորքը թեքվել է արևելք և Հյուսիսային Միջագետքի վրայով վերադարձել իր մայրաքաղաքը:

Այսպիսով, Թիգլաթպալասար Ա-ի նախրյան արշավանքի երթուղին պարզագում է որպես մեծատարած մի եռանկյունի, որն ընդգրկել է Մեծ Հայքի արևմտյան գրեթե ամբողջ տարածքը, այսինքն՝ Վանա լճի արև-

մտյան ափերից մինչև Արևմտյան Եփրատ, Տավրոսի Հյուսիսային փեշերից մինչև ներառյալ Տայք: Այլ կերպ ասած, ընդգրկել է Տուրուբերան կամ Տարոն, Սոփիք, Բարձր Հայք, Տայք նահանգները, մասամբ նաև Կաղմեա Տուն, Այրարատ նահանգները՝ տվյալ երթուղու վրա գտնվող գավառներ ու տարածքներ: Վերջին դեպքում, օրինակ, ենթադրվում են Կաղմեա Տուն նահանգի արևմտյան երկու գավառներ՝ Հետագա ներքին Կորդիրիք և Կորդուք, որոնք գտնվել են արշավանքի երթուղու հենց սկզբնամասում, Այրարատ նահանգի երեք ութ գավառներ, փաստորեն Արաքս գետի վերնագավառներ՝ Բասեն, Գաբեղեանք, Արեղեանք, Հաւնունիք, Արշարունիք (ավելի վաղ՝ Երասխածոր), Բագրեանդ, Մաղկոտն և Վանանդ: Ի դեպ, պարզ երևում է, որ արշավանքի ավարտին Թիգլաթպալասար Ա-ի զորքը անցել է Սոփիք նահանգի արևմտյան՝ Եփրատամերձ (արևելքից Եփրատի ոլորանի մերձակայքում տարածվող) Դէզիք, Գաւրէք, Սոփիք (Շահունեաց), Անձիտ գավառների վրայով, որոնք արդեն, ինչպես նաև ամբողջ նահանգը, Ասորեստանից ենթադրված է երեսում:

Այսպես է երեսում ըստ Հետեյալ փաստերի: ա) «Խանիգալբատ» երկրի նշանավոր Միլիդիա (Մալաթիա) քաղաքը գտնվել է Եփրատի աջ ափին, գետի ոլորանի հատվածում, Սոփիքի Անձիտ գավառի դիմաց: Այսինքն՝ Խանիգալբատը և Անձիտը սահմանակցվել են Եփրատ գետով: բ) Թիգլաթպալասար Ա-ը իր ձեռնարկած նախրյան արշավանքի ընթացքում անհրաժեշտություն չի ունեցել Արևմտյան Եփրատի աջ ափն անցնելու, և որևէ հիմք չկա նման գետանց ենթադրելու համար: գ) Սա նշանակում է, որ Դայաենու (=Տայք) երկրից դեպի Խանիգալբատ արշավելու համար նա ընտրելու էր ամենակարճ և անվտանգ երթուղին՝ Եփրատի ձախափնյա տարածքներով դեպի Անձիտ, մանավանդ որ նախրյան երկրներն արդեն ընկճած էին: Ուրեմն՝ Դայաենու երկրից դեպի Բարձր Հայք, ապա դեպի Սոփիք, իսկ այստեղ՝ Հյուսիսից—Հարավ ուղղությամբ անցնելու էր նախ Դէզիք, ապա Գաւրէք գավառների վրայով, նոր ապա մտներ Անձիտ, որը գտնվում էր, ինչպես ասվեց, Միլիդիա քաղաքի դիմաց, որի դեմ նա արշավում էր: Այսինքն՝ այս հատվածում արդեն գետանցի անհրաժեշտություն կար: դ) Սակայն գետանց չի կատարվել, պատերազմական գործողություններ չեն ծավալվել, քանզի Միլիդիայի մարդկաները են Թիգլաթպալասարի մոտ և հնագանդություն հայտնել: Ինչպես ինքն է ասում: «Նրանք իմ մարտական ուժեղ գրոհից վախեցան, իմ ոտքերը գրկեցին: Ես երանցից այս քաղաքը շնվանեցի, (միայն) պատանդներ վերցրի: Նրանց վրա հարկ դրեցի տարեցտարի մեկ «իմերուի» շափ հանքաքար՝ զոհաբերության համար» (ընդգծ. — լ. Շ.): ե) Սոփիքում ևս Թիգլաթպալասարը տվյալ ժամանակ պատերազմական գործողություն չի ծավալել և անարդել շարժվել է նրա տարածքով՝ Հյուսիսից—Հարավ: Իսկ սա էլ նշանակում է, որ Սոփիքն արդեն ենթադրված էր: Անհավանական չէ, որ նախրյան երկրների ընդհանուր պարտությամբ

էր պայմանավորված այդ ենթակայությունը, կասեինք՝ այդ «հեղությունը»: Ճիշտ այդպիսի ենթակայություն է ենթադրվում նաև Աղձնիքի համար, չնայած, ի տարբերություն Սոփիք, Աղձնիքի երեք երկրներ (Նուբարթու, Ալզի և Պուրումզի), նախքան նահրցիների ընդհանուր պարտությունը, արդեն մեկ անգամ նվաճվել էին նույն արքայի կողմից:

Ահա այս տարածքներում, մեր կարծիքով, պետք է փնտրել Թիգլաթպալասար Ա-ի հիշած նախրյան 60 երկրներ, որոնցից 23-ը նա նշել է անվանապես: Անշափ ուշագրավ է, որ այս նույն տարածքաշրջանում է անվանապես: Անշափ ուշագրավ է, որ այս նույն տարածքաշրջանում է անվանապես: Կապան «Աշխարհացոյց»-ի: Նկատի ունենք Կաղմեա Տուն կամ Կորճայք կական անվանությունը՝ Ներքին Կորդիրիք և Կորդուք (թվարկվում են արևանագի 2 գավառները՝ Ներքին Կորդիրիք և Կորդուք (թվարկվում են արշավանքի երթուղու հաջորդականությամբ)), Տուրուբերան կամ Տարոն շավանքի բոլոր 17, Այրարատ նահանգի 8, ինչպես նշվեց, Երասխի վերնահանգի 8 լուսնագի 8, ինչպես Դայաենու նահանգի 8, Բարձր Հայքի 9, նագավառները, Տայք կամ Դայաենու նահանգի 9, Բարձր Հայքի 9, Սոփիքի 8 և Աղձնիքի 11-ից՝ 8 գավառները: Ի դեպ, վերջին դեպքում նկատի չեն առնվել Ալզի (=Աղձն), Պուրումզի (^(*)) և Շուլքարթու (=Շուլք) գավառները, արդեն մեզ ծանոթ պատճառով: Մեծ Հայքի այս 60 գավառները, ըստ Ս. Երեմյանի շափագրումների, ունեցել են այս 110.000 քառ. կիլոմետր տարածք, այսինքն՝ Մեծ Հայքի ընդհանուր տարածքի ավելի քան 1/3 մասը: Սա, իհարկե, պատկառելի տարածք է, սակայն, դատելով Թիգլաթպալասար Ա-ի արձանագրության տվյալներից, ոչ անհավանական:

Անհավանական չէ նախ ուազմավարական տեսանկյունից: Բանն այն է, որ Ասորեստանի այդ հզոր տիրակալը նախրյան 60 երկրների համատեղ ուժերին ընկճել է մեկ ճակատամարտում (կարելի է կոչել Բագրեանդի ճակատամարտ), մեկ հաղթանակով և դրանով ապահովել ապատակեցումն ու հարկատվությունը: Այնպես որ, նրա կամ նրա նրանց հապատակեցումն շի էլ զորքի ոտքը դաշնակցության շատ երկներ կամ երկրամասեր չի էլ գործի ոտքը դաշնակցության շատ երկրի հանհապանդ՝ օրիմտել: Այս առումով բացառիկ է Դայաենու երկրի «անհապանդ» օրիմտել: Կա առաջարկությունը՝ արշավանքի է արժանացել: Իսկ նակը, որի պատճառով էլ «Հավելլալ» արշավանքի է արժանացել: Իսկ ընդհանրապես նա գրում է. «Նախրի երկրի 23 թագավորները (սրանք ընդհանրապես նա գրում է. «Նախրի երկրի երկրներն են,— լ. Շ.), իրենց երկրներում իրենց անվանապես թվարկվածներն են, — լ. Շ.), իրենց երկրներում իրենց անվանապես թվարկվածներն են, Կորիզ ու հակատամարտակառքերն ու իրենց զորքերը միավորեցին, Կորիզ ու հակատամարտակառքերն ու իրենց զորքերը միավորեցին, Կամ՝ նույն ճակատամարտի հաղթանակը համառոտագրելուց հետո առավ է. «Նախրի երկրի երկրների 60 թագավորներին և երանց օգնության եկածներին իմ տեղերազ հետապնդեցի մինչև Վերին Տունը, Կամ՝ «Ընդդարձակ նախրի երկրին իր սզբ առհմանավ և տիրեցիս և այլն:

Եթերողդ, ինչպես տեսնում ենք, Թիգլաթպալասար Ա-ը նախրին կոչել է «ընդդարձակ երկրի», միաժամանակ երեսում է, որ նրա ուազմական գործողությունները, ըստ իր նկարագրությունների, ընդդարձակ երկրի գործողությունները, արդեն մեկ անգամ նվաճվել էին նույն արքայի կողմից:

դեմ են, և ոչ մի հիմք չկա այդ «ընդարձակը» նեղ կամ անձուկ հասկանալու, ինչպես փորձել է մեծանուն պատմաբան ն. Աղոնցը (տե՛ս ՀՊ, էջ 58—61): Նա գրում է. «Դա (Նախրին.— Լ. Շ.) մի մաեր պետություն էր, որի տերիտորիան ավելի պակաս էր, քան հայ մեծ ֆեոդալների տիրույթները, Համարյա ստույշ է (՝— Լ. Շ.), որ 23 պետությունները շարված էին այն ճանապարհի երկու կողմերում, որտեղից անցել էր ասորեստանյան բանակը, Եփրատի անցումից սկսած, Պալուի մոտով, որի վերևում տարածվում էր Դայանինի երկիրը, մինչև Թումեն, որը արշավանքի ժայռագույն կետը էր Հանդիսանում» (ՀՊ, էջ 61—62, ընդգծ.— Լ. Շ.): Այստեղ առարկելիները զգալի են, սակայն ամենաառարկելին այն է, որ խիստ անձուկ է պատկերված Նախրիի տարածքը, Այնքան անձուկ, որ ոչ միայն 60, այլև 23 երկրներին տեղ չի անի (Եթե, իհարկե, «Երկիրը» «բնակավայր» չհասկանանք), ել չենք խոսում լեռների ու գետերի մասին:

Երբերդ, նախքան Նախրիի դաշնության 23 երկրների թվարկումը, Թիգլաթպալասարը անուն առ անուն նշել է նաև իր զորքի հաղթահարած նախրյան 16 լեռներ, որոնց կոչել է «Հզոր լեռներ»: Դրանք են՝ Էլամա, Ամադանա, Էլիխշ, Շերաբելի, Թարխունա, Թիգլախուլի, Թիսրա, Թարխանաբե, Էլուլա, Խաշթարայե, Շախիշարա, Ուբերա, Միլիադրունի, Շուլիանզի, Նուբանաշե և Շեշե: Ցավոք, պատմագիտությունը առայսօր չի որոշել, թե որո՞նք են այս 16 «Հզոր լեռները», ոչ էլ որևէ լուրջ ուսումնախրության են արժանացել, սակայն կասկած չի հարուցում, որ դրանք գտնվել են տվյալ արշավանքի երթուղու վրա՝ սկզբից մինչև վերջ, բոլորովին տարբեր վայրերում, զբաղեցրել են ընդարձակածավալ տարածքներ և դրանով իսկ հարուցել զանազան դժվարություններ (առանձին նակարագրություններ կան): Այնպես որ, Նախրիի 60 երկրների տարածքները որոշելիս, վերոհիշյալ «16 հզոր լեռները» տեղագրելու մասին պետք է մտածել: Կարծում ենք, մեր ուրվագծած երթուղու սահմաններում (այն է՝ Տումմե=Տմորիքից—Դայանու=Տայք, Դայանուլից—Խանիգալբատ) այս անխուսափելի պահանջը առավել համոզիլ պատասխան կդատնի:

Չորրորդ, Թիգլաթպալասարը նախրյան արշավանքի նկարագրության մեջ հայտնում է նաև. «Ուրումե» լեռնային ծառերը կտրեցի, կամուրջները իմ զորքի անցման համար բարեկարգեցի և Եփրատ (Արածանի,— Լ. Շ.) գետն անցա» (ընդգծ.— Լ. Շ.): Առաջին հայացքից կարող է թվալ, որ այստեղ միայն Եփրատ—Արածանիի գետանցի մասին է խոսքը, Սակայն, «կամուրջները... բարեկարգեցի» միտքը, արշավանքի մեծատարած ընդգրկումը պահանջում են նկատի ունենալ այլ գետանցներ ևս, ինչպիսին էլ ենթադրվի նրա արշավանքի երթուղին: Այնպես որ, նինվեից դեպի Վերին ծով (Սև ծով), ապա՝ Վերին ծովից—Նինվե ճանապարհին և գետերն են ջատ, և անցումներն անխուսափելի...

Հինգերորդ, նախրյան արշավանքի, այսպես ասած, նախագիտելիքում թիգլաթպալասարը հայտնում է. «...Դեպի հեռավոր թագավորների Երկրները, որոնք Վերին ծովի էին և որոնք երբեք չէին նվաճվել, Աշուատչելի ճանապարհները, որոնց էության (մասին) նախկինում ոչ մի թագավագաւ անցումները, որոնց էության (մասին) նախկինում ուղարկված ուղիներով անցկացրի (իմ զորքը)» (ընդգծ. Լ. Շ.):

Ահա, այս համառոտագրումից հետո են թվարկված արշավանքի երթուղու (ընդգծում ենք՝ Երբուղու) 16 դժվարանցանելի լեռները, «Կամըրջված» ոչ քիչ գետերը (թեպետ ոչ բոլորը անվանապես), Նախրիի դաշնության 23 հիմնական երկրները և այլն: Այլ կերպ ասած, նախագիտելիքը արշավանքի մանրամատների հարազատ համառոտագրումն է և նույն իրողությունների կրկնակի հաստատումը: Այսինքն այն, որ նախրյան արշավանքը, իրոք, ընդգրածակ տարածքներ է ընդգրկել, զանազան դժվարություններ հարուցել (բնական և արհեստական) և, ամենակարեւ հաջողությունները հեշտությամբ շեն տրվել Ասորեստանի «տիրապալին»:

Վեցերորդ, մեր կարծիքով ևս Թիգլաթպալասար Ա-ի նախրյան արշավանքի ընդգրկած տարածքը, որքան էլ լինի ընդգրկուն, գեռնես ամբողջ նախրին չէ, նախրին առավել ընդգրածակ տարածքներ և ավելի շատ երկրներ (=երկրամատներ) է ունեցել: Այս իրողության առաջին ապացույցը կրկներ (=երկրամատներ) է ունեցել: «Նախրիի երկրների 60 նույն արքայի արդեն մեզ ծանոթ հաղորդումն է. «Նախրիի երկրների 60 թագավորներին (=տերերին կամ կառավարողներին,— Լ. Շ.), և Երանց օգնագրյան եկանեցին իմ տեկերով հետապնդեցի մինչև վերին ծովը»:

Այստեղ ուշագրավն այն է, որ վճռական ճակատամարտում Թիգլաթպալասար Ա-ի դեմ մարտնչող Նախրիի 60 երկրների «թագավորներ» աթպալասարը Ա-ի գետ եղել են նաև «Նրանց օգնության եկանեցին», մեր կարծիքով, նախրյան ուրիշ Երկրատերեր: Ասում ենք՝ «Նախրյան ուրիշ Երկրատերեր» ևս առաջին հարցում, քանզի աղետը համընդհանուր նախրյան էր, բացի այդ, որևէ և ընդգծում, քանզի աղետը համընդհանուր նախրյան էր, բացի այդ, որ աղետը համընդհանուր նախրյան մասին, Այլապես՝ Թիգլաթպալատը լասար Ա-ը, իր պատմելածին հավատարիմ, այդպիսի նշում կունենար, ինչպես մուշքերի օրինակը Կադմուխի արշավանքում, կասկերի օրինակը Շուրաբրուի արշավանքում:

Մի փաստ ևս: Ասորեստանի հաջորդ թագավորները նույնպես, մասնավորապես՝ Ասուրնապիրպալ Բ-ը (883—859 թթ.) և Շամսի Ռամմա Բ-ը (=Շամսի Աղադ Ե՛ 825—812 թթ.) իրենց նախրյան արշավանքները բում հիշում են նախրիի տասնյակ երկրներ, որոնք բոլորովին տարբեր են համարյա կրկնապատկում են Թիգլաթպալասար Ա-ի նշած 60-ը:

ՆԱԽՐԻԴԻ ԵՐԿՐԱՅԹՔԱՆԻՐ ՀՍՏ ԱՍՄԽՐԱՎԱՆ ՔԱԳԱՎՈՐՆԵՐԻ

Համ Քիզարսաւասց Ա-ի
(115—1077)

Համ Համայնքամար Բ-ի
ըստ է. թիկեւսնի Համայնքի Ա

Համ Առաջնայրական թ-ի (883—859 թ.)

| | | | |
|-----|---------------------------------|--|--|
| 1. | Թումմի, նաև՝ Տռմմի | 1. Թաքարուրան (իշխանություններ) | Համ Համայնքամար Բ-ի (883—859 թ.) |
| 2. | Թումուրի, նաև՝ Տռմուրի | 2. Հարվիշանդա (իշխ. Ամանար) | |
| 3. | Թուալի, նաև՝ Տռալի | 3. Ղարսանի (իշխ. Զարիշու) | |
| 4. | Կինդարի, նաև՝ Քինտարի | 4. Հանդուր (իշխ. Զարիշու) | |
| 5. | Թուրուա | 5. Կիպաւարուտակա (իշխ. Սահմանականություններ) | |
| 6. | Թւամունի, նաև՝ Թնչամունի | 6. Թւամաւա (իշխ. Արքարասա) | |
| 7. | Անդիսի | 7. Կինդուլա (իշխ. Շումասա) | |
| 8. | Պիւակիննի, նաև՝ Թնչամունի | 8. Գինգիրիր (իշխ. Տասամանի) | |
| 9. | Ասուրփինի, նաև՝ Աթորփինի | 9. Արդմաս (իշխ. Բիսերաբին) | |
| 10. | Կուլիքարդինի, նաև՝ Կուլիքարդինի | 10. Կիպարուզա (իշխ. Պարտուշու) | |
| 11. | Ծիկիրինի, նաև՝ Ծիկիրինի | 11. Ոիիւա (իշխ. Աշուաշատատուլի) | 12. Անկուն |
| 12. | Կիլմաս, նաև՝ Հիմուա | 12. Կինդիշանինդա (իշխ. Ամամաւաշու) | 13. Բախուռ |
| 13. | | 13. Մասկիրառ (իշխ. Մարտիճու) | 14. Պիւազի (Քումայի) |
| | | | 15. Կումմանինի (Քումայի մոնիւթյուններ) |

| | | | |
|-----|--------------------------------------|------------------------------|-----------------------------------|
| 13. | Պահտուրի, նաև՝ Պախտուրի, Պայթուրի | 14. Լուկաս (իշխ. Մատանիես) | Համ Առաջնայրական թ-ի (883—859 թ.) |
| 14. | Ոիրամ | 15. Պիմանու (իշխ. Զամնզար) | |
| 15. | Շուրուրիա | 16. Միմքորի (իշխ. Միրաառու) | 16. Խալղորիպիլասա |
| 16. | Արանի | 17. Արդմաս (իշխ. Գրիշուս) | 17. Իձաւալ |
| 17. | Արանի | 18. Ասամի (իշխ. Արդմասու) | 18. Կինարու, |
| 18. | | 19. Ասամի (իշխ. Արդմասու) | 19. Վիլրու (Վուարի) |
| 19. | | 20. Կիրիլ (Կուպիրի) | 20. Մուպրի (Շուպիրի) |
| 20. | Կիրիլի, նաև՝ Քիրինի | 21. Կիրիլ | 21. Կիրիլ |
| 21. | Ալբայ, նաև՝ Ալբա | 22. Կիրու (իշխ. Դիրինկուուշ) | |
| 22. | Ուգինա | 23. Զուզպրուզ (իշխ. Զարմու) | 22. Խորովիս |
| 23. | Նազարիա | 24. Գինգիրու (իշխ. Իրտիսատի) | 23. Կիրանա |
| 24. | Աբարինի | 25. Տամբրա (իշխ. Բատրուտա) | 24. Բատրուտ |
| 25. | Դայանի, նաև՝ Դայանենի | 26. Նանի (իշխ. Շուու) | 25. Պիրա |
| 26. | | 27. Մատիրա և Արտասիրարի | 26. Քիտորա |
| 27. | | | 27. Կիրիլի |

Տե՛ս Ա. Արտեգ, ՀՊ, Երևան, 1972,
էջ 58, հայուր, կեն, Երկրու, է, 1, էջ 183,
ՀՀ Գլուխան, էջ 19.

Տե՛ս Ա. Արտեգ, ՀՊ, Երևան, 1972,
էջ 58, հայուր, կեն, Երկրու, է, 1, էջ 183,
ՀՀ Գլուխան, էջ 19.

Տե՛ս Ա. Արտեգ, ՀՊ, Երևան, 1972,
էջ 58, հայուր, կեն, Երկրու, է, 1, էջ 183,
ՀՀ Գլուխան, էջ 19.

ինչպես երկում է, Թիգլաթպալասար Ա-ի նշած 60 երկրներից զատ (23-ը բերված անվանապես), հիշատակված են Նախրիի 50 երկրներ և, շնչաշված, իհարկե, կրկնվածները: Այս 50 երկրների մոտ կեսը՝ Ասուր-նազիրպալ Բ-ի նվաճած 23-ը, համարյա անկասկածելիորեն տեղագրովում են Աղձնիք և Կաղմեա Տուն նահանգներում (թե որը՝ որտե՞ղ, սույն պահին էական չէ), իսկ մնացածը՝ Շամսի Ռամմա Բ-ի հիշած 27-ը, ենթադրվում են Ուրմիա լճի հարավային լեռնատարածքում (տե՛ս Ա. Արյունյան, ԵՍ, Համապ. երկրանունները, հմմտ. ԵԴԱ 1951, թիվ 2, էջ 301—302): Այսինքն՝ նորից ու նորից անկասկած է դառնում, որ Աղձնիքն ու Կաղմեա Տունը ևս Նախրիի երկրամասեր են, ուրեմն՝ նաև բուն «Ուրարտուն»՝ Կաղմեա Տուն նահանգի երկրներից մեկը, որ Նախրիի շուրջ 110 երկրներ հայտնի են, գոնե, հիմնական ուղղություններով, այն է՝ Վանա լճից դեպի հարավ՝ մինչև Ասորեստան, հարավ-արևելք՝ ներառյալ Մաննա երկիրը, հարավ-արևմուտք՝ մինչև (գուցեև՝ ներառյալ) Խանիգալբատ, արևմուտք՝ մինչև Արևմտյան Եփրատ, հյուսիս-արևմուտք՝ ներառյալ Դայաենու (=Տայք) երկիրը:

Այս դեռ բոլորը չեն, Նախրիի առանձին երկրների (Նախկիններում հիշված և բոլորովին շնչիշված) և Նախրիի մասին ընդհանրապես բավականաշափ տեղեկություններ են Հաղորդում նաև Ասորեստանի հետագա թագավորները՝ Սալմանասար Գ (858—824 թթ.), Թիգլաթպալասար Գ (745—724 թթ.), Սարգոն Բ (720—705 թթ.), Սիննախերիք (=Սինեքերիմ—705—681 թթ.), Ասարհադոն (680—669 թթ.) և ուրիշներ՝ դարձյալ դեպի Նախրի և Ուրարտու կատարած իրենց արշավանքների նկարագրությամբ, ինչպես նաև իրենք իսկ՝ «Ուրարտու»-ի թագավորները կամ Թիայնայի տերերը, որոնք հաճախակի իրենց նաև Նախրիի տերեր են համարել:

Հիշյալ թագավորների արձանագրություններում բնորոշը (տվյալ Հարցում) և ակնառուն այն է, որ Նախրին և Ուրարտուն, այսպես ասած, ներծծված են իրարով, հաճախակի այս կամ այն երկրամասը, կամ երկրամասերը, որ համարված են Նախրյան, մեկ այլ դեպքում ներկայացվում են որպես ուրարտական և հակառակը, որ հիմնականում Նախրին ի հայտ է գալիս որպես ընդհանրացնող, իսկ Ուրարտուն մասնակիացնող անուն՝ որպես Նախրիի մասը, որ հաճախ էլ համարյա անհնար է դրանց տարածքապես իրարից սահմանագատել, բաժանելը: Նշենք նաև, որ «Ուրարտու» անունը, բայց եղած արձանագրությունների, երբեք չի դարձել նախրյան երկրների ընդհանրական անուն, երբեք չի փոխարինել Նախրիին, որ «Նախրին» միշտ ու մշտական գործածված է որպես ընդհանրացնող անուն, իսկ «Ուրարտու»՝ մասնակիացնող, ավելի ճիշտ, նրա մասը՝ անգամ իր հզորագույն ժամանակաշրջանում: Այսպես որ, «Ուրարտու»-ի տարածքի կամ սահմանների մասին նշումները հա-

վասարապես նաև «Նախրիին» են վերաբերում, ճիշտ այնպես, ինչպես դայաենու, Կաղմուխի, Ալզի, Շուրաբթու և նախրյան այլ երկրների մասին եղածները:

Ահա այս տեսանկյունով և այս կարգի փաստերի հիման վրա հրատակ երկում են նաև Նախրիի մյուս տարածքներն ու սահմանները՝ արեւյան, հյուսիս-արևելյան և հյուսիսային, որոնք ևս նույնանում են (արևելյանը) կամ համարյա նույնանում են (մյուս երկու ուղղությունները) Մեծ Հայքի համապատասխան տարածքներին ու սահմաններին: Այս Հայքի համապատասխան տարածքներին ու սահմաններին: Այլ կերպ ասած, Նախրին տարածքապես Մեծ Հայքն է, որ, հետևաբար, Արարատուն կամ Բիայնան երա (Մեծ Հայքի) մի մասը, անկախ տարածքային փոքր կամ մեծ շափերից: Սրանք շատ կարևոր իրողություններ են, ունեն ելակետային նշանակություն՝ պատմագիտական խճանքները ձերբազատվելու համար, ուստիև պետք է և պարտադիր է իմանալ և, ամենակարևորը, նկատի ունենալ:

Ի դեպ, Ուրարտու-Նախրի, Նախրի-Մեծ Հայք տարածքային փոխհարաբերությունների մասին մեր այս եզրակացությունները նորույթ չեն: Դեռևս 1917 թ. հրատարակած իր «Հայոց պատմության» առաջին Հատորում նման եզրակացությունների է հանգել բազմավաստակ պատմաբան պրոֆ. Լեռն: Նկատի ունենալով Նախրյան երկրների վերը բերած մարան պրոֆ. Լեռն: Նկատի ունենալով Նախրյան երկրների վերը բերած ցուցակները, նա գրում է. «Այս երկու ցուցակի մեջ հիշված անուններից մի երկու հատի տեղերն են միայն, որ այսօր կարելի է որոշել փոքր ի համար հավանական ճշտությամբ, Այսպես՝ 23 երկրների ցանկում հիշատակված Դայաենի երկիրը Նախրիի հյուսիս-արևելյան ծայրն էր, այժմ երգում է նախրիի ներքին զանգվածի ցանցը: Ասկայն այդ զանգվածում էին Նախրիի ներքին գավառները (նահանգ, գավառ) մասին մենք ունենք մի քանի որոշ տեղեկություններ: Դրանց տեղը որոշելու համար լավագույն միջոցն է վերցնել Վանա լիճը (Ընդգծ.— Լ. Շ.), որ Նախրիի կենտրոնակաց կարող է համարվել և ցույց տալ, թե այդ լճի ո՞ր կողմի ուղղությամբ էին տարածված այդ երկրները» (Երկիր, Ա, էջ 183—184):

Եվ այսպես, հավատարիմ իր այս համոզումին, պրոֆ. Լեռն ասուրական և ուրարտական կոչված արձանագրությունների հիման վրա բարեկան և ուրարտական կոչված արձանագրությունները Վանա լճի բոլոր ուղղություններով, ուրվագծել է Նախրիի սահմանները Վանա լճի բոլոր ուղղություններով, ուրվագծել է Նախրիի սահմանները Վանա լճի բոլոր ուղղություններին, այդ թվում նաև հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղությունները (տե՛ս նույն տեղում, էջ 183—186):

Ի դեպ, որ Վանա լիճը պետք է Նախրիի կենտրոն համարվի, բնավական և ակնառուն անուն, իսկ «Ուրարտու»՝ մասնակիացնող, ավելի ճիշտ, նրա մասը՝ անգամ իր հզորագույն ժամանակաշրջանում: Այսպես որ, «Ուրարտու»-ի տարածքի կամ սահմանների մասին նշումները հա-

դրումների: իսկ սա նշանակում է, որ Վանա լիճը Մեծ Հայքի ռներքին ծովն է՝ համարվելու, այսինքն՝ կենտրոնական լիճը, ինչպիսին իրոք եղել է հազարամյակներ շարունակ:

Իրավ է, պրոֆ. Լեռն՝ ինչ-ինչ պատճառներով Մեծ Հայքը չի նշել, չի ընդգծել, սակայն, կարծում ենք, դա չի կարեորը: Կարեորն այն է, որ նրա ուրվագծումներով ևս նախրին նույնանում է Մեծ Հայքին (թե կուզկ՝ աշխարհագրորեն) և այս իրողությունն է, որ պետք է նկատի առնվի, Այսինքն ըստ Լեռյի ևս՝ նախրի=Մեծ Հայք (ըստ մեզ՝ Մեծ Հայք = նախրիի), Ուրարտու=նախրիի մասը, հետեւաբար, Ուրարտու=Մեծ Հայքի մասը: Ահա սա է փաստերի ընձեռած վերջնարդյունքը: Այնպես որ նախրին «Փոքր» տեսնելու կամ «փոքրացնող» կարծիքները փաստերի ոչ համատեղ, հպանցիկ մեկնություններ են, հաճախ էլ ցանկալին տեսնելու բացահայտ ճիգեր և բնավ իրենց շեն արդարացնում: Ավելին, հիմքեր կան մտածելու, որ փաստերի առավել հանգամնալի և առավել ճշգրիտ ուսումնասիրություններով ի հայտ կրերվեն նախրի, այսպես ասած, արեւելյան կեսի երկրները ևս (արևմտյանը տեսանք), գուցե ևս 100 երկիր, այսպիսով նախրիի ավելի քան 200 երկիր ենթադրվում է, այսինքն՝ համարյա այնքան, որքան Մեծ Հայքի գավառներն են (195 կամ 201)՝ ըստ «Աշխարհացոյց»-ի:

Հիմքեր կան, որ հնագույն և հին դարերում, իսկ Հայաստանի աշխարհագրական պայմաններում՝ մասնավորապես, վարչական և տարածքային բաժանումները շատ ավելի հաստատուն և հարատեղ են եղել: Այնպես որ, Մեծ Հայքի և նախրիի գավառաքանակների համապատասխանությունը (կամ համարյա համապատասխանությունը) բնավ էլ պարմանալի և պատահական չպետք է երևան:

Նախրին և Մեծ Հայքը նույնանում են նաև էրենիկապես՝ իրենց հայրենակությամբ:

Նկատի ունենալով փաստերի առատությունը և դրանք քննարկելու մեր սահմանափակ հնարավորությունները, փորձենք փաստարկել ընդհանրացումներով:

ա. Մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից Մեծ Հայքի բնիկները (հայերի նախնիները) Հայկ նահապետի անունով իրենց աստիճանաբար կողում են Հայք-Հայք-Հայեր (նախապես կոչվել են Հարեթյաններ, Թորգոմյաններ), այնպես որ նույն հազարամյակի վերջերին արդեն այդ ամբողջ տարածքը ժագե ի ծագ հայախոս և հայաբնակ էր: Այսինքն՝ ծագե ի ծագ հայախոս և հայաբնակ էր Առաջավոր Ասիայի հյուսիսարևելյան այն տարածքը՝ շուրջ 320.000 քառ. կմ, որը հետագայում (Արշակունիների ժամանակ և հետո) հասկացվում էր բուն Հայաստան: Նկատենք նաև, որ Մեծ Հայքը այդ ժամանակից սկսած ավելի քան 4000 տարի՝ ընդհուպ մինչև առաջին աշխարհամարտը, երբեք չի հայթափել (նկատի շուրջնք ուշ դարերի մասնակի արտագաղթերը) և

չի կրել այնպիսի զանգվածային էթնոփոխություն, որ մեկ ուրիշ ցեղամիտություն կամ ժողովուրդ պայմանավորեր նրա էթնոպատկերը: Ավելին, եղած փաստերով նույնիսկ հակապատմական է երևում թեկուզ երկու հավասարազոր և հավասարաքանակ ոչ արյունակից ժողովուրդների զուգահեռ գոյությունը (տե՛ս Գիրքը դարերի խորքից, 1984, «Մանկավարժ», ամսագիր, 1990, թիվ 11, էջ 19—35, 1991, թիվ 5, էջ 29—40):

Ահա այս իրողությունների թելադրանքով, որոնք, ինչպես նշվեց, հիմնավորված են այլ առիթներով (ի դեպ, առ այսօր մեր հիմնավորումները չեն առարկված), կասկած չի մնում, որ նախրին հայաբնակ էր, որ նախրիում ուրիշ՝ ոչ հայկական, երկրի էթնոպատկերը բնորոշող ցեղերու ժողովուրդներ փնտրելը չի արդարացվում, պարզապես՝ փաստեր չկան:

բ. Նախրիի հայաբնակության անհերքելի ապացուց է նաև Հայաստան—նախրի նույնությունը, որը պատմագիտական ուսումնասիրություններում, ցավոք, մինչև մեր դարի 70-ական թվականները, ինչ-ինչ պատճառներով չէր նկատվում կամ չէր ցուց տրվում: Այս «ավանդույթը» խախտեց մերօրյա հմուտ պատմաբան և մերազնյա միակ խեթագետ վ. Խաչատրյանը:

Դեռևս 1973 թ. հրատարակած իր «Հայաստան և Հայրի» հոդվածում (տե՛ս «Երաբեր» հաս. գիտ., 1973, թիվ 11, էջ 37—47), հենվելով մ. թ. ա. XIII դարի սկզբների խեթական և ասսուրական համաժամանակյա թագավորների միմյանց հղած նամակների վրա, նա խիստ համոզիլ և անառարկելի փաստերով ապացուցել է (մեր կարծիքով՝ ապացուցել է վերջնականորեն), որ Հայաստան և նախրի անվանումները տրված են միենույն երկրին, որին խեթերը Հայաստան և անվանույն երկիրը, որին խեթերը Հայաստան և անվանակ կոչել են նախրի: Եվ քանզի, վանել, ասսուրները այդ նույն ժամանակ կոչել են նախրի: Եվ քանզի, վանել, ասսուրները ամբողջ տարածքը (ինչը նշված հոդվածում ապացուցել է նաև վ. Խաչատրյանը), ուրեմն՝ Հայաստան և նույն տարածքն է ընդհանրացումներով, ավելի ճիշտ, Հայք-Հայաստան է, որ որոշ ժամանակ (մ. թ. ա. գրկել, ավելի ճիշտ, Հայք-Հայաստան է, որ որոշ ժամանակ (մ. թ. ա. XIII—VII դդ.) ասսուրների կողմից նախրի է կոչվել:

Հայաստանախրի նույնությամբ ավելի է կարեռը կողմից ընդունելի ստուգաբանությունը: Ըստ այդմ, մասնավորապես՝ ըստ վերջին ճշգրտման (թ. Գամկրելիձե, վ. Խվանով, վ. Խաչատրյան և ուրիշ.) Հայ-աստան բուն բաղադրիչը «հայ» բառն է, իսկ «աստա»-ն խեթալուվիական լեզուներին հատուկ տեղ, բնակավայր, երկիր ցուց տվող վերջածանց: Այսպիսով, «Հայաստան» ասվածը նշանակում է հայերի երկիր, ճիշտ այնպես, ինչպիսի հայաստանները և Հայք և Հայաստան անունները: Ուրեմն՝ նախրին ևս, թե իմաստ ունեն Հայք և Հայաստան անունները: Ուրեմն՝ նախրին ևս, թե իմաստ ունեն Հայք և Հայաստան անունները: Սուսկ այն տարբեպետ ոչ անվանապես, նշանակում է հայերի երկիր, սոսկ այն տարբե-

րությամբ, որ Հայաստան էթնոծագում և էթնոիմաստ ունի, այսինքն՝ էթնոանուն է, իսկ Նախրին՝ աշխարհագրական անվանում:

Ահա այս են թելադրում գիտությանը հայտնի համապատասխան բոլոր փաստերը և այսպիսի բացահայտող՝ հեղաքեզող դեր ունի Վ. Խաչատրյանի տվյալ կարծիքը կամ, ավելի ճիշտ, գիտական խիզախումը, որը շորջ 20 տարի անտեսված է հանիրավի:

Գ. Նախրին հայաբնակությունը, թեպետ ակամա, «փաստարկում են» նաև մեր ընդդիմախոսները՝ ընդունելի համարված տեսակետների երգվյալ հետեւորդները և կրողները:

Գաղտնիք չէ, որ մինչև վերջերս (մինչև 50—60-ական թվականները) իշխում էր հայ ժողորդի միզրացիոն կամ գաղթի տեսությունը (Հիմնագիր Հ. Մանանդյանը), ըստ որի նախառարարտական և ուրարտական կովկած ժամանակաշրջանների Հայաստանը (նկատի ունենալ տարածքը) համարվում էր բացառապես ոչ հայաբնակ, այլ կերպ՝ իշխում էր տվյալ ժամանակներում Հայաստանը առանց հայերի տեսությունը, իսկ արմենների (իբրև թե հայերի հնդեվրոպացի նախնիների) հայաստանաբնակ լինելը ընդամենը մ. թ. ա. VII դարի վերջերից (Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Ա, էջ 7—34):

Եվ, ահա, 50-ական թվականներից այս տեսությունը առաջին լուրջ ձեղքերը տվեց՝ վերանայվեց նախ ժամանակագրորեն: Այն է, իսթական և ասսուրական թագավորների տեղեկությունները՝ Հայաստան, Թեգարման կամ Թեգ-Արամա, Արմե-Շապրիա կոչված երկրների մասին, ուսումնասիրողներին բերեցին այն հաստատուն համոզման, որ դրանք մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջերից հայերի նախնիներ հանդիսացող արմենների և հայաստաների (փոխանակ ասվեր՝ հայերի) բնակավայրեր են, որ Հայաստան, ըստ նրանց, զբաղեցրել է ամբողջ Բարձր Հայք նահանգը և Փոքր Հայքի արևելյան՝ եփրատամերձ տարածքները, Թեգարման կամ Թեգ-Արաման՝ Եփրատի ոլորանի շրջանները, Արմե-Շուպրիան՝ Աղձնիք նահանգը:

Այսպիսով, Մեծ Հայքի արևմտյան և հարավային զգալի տարածքներ առաջին անգամ գիտականորեն համարվեցին հայաբնակ՝ մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջերից, ինչպիսի կարծիքը հետագա տարիներին ավելի հիմնավոր դարձավ և ամրապնդվեց: Ավելին, «Ուրարտու»-ի հայկականությունը հաստատող փաստերի ճնշման տակ իշխուց մտքերին և դարձավ անկասկածելի:

Այս իսկ առումով կարևոր ենք համարում ուշադրություն Հրավիրել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Սարգսյանի «Ուրարտական տերությունը և հայերը» հոդվածին (տե՛ս «Ուրարտու Հայաստան», Երևան, 1988, էջ 47—126), որը ծայրեին ունի ուրատապաշտապան (այսինքն՝ Ուրարտուն ոչ հայկական) նպատակադրում և հենց դրանով էլ ուշադրավ է: Մանոթացնելով գիտության մեջ իշխող տվյալներին (կարծիք-

ներին), որոնք վերաբերում են Հայաստանովի, Թեգարամա (ըստ աստվածների՝ Թիլ-Գարիմմու), Մալդիա կամ Մալաթիա, Խոսվա (=Խոտա, Խուտա), Սուփա (Սոփենե, Սոփք) և այլ հարակից երկրներին, Գ. Սարգսյանը եզրակացրել է. «Ելապիսով, Վերին Եփրատի հովտի երկրները, սկսած Հյուսիսում ընկած Հայաստայից մինչև հարավում տեղափորված Մելիտեններին (ճիշտն ու Հիմնավորը՝ տեղանուններին — լ. Շ.): Պարզ է դառնում, որ հենց այստեղ է գտնվել հայ ծոլովրդի կազմավորումը սկզբնավորող վաղերի հախնական բնակավայրը» (նույն տեղում, էջ 54, ընդգծ. — լ. Շ.):

Ասենք, որ այս եզրակացությունը ես, ինչպիսին բնորոշ է մեր բոլոր ընդդիմախոսներին, զերծ չէ շիմնավորված մտքերից, և դա նրանց «մեղքը» չէ, պարզապես՝ տարուրելով են փաստականի և ոչ փաստականի արանքում, որից էլ՝ զանազան խուսանավումները, հակասությունները, անորոշություններն ու շիմնավորումները: Օրինակ, սույն պահին նկատի ունենք տեղանունները՝ «ցեղանուններ» կոչելը, որը ոչնչով և երբեք չի հիմնավորված, կամ՝ Մեծ Հայքի արևմտյան տարածքները հայկական ցեղերի «նախնական բնակավայր» համարելը (այստեղ առարկելին և շիմնավորը՝ «նախնական» բառն է՝ միայն արևմտյան տարածքների համար), որը, այսպես ասած, սարգսյանական հերթական գաղտնաքայլ է և տուրք հայերի՝ իրեն արդեն սպառած միզրացիոն տեսության և այն, սակայն սույն պահին կարենու այն է, որ Գ. Սարգսյանը ևս Մեծ Հայքի արևմտյան այդ տարածքները վերջապես հայաբնակ է համարում և, մեր կարծիքով, շիմարեն չեր կարող: Այսինքն՝ հայաբնակ է համարում այն տարածքները, այն էլ՝ «նախնականի» ցուցիչով, որոնք ըստ Թիգլաթպալասար Ա-ի, ինչպես տեսանք, Նախրի են կոչվել: Ուրեմն՝ անհիմն չէ մտածելը, որ ոչ միայն այդ տարածքները, այլև ամբողջ նախրին հայաբնակ էր: Զենք կասկածում, որ այս եզրակացությանը կհանդիր նաև Գ. Սարգսյանը, եթե նրան շխոշնդուեին առանձին կանխադրությներ (Ուրարտուն ոչ հայկական, հայերի միզրացիոն տեսություն՝ թեպետ վերջինը ոչ բացահայտ) և եթե կարողանար համատեղ քննել բոլոր համապատասխան փաստերը, քններ առանց էթնիկապես տարբերակելուն, մասնավանդ՝ միմյանց հակադրելուն:

Դ. Նախրիի հայաբնակության ապացուց է նաև «Ուրարտու» կոշիքածի հայաբնակության ապացուցումը, որին և նպատակամղված է մեր աշխատությունը: Սա էլ այն պարզ պատճառով, որ «Ուրարտուն» նախրիի մասն է կազմել (մեծատարած կամ փոքրատարած՝ էական չէ) և, բացի այդ, հիմքեր չկան դրանց էթնիկապես տարբերակելուն, մասնավանդ՝ միմյանց հակադրելուն:

Այսպիսով, փաստերը թելադրում են հետեւյալ էթնոնույնությունը՝ Հայք=Հայաստան=Նախրի=Ուրարտու կամ Բիայնա=ՀԱՅԱԲՆԱԿ, որից ամեն մի շեղում, մեր համոզումով, գիտականորեն ձախողված է: Զախող-

ված է հատկապես Հայաստանը խուրիփարնակ համարող զուտ շինժու տեսությունը, ինչի մասին արդեն խոսվել է:

Նաիրի=Մեծ Հայք հայաբնակությունը կարելի է ապացուցել նաև այլ փաստերով, ավելի ճիշտ, հարստացնել մանրամասներով, սակայն չժավալվենք՝ ընդհանրացումները բավարար համարելով, և վերդառնանք նույնացնող այլ հիմքերի:

Արդ, Հայք=Հայաստան նաիրի նույնացնող հիմքերից է միասնական պետության գոյությունը բոլոր երեք դեպքերում:

Մեծ Հայքի միասնական պետության գոյությունը արդեն բավականաշափ փաստարկվեց սույն աշխատության սկզբում, ցույց տրվեց, որ մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջերից (Արամի ժամանակ՝ 2036—1978 թթ., և հետո) այն ունեցել է համահայատանյան և համահայկան ընդդրկում: Ցույց է տրվել նաև այլ առիթներով՝ ըստ հնագիտական և հայ պատմագրության տվյալների:

Հայաստանի համար, հաճախ էլ՝ Հայաստան=Ազգի անվանումով, պետության այդպիսի միասնական վիճակ նկարագրում-ներկայացնում են խեթական արձանագրությունները՝ մ. թ. ա. XV—XIII դարերում, իսկ նաիրիի համար՝ ասսուրական թագավորները, մասնավորապես Թիգլաթպալասար Ա-ը (1115—1077 թթ.):

Տարբեր ոլորտի այդ աղբյուրները, կարծեք թե, մեկը մյուսին լրացնելով հաստատում են այն իրողությունը՝ ավանդված հայ պատմիչների, մասնավանդ Մովսես Խորենացու կողմից, որ պատմական Հայաստանում մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջերից մինչև մ. թ. ա. XI դարի կեսերը, իրոք, անընդեղ գոյություն է ունեցել համահայատանյան և համահայկան մեկ միասնական պետություն, թեպետ տարբեր անվանումներով, որին արտաքին աղբյուրները, ի տարբերություն հայկականի, նույնիսկ թագավորություն են կոչում:

Այս իրողությունը գուցեն չի երեսում առաջին հայացքից, հաճախ էլ այլափոխված է ներկայացվել (դարձյալ հայերի՝ միգրացիոն տեսության և ուղղ հայկական Ուրարտուի պատճառով), սակայն բավականաշափ նկատելի է: Օրինակ, խեթական համապատասխան բոլոր արձանագրություններում Հայաստան կամ Հայաստանակին երեսում է որպես մեկ միասնական և մեկ ժողովրդի (բոլոր հիմքերով՝ հայերի) թագավորություն, ժառանգաբար իրար հաջորդած թագավորներով (ըստ Ն. Ադրնեցի՝ Կարաննի, Մարիյա, Հուկկանա, Աննիյա— տե՛ս ՀՊ, 1972, էջ 46), պալատական կարգ ու կանոնով (ի դեպ «պալատ» բառի հաճախակի գործածությամբ), ավագանու խորհրդով և պետական գործական ներություններով, բավականաշափ ուազմունակ միասնական զորաբանակով և զորտեսակներով, մանավանդ՝ խեթերի ուշադրությանը խիստ արժանի ուազմակառքերով: և պետությանը հատուկ այլ հատկանիշներով:

Արդ, այս կարգի տեղեկություններն այնքան ակնառու են, որ Հայաստայում միասնական և լիարժեք պետական կառույց շտեսնելը, կամ էլ «ուազմական դեմոկրատիա» համարելը, այսինքն՝ պետության սաղմանային վիճակ, հավասար է փաստերը անտեսելուն, կամ էլ դրանք իմաստափոխելուն:

Նաիրիի միասնական պետության մասին, ի տարբերություն Հայաստանակի, անուղղակի տեղեկություններ են հասել: Ինչպես տեսանք, Թիգլաթպալասար Ա-ը, անուն առ անուն նշելով նաիրիի 23 երկրներ, որպես ընդհանրացում հայտնում է. «Ընդամենը նաիրի երկրի 23 քաջարներ, իրենց երկրներում իրենց մարտակառքերն ու իրենց զորքերը միավորեցին, կոիվ ու ճակատամարտ տալ ցանկացան»: Ապա, նկարագրելով ճակատամարտն ու իր հաղթանակը, հայտնում է՝ այժմ արդեն որպես նույն արշավանքի (ոչ ճակատամարտի) իրողություն. «Նաիրիի երկրների 60 քաջարներին և նրանց օգնության եկածներին իմ տեղերով հետապնդեցի մինչև Վերին ծովը»: Ապա՝ նորից նույն արշավանքի առիթով. «Նաիրիի երկրների բոլոր քաջարներին կենդանվույն ձեռքբերովս բռնեցի, (նրանց) ներում չնորհեցի, նրանց կյանքը փրկեցի գերվարությունից ու կալանավորությունից... նրանց ազատեցի...»: Ապա՝ ներանց հպարտ ուրիներին պատանդ վերցրի»: Վերջապես՝ ընդարձակ նաիրի երկրին իր ողջ սահմանով ես տիրեցի, նրանց բոլոր քաջարներին իմ ոտքերին խոնարհեցրի» (տե՛ս ՀՃՊ, քրեստ., էջ 19—20):

Արդեն մեզ քաջածանոթ այս տեղեկություններն այժմ հետաքրքրում են այլ առումներով:

ա. Ինչ հասկանալ նաիրիի 60 և ավելի թագավորներ ասելով: Արդ, զո՞ր դրանք, այսպես ասած, թագավորներ են, կամ՝ միթե՝ նաիրին, իրոք, այդքան շատ թագավորներ է ունեցել:

Հարցը նորույթ չէ, ոչ էլ պատասխանը անիմանալի: Պատմագիտության մեջ հարցին բացառապես բացասական պատասխան է տրված, այսինքն՝ այդ «թագավոր» կոչվածները բնավ էլ թագավորներ չեն, որը հիմնավոր կարծիք է: Սակայն նույնքան էլ հիմնազուրկ և առարկելի է, երբ այդ «թագավոր» կոչվածները, ըստ իշխող կարծիքի, հենց այնպես, քմահաճորեն հորչորչվում են ցեղառաջնորդներ (տե՛ս Գ. Ղափանցյան, ՈՒՊ, 1940, էջ 14, ՀՃՊ, ՀԱԱ. Հրատ., հ. 1, էջ 282—283 և այլ աշխատ.), հակասելով իր իսկ՝ Թիգլաթպալասար Ա-ի և ասսուրական այլ թագավորների շափազանց հստակ և անկասկածելի նշումներին:

Նկատի ունենանք նախ այն, որ Թիգլաթպալասար Ա-ը և մյուսները հետևողականորեն դրանց երկրատերեր են համարում և երբեք՝ ցեղատերեր կամ ցեղառաջնորդներ: Տվյալ դեպքում բոլորովին հարկ չկամակածելու սկզբնաղբյուրների տեղեկություններին:

Երկրորդ, զուգահեռ փաստերը ևս (Մեծ Հայք, Հայաստան, «Ուգ-

արտուր-ի մասին) հուշում ու թելադրում են, որ դրանք և նմանները երկրատերեր են և ոչ ցեղառաջնորդներ, որ այդ փաստերը ևս պետք է նկատի առնվեն:

Վերջապես, նաև այն, որ Նախրիում թեպետ համանարյան տիրակալ կամ տիրակալներ (իրար հաջորդած) շեն հիշվում, սակայն այդպիսիք ենթադրվում են: Ենթադրվում են նախրյան երկրների միասնական պայքարով (այդ մասին քիչ հետո), ինչպես նաև Մեծ Հայքի, Հայաստի, «Ուրարտուի» մասին եղած փաստ-օրինակներով, ըստ որոնց նրանք կոչվել են նահապետներ (Մեծ Հայքի գեպագում) կամ թագավորներ (մյուս գեպագում): Այսպիսով՝ համանարյան տիրակալները կամ թագավորները անտեսված են, իսկ երկրատերերը խնամքով, այն է՝ տասնյակներով հիշված, որը և էպան շփոթների տեղիք է տալիս: Թե ինչ հետեւանք է այս երկույթը, ոժվար չէ բացատրել, պարզապես՝ ասսուրական թագավորների փառատենչական նկրտումների հետեւանք, ուրիշ ոչինչ:

Բ. Քերված և այլ փաստերից բացահայտ երկում է, որ Նախրին, այն էլ՝ հաճախակի, որքան հնարավոր է միասնական պայքար է մղել իր հզոր հարեւանի՝ Ասորեստանի դեմ, ուստի՝ հերթական հարց է առաջանում՝ ինչպիսին է եղել այդ միասնությունը:

Պատմագիտության մեջ հարցին տարատեսակ, հաճախ էլ անորոշ պատասխաններ է տրված: Իշխողն այն է, որ դա եղել է ցեղերի դաշնակցություն, ի դեպ, չի էլ նշվում ինչպիսի՝ ցեղերի՝ արյունակից, թե ոչ արյունակից: Այս առթիվ հետեւյան է գրված «Հայ ժողովրդի պատմության» բուհական դասագրքում. «Նշված դարերում (մ.թ.ա. XIII—XI, — և. Շ.) Նախրի երկիրը մի միասնական ցեղային միուրյուն շեր. այստեղ ավելի շուտ գոյություն ուներ ցեղերի դաշնակցություն, որի կազմի մեջ մտնում էին բազմաթիվ ցեղեր, երբեմն նաև փոքր ցեղային միուրյուններ (Մեծ»-ից նկատելի վախ կա, — և. Շ.):

...Ցեղային առաջնորդի կամ ցեղապետի պաշտոնը նախրյան ցեղերի մոտ արդեն ժառանգական էր» (Տ. 1, Երևան, 1963, էջ 56—57):

Այս եզրակացության մեջ միակ հիմնավորը (տե՛ս նախաշարադրանքը) «պաշտոնների ժառանգականության» ընդունումն է, այն էլ ոչ թե ցեղառաջնորդի կամ ցեղապետի (ցեղային ժողովրդավարությունը այդպիսին չի հանդուրժել), այլ՝ երկրատերերի կամ իշխանների, որոնց Ասորեստանի թագավորները, ինչպես ասվեց, ի շահ իրենց սնապարծության ու փառքի «թագավորներ» են հորջորշել: Իրողություն, որն արդեն պետության գոյության ապացուց է: Իսկ բուն միտքը, թե՝ Նախրի երկիրը

¹ Ի դեպ, արդարացի լինելու դեպքում, ասսուրական թագավորները տվյալ հարցում այնքան էլ «Ենակոր» չեն, քանզի քաջ հայտնի է, որ համապատասխան զաղափարագիրը ոչ միայն «թագավոր», այլև «աեր», «իշխան», «առաջնորդ» և նման իմաստ ունի, որ դրանցից մեկնումների ընտրությունը լինելու է ըստ բովանդակության:

նույնիսկ ցեղային միություն էլ չէր, որ ցեղերի դաշնակցություն էր, պարզապես հակասում է մեր բերած ոչ քիչ փաստերին, ուստի պետք է վերանայել:

Սա դեռ ոչինչ՝ վերանայելը վերանայել, գոնե խոսվել է և, ինչպես տեսանք, հստակ կարծիք կա, սակայն կան նաև առավել զարմանալին ու մտահոգիշը: Բանն այն է, որ Հայոց պատմության ամենավերջին և ամենագիտական կոշված շարադրանքում (ՀԺՊ, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 1, 1971) Նախրին և նրան աղերսվող հիմնահարցերը համարյա ուշադրության չեն արժանացել, նույնիսկ համապատասխան գլուխ կամ ենթագլուխ չկա: Ավելին, եթե նկատի շունենանք «Ուրարտու»-ի առիթով գրված ընդամենը մեկ ու կես էջը՝ 282—284 (պատկերացրեք, մինչև մ.թ. երկրորդ դարն ընդգրկող մոտ 1000 էջանոց հաստափոր հատուրում) և էլի մի քանի սոսկ անվանական նշումներ, կարելի է ասել, Նախրին իր եղած-շեղածով դուրս է նետված Հայոց պատմությունից: Դուրս են նետել դյակոնովյան այն հիմնագուրկ կարծիքի թելադրանքով, թե Հայաստան և Նախրին (վերջին հարցում՝ գաղտնաբայլերով) որևէ կապ չունեն հայ ժողովրդի հետ: Մեր կարծիքով, այս և այս կարգի հիմնահարցերը Հայոց պատմության ընդհանուր դասագրային շարադրանք պետք է մտնեն կամ շմտնեն գիտական լուրջ բանավեճերից հետո, նույնիսկ ակադեմիայի նախագահության հսկողությամբ և ոչ անհատի կամ առանձին անհատների քմահաճույքով: Այլապես, պատմությունը կղադարի պատմություն լինելուց, կդառնա լավ կամ վատ հորինվածք, հեռու գիտականությունից:

Նախրիի միասնուրյունը, մեր կարծիքով, արդեն վաղուց կազմավորված միասնական, համահայաստանյան պետության հովանու տակ՝ գործող, հիմնականում արյունակից ցեղերի միուրյուն է: Ի հաստատումն մեր այս եզրակացության, նկատի ունենք հետեւյալ փաստերն ու փաստականները.

ա. Մեծ Հայքում և Հայաստանում վաղուց և այդ ժամանակ գոյություն է ունեցել միասնական համահայաստանյան կենտրոնացված պետություն, և քանզի տարածքապես նախրին նույնանում է Մեծ Հայքին կամ Հայաստանին, որիեմն՝ նույն կարգի պետություն նախրիում կասկած չի հարուցում:

բ. Կասկած չի հարուցում նաև նախրիի էթնոնույնությունը, քանզի Մեծ Հայքն ու Հայաստան վաղուց և այդ ժամանակ հիմնականում մեկ ժողովրդի բնակության երկրներ են: Ուրեմն՝ նախրիի միասնական պայտագարը մեկ ժողովրդի միուրյուն է մեկ պետության հովանու ներքո:

գ. Վերը նշվեց և դա ակնառու փաստ է, որ նախրիում նույնիսկ տեղական պաշտոնները՝ երկրատերերի կամ երկրամասերի իշխանների (մեր համոզումով՝ նախարարների) անցել է ժառանգաբար, որը դարձալ պետության գոյության ապացուց է:

գ. Նախրիի բազմաթիվ երկրների միասնական, համառ ու տեսական պայքարը հզոր Ասորեստանի դեմ (նկատի չունենք միայն Թիգլաթպալասար Ա-ին դիմագրավելը՝ իր քանակական և որակական (ուղմական) տարբեր դրսերումներով, այն էլ՝ Հայաստանի բնականորեն տարանջատված պայմաններում, այն էլ՝ տվյալ դարերում (ճանապարհների պակաս, հաղորդակցության այլ միջոցների համարյա բացակայություն և այլն) անհնար է պատկերացնել առանց միասնական-կենտրոնացված պետության, առանց էթնոնության և էթնոնույնության: Այնպես որ, իշխող կարծիքը, թե Նախրին նույնիսկ ցեղային միություն էլ չէր, որ ցեղերի դաշնակցություն էր (պարզ է՝ ուղմական), ոչ միայն հակասում է փաստերին, այլև դառնում սին Հայտարարություն: Եվ, իրոք, եթե մի պահ մտածենք, որ Նախրիում չկա միասնական պետություն և չկա էթնոնույնություն, ուրեմն՝ ի՞նչ հրաշքով են նրանք այդպես հաճախակի բռունցքվում ահարկու նվաճողի դեմ, ի՞նչ ուժ է նրանց իմի բերում, խիզախումների մղում, այն էլ ասսուրական փառամոլ թագավորների խոստովանություններով: Հարցեր, որոնք հասկանալի պատճառներով չեն առաջացել, առաջանալու դեպքում էլ, համոզված ենք, հիմնավոր պատասխան չէին գտնի լոկ ինքնապաշտպանության գործոնը մկայակոչելով, մանավանդ՝ էթնոբազմազանության պայմաններում: Իսկ եթե, վերջիվերջո, մեր ընդդիմախոսները հանգեն այն գաղափարին, թե ինչ-որ կազմակերպող ուժ եղել է, կամա-ակամա կհանգեն պետության ընդունմանը, հենց միասնական-կենտրոնացված պետության ընդունմանը: Ուրիշ ճանապարհ չկա, և ինչո՞ւ մաքառել փաստերի դեմ, եթե մեր նպատակն, իրոք, ճշմարիտ պատմության վերհանումն է:

ե. Ասսուրիան համապատասխան բոլոր արձանագրություններում Նախրին միշտ ու մշտապես հանդես է բերված որպես մեկ ամբողջություն, մանավանդ՝ մինչև մ. թ. ա. XI դարի կեսերը, և շիթ որևէ բացառություն, անկախ այն բանից, որ նրա ընդգրկած շատ ու շատ երկրներ հաճախակի թվարկված և նշված են:

գ. Ասսուրիան համապատասխան բոլոր արձանագրություններում Նախրիները հանդես են բերված «երանեք» դերանուով և հոլովածերով, որոնք ունեն ոչ միայն էթնոնության, այլև էթնույնության իմաստ, քանզի եթե նախրիան միասնության մեջ եղել կամ նկատվել են էթնոտարբերություններ, իսկույն նշվել-առանձնացվել են: Դրանք, իհարկե, սակավ դեպքեր են (այդպես էլ պետք է լիներ ըստ այլ աղբյուրների), բայց կան, ինչպիսին է հատկապես մուշքերի օրինակը՝ ըստ Թիգլաթպալասար Ա-ի, Ուրեմն, եթե չկան կամ սակավ են էթնոտարբերությունները Նախրիում, պետք չէ, այսպես ասած, տարրալուծել, քայլայել նրա (նրանց) էթնոնույնությունը, պարզապես՝ պետք չէ և գիտական չէ էթնոտարբերություններ հորինելը, ինչպիսիք են, օրինակ, հայասներ, դայաներ կամ տայեր, շուպրիներ, կադմուխներ կամ կարդուխներ, կու-

տիներ, ուրարտներ, թիաներ և այլ, և այլ զարմանալիքներ՝ երկունքված սոսկ երկրանուններից: Ի դեպ, մեր օրերում մոգոնված օրինակներից է, այն էլ՝ պատմականը կրկնակ խեղաթյուրելով, «ազեր» կամ «ազերիներ» էթնոհորինվածքը:

է. Նախրյան երկրների էթնոնույնության և էթնոնույնության համար ուշագրավ է նաև Թիգլաթպալասար Ա-ի մեզ արդեն ծանոթ նշումը, թե՝ «Նրանց հապար ուրդիներին պատանդ վերցրի»: Այստեղ ուշագրավը հատկապես «հպարտ» բառն է, հատկանիշ, որը խոստովանել է հակառակորդը, այն էլ Թիգլաթպալասար Ա-ի նման փառամոլ թագավորը, ուրիշների, մանավանդ հակառակորդների, հետ փառք կիսելու հավանություններ չի դրսերում: Նկատենք նաև, որ արձանագրության բնագրում ուղղակիորեն չի հմնավորված (չի ցուցադրված) Նախրիի ուղիմիկ որդիների «հպարտ»-ությունը, ոչ էլ սպասելի էր այդպիսի «մետուղիմ» որդիների «հպարտ»-ությունը, ոչ էլ սպասելի հարցանածարանը: Ահա, այստեղից էլ հարց է առաջանում՝ ինչո՞ւ, այդուհանդերձ, Նախրիի «թագավորների» (=երկրատերերի) որդիները «հպարտ» են համարված:

Հարցի պատասխանը փնտրելիս, մեր կարծիքով, պետք է նկատի ունենալ հետեւյալը: Ամենայն հավանակնությամբ Նախրիների, այսինքն՝ հայերի «հպարտ» հատկանիշը և դրա ակամա խոստովանությունը թելադրված է պատմական հիշողությամբ: Հիշողությամբ այն բանի, որ Թիգլաթպալասար Ա-ի աստվածացյալ նախնիները՝ Նեբրովթ-Բելը, Բարշամը իրենց բանակներով կործանվել էին Հայքում (=Նախրիում): Հանդիպելով Հայոց նահապետներ Հայկի (Բելը), Արամի (Բարշամը) հպարտ և ազատամասն գործունեությանը, նույնիսկ աշխարհահռչակ և աշխարհատենչ Շամիրամն իր դյութանքներով չէր կարողացել ընկճել Արա Գեղեցիկի (մ. թ. ա. մոտ 1978—1968 թթ.): Հպարտ և ազատամանը ոդին: Հայոց նահապետների տվյալ հատկանիշը ավելի վաղ դարերում դարձյալ վկայել են ասսուրա-բաբելական ոլորտի աղբյուրները:

Օրինակ, քաղցեական աղբյուրներով Մար Արասուր, իսկ Մար Արասուրինակ, քաղցեական աղբյուրներով Մար Արելի նամակը՝ ուղղված Հայկ միջոցով էլ Մովսես Խորենացին բերել է Բելի նամակը՝ ուղղված Հայկ նահապետին, ուր ասված է: «Բնակեցէր, ասէ (Բելը, — և. Շ.) ի մէջ նահապետին, ուր ասված է: «Բնակեցէր, ասէ (Բելը, — և. Շ.) ի մէջ նահապետին, ուր ասված է: «Բնակեցէր, ասէ (Բելը, — և. Շ.) ի մէջ նահապետին, ուր ասված է: Անապահութեան սառնամանեաց. այլ շեռուցեալ մեղեկեա զցրտութիւն սառուցրտութեան սառնամանեացը, և հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարցեալ քո նպարտացեալ բարուցդ, և հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարցութեան»: («Դու ցուրտ ութեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան»): («Դու ցուրտ սառնամանեացների մեջ բնակվեցիր, ասում է (Բելը, — և. Շ.), սակայն սառնամանեացների մեջ բնակվեցիր, ասում է (Բելը, — և. Շ.), սակայն տաքացրու և մեղմացրու քո նպարտացեալ բնավորութեան ցուրտ սառնությունը և ինձ հնազանդեալ ինձաղ ապրիր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել», (գիրք Ա, գլ. Ժա, ընդգծ. — և. Շ.):

Այժմ Արամի մասին. «Մա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր (Մար Արասուր, — և. Շ.), լաւ համարէր պատմականը կրկնակ խեղաթյուրելով, «ազեր» կամ «ազերիներ» էթնոհորինվածքը:

նաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարազատից արեան նորա տիրել արանց օտարաց»: (Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան թե տեսնել, թե ինչպես օտարացեղ աղջեր ուսնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա», (զիրք Ա., դլ. ԺԳ, ընդգծ.— Ե. Շ.):

Ինչպես տեսնում ենք, անկասկածելի փոխհամաձայնություն կա ասսուրաբարելական հնագույն և հին աղբյուրների միջև, նույնիսկ զարմանքի համանող փոխհամաձայնություն: Այս, զարմանք առ այն, որ մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից սկսած Հայոց նահապետների բնավորության տվյալ հատկանիշը՝ «հապատ»-ությունը, իր գործնական դրսերումներով, այսինքն՝ Հայոց հատկանիշը նկատելի է դարձել և հիշատակման արժանի ասսուրա-բարելական աշխարհում և այդպես ավանդվել դարեր շարունակ՝ մինչև Թիգլաթպալասար Ա-ը և հետո Էլ քանի դեռ հիշատակնու արժանի է եղել: Մի խոսքով, Թիգլաթպալասար Ա-ը խիստ հարմար և պատմականորեն վավերացված փաստ է ընտրել իրեն մեծարելու՝ վկայակոչելով նախրցիների ընդհանրական և քաջազնական հատկանիշը, հատուկ ընդգծելով նաև, որ նրանց (նախրցիների) երկրները մինչ այդ «երեկէ չին նվանվել»: Այս փաստերը, ինչ խոսք, պատմագիտական այլ և այլ նշանակություն ունեն, սակայն շծավալվենք և նորից ընդգծենք, որ ըստ այդմ նախրին էրնոնույնական երկիր է («նրանց հպարտ որդիները» տարբերակված շեն), որ նախրցիները հայեր են նաև, այսպես ասած, բնավորությամբ:

Նախրին և նախրցիները նյյնանում են Հայք-Հայասայի, այսինքն՝ հայերի հետ նաև իրենց ուազմական հնարավորություններով, պատկառելի հզորություններով (այն էլ հակառակորդների անուղղակի նշումներով), նույնիսկ ինչնապաշտպանական ուազմական գործողություններով:

Այս առումով ամենաակնառուն և ամենաբնորոշն այն է, որ և Հայքի, և Հայասայի, և նախրիի բնիկները որպես կանոն մղել են հերոսական ինքնապաշտպանական պատերազմներ, իսկ նվաճողական՝ երբեք, այն էլ, նորից ընդգծենք, հենց իրենց՝ նվաճողների տեղեկություններով: Այսինքն՝ և մեկ, և մյուս դեպքերում գործ ունենք հայ ժողովրդի հազարամյակներ որդեգրած կեցվածքի և խաղաղասիրական հոգեբանության հետ, որը արձագանքված է մեր բանահյուսության, պատմագրության և գրականության համարյա բոլոր դարերի գործերում: Այսպիսի համապատասխանությունները, դարձյալ կարծում ենք, պատհական լինել չեն կարող և անպայման արժանի են ամենայն ուշադրության:

Ի հաստատում այս իրողության, բազում փաստերից բերենք մեկը միայն՝ պատմական մի գրույց Տիրիթ-Տրդատ թագավորի մասին: «Վերին

Հայաստանի թագավոր Տիրիթը, երբ գալիս է Հռոմ Ներոնից թագ ստանալու, Հռոմի իշխանները նրան զարմացնելու համար ման են ածում քաղաքում և ցույց են տալիս Հռոմի մեծամեծ ու երեկի շնչերը, այդ թվում նաև այն Հսկայական շնչերը, որ գտնվում էր չերակույթը, և ուր պահվում էին օրենքների բազմաթիվ գրքերը: Երբ Տիրիթը ճաշի է նըստում, Ներոնը նրան հարցնում է, Հայոց աշխարհում էլ այսպիսի օրենքներ կա՞ն: Տիրիթը պատասխանում է: Հայոց աշխարհի օրենքները քիչ են, բայց լավն են. և ամեն մարդ սկարտավոր է իմանալ զրանք. և եթե հայոց ազգն իր օրենքները լավ պահի, հոռմալիցիք չեն կարող մոտենալ Հայաստանին:

Իսկ որո՞նք են Հայաստանի այդ օրենք գեռևս շենք լսել, — Հարցնում է Ներոնը զարմանքով: Առաջին օրենքն այն է, որ մեր թուրք ժանդու լինի և մանգաղներն էլ հայելու նման փայլուն, Երկրորդ օրենքն էլ այն է, որ գատարանի գուանը կանաչ խոտ լինի բուսած, իսկ տաճարի գուանը էլ միշտ ցեխոտ լինի, — պատասխանում է Տիրիթը» (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 282—283):

Այս, այսպիսին է եղել հայի հոգեբանությունը հազարամյակներ շարունակ, այդպիսին են նաև հայասացիների և նախրցիների հոգեբանությունը, սոսկ այն վերապահոված յամբ, որ հաճախ էլ Հարկադրված թուրք և շողացել է նրանց ձեռքին՝ հայերի, հայասացիների, նախրցիների, որ դրանով ևս նրանք նույնանում են:

Ինչ վերաբերմ է հիշյալ «Երկրների» (իրականում՝ Երկրի) ուազմական հզորություններին և հերոսական դիմադրություններին, մերթ ընդմերթ էլ պատժիլ հակածարձակումներին, թեպետ ոչ համատեղ, բավականաշափ ցույց է տրվել պատմագիտական ուսումնասիրություններում, մանավանդ որ առարկություններ էլ չկան, ուստի նորից հիմնավորելու անհրաժեշտություն չի առաջանում: Չի առաջանում հատկապես, քանզի սկզբանապես խիստ տեսանելի, անվիճելի իրողություն է:

Կարելի է, իհարկե, էլի փաստեր, փաստարկներ վկայակոչել հօգուտ տվյալ նույնության, սակայն մեկը ևս և ամենակարեռը՝ Հայք-Հայաստանիրի նույնությունը բաժանող-տարբերակող հիմքեր չկան, եթե չենք գնում փաստերը արհեստականորեն տարանշատելու, դրանով իսկ այլափոխելու մոլար ճանապարհով: Այս շատ կարեսը փաստը ևս պետք է փոխելու մոլար ճանապարհով: Այս շատ կարեսը փաստը ևս պետք է փոխելու մոլար ճանապարհով: Այսպիսի համապատասխանությունների գանազան տեսք ու երանգով եղել են, կան և կլինեն:

Այսպիսով, Հայքը՝ ըստ հայ պատմիչների (ասսուրա-բարելականի միջոցով), Հայաստան՝ ըստ հեթիթական արձանագրությունների, նախրին՝ ըստ ասսուրականի, ներկայանում են որպես մեկ էթնոպատկաներության և միասնական պետություն ունեցող Երկիր, պատկառելի հզորության որից ակնածել են հարեւան հզոր թագավորությունները՝ ասսուրականը և հեթիթականը: Այսպես որ Հայք-Հայաստան-նախրին մեկ սուրականը

միասնական էթնոպետուրյան տարբեր ժամանակափուլեր համարելը փաստերի համատեղ լննության թելադրանք է, և կարծում ենք՝ անբեկանելի թելադրանք:

Այս այս՝ ավելի քան 1200 տարի արդեն գոյություն ունեցած (մինչև Սալմանասար Ա.-ի հիշատակումը) էթնոմիասնական պետության, այսինքն՝ համահայաստանյան և համահայկական պետության փոքրիկ երկրամասերից մեկն է բուն «Ուրարտուն», երբեմնի Արարադա երկրը, Հայկյան պետության առաջին կորիզ-կենտրոնը, ապա և Հայոց հարավային կուսակալությունը, Հայկի թոռ Կաղմոսի (Կաղմեանների) ժառանգական սեփականությունը, Հայաշունչ և Հայաբույր՝ թե մինչև Սալմանասար Ա, թե նրանից հետո, թեպետ հետոն «Նաիրի» կոչվածի կազմում հիշված:

Արդ, այս տեսանկյունով ևս վերադառնանք Ուրարտուի քաղաքական ու տարածքային հետագա վիճակին կամ փոփոխություններին և տեսնենք այն հիմնականը, որին հետամուտ ենք:

գ. «ՈՒՐԱՐՏԱԿԱՆ» ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԱՐԾԱՎԱՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սալմանասար Ա.-ից հետո ընդհուպ մինչև մ. թ. ա. IX դարի 80-ական թվականները՝ շուրջ 400 տարի, «Ուրարտու» անունով երկիր այլևս չի հիշատակված, չնայած, ինչպես տեսանք, այդ նույն տարածքը կամ փոքրիկ երկիրը այլ անուններով նշված է տվյալ 400-ամյակի արձանագրություններում՝ հիմնականում Թումմե-Տումմե-Տմորիք անվանումով։ Երկում է նաև, որ Արարադ-Ուրարտուն հիշյալ 400-ամյակում շարունակել է մնալ նաիրյան միասնության երկրներից մեկը, իսկ թե տարածքային ու քաղաքական ի՞նչ ձեռքբերումներով, կամ ունեցել է, թե ու դժվար է հիմնավոր խոսք ասել, պարզապես տվյալ 400-ամյակի արձանագրությունները նման հնարավորություններ չեն տալիս։

Այսուհենդեմ, ասսուրական հետագա արձանագրությունները և զուգահեռ այլ փաստեր ցույց են տալիս, որ Ասորեստանի դեմ մղած համառ, հերոսական և տեսական պայքարում (մ. թ. ա. XIII—IX դարեր) աստիճանաբար քայլայվել է նաիրյան երկրների դաշնությունը, այսինքն՝ հայ ժողովրդի միասնությունն ու հզորությունը, և մ. թ. ա. IX դարի 60-ականից իրեն զգացնել է տախու «Ուրարտուն»՝ այդ դաշնության երբեմնի ու այնքան հզոր, կամ իր հզորությունը «շցուցադրած» երկիրը։

Այժմ արդեն, այսպես ասած, նոր ժամանակներում, Ուրարտուի մասին առաջին անգամ խոսել է Ասորեստանի մեկ ուրիշ թագավոր՝ Սալմանասար Երրորդը (մ. թ. ա. 860—825 թթ.): Իր թագավորության առաջին տարվա արշավանքի մասին նա գրում է։

«Թագավորությանս սկզբին՝ առաջին իսկ տարում, երբ մեծ վայել-

շությամբ արքայական գահիս վրա նստեցի, մարտակառքեր և զորքեր գումարեցի, Սիմիսի երկրի լեռնանցքը մտա, նիննիի Այրիդի ամուր բերդագագարին մոտեցա։ Քաղաքը հարձակմամբ զրավեցի և տիրեցի, նրանց բազմաթիվ պատերազմուներին սպանեցի, անասունները ավարի առա։ Քաղաքի դիմաց կառափներից կոթող կառուցեցի, նրանց գեռա-հաս աղջիկներին և տղաներին խարուցկի մեջ այրեցի... Արիդիից ելա, սեպ ու նեղ շավիղներ, դժվարին լենաներ, որոնք երկաթյա դաշույնի սայրի պես դեպի երկինք էին ցցված, պղնձի և բրոնզի թիերով հարթեցի, մարտակառքերն ու զորքը շարժեցի և Խուրուշքիա քաղաքին մոտեցա։ Խուրուշքիա քաղաքը և իրեն պատկան (իր վիճակից) 100 քաղաք հրով այրեցի։ Կակիան՝ նաիրիի (ըստ այլնի՝ Խուրուշքիայի, — լ. Շ.) թագավորը և իր զորքի մնացորդները զենքերիս սաստկությունից զարհուրեցին և ամուր լեռները բարձրացան։ Նրանց հնտերց լեռները ելա, լեռների մեջ սաստիկ ճակատամարտ տվեցի, նրանց հաղթեցի։ Լեռներից մարտակառքեր, զորքեր, ձիեր, ձիասարքեր առա տարա։ Իմ տեր Աշշուրի վեհափառության սարսափը նրանց ընկճեց, ցած իջան, ոտքերս զրկեցին, նրանց հարկ ու տուրք դրեցի։ Խուրուշքիա քաղաքից ելա, ուրարտացի Արամեի բերդագաղաքը Սուգունիային մոտեցա։ Քաղաքի վրա հարձակվեցի, այն տիրեցի։ Նրա զորքերից շատերին սպանեցի, կողոպուտն առա տարա, նրա քաղաքի դիմաց կառափներից կոթող շինեցի։ Իր երկրից 14 քաղաք հրով այրեցի։ Սուգունիայից ելա, դեպի նաիրիի ծովը (=Վանա լիճ, — լ. Շ.) ցած իջան, զենքերս ծովում լվացի, սաստվածներիս զոհեր մատուցեցի։ Նույն ժամանակ իմ արձանը շինեցի, պերճափայլ տիրոջ՝ Աշշուրի փառքն ու իմ զործերը նրա վրա գրեցի, ծովի մոտ կանգնեցրի»¹։

Սալմանասար Գ.-ի պայքարը Ուրարտուի դեմ նկարագրված է նաև նրա թագավորության երրորդ տարվա արշավանքի առիթով։ Նորից բերում ենք ամբողջ արշավանքին վերաբերող հատվածը։

«Թագավորությանս երրորդ տարում Աղինիի որդին՝ Ախունին իմ ահեղ զենքերից վախեցավ, իր թագավորական թիլ-թարսիա քաղաքը եփեց, եփրատ գետն անցավ։ Նինվեից մեկնեցի (և) թիլ-թարսիա քաղաքը, Պիթրու քաղաքը, որոնք եփրատի մյուս ափին էին և որոնց թիգալաթպալասարը՝ իմ հայրը նվաճել էր, ես ինքս նվաճեցի... Այնտեղից իմ համանականի երկրի վրա իջան, Բիտ-Զամանիից ելա նամդանու, Միթրիտ-Զամանի երկրի վրա իջան, դժվարագնաց խիստ երկրները կտրեցի անցա։ Թիք, նեղ շավիղներ, դժվարագնաց ինչպէս երկները դեպի էին բարձրանում՝ ինչպէս եր-

¹ Արձանագրության այս և հաջորդ հատվածները բերվում են Հ. Սանտալճյանի թարգմանությամբ՝ մեր կողմից արևելահայերենի գերածած և լրացված ըստ այլոց թարգմանությամբ։ Ասորեստանի մեջ ասորի պատկանագրությինք, Վիեննա (տե՛ս Հ. Սանտալճյան, Ասորեստանի պատկանագրության արձանագրությունների, Վիեննա, 1901, էջ 140—142, հյմտ. Ասո, Երկեր, հ. 1, էջ 206—211, Խ. Ադամց, ՀՊ, էջ 78—91, ՀՃՊ քր., էջ 22—24):

կաթյա սրի ծայրը, բրոնզյա թիերով հարթեցի, իմ մարտակառքերն ու զորքը շարժեցի գնացի, իշա ինզիտի երկրի հսուա երկիրը: ինզիտի (=Անձիտի, — լ. Շ.) ամբողջ տարածքը իմ ձեռքն ընկավ: նրանց քաղաքները ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: նրանց անբավ հարստությունը, ունեցվածքը, գույքը ավարի առա, տարա, ես պատվիրեցի իմ թագավորական անձի մի մեծ պատկերը զինել և նրա վրա իմ մեծ տիրոջ Աշշուրի, և իմ հզորության փառքը արձանագրեցի: Այն կանգնեցրի Սալուրի մեջ՝ Կիրեկի փեշին:

Ինզիտի երկրից մեկնեցի, Արսանիաս (=Արածանի, — լ. Շ.) գետն անցա, Սուխմի երկրին մոտեցա: Նրա բերդաքաղաք Ուաստալին (ըստ այլոց՝ Ուաշթալ, — լ. Շ.) տիրեցի, Սուխմի երկրի ամբողջ տարածքը ավերեցի, քանդեցի, հրո ճարակ դարձրի: նրանց քաղաքի տիրոջ՝ Սուային իմ ձեռքերով բռնեցի: Սուխմից մեկնեցի, Դայաենի երկիրը իշա: Դայաենի ամբողջ երկրին տիրեցի, նրա քաղաքներն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: նրանց ճոխ ունեցվածքը՝ ինչքը, գույքը կողոպատեցի, Դայաենիից ելա, ուրարտացի Արամեի թագավորական քաղաք Արզակուրին (ըստ այլնի՝ Արծաշքու, — լ. Շ.) մոտեցա, Արամեն հույսը դրեց իր զորքերի բազմության վրա, կոփ ու ճակատամարտ տալու համար իր բազմաթիվ ձիավորներին իմ դեմ հանեց: նրան պարտության մատնեցի և նրա ձիերն ու ուզմական հանդերձանքը հափշտակեցի: Հզոր զենքերիս սաստկությունից և ուժդին ճակատամարտից զարհուրած, Արամեն իր քաղաքը թողեց, Ազդուրի երկրի լեռները բարձրացավ: նրա հետեւ լեռները գնացի, լեռների մեջ սաստիկ ճակատամարտ տվի, նրա պատերազմողներից 3400 հոգի տապալեցի, Արամանի նման (ըստ այլնի՝ Արագի նման, — լ. Շ.) նրանց վրա փոթորիկ տեղացի, նրանց արյունով լեռը բրդի պես ներկեցի, նրա ճամբարը զրավեցի, նրա մարտակառքերը, հեծյալները, ձիերը, ջորիները, հորթերը, գույքը, կողոպուտն ու հարուստ ինչքը լեռներից տարա: Արամեն իր կյանքը փրկելու համար բարձրացել էր մի անմատչելի լեռան վրա: իմ առնական ամբողջ զորությամբ վայրի ցովի պես նրա ամբողջ երկիրը ոտնակոխ արեցի, նրա քաղաքները ավերեցի: Արգասկոն՝ իր շրջակա քաղաքների հետ, ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: նրա դուան առջև կառափներից բուրգ առասեցրի: Ամանց կենազնի գերաններից կախեցի, ոմանց էլ գերանների շուրջը ցից հանեցի:

Յարգասկովց մեկնեցի և իրիտիա լեռը բարձրացա, իրիտիա լեռան վրա թագավորությանս մեկ մեծ պատկերը կանգնեցրի, որա վրա իմ տիրոջ՝ Աշշուրի փառքը և Ուրարտուում զործած իմ սիրածք երը արձանագրեցի:

Իրիտիայից մեկնեցի, Արամալի քաղաքին մոտեցա: նրա քաղաքը Արը թալանեցի, ավերեցի, քանդեցի, հրով այրեցի:

Արամալից մեկնեցի Զանզուինա քաղաքին մոտեցա... իմ ճակա-

տամարտից սարսափեց և ընկավ ոտքերս: Նրանից ձիեր, հարկեր, արշաներ, ոչխարներ ընդունեցի, թողություն շնորհեցի... Վերադարձիս իլա Նահրիի ծովը, Աշշուրի հզոր գենքերը ծովում լվացի և զոհեր մատուցեցի: իմ թագավորական անձի մի մեծ պատկեր պատվիրեցի և այնտեղ արձանագրեցի Աշշուրի՝ իմ մեծ տիրակալի փառքը և իմ քաջադրությունները (և կանգնեցրի ծովի մոտ):

Սովոր մեկնեցի և մոտեցա Գիլզանի երկրին: Գիլզանի թագավորը՝ Աստուն, իր եղբայրների, որդիների հետ դիմավորեց ինձ և թագավորական անձիս ոտքերը գրկեց: Նրանից ստացա ձիեր, ձիասարքեր, եզներ, ոչխարներ, յոթը երկսապատանի ուղղությունում: Պատվիրեցի իմ թագավորական անձի մի շատ մեծ պատկեր: Այնտեղ արձանագրեցի Աշշուրի, մեծ տիրակալի, իմ տիրակալի փառքը, և իմ վեհապետության հզորությունը, որ ես գործադրել էի Նահրիում, և այն կանգնեցրի նրա քաղաքի մեջ անդունքում մեղքը, տաճարի մեջ:

Գիլզանից ես մեկնեցի և մոտեցա Շիլախային՝ Խուբուշքիայի Կակի թագավորի բերդաքաղաքին: Հարձակվեցի քաղաքի վրա, այն գրավեցի: Նրանից վերցրի 3000 գերի, եզներ, ոչխարներ, ձիեր, մտրուկներ, հորթեր, անթիվ անհամար և բերեցի իմ Աշշուր քաղաքը:

Ես մտել էի Անզիտի երկրի լեռնանցքով, իսկ դուրս եկա Կիրրուրի (երկրի) լեռնանցքով, Արբելե քաղաքի վերևում»:

Այս արշավանքի առթիվ ն. Աղոնցը հետևյալ շատ կարևոր լրացումն է կատարել. «Այս պատմությունը մյուս վավերագրերում ամփոփված է հետևյալ կերպ՝ «Ես մտա Ալզի երկրի լեռնանցքը: Ալզի, Սուխմի, Դայաենի, Թումմե երկրները, Արգասկոնը՝ Ուրարտացի Արամեի թագավորական քաղաքը, Գիլզան, Խուբուշքիա երկրները ես նվաճեցի» (ՀՊ, էջ 84):

Սալմանասար Գ-ի երրորդ արշավանքը դեպի Նահրի տեղի է ունեցել նրա թագավորության 15-րդ տարում:

«Թագավորությանս 15-րդ տարում, — զրում է նա, — դեպի Նահրի երկիրը գնացի: Տիգրիս գետի ակունքներից մեկի վրա՝ լեռան բարձրածերպի մեջ իմ արքայական պատկերը շինեցի: իմ հզորության փառքը և դյուցազնական քաշագործություններս նրա վրա արձանագրեցի: (Ալպ) Տունիբունի երկրի լեռնանցքը մտա, ուրարտացի Արամեի քաղաքները՝ մինչև եփրատի (=Արածանի, — լ. Շ.) ակունքը, ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Եփրատի աղբյուրակունքը գնացի, աստվածների զոհեր մատուցեցի: Այնտեղ Աշշուրի գենքները փառավորեցին:

Դայանենի թագավոր Ասիան ոտքերս գրկեց (և) հարկի փոխարեն բազմաթիվ ձիեր ընդունեցի: իմ թագավորական պատկերը կառուցեցի, նրա քաղաքի մեջտեղ կանգնեցրի: Եփրատի ակունքից վերադառնալու ժամանակ, դեպի Սուխմն երկիրը գնացի, (նրա) հինգ ամուր քաղաքների հետ նվաճեցի, կոտորած կազմակերպեցի, նրանց շրջակալքի քաղաքների հետ նվաճեցի, կոտորած կազմակերպեցի, նրանց ինչքը ավարի առա:

(= Հնգիտ=Անձիտ, — լ. Շ.) երկրին մոտեցա, (նրա) երկու ամուր քաղաքները, նրանց շրջալայքի քաղաքների հետ միասին նվաճեցի, նրանց կոտորածը կազմակերպեցի, նրանց ունեցվածքը հափշտակեցի: էնզիից ես մեկնեցի, Մելիդու երկրի դիմացը Սփրատին ես մոտեցա (և) Մելիդու երկրի (թագավոր) Լալիի տուրքը՝ արծաթ, ոսկի, կապար և բրոնզ ես ստացա, իմ թագավորական կոթողը կանգնեցրի Եփրատի ափին»:

Սալմանասար Գ-ի վերջին կամ շորրորդ արշավանքն հետեւյալն է.

«Թագավորությանս 27-րդ տարում պատերազմիկ կառքերս և զորքերս հավաքեցի, իմ թուրթան Դայան-Աշուրին՝ բազմաթիվ բանակներիս գորավարին, գինվորներիս առաջնորդ նշանակեցի և Ուրարտու երկիրն ուղարկեցի, Նա իջավ Զամանիի երկիրը, մտավ Ամաշի (ըստ այնի՝ Ամմատուրիի, — լ. Շ.) լեռնանցքը և անցավ Արսանիա գետը: Ուրարտացի Սեղուրին իմացավ, իր զորքերի մեծաքանակ բազմությանը ապավինելով, իմ դեմ ելավ կոփվ ու ճակատամարտ տալու: Ես նրա հետ պատերազմեցի, նրան հաղթեցի, ընդարձակ դաշտը լցրի նրա ուզմիկների դիակներով»:

Այսպիսով, Սալմանասար Գ-ը շորս արշավանք է կազմակերպել դեպի Հայկական լեռնաշխարհ, իր իսկ նշումներով՝ դեպի Նախրի: Առաջին երեք արշավանքները՝ իր թագավորության առաջին (մ.թ.ա. 860 կամ 859 թ.) երրորդ (մ.թ.ա. 858 կամ 857) և տասնինքերորդ (մ.թ.ա. 846 կամ 845 թ.) տարիներին, անձամբ ղեկավարել է ինքը և, ի թիվս նախրյան այլ երկրների, հիշատակել է նաև Ուրարտուն, ավելի ճիշտ, ուրարտացի Արամեն կամ Արամուն է հիշված ու նրա երկիրը, իսկ շորրորդ արշավանքը՝ իր թագավորության 27-րդ տարում (մ.թ.ա. 834 կամ 833 թ.) հանձնարարել է իր զորավար (թուրթան) Դայան-Աշուրին, որի ընթացքում հիշվում է ուրարտացի Սեղուրը (=Սարդուր):

Սալմանասար Գ-ի վերոհիշյալ արշավանքների մանրամասներից բացահայտ երևում է երկու շատ կարևոր իրողություն: Առաջին, Ուրարտուն շարունակում է դիտվել որպես նախրյան, այսինքն՝ Հայք—Հայաստանի երկիր: Երկրորդ, ուրարտացի Արամեի իշխած երկիրն արդեն, բուն Ուրարտուի համեմատությամբ, շատ ավելի մեծ տարածքներ է ընդգրկել, այսինքն՝ ուրարտացի Արամեն, բուն Ուրարտուից զատ, իշխել է նաև նախրիի կամ՝ Հայք—Հայաստանի այլ երկրների վրա:

Դժվար է, իհարկե, Սալմանասար Գ-ի տեղեկություններով հստակութեն որոշել Արամեի պետության կամ թագավորության մահմաններ, սակայն առանձին տեղավայրերի նրա նշումներով հնարավոր է, գոնե, մոտավոր պատկերացումը: Ըստ այդ նշումների, նրա հյուսիսային սահմանները հասնում էին մինչև Արածանի (Արսանիա) գետի ակունքամերձ տարածքները, այսինքն՝ Մեծ Հայքի Բագրեանդ գավառը (Հետագա Ալաշկերտ): Այս ուղղությամբ Արամեի պետությունը սահմանակից է համարված Դայանի (= Տայք) երկրին: Նույն ուղղությամբ՝ Վանա լճի

Հյուսիս-արևմտյան տարածքում, հիշված է նաև Արամեի թագավորական (= թագավորանիստ) քաղաք Արգասկուն, ըստ ուսումնասիրողների՝ Արձեղը կամ Արծկեն: Այս երկու նշումներով (այն է՝ Արածանիի ակունքներ, Արձեղ կամ Արծկե) կարելի է ենթադրել, որ Արամեի պետության հյուսիսային սահմանը Հայկական Պար լեռնաշղթան էր: Արևմուտքում՝ Վանա լճից արևմուտք, սահմանը հասել է մինչև Արածանի (Արսանիա) գետի միջին հոսանքները, այսինքն՝ նրա պետությունը ընդգրկել է Մեծ Հայքի Տուրուբերան կամ Տարոն նահանգը, այլ անունով՝ Հարքը, նահանգի առումով: Արևելքում՝ Վանա լճից արևելք, եթե նկատի ունենանք նաև Արամեի հաջորդ (ըստ ոմանց՝ ոչ անմիջական) Սարդուր Ա-ի արձանագրությունը՝ Վանում կամ Տուշպայում պարիսպ կառուցելու մասին, և այդ ժամանակից սկսած Տուշպա-Վանի մայրաքաղաք դառնալը և այլն, կարելի է համոզված պնդել, որ «Բիայնա» կամ «Բիահնիլի» կոչված Երկրը ևս, այսինքն՝ «Ուրարտու» պետության կենտրոնագավառը (Հետագա Վասպուրական նահանգի Տոսպ գավառը, այլ անունով՝ Հայոց ձորը իր բաշրջակայքով) Արամեի թագավորության կազմում է եղել: Ավելին, չի բացառվում նաև, որ նախկին՝ Արգասկու թագավորանիստ քաղաքի գրավումն ու ավերումը՝ Սալմանասար Գ-ի կողմից, Արամեին մղել է (Արամեին, և ոչ՝ Սարդուր Ա-ին) նոր, առավել ապահով մայրաքաղաքի ընտրության, ինչպիսին եղավ, փաստորեն, Տուշպա-Վանը: Հարավում՝ Վանա լճից Հարքավ, Արամեի պետության սահմանակետ է նշված Սուլումիա ամրոցը: Այս առօդից ն. Ագոնցը գրում է. «Սուլունիա բնակավայրի տեղը հայտնի չէ: Անշուշտ, դա Ուրարտուի սահմանների վրա գտնված պահապահնի չէ: Անշուշտ, հավանաբար՝ Մեծ Սոլքակի մուտքի մոտ: Երկու հակակետերից մեկն է, հավանաբար՝ Մեծ Սոլքակի մուտքի մոտ: Երկու Աղբակները (նկատի է առնված նաև Կորդուքի Փոքր Աղբակ գավառը, — լ. Շ.) միմյանցից բաժանված են մի լեռնաշղթայով, որ բարձրանում է Զուլամերկի վերևում, Կարա-սու գետի երկայնքով, որը թափվում է Զարի մեջ՝ աջ կողմից: Այդ լեռնաշղթայում կա մի անցք, որի երկու կողմերում՝ մղութքի և ելքի մոտերքում, գտնվում են երկու գյուղ. մեկը կոչվում է Սիկանիս, մյուսը՝ Սուկան (ընդգծ. — լ. Շ.): Այնտեղ Սուլունիայի հիշատակը տեսնելը գայթակղեցուցիչ է: Զարի հովտի մուտքը փակելու համարված է գործությունը նպաստավոր է: Այնտեղից մինչև Վանա լիճը հաղիվ հարյուր կիլոմետր է: Ասորեստանի թագավորը հասել է լճին Խոշաբի հարյուր կիլոմետր է: Ասորեստանի մոտ: Սալմանասարի քարակոթողը կանգնեցվել է, հավաքետաբերանի մոտ: Սալմանասարի թագավորությանը կամ կաղմեա Տուն նահանգի հյուսիսավում ընդգրկում էր Կորդուք կամ Կաղմեա Տուն նահանգի հյուսիս-

175

արեմտյան տարածքները, մասնավորապես՝ Փոքր Աղբակ և դրանից արեմուտք ընկած գավառները, ինչպես նաև Մոկք նահանգը ամբողջությամբ, Ուրեմն, եթե Համառոտագրենք վերոբերյալ արդյունքները, Արամեի պետությունը ընդգրկել է Վանա լճի շրջակա տարածքները, նյուսանքներ, հարավում՝ մինչև Փոքր Աղբակ գավառի Սուգունիա ամրոց, Արելքում՝ Բիախնիլին, մինչև Մուսասիր երկիրը:

Այսպիսով, օրինական հարցեր են առաջանում. ա) Ինչո՞ւ Վանա լիճը ասսուրական արձանագրություններում, այդ թվում նաև Սալմանասար Գ-ի, իբրև կանոն, կոչվել է «Նախրիի ծով» և ոչ «Ուրարտուի ծով»; բ) Ո՞ւր մնաց բուն Ուրարտուն, այսինքն՝ Սալմանասար Ա-ի հիշած Ուրուատրին կամ Արարադա երկիրը, մի՞նչ չի մտել Արամեի պետության կաղմում:

Այս հարցերը, իհարկե, օրգանապես փոխկապված են, սակայն փորձնք պատասխանել առանձին-առանձին:

Առաջին հարցին մեր պատասխանը հետևյալն է. Վանա լճի շրջակայքի որևէ մասում երբեք (ոչ էլ Արամեի ժամանակ և հետո) «Ուրարտու» անունով երկիր չի եղել, ուստիև լիճը այդպես չի կոչվել: Ինչպես տեսանք, բուն Ուրարտուն կամ Արարադա երկիրը՝ «Ուրուատրի» ձեռվ Կադմեա Տուն կամ Կորդուք նահանգի հարավ-արևմտյան ծայրամասն էր, այսինքն՝ Նախրիի մի փոքրիկ երկիր (փոքրիկ, բայց հիշարժան) Ասորեստանի Հյուսիսային սահմանագլխին, Վանա լճից բավականաշափ հեռու: Ուրեմն Արամեի պետությունը «Ուրարտական» կամ «Ուրարտու» հորչորչելը ոչ միայն էթնիկապես, այլև տեղագրորեն և աղբյուրագիտորեն կոպիտ սխալ է: Մեր կարծիքով, հենց սա է պատճառը, որ Արամեն (գուցե) և, մանավանդ, նրա հաջորդները՝ Սարգուր Ա-ից սկսած, իրենց չեն կոչել «Ուրարտու»-ի տերեր, ոչ էլ պետությունը՝ «Ուրարտու». այլ՝ «Բիախնայի կամ Վանի տերեր», «Նախրիի տերեր», ինչպիսին էին իրականում՝ մասնավորապես «Բիախնայի» դեպքում:

Ավելին, սա է պատճառը նաև, որ անգամ ասսուրակայի արձանագրություններում (Սալմանասար Գ-ի և Հաշորգների), այսպես կոչված, «Ուրարտու»-ի թագավորները կամ տիրակալները երբեք և ոչ մի արձանագրության մեջ չեն կոչվել այդպես՝ «Ուրարտուի տերեր», «Ուրարտուի թագավոր», այլ սոսկ տեղածագում ցույց տվող «Ուրարտայա»—«Ուրարտացի» բառով: Օրինակ, Սալմանասար Գ-ը շորս անգամ է հիշել Արամեին, շորս անգամ էլ՝ «Ուրարտացի Արամե» կոչելով նրան, կամ՝ մեկ անգամ հիշել է Սարգուրին, նույն ձեռվ «Ուրարտացի Սեղուր» կոչելով: Արդ՝ ի հաստատումն, բերենք Սալմանասար Գ-ի գրածները. «Ենուբուշիա քաղաքից ելա, ուրարտացի Արամեի բերդաքաղաք Սուգունիային մոտեցա...», կամ՝ «Դայաենիից ելա, ուրարտացի Արամեի թագավորական քաղաք Արգասկուրին մոտեցա...», կամ՝ «Արգաշկունը՝ ուրա-

տացի Արամեի թագավորական քաղաքը (նվաճեցի,-- և. Շ.յ), կամ՝ «Ուրարտացի Արամեի թագավորները՝ մինչև Եփրատի (=Արածանիի,-- և. Շ.) ակունքը, ավերեցի...», կամ՝ «Ուրարտացի Սեղուրին իմացաւ... իմ գեմ ելավ...»:

Ահա այսպես է ներկայացվում նաև Արամեից ավելի քան 100 տարի ուշ թագավորած Ռուսա Ա-ը (մ. թ. ա. 735—714 թթ.)՝ պատ Սարգոն Բ-ի արձանադրության, չնայած այժմ արդեն (Ռուսա Ա-ի ժամանակ) ավագ հարցում աղոտաբար նկատվում է 100-ամյա պատմական փոփոխությունների կնիքը: Այլ կերպ ասած, ավանդույթի ուժը շարունակում է հարցումնել:

Այսպես՝ Սարգոն Բ-ը գրում է. «Զիկերտացի Մետատին... հույսը դրեց կարգ ու կանոն շիմացող ուրարտացի Ուրսայի (Ռուսայի) վրա...», կամ՝ «Ուրարտացի Ուրսան՝ Աշշուրի և Սարգուրի անվանումը շպահպանող...», կամ՝ «...այն բանի համար, որ ուրարտացի Ուրսայի կողմը (և) նրա լայնարձակ երկրի սահմանը չէի անցել...», կամ՝ «Ուրարտացի Ուրսայի և զիկերտացի Մետատիի բազմաքանակ զորքերին բաց ձակատամարտում զախցախեցի, ուրարտացի Ուրսայի յոթ մարզերը, 430 քաղաքները ամբողջությամբ նվաճեցի...» (ՀԺՊ քր., էջ 24—33):

Առաջին իսկ հայացքից վկայակոչված այս տեղեկությունները կարող են տարակուսանք առաջացնել, քանզի «Ուրարտացի» ասվածը ոչ միայն տեղածագում, այլև տվյալ պարագայում, նաև «Ուրարտուի տեր», էլ հիշում է մինչև այսօր: Տարակուսանքը, թվում է, կվերանա, եթե է և հշում է մինչև այսօր: Տարակուսանքը, թվում է, կվերանա, եթե է և հանում է զուգահեռ նշումներին, այսինքն՝ երբ ներկայացվում են ծանոթանանք զուգահեռ նշումներին, այսինքն՝ երբ ներկայացվում են ուրիշ երկրների տերեր կամ թագավորներ: Նորից դիմենք Սալմանասար Գ-ին և Սարգոն Բ-ին:

Սալմանասար Գ-ի արդեն մեզ ծանոթ արձանագրություններում հանդիպում են հետևյալ նշումները. «Կակիան՝ Նախրիի թագավորը (ըստ այլնի՝ Խուբուշքիայի) և իր զորքի մնացորդները... լեռները բարձրացնեն», կամ՝ «Սուխմի երկրի ամբողջ տարածքը ավերեցի..., նրանց բանցարի տիրողը՝ Սուային իմ ձեռքերով բռնեցի», կամ՝ «Գիլզանի թագավառի պատճեն... անձիս ոտքերը գրկեց», կամ՝ «...մոտեցա Շիլահիային՝ Խուբուշքիայի Կակի թագավորի բերդաքաղաքին», կամ՝ «Դայանենի թագավոր Ասիան ոտքերս գրկեց...», կամ՝ «Մելիոն երկրի (թագավոր) Լալիքի տուրերը... ստացա»:

Այժմ դիմենք Սարգոն Բ-ի նմանաբնույթ նշումներին. «Մաննայի Ալլուստնեն...», կամ՝ «Նախրիի թագավորի՝ Յանգուի երկրին ես մոտեցա: Յանգուն՝ Նախրիի թագավորը...» և այլն:

Այսպիսով, աղբյուրներում բավականաշափ հստակ տարբերակված է պատմական երկու իրողություն: Առաջին՝ «Բիախնայի տերերը», ինչ-է պատմական երկու իրողություն: Առաջին՝ «Բիախնայի տերերը», իշպուինը, Մելիոն պիսիք են Արամեն (ենթադրվում է), Սարգուր Ա-ն, իշպուինը, Մելիոն

ան, Արգիշտի Ա-ը, Սարդուր Բ-ն և այլք, երբեք չեն կոչվել «Բիայնացիներ», այլ՝ «Ուրարտացիներ»: Երկրորդ՝ «Բիայնայի տեր» համարված ուրարտացիներն էլ չեն կոչվել «Ուրարտու»-ի տերեր, մասնավորապես՝ մեզ հայտնի առաջին գահակալները:

Պատմագիտության մեջ համահարթված և չնկատված այս տարբերակումը էությամբ խիստ կարեոր է և անպայման պետք է կարեռել: Կարեոր է այնու, որ ըստ այդմ, այսինքն ըստ աղբյուրների, Բիայնացում իշխող հարստությունը (դինաստիան) բիայնական կամ վանյան տեղածագում չունի, այլ՝ ուրարտական, այսինքն՝ արարադյան, երեմնի հնամենի Արարագա երկրանունից: Հենց այս հատկանիշով էլ Ասորեստանի թագավորները նրանց տարբերակել են բիայնականից -վանյանից, նկատի ունենալով ոչ թե այժմեականը, այլ՝ հնամենին, իրենց համար ավանդական դարձածը: Ահա այս հիման վրա հանգում ենք հետևյալ եղակացություններին:

1. Պատմագիտական կոպիտ սիսալ է, երբ Բիայնան (երկիրը) և Ուրարտուն (=Արարագա երկիրը) թեկուզե անվանապես փոխարինվում են իրարով, Դրանք նահրիի բոլորովին տարբեր երկրամասեր են՝ թե՛ պատմականորեն (իրենց պատմական անցուղարձերով), թե՛ տեղագրորեն և խստագույնս պետք է տարբերակվեն: Ասելն իսկ ավելորդ է, որ այսպիսի տարբերակումը մեծապես կնպաստի «Ուրարտու» առեղծվածի մեկնաբանմանը:

2. «Ուրարտու» անունով պետություն մ. թ. ա. IX—VI դարերում գոյություն չի ունեցել Հայաստանում, այլ եղել է, այսպես ասած, ուրարտացիների (=Արարացիների) պետություն (նկատի ունենք իշխող հարստությունը), որին իրենք՝ այդ նույն հարստության գահակալները անվանել են Բիայնա կամ բիայնական, այսինքն՝ Վանի պետություն, մեր կարծիքով՝ հայկական իշխանապետություն: Ի դեպ, նեղ առումով այդպես է կոչվել, կամ կարող էր կոչվել Տոսպ (Տուշպա)=Վան (Բիայնա) գավառի ու քաղաքի անունով, իսկ լայն առումով՝ որպես Վանալճի շրջակա տարածքները ընդգրկող իշխանապետություն: Ինչպես տեսանք, ըստ Սալմանասար Գ-ի արձանագրության, այդպիսի ընդգրկում է ունեցել Արամեի և Սարդուր Ա-ի ժամանակ, Ավելին, եթե Սուկունիա քերդ-ամրոցը համարենք տվյալ պետության հարավային սահմանակետ, ինչպես ընդունված է, կնշանակի բուն «Ուրարտուն», այսինքն՝ Արարագա երկիրը այդ ժամանակ (Արամեի և Սարդուր Ա-ի) դուրս էր նրանց կառավարման ոլորտից և ենթակա էր Ասորեստանին:

3. Վերոհիշյալ փաստերի պահանջով մերժելի է դառնում Բիայնայի կամ Վանի պետությունը «Ուրարտու» կամ «Ուրարտական» հորջորջելք՝ թեքական և ոչ թեքական իր բոլոր ձևերով, ինչպիսի անվանումներով թյուրիմացաբար լեփլեցուք է պատմագիտությունը: Պետության առումով մերժելի է անգամ այդ անվան պայմանական գործածությունը,

բանզի դրա համար որևէ հիմք չկա, պարզապես՝ քմահաճույզ է: Հիմնավորն ու ճշգրիտը «Վանի պետություն», «Վանի թագավորություն» անվանելն է, ինչպիսի փորձեր գիտականորեն արդեն եղել են, և զարմանալի է, որ ճիշտն ու հիմնավորը փոխարինվել է անճշտությամբ:

4. Ինչպես նահրիի շատ երկրամասեր, այնպես էլ Բիայնան կամ Վանի պետության տարածքը, ինչպիսի ընդգրկում ուներ Արամեի և Սարդուր Ա-ի ժամանակ, գեռես մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերից համարվել է Հայոց հազարույն պետության կորիզ-կենտրոն, այլ կերպ ասած, Հայկ նահապետի և նրա զարմերի բնակության ու կառավարման թեպետ այլ անուններով (Հարեթյաններ, թորգոմյաններ, Ասքանազյաններ), ապա՝ իրենք և իրենց զարմերը՝ Հայ-Հայք անունով, այսինքն՝ վաններ), ապա՝ ժամանակներից հայաբնակ ու հայաշունչ երկիր: Այս ամենի զլնչական ժամանակներից հայաբնակ ու հայաշունչ երկիր: Այս ամենի վեպանական դաստիարակությունը այսպէս մեզ պատմում են հայկական աղբյուր-մասին բավականաշապի հստակ մեզ պատմում են հայկական պատմություններին:

Ըստ այդմ, Հայկը իր աղխով թարելոնից մեկնում է դեպի հյուսիս և գալիս հաստատվում է Արարագա երկրում: Ապա՝ կարձ ժամանակ անց, Արարագա երկիրը հանձնում է իր թռող Կաղմոսին՝ Արամանյակի առդուն, որպես ժառանգական բաժնեկալված («...շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն կադմեայ...»), և շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք: «Եվ ինքն (Հայկը, — լ. Շ.) խաղայ, ասէ է դեպի հյուսիսի արևմուտք: «Եվ ինքն (Հայկը, — լ. Շ.) այլով աղխիւն ընդ արևմուտս հիւսիսոյ, — գրում (Մար Աբասը, — լ. Շ.) այլով աղխիւն ընդ արևմուտս հիւսիսոյ, — գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուած Խորենացին, — գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուած Հայրեն են (Հայրեն են, — նէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ Հարք են (Հայրեն են, — լ. Շ.) աստէն բնակեալք՝ ազգի տանն թորգոմայ: Շինէ և գիւղ մի, և լ. Շ.) աստէն բնակեալք՝ ազգի տանն թորգոմայ: Յիշի և աստանօր ի պատմութեանս անուանէ յիւր անուն Հայկաշէն»: Յիշի և աստանօր ի պատմութեանս անուանէ յիւր անուն Հայկաշէն» (Ա, գլ. Ժ):

Այս տեղեկություններից երևում է, որ Արարագա երկրից հետո Հայկի կառավարումը տարածվել է նաև հետագա Տարոն կամ Տուրուն Հայկի կառավարումը տարածվել է երեսում «հարավի երկայնանիստ լեռան» բերան նահանգի վրա (այս է երեսում «հարավի երկայնանիստ լեռան» բերան նահանգի վրա)՝ Հայկաշն նշումով, վարչական կենտրոն ունենալով՝ Հայրեն գավառը՝ Հայկաշն նշումով, Վի խոսքով, Վանա լճից արևմուտք Հայկյան պետության բանկավայրով: Մի խոսքով, Վանա լճից արևմուտք Հայկյան պետության տարածքները գեռես մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսերին համարյա թարածքները լեպլեցուք է պատմագիտությունը: Պետության առումով մերժելի է անգամ այդ անվան պայմանական գործածությունը,

նական կամ թագավորական նստավայրերը, Հայկաշենը՝ Հայկի ժամանակ, Արգասկու—Արծաշկու—Արծեն կամ Արծեշը՝ Արամեի ժամանակ:

Առաջել զարմանալի նույնություն է նկատվում նաև Վանա լճի արևելահարավ ափամերձ տարածքներում: Այսինքն այնտեղ, ուր բուն Բիայնան է կամ Վանի գավառը և Արամալի Կոչվածը՝ ըստ ասսուրական աղբյուրների:

Խոսելով Հայկ—թել պատերազմի մանրամասների մասին, Խորենացին գրում է. «...Աճապարեալ (Հայկը,—Լ. Շ.) հաւաքէ զորդիս իր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զալսն ևս որ ընդ իրով ձեռամբ, հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրեն, մաճունս ունելով յինքեան ձկունս...

Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզու՝ հասանեն ի միջոց ինչ գաշտաձե՝ լեռանց բարձրագունից: Եւ յաջմէ ջուրց հոսանաց ի բարձրաւանդակում կուռ կալով ի տեղուզ, ի վեր զերեսս ամբարձեալ երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն թելայ..., իսկ թէլ հեզ և հանդարտ ամբոխիւ մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ միոյ, իբրև ի դիտանոցի»:

Ապա՝ նույն մանրամասնությամբ նկարագրելով Հայկաների հաղթական ճակատամարտն ու թելի սպանությունը, Խորենացին ավելացնում է. «Բայց զաեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչչ Հայք (նաև՝ Հայկ), որը Հայկաբերդ անունով հայտնի է եղել հետագա դարերում, իսկ ավերակները՝ առ այսօր,— Լ. Շ.), վասն յաղթութեան պատերազմին, այսորիկ աղադաւ և զաւառն այժմ անուանի Հայոց ձոր: Իսկ զբլուրն, ուր քաջամարտկօն անկաւ թէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին Ներեզմանակը: Բայց զգիակն թելայ պաճուճեալ դեղովք, ասէ (դարձյալ Մար Աբասը,— Լ. Շ.) հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղուզ (ենթադրվում է նեմրութ լեռը՝ թելի ներբուզ անունից,— Լ. Շ.), ի տեսիլ կանանց և որդոց իւրոց: Իսկ աշխարհս մեր (պարզ է, տվյալ պահին Հայկի կառավարման աշխարհը,— Լ. Շ.) կոչի յանուն նախնույն մեր Հայկայ՝ Հայք (նաև՝ Հայկի,— Լ. Շ.)» (Ա, գլ. ԺԱ):

Ինչպես տեսնում ենք, Հայոց ազատասիրական (ոչ՝ ազատագրական) առաջին պատերազմը, որն ավարտվեց մեծ հաղթանակով, տեղի է ունեցել հետագա Վասպուրական նահանգի Հայոց ձոր (հետագա՝ Պան—Տոսպ) գավառում, Խոշաբ գետի հովտում, այլ կերպ ասած, բուն Բիայնայում կամ Վանի գավառում: Այսպիսով, Բիայնական պետության կենտրոնադավառի հայկական ու հայաբնակ լինելը՝ մ. թ. ա. երրորդ հազարամյակի կեսից արդեն կասկած չի հարուցում, իսկ ավելի վազը՝ ըստ Խորագույն փաստերի, խիստ հավանական է: Կասկած չի հարուցում նաև Վանա լճի արևելյան այլ տարածքների հայաբնակ և հայապատկան լինելը: Այս մասին, թհարկե, ուղղակի տեղեկություններ չկան, սակայն

առողջակի տեղեկությունները բավականաշափ խոսուն են և, ամենալազուրը, բայում են ուղղակիներից, մասնավորապես՝ Հայկի և թելի լազմերիթ նկարագրություններից:

Այսպես, ըստ Խորենացու և ըստ Անանուն Ա-ի (Սեբեոսին կից), թելը, Հայկին հպատակելու նպատակով, մեծաքանակ հետևակագործ արշավում է դեպի նրա բնակության երկիրը և Բաբելոնից «...Գայ հայանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կաղմեայ»: Ըստ Անանուն Ա-ի՝ «Գայ հասանէ յերկիրն Արարադայ ի տունն, որ էր նոցա լայրենի, զոր շինեալն էր ի լեռնոտին» (Խոր. Ա, գլ. ԺԱ, Սեբ. գլ. Ա): Հայկի թոռ Կաղմոսը, թողնելով իրեն բաժնեկալված տրված Արարադա երկիրը, փախշում է Հարք՝ Հայկի մոտ, և լուր տալիս թելի արշավանքի մասին: Ըստ Խորենացու. «Փախստական լինի Կաղմոս առ Հայկ, քաջընթացիս առաջի իւր առաքէ: «Գիտեա, ասէ, ով մեծդդ դիւցազանց, զի կիմեալ գայ ի վերայ քո թէլ... Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի մասն իմ՝ փախեալ, և գամ աւասիկ տագնապաւս: Արդ՝ աճապարեալ խորակում կողմէ կայ ի վերայ քո թէլ... Ես կործելոց ես» (Ա, գլ. ԺԱ): Ըստ Անանուն Ա-ի. «...և Կագնել զոր ինչ գործելոց ես» (Ա, գլ. ԺԱ): Ըստ Անանուն Ա-ի. «...և Կագնել զոր ի կործելոց ես» (Ա, գլ. ԺԱ): Ըստ Խորենացու. «Փիմեալ գայ թէլ արքայ ի վերայ քո, և եկն ենաս մինչ ի տուն անոր: «Փիմեալ գայ թէլ արքայ ի վերայ քո, և եկն ենաս մինչ ի տուն անոր: «Փիմեալ գայ թէլ արքայ ի վերայ քո, և եկն ենաս մինչ ի տուն անոր: «Փիմեալ գայ թէլ արքայ ի վերայ քո, և եկն ենաս մինչ ի տուն անոր:

Հայկը նախապատրաստվում է դիմագրավելու ահարկու հակառակորդին, և մինչ Կողմերը կհանդիպեին, թելի զորաբանակը շարունակում կորդին, և արշավանքը և հասնում, ինչպես տեսանք, Խոշաբ գետի հովիտը կամ Հայոց ձոր, այսինքն՝ Վանա լճի հայապ-արևելյան տարածքը, այլ կերպ ասած՝ Բիայնա կամ Վան-Տոսպ գավառը: Այսպիսով, անկասկածելի է թեպետ նշումներ շկան), որ ընթացքում նրանք գրավել են նախս Արաբական քաղաք երկիրը, ապա և՝ Կաղմեալ Տուն կամ Կորճայք և Վասպուրական բազա երկիրը, ապա և՝ Կաղմեալ Տուն կամ Կորճայք և Վասպուրական բազա երկիրը—Բիայնա տանող երթուղու կամ արշավուղու, գոնե, Արարադա երկիրից—Բիայնա տանող երթուղու կամ արշավուղու, գոնե, Կագնել արքադական բազա երկիրը, որոնք ես, ամենայն հավանականությամբ, Կագնել արքադական պատկանում: Այդ մասին գեռ կխոսվի:

Առաջել տեսանելի է Հայկի երթուղին: Այն է՝ Հարքից դեպի Վանա լճի հյուսիսի, ապա՝ լճի շրջանցում հյուսիսից, ապա՝ դեպի հարավ ուղղությամբ, լճի արևելյան ափամերձ տարածքներով մինչև Խոշաբի հովտում կամ Վանի գետին գետի ամրանալ գետի աջ ափին, դեմ հանդիման գետի ձախի ափին վիտ և ամրանալ գետի աջ ափին, զեմ Հայկի երթուղու մեկ այլ տարբեկան պատկանակի: Ի դեպի, Հայկի երթուղու կամ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է: Սա բակ, ասենք թե՝ Վանա լճի հարավային շրջանցումով, բացառություն է:

Թյունը: Այսինքն երկում է կուսակալության (հետագա՝ բդեշխության) կարգավիճակ:

Անցնում է կարծ ժամանակ (թերևս մոտ 10 տարի), մեծաքաղաքական հետակազմով, արշավում է թելը՝ «յաւերժիք քաջօք և երկնապիշօք հասակօք սկայիք մրցոլօք», և համարում Արարադա երկրին՝ կաղմուսի տանը: Կադմոսը, զիմագրավել չկարողանալով, փախչում է Հարք՝ Հայկի: մոտ: Հայկը նախապարաստվում է ընդեմ թելի: Այս ընթացքում թելը գրավում է Արարադա երկրը, ապա շարժվում դեպի Հյուսիս, համարում Հայոց ձոր և բանակում Խոշաբ գետի ձախ ափին: Այստեղ է համարում Հայկի գորքը, տեղի է ունենում ճակատամարտ, Հայերը հաղթում են: Իսկ թե ինչ կատարվեց ճակատամարտից հետո, Խորենացին պատմում է հետեւյալը: «Իսկ ամբոխն (թելի գորքը, — լ. Շ.) տեսեալ զայսպիսի ահազին գործ քաջութեան՝ փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց»: Ի դեպ, այստեղ կարեոր է նկատի ունենալ, որ թելի ամբողջ զորքը դեռևս ճակատամարտի դաշտ չէր հասել, այլ սոսկ առաջապահ ուժերը (Ա, գլ. ԺԱ): Ապա՝ «Զկնի այսորիկ դառնալ ասէ (Մար Աբասը, — լ. Շ.) Հայկին ի նոյն տեղին բնակութեան (նկատի ունի Արարադա երկրը, — լ. Շ.), և կաղմեայ թոփին իւրում բազում ինչ յանկածէ պատերազմին պարզէ, և յիւրոց ընդոնեացն արս անուանիս: Հրամայէ զնոյն տեղի բնակութեան ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն, և ինքն երթեալ դադարէ յանուանեալ դաշտին Հարք» (Ա, գլ. ԺԲ, ընդգծ. — լ. Շ.):

Այժմ նույն դեպքերը ըստ Անանուն Ա-ի. «..և զարք նորա (թելի գորքը, — լ. Շ.) փախստական լինէին: Եւ նոքա (Հայկի զորականները, — լ. Շ.) զհետ մտեալ թափեցին ի նոցանէն երամակս ծիոց և զորեաց և ուղտուց:

Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր. և շոգաւ կալաւ Հայկն գերկիրն Արարադայ (ուշագրավ է, որ Հայկի առաջին մուտքը Արարադա երկիր Անանունը որպակել է «շոգաւ բնակեցաւ», — լ. Շ.), և բնակեցաւ անդրէն ազգաւ իւրով մինչև ցայծմ: Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ զնակալուած ժառանգութեան կաղմեայ թոփին իւրում, որդույ Արմենակայ եղբար Հարմայի» (Սեր. գլ. Ա, ընդգծ. — լ. Շ.):

Արդ, երբ զուգադրում ենք այս և նույն հեղինակների քիչ առաջքերված տեղեկությունները երկում է, որ Հայկը երկու անգամ է հաստատվել Արարադա երկրում: Առաջին անգամ Հարավից՝ Բարելոնից վերադառնալիս, այսինքն՝ թելի դեմ պատերազմից առաջ, երկրորդ անգամ Հյուսիսից՝ պատերազմից հետո: Ի դեպ, Անանուն Ա-ը խիստ հրատակ է բնութագրել այս իրողությունը: Առաջին անգամ՝ Հայկը «շոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ», իսկ երկրորդ անգամ՝ «շոգաւ կալաւ Հայկն գերկիրն Արարադայ, և բնակեցաւ...»:

Ինչպես տեսնում ենք, առաջին անգամ սոսկ բնակվելու մասին է խոսքը, համարյա առանց դժվարության, երկրորդ անգամ՝ գրավել է

(«կալաւ») և ապա բնակվել, այսինքն՝ վերաբնակվել—վերահաստատվել է նույն երկրում: Եվ, իրոք, Խորենացու և Անանուն Ա-ի պատմածներից երկում է, որ Հաղթական ճակատամարտից հետո Հայկի զորքը անցել է հակահարձակման՝ Հայոց ձորից սկսած զնապի Հարավ՝ կադմեա Տուն կոչված նահանգի տարածքով, մինչև ներառյալ Արարադա երկիրը, թշնամական ուժերից այդ տարածքները ազատագրելու նպատակով: Այնպես որ՝ «կալաւ» բառը վերաբերում է ոչ միայն Արարադա երկրին, այլև Հայոց ձորից (բուն Քիայնայից կամ Վանի զավարից) մինչև ներառյալ Արարադա երկրը բնկած տարածքներին, որով, ինչպես տեսնում է, անցել ու ասպատակել էր թելի մեծաքանակ գորաբանակը: Ըստ այդմ, երկում է նաև, որ վերագրաված բոլոր տարածքները և հարակից այլ վայրեր՝ «Արարադա երկիր» ընդհանրական անվանումով պատկանելի էն Կադմոսին, եղել են նրա ժառանգական կալվածքը, այսինքն՝ և բուն Քիայնան, և Կաղմեա Տուն կոչված նահանգը (պարտադիր չէ ամբողջը), որում էր նաև Արարադա երկիրը:

Ի հաստատումն այս իրողության, ապացույց է նաև Հայկի, այսպես ասած, հատուկ վերաբերմունքն ու զորեկակերպը կադմոսի և ըակիսականապետության նկատմամբ, ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ հետո: Նախ այն, որ իր բոլոր զարմերից (որդիներից ու թոռներից) Կադմոսին՝ գահաժառանգ Արամանեակի՝ աղեղ և սուսեր գործածելու մեջ կորովի որդուն է վստահել Արարադա երկիրը՝ Հայոց տվյալ ժամանակի ամենավտանգակիր գավառը, նույնիսկ վիճարկելի Սևմի և Հաբեթի ժառանգների միջև: Բնական է, որ Հայկը այսպիսի մի շատ կատարեկամաս, ավելի ճիշտ, երկրամասի իշխանություն անձուկ ու անզոր չէր թողնի: Եվ, իրոք, չի թողել, մասնավորապես՝ բախտորոշապետությունից («Կաղմեայ թոռին իւրում բազում ինչ յանկածէ պատերազմին պարզէ»), որում չի բացառապատճեան անձուկ ու անձուկ ու անձուկ իր նշանավոր զորականներից շատերին («և յիւրոց ընդոնացն արս անուանիս»), նաև (սա արդեն ըստ Անանուն Ա-ի՝) իր զորքով հաւածել է թշնամական ուժերին, ագատագրել զորաված տարածքները (ինչպես ասվեց, երկում են), ապա ինչոր ժամանակ հաստատվել Արարադա ասվեց, երկում անանունի մահացել է այստեղ, ըստ Խորենացու Հարերում), այսինքն՝ անմիջապես է զբաղվել տվյալ իշխանապետության հզորություն, ապա նորից Կադմոսին հանձնել նրա նախկինում ունեցած րացմամբ և ապա նորից Կադմոսին համարելով, Հայկն անժառանգությունը: Մի խոսքով, իմստ կարեսը համարելով, Հայկն անձամբ ամեն ինչ արել է, նույնիսկ՝ տարածքային նվիրաբերումներ, այդ իշխանապետության պաշտպանուակությունը ապահովելու համար:

Կադմոսի իշխանապետության տարածքի առումով կարեսը են նաև Հետեւյալ փաստերը: Ինչպես արդեն ցույց տրվեց, ըստ Հայկական աղամեայալ փաստերը, ինչպես արդեն ցույց տրվեց, ըստ Հայկական աղամեայի կողմել է բյուրների, Մեծ Հայքի հետագա Կորճայք նահանգը ապահովելու համար:

Հերթին Կաղմեա Տուն նահանգն էր, ի մասնավորի՝ Արարադա երկիրը (Ուրարտուն), թեպետ նաև այլ անվանումներով: Գիտական հիմնավոր տեղագրումների համաձայն այդ են փաստորեն հավաստում Սալմանասար Ա-ը (Հիշենք Ուրուատրին, կուտիներին, կուղմուխին), Թիգլաթպալասար Ա-ը (Կաղմուխին՝ երեք արշավանք, նաև Տումմեն, և Նաֆրին՝ բնդանրացնող անունը), Ասսուրնազիրապար Բ-ը (Հիշենք Նաֆրին, Տումմեն, նաև Խուբուշքիան, Կիրխին՝ ուր երեք արշավանք, ուր Արարդալեռ), Սալմանասար Գ-ը (Նորից՝ Նաֆրին, Խուբուշքիան) և այլն: Հավաստում են նաև (թեպետ հաճախ անուղղակի և ակամա), որ Կաղմեա Տուն նահանգի բնիկները տեսական, համառ և հերոսական պայքար են մղել հզոր հակառակորդի դեմ, հասել են նույնիսկ Հաղթանակների: Վերջինիս փաստարկ է թեկուզ այն, որ Կաղմեա Տուն նահանգը՝ ընդհանրապես, իսկ նրա առանձին երկրամասեր՝ մասնավորապես, իսկ Արարադա երկիրը էլ ավելի մասնավորապես՝ Ուրուատրի (Ուրարտու), Տումմեն, Կիրխի և այլ անուններով, հաճախ է նվաճվում և վերանվածվում, այլ կերպ ասած, հաճախ է ազատագրվում և նորից ազատագրվում: Այսպիսով, կասկած շի հարուցում նաև, որ այս տեսական, համառ և հերոսական պայքարի առաջին և անմիջական կրողներն ու կազմակերպողները եղել են տվյալ նահանգի կամ կուսակալության տերերը, այսինքն՝ Կաղմեայք, Արարադ վարչակենտրոնի ժառանգատերերը, այսինքն՝ Արարադցի-ուրարտացի կոչվածները: Ասում ենք կասկած շի հարուցում, նկատի ունենալով հատկապես Սալմանասար Ա-ի և Թիգլաթպալասար Ա-ի մեջ ժանոթ տեղեկությունները՝ Կուղմուխի-Կաղմուխի երկիր և նրա բնակիների տեսական ու համառ պայքարի մասին:

Ահա այսպիսի եղրակացությունների են բերում փաստերի համատեղ քննարկումները (ներքին և արտաքին աղբյուրները): Դրանք միաժամանակ հանգեցնում են հետեւալ ենթադրություններին.

ա. Կաղմեա Տուն նահանգում հաճախակի ընթացող նվաճողական պատերազմներում, մասնավանդ տեղաբնիկների ձեռք բերած հաղթանակներով կամ հաղթական դրվագներով, մեծապես բարձրանալու էր համանուն կուսակալության և նրա տերերի, այսինքն՝ Կաղմեանների (ըստ տոհմածագումի) կամ՝ արարադցիների-ուրարտացիների (ըստ տեղածագումի) ուղամաքաղաքական հեղինակությունը՝ և ամբողջ նաֆրիում, այսինքն՝ Հայոց աշխարհում, և մասնավորապես տվյալ կուսակալությանը ամրակցված նախարարությունների նկատմամբ:

բ. Համարյա տեսանելի է, որ նույն պատերազմներում Կաղմեա Տուն կուսակալության վարչական կենտրոնը՝ Արարադա երկիրը կամ Ուրարտուն, ձեռքից ձեռք անցնելու պատճառով, մասնավորապես, մ.թ.ա. XIII—X դարերի ասսուրական արշավանքների ժամանակ, կորցնում է իր երբեմնի ուղամաքաղաքանական դերը, ուստիև Կաղմեայք, այսինքն՝ արարադցիները կամ ուրարտացիները այն փոխարինում են

առավել ապահով նստավայրով: Ի դեպ, Արամեի ժամանակ (գուցեենրա նախորդի ժամանակից) այդպիսին է համարվել Արզամկուն կամ Արծաշկուն՝ Հարդում, իսկ Սարդուր Ա-ից սկսած՝ Տուշպան՝ Բիայնա կամ վանի գավառում, Ավելին, Սալմանասար Գ-ի կողմից Արծաշկուի գրավումով և ավերումով, այն էլ հյուսիսից՝ Դիառեկի (= Տայքի) գրավումից հետո, պատճառաբանվում է նաև վարչակենտրոնի Տուշպա-Վան տեղափոխումը: Այսպես որ, այս ժամանակից սկսած տեղածագումով ուրարտացի (= Արարադցի) կոչվածները, իսկ տոհմածագումով Կաղմեաններն իրենց կարող էին կոչել Բիայնայի տերեր, ինչպես և կոչել են, նկատի ունենալով կուսակալության վարչակենտրոնը և այն, որ կուսակալությունը ընդգրկում էր Վանա լճի շրջակայքը: Ի դեպ, կուսակալության այդպիսի ընդգրկումը, ինչպիսին էր Արամեի և Սարդուր Ա-ի ժամանակ, հնարավոր է ենթադրել Հայկի մահվանից անիշապես հետո, երբ Արամանեակը թողեց համահայոց պետության Հարք վարչակենտրոնը և տեղափոխվեց հյուսիս-արևելք՝ դեպի հետագա Արարատյան դաշտը («գաշտն Արայի»):

